

Հ. ԱՃԱՌՅԱՆ

ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄՇԵՆԻ ԲԱՐԲԱՌԻ

**Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի
Նախագահության կարգադրությամբ**

Р. АЧАРЯН
ИССЛЕДОВАНИЕ ХЕМШИНСКОГО
АРМЯНСКОГО НАРЕЧИЯ
(На армянском языке)

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Մինչև 1910 մի քանի հարևանցի աշխատություններ միայն փայլին Համշենի և Տրապիզոնի բարբառի մասին: Դրանք էին գլխավորապես բառերի հավաքածուներ և կամ մանր բնագիրներ՝ առանց դիտական ճշտության: Բնագիրների մեջ մեծագույնն էր ծանոթ բանահավաք Ս. Հայկունու հրատարակածը՝ *Զեֆանոս գյուղի բարբառով* (Արրտ. 1892, 428—445), որ նույն Հայկունու հայրենի գյուղն է:

Համշենի բարբառը ուսումնասիրելու նպատակով 1910 թվի ամառը ես գնացի Տրապիզոն, ուր մնացի երկու շաբաթ: Այդտեղ ես շրջապատվելով Մալացի, Ապկիոնցի, Կիւշանացի և Ճոշաւացի գյուղացիներից և ուսուցիչներից, որոնք սիրահոժար մասուցին ինձ իրենց աջակցությունը, կարող եղա կազմել նույն բարբառի բառարանը, քերականության ուղղագրիչը և գրի առի երեք կտոր բնագիր Կիւշանա, Մալա և Ապկիոն գյուղերից: Իմ «Հայ բարբառագիրտության» մեջ (տպ. Նոր-Նախիջևան 1911), էջ 184—195 տալիս եմ քերականական ուղղագծիս ամփոփումը և այն բնագիրները:

34 տարի անց, Երևանում առիթ ունեցա ծանոթանալու բժըշկական ինստիտուտի երրորդ կուրսի ուսանող Արտաշէս Էքսուզյանի հետ, ծնված Մծարա գյուղում 1918 թ. վերաբնակիչ Գազրի քաղաքի: Շատ լավ գիտեր և խոսում էր Համշենի բարբառը: Կիսատ ու թերի թողած աշխատությունս ձեռնարկեցի լրացնել և ընդարձակել: Շատ օրեր նվիրեց նա ինձ թե իմ հին բառարանը (որ կազմել էի Տրապիզոնում) վերամշակելու և թե քերականական ուղղագրիս ընդարձակելու:

Օգտվելով ամառվա արձակուրդից 1944 թ. հուլիսի 31-ին ես մեկնեցի Երևանից Գազրի, ուր հասա օգոստոսի 3-ին և մնացի մինչև օգոստոսի 28 և վայելելով ընկ. Էքսուզյանի և իրենց ամբողջ ընտանիքի սիրահոժար հյուրընկալությունը, հնարավո-

ըությոցն յանեցա շփվելու բնիկ Համշենցի ամեն դասի ու սեռի մարդկանց հետ և կաղմեցի ներկա աշխատութիւնը:

Ի վերջ բանիս հրապարակական շնորհակալութեան պարտք ունիմ հատուցանելու՝ նախ Արտաշես Էքսուզյանին, որ այս աշխատութեան դրդապատճառը և մեծագոյն օժանդակողը եղավ՝ թէ բառապաշարի և թե քերականական ձևերի հայթայթման գործում: Երկրորդ՝ ամբողջ Էքսուզյան ընտանիքին, նույն Արտաշեսի հորը՝ Հովսեփ Էքսուզյանին (ծն. 1880 թ. Ճանիկի թեմի Կուրշունլու գյուղում, գաղթած Մծարա 1883 թվին), մորը (Սառա Էքսուզյան, ծն. Մծարա 1889 թ.) որ իբրև հին կին՝ սքանչելի կերպով գիտեր ու խոսում էր իր բարբառը առանց գրական խառնուրդի, զանազանելով և մատնանշելով նույն իսկ Տրապիզոնցոյ, առանձնահատկութիւնները, եղբորը՝ Վաղարշակ Էքսուզյան (ծն. 1929 թ. Գրեքեշոկ գյուղում (Գազրիի շրջան)), այժմ աշակերտ Գազրիի Ռուսական տասնամյա դպրոցի, քրոջը՝ Թամար Էքսուզյան (ծն. 1927 թ. Գազրիի նույն գյուղում), այժմ աշակերտուհի նույն դպրոցի 9-րդ դասարանում:

Թե որքան օգտագործել եմ սրանց՝ բարբառի ուսումնասիրութեան համար նյութեր հավաքելու և ամեն տեսակ բառական ու քերականական ձևեր ստուգելու կամ ճշտելու նպատակով՝ ես միայն գիտեմ: Առանց նրանց լիառատ և անձնվեր օժանդակութեան այս գիրքը չպիտի ունենար ոչ այս ծավալը, ոչ էլ այն գիտական մանրամասնութիւնը և ճշտութիւնը, որով ներկայա-
նում է այժմ:

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՅԻ ԵՎ ՎԻՃԱԿԱԿՐՈՒԹՅՈՒՆ

Համշենը (հին ածուներ Համամաշեն) բարձրաբերձ և անմատ-
չելի լեռներով շրջապատված մի գավառ է, որ գտնվում է Տրա-
պիզոնից արևելք, Ճորոխի հովտում, Պարխալ լեռան մոտ: Ժե-
զարում այս գավառը ամբողջովին հայ էր և ուներ 10,000 տուն
բնակիչ: Տաճիկները մտան այս գավառը և ավեր ու ջարդ սփռե-
լով՝ ստիպեցին ժողովուրդին ընդունել մահմեդականությունը:
Դիմադրողներից շատերը կոտորվեցին, շատերն էլ թողեցին Համ-
շենը և դեպի արևմուտք գնազան կողմեր փախան: Իսկ մնացյալ
տհազին բազմությունը ստիպվեց փոխել կրոնը: Փախստական
Համշենցիները անցան Տրապիզոնի մոտակայ գյուղերը, Խուր-
շունլի, Դարա-Տէրէի և Սիւրմէնէի գավառները և էլ ավելի
արևմուտք՝ Օրտու, Իւնիէ, Սամսոնի գյուղերը և մինչև Նիկոմի-
դիա: Այս պատճառով Տրապիզոնի գյուղերը քաղաքից տարբեր
գաղութ են կազմում և համարվում են Համշենցի. մինչդեռ քա-
ղաքացիները Անիի գաղութին են վերաբերում: Սամսոնի ճանիկ
գավառի հայերը մինչև այժմ էլ կոչում են իրենց Համշենցի և
բոլորովին նույն բարբառն են խոսում. իսկ Նիկոմիդիայի գյու-
ղերի հայ բարբառը թեև բավական փոխված, բայց որոշ նմա-
նություն պահում է տակավին:

Համշենը այսօր ունի 70-ից ավելի գյուղ և 6000 տուն բնա-
կիչ, որոնք սույն մահմեդական հայերն են: Սրանք մինչև այսօր
հայերեն են խոսում, մանավանդ կանայք, որոնց շատը տաճիկե-
րեն չի հասկանում: Միայն էլէհովիտ գյուղում կար մի քանի
տուն հայ:

1715 թվին սկսվում է Դարա-Տէրէի և Սիւրմէնէի հայոց
կոտորածը, որի նման դառն աղետ քիչ է տեսնված:

Գովաթայի արևելյան և Համշենի արևմտյան կողմը Դայլ
գետից սկսած մինչև Մահոնա գետը, որ 5 ժամ կտևի, գտնվում
է Սիւրմէնէ կոչված ծովափնայա անտառախիտ գավառը՝ սահմա-
նակից Օֆի: Այս գավառը Սև ծովի հզորքից բռնում է մինչև
Բաբերդի Թորոսանց լեռը և 16 ժամ տարածություն ունի:

Գավառն ունի երեք գետ՝ Նամպուլի, Կարա-Տէրէ (Սև գետ) և Քիւչիւք-Տէրէ (Փոքր-գետ)։ Գարա-Տէրէի ձորում այն ժամանակ ծվարած էին 16,000 հայ, որոնց շատերը փախած էին Համշենի կոտորածից։

ԺԸ դարի սկիզբը Սիւրմէնէում անվանի էր Ղուռուֆ օղլի մոլլա Մեհնեմեդ, որ մահմեդականութեան աթենից մոլեռանդ քարոզիչն էր։ Սա նպատակ դրեց Սև-գետացի հայութեանը ամբողջապես մահմեդական դարձնել։ Նա ընտրեց 40 մոլեռանդ աշակերտ, կըթեց, կրօնամոլութեան մեջ զարգացրեց, նրանց մոլլա դարձրեց և երդում առավ, որ մահմեդականութեանը տարածելու համար մինչև մահ պիտի մաքառեն։

Այս մոլլաները մոլեռանդ տաճիկների և ենիչէրիների հետ մտան Սև-գետ, բռնացան ժողովուրդի վրա և ամեն կողմ մահմեդականութուն քարոզեցին, սպառնալով որ եթե մահմեդականութեանը չընդունեն, Սուլթանից բանակ պիտի գա բոլորին կոտորելու։ Հայերն առ ահի սկսան խոստովանիլ թե Մահմեդը ճշմարիտ մարգարե է և Ղուրանը սուրբ է։

Մոլլաների 10 տարի այսպես քարոզելուց հետո, վերջապես պաշտոնապես առաջարկեցին ժողովրդին մահմեդական դառնալ։ Հայերը բռն կերպով դիմադրեցին և մոլլաներին Սև-գետից դուրս վռնեցին։

Սրա վրա մոլլաները հետևյալ միջոցին դիմեցին։ Հավաքեցին 500 տաճիկ և երկրի զանազան կողմերն ուղարկելով՝ հայտարարեցին թե Սև-գետացիք պաշտոնապես պիտի ընդունին մահմեդական կրօնը, այս ինչ օրը պիտի կատարվի նրանց թշվառութեան հանդեսը և ամեն ջիւղմեռանդ մահմեդականի պարտքն է նույն հանդեսին ներկա լինել։ Այս հայտարարութեան վրա երկրի զանազան կողմերից 1000 ձիավոր տաճիկ, 1000 էլ հետևակ, իրենց հետ առած ենիչերիների մի մեծ խումբ, դիմեցին Սև-գետ։ Այս ահագին թափորին առաջնորդում էր Ղուռուֆ օղլի Մեհնեմեդը, որ ձի հեծած դնում էր ամբոխի առաջից։ Վեց ուրիշ մոլլաներ նրա չորս կողմը պատած ծառայում էին նրան։ Իսկ իր 40 աշակերտները դրոշակ պարզած՝ վայրենի երգերով հետևում էին նրան։ Սրանցից հետո գալիս էր ժողովուրդը, իսկ նրանց չորս կողմն էլ ենիչերիները՝ զինված մեծ մեծ փայլուն զապարներով։ Վայրենի ամբոխը ահագնաձայն գոչումներով և ահոելի աղաղակներով սարսափ էր ազդում քրիստոնյա ժողովրդի վրա։

Ամբոխը իջավ նախ մի հայ գյուղ. մոլլաները առաջարկեցին, որ մահմեդականություն ընդունողները ներկայանան: Հայերը հայտնեցին թե իրենց գյուղում թրքացող չկա. և թե ինչ սպառնալիք էլ որ լինի, պատրաստ են դիմադրելու: Մոլլաները ատյան կանչեցին այն հայերին, որ մահմեդականության համակիր էին համարում և հարցափորձեցին նրանց:

Նույն ժամանակ Սե-գետի ամենամեծ գյուղը Թորոսլին էր, ուր գտնվում էր նշանավոր Տէր Կարապետ քահանան, որ բոլոր Սե-գետացի հայոց մեջ իբրև սուրբ պաշտվում էր: Հարցափորձով հայերը պատասխանեցին թե իրենց մեծը Տէր Կարապետն է և բոլորը նրան են հնազանդում: Հարկավոր է նախ նրան դիմել: Սրա վրա ամբողջ ամբոխը մեկնեց դեպի Թորոսլի գյուղը՝ Տէր Կարապետի մոտ:

Երբ քահանան լսեց թուրքերի արշավանքը, իսկույն հարյուրի չափ զինված հայեր ուղարկեց նրանց դեմ: Հայ կտրիճները դուռի եզերքում դիրք բռնեցին և հրամայեցին նրանց՝ առանց գյուղ մտնելու անմիջապես հեռանալ, հակառակ պարագային սպառնալով թուրքին կոտորել: Թուրքերը վախեցան, որովհետև ամեն կողմից շրջապատված էին հայ գյուղերով և վտանգավոր դիրքի մեջ: Ուստի ետ քաշվեցին և ամբողջ գավառի մեջ հայտարարեցին թէ «Հայերը կանչել էին մեզ թլփատվելու համար, իայց նրանց թաքուն նպատակն էր խարդախությամբ ներս առնել մեզ և բոլորիս կոտորել. հազիվ կարողացանք փախչել և կոտորածից ազատվել»:

Սուս լուրը տարածվեց ամեն կողմ. հայերը Ղուզուֆ օղլիին և մոլլաներին ուղեցել են կոտորել, մահմեդական կրոնը անարդրված է, պետք է վրեժ լուծել:

Սրա վրա հազարավոր մարդիկ թափվեցին Սիւրմէնէ. մոլեռանդ ամբոխի թիվը քառապատիկ բարձրացավ. Տրապիզոնի կառավարությունն էլ իր ուժը միացրեց նրանց և բոլորը միասին դիմեցին Թորոսլի գյուղը, որ հանկարծակի չորս կողմից պաշարեցին:

Ավագ շաբաթ օրն էր, Զատիկի տոնի նախօրյակը. ժողովուրդը եկեղեցի էր հավաքված, ուր Տէր Կարապետը պաշտամունքն էր կատարում: Ամբոխը թափվեց եկեղեցի և պահանջեց թուրքանալ. ժողովուրդը շվարած՝ Տէր Կարապետի երեսն էր նայում. մոլլաներից մեկը թրի մի հարված իջեցրեց քահանայի գլխին. նա ձեռքերը դեմ ավեց և երկու բազուկները կտրվեցին:

երկրորդ և երրորդ հարվածին արյունը Ֆշլաց և քահանան գետին տապալվեց. մուլաները վրան թափվեցին և կտոր կտոր հողտեցին մարմինը, որպեսզի ժողովրդի վրա սարսափ ազդեին: Բայց ժողովուրդը զիմառքեց ամբողջին, մերժեց ուրանալ իր կրոնը և մերժողի դիակը փովեց քահանայի նշխարների վրա: Կոտորածը տարածվեց չորս կողմ. ծեր ու մանուկ սրերի հարվածների տակ գետին էին տապալվում, արյունը հոսեց հեղեղի նման, ժողովուրդի վախկոտ մասը գլուխ խոնարհեց գազանների առաջ, խոստացավ մտածել և հետեյալ օրը թլփատվել:

Կոտորածը դադարեց:

Նույն գիշերը հայերից շատերը իրենց ընտանիքը հավաքած և մի քիչ պաշար վերցրած՝ Սև-գետի վայրենի անմարդաբնակ անտառները մտան և գետի արևմուտք՝ Տրապիզոն ուղղվեցին: Փախչողների մի մասը ահարկու անտառներում կորավ, մի մասը վայրի գազաններին կեր դարձավ, մի մասը անաթի ծառավ մեռավ, իսկ մի մասն էլ Բաբելդի և կամ Տրապիզոնի կողմերը դուրս ելավ: Տրապիզոն դուրս եկողների մի մասը Զադիոս, Ապիոն, Կալաֆկա, Զեֆանոս ևն գյուղերի մեջ հաստատվեց, իսկ ամենամեծ մասը անցավ Ղանիկ, Մինապ և մինչև Ատափազար:

Գարա-Տէրէի ավերիւր Թորոսլից անցավ շրջակա հարյուրի չափ հայ գյուղերը, քանդեց եկեղեցիները, կոտորեց Յոդովուրդը, շատերին բռնի թլփատեց, մի մասն էլ փախցրեց ու ցրվեց:

Զատկի օրը ամբողջ գավառի եթեկիներին 500 հոգի Թորոսլի գյուղի եկեղեցու մոտ հսկա աժրի ծառերի տակ հավաքված, թլփատվում էին հանդիսավորապես: Մի շարաթ հետո, նույն ծառերի շուրջը, 30 ձեռք թմբուկ էր դոփում. նախկին թլփատվողների հազարի չափ ազգականներն էին, որոնք նույնպես թլփատության արարողության էին ենթարկվում:

Միւրմէնէի գավառը ԺԸ դարի վերջում 60 գյուղ ուներ, ընդամենը 8000 տուն, որից 6970 տուն հայ կամ հույն մահմեդական, 1000 տուն հույն և 30 տուն միայն հայ: Գյուղերից նշանավոր են Թորոսլի, Թրեձոր կամ Ծիմլա, Ադրիտ, Այվէն, Օձթուխ, Ծիմլակովա, Աշան և այլն: Սրանք Համշենցոց նման հայերեն են խոսում մինչև այժմ, մանավանդ կանայք. և թեև հավատարիմ մահմեդական, բայց զանազան քրիստոնեական սովորութիւններ էլ պահել էին:

Վերջին կոտորածներէց առաջ 1) Տրապիզոն քաղաքում կար 800 տուն հայ.— 2) Գաղաթա կամ Եօմուրա գաղաթը, որ տա-
րածվում էր Տէյրիմէն-տէրէից մինչև Եամպոլի դէտը, ուներ
2340 շունչ հայ. հայոց գյուղերն էին Զեֆանոս, Սաժարուքաս,
Կոնիլա, Շանա (Մինկիլա, Կիւշանա), Ճոշարա, Կալաֆկա, Ուզ,
Ապիօն, Կոռմիլա:— 3) Սիւրմէնէ, որ Գաղաթայից արևելք տա-
րածվում է մինչև Օֆ, իր մեջ ունենալով զժրախտ Գարա-Տէրէն,
ուներ 100 տուն հայ. հայոց գյուղերն էին Փէրվանա, Գատրա,
Էլէմոնաս, Վահանցիք, Մախթիլա, Բութունոց, Քինոսոց, Սա-
րէս, Ալչաք-տէրէ, Ժուժք, Փիրկի և Մանտրալ:— 4) Աղճապատ՝
Տրապիզոնից արևմուտք, ուներ 4000 շունչ հայ. գլխավոր կենտ-
րոնն է Փլաթանա. հայոց գյուղերն էին Սաթարիա, Մալա, Անի-
ֆա, Վերանա, Էլեու, Փօշ, Ղալինոս: 5) Տրիպոլի կամ Թիրէսյօ-
լու, Տրապիզոնից արևմուտք՝ ընդարձակ նավահանգիստ, ուներ
40 տուն հայ:— 6) Կիրասոն, Տրիպոլիից արևմուտք գեղեցիկ և
ընդարձակ նավահանգիստ. ուներ 1500 հայ, որոնք գաղթած էին
Կեսարիայից:— 7) Օրտու, Կիրասոնից արևմուտք՝ գեղեցիկ նա-
վահանգիստ. հիմնվել է 1810 թվին՝ Աւետիք հայ իշխանի ձեռ-
քով. ուներ 400 հայ բնակիչ. շրջակա հայաբնակ գյուղերն էին՝
Չամալ, Մուսագրըզ, Քելթեփէ, Պոճօղլու, Սուլար, Պոշկէլի, Գազարսու,
Գուշճի էօրէն, Ալաճատամ, Սայաճա, Գրմա, Պուլ-
թան, Գատըր, Չաթալ, Փոտանա և Թէփէքէօյ, գյուղացոց մեծ
մասը Համշենից էր գաղթած՝ հին կոտորածների ժամանակ:
8) Սամսոն, Սև ծովի վրա, Օրտուից ավելի արևմուտք,
նշանավոր նավահանգիստ. հարևան Սինոպ նավահանգստի հետ
կազմում են Ճանիկի վիճակի երկու գլխավոր քաղաքները՝ Սամ-
սոնի և Սինոպի հայերը գաղթած են ներքին գաղառներից, իսկ
գյուղերը Համշենի հին կոտորածից փախած հայերն են: Ամբողջ
Ճանիկ վիճակի Համշենցի հայերը 2000 տուն են, որոնք բնակ-
վում են 30 գյուղերում, հետևյալ ձևով.

ա) Չարշամպա գաղաթում՝ 17 գյուղ.— Չաթախ, Օրթաօյ-
մախ, Էրէնճիք, Մարթիլ, Թէքիլ, Թախտալլըզ կամ Ղափու-
ղայա, Էօրէյի-պէյ, Գօնուքլուք, Կապալաք, Գուրշունլու, (կող-
քին՝ Գարա-Օթլուք), Աղուլուճ, Ղապա-Ճէվիդ, Էյրի-Տէրէ, Ուլու-
Փունար, Կէօվճէ-քէօյ, Աղճա-Կիւնէ, Սըթմա-սու:

բ) Իւնիէ գաղաթում՝ 8 գյուղ.— Իւչ-փունար, Քէօքլիւք,
Էքինճիք, Քէրփիճիք, Եաղպասան, Պալչըզ, Քէլսու, Էօքիւքէօյ:

դ) Թէրմէի գաղափարով՝ 3 գյուղ. — Դոճաման-պաշը կամ Դարաճալը, Էլէմտաղը և Սուլուճա:

դ) Ֆաղաջի գաղափարով՝ 2 գյուղ, այն է Զըպըզլըզ և Դա-յա-արտը:

Նոր ժամանակներում, Տաճկահայոց կոտորածներից առաջ ու հետո, Համշենցի հայերի մի նոր ստվար գաղութ անցավ Կովկաս և հաստատվեց Սև ծովի հյուսիսային եզերքը. ինչպես՝ Սուխում, Սոչի, Մացխտա, Լոօ, Մծարա, Մերելդա, Ադլեր, Շափշուկա, Նոր-Աֆոն, Գազրի և այլն: Բարբառի տեսակետով այս հայերը երեք ճյուղ ունին. Համշենցի կամ Ճանիկցի, Տրապիզոնցի և Օրդուցի: Առաջինները բնիկ Համշենցի չեն, այլ Ճանիկի վրձակն ապաստանած գաղթականները, որոնք Համշենցի Գարա-Տէրէ և այստեղից էլ Ճանիկ են գաղթել՝ կոտորածներից մազապուրծ ազատված: Տրապիզոնցի են կոչվում ոչ թե Տրապիզոն քաղաքի, այլ նրա շրջակա գյուղերի բնակիչները, որոնք հին ժամանակ Համշենցի Տրապիզոն և այժմ էլ Տրապիզոնից Կովկաս են գաղթել: Վերջապես Օրդուցի են կոչվում Օրդու քաղաքի շուրջը գտնված վերահիշյալ գյուղերի բնակիչները, որոնք հին Համշենցի սերունդներն են:

Սև ծովի եզերքից Համշենցի գաղթականները առաջացան դեպի Կուբան, ուր բազմաթիվ գյուղերում հաստատվելով՝ տեղացի դարձան:

Ըստ այսմ բոլոր Համշենցի հայոց թիվը լինում է կոտորածներից առաջ Տաճկաստանում շուրջ 20,000 շունչ, որոնցից հայտնի է թե ինչքանը կենդանի մնաց: Նույնքան կամ ավելի կարծի է դնել մահմեդական հայերին: Իսկ Կովկաս, Սև ծովի եզերքը և Կուբան գաղթած Համշենցոց թիվը կլինի 60,000-ից ավելի:

Համշենցի հայոց աշխարհագրության և պատմության մասին ամփոփ գրքույկ է Տաշեան, Հայ բնակչութիւնը Սև ծովէն մինչև Կարին, Վիեննա 1921 թ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՅԱՐԱՊԻՐ

Համշենի բարբառը պատկանում է Կը ճյուղին և համաձայն իմ «Հայ բարբառագիտություն» դասավորության, հայ բարբառների մեջ բռնում է 8-րդ տեղը: Ձայնարանական տեսակետով նրա զլխավոր հատկանիշն է ա ձայնի վերածումը օ, բայց միայն ն և մ՝ ռնգականներից առաջ: Ինչ. աման > օմօն: Այս երևույթը այնքան ընդհանուր է, որ ազդում է նույն իսկ թուրքերեն բառերի վրա, ինչ tavan > լմավօն «առաստաղ», tərpan > թրփօն «գերանդի», qazanməs > կազօնմիշ «շահած», qurban > դուրբօն «մատաղ», čam > չօմի «սոճի ծառ» են:

Այս հատկությամբ Համշենի բարբառը նույնանում է Ակնեցոց բարբառի հետ:

Ձևաբանական տեսակետով Համշենի բարբառը երկու բնորոշ հատկություն ունի. առաջինն է անորոշ գերբայի -ուշ վերջավորությունը, որ փոխանակում է բոլոր չորս լծորդությանց ել, իլ, ալ, ուլ և նրանց երկրորդ տիպար՝ նել, նիլ, նալ, նուլ ձևերը: Երկրորդն է՝ շարունակականի ունի կամ կունի հարադրություն՝ ձևը և մի ուրիշ ձև (կմս էշտուշ m «ես գնում եմ»), որ ոչ մի բարբառի մեջ գոյություն չունի:

Այս երեք հատկություններով Համշենի բարբառը ոչ միայն ստեղծում է իրեն համար առանձին դիրք, այլ և զանազանվում է հատկապես Տրապիզոնի (քաղաքի) բարբառից, որ ոչ միայն չգիտե այս երեք հատկությունները, այլ և իր շարունակականը կազմում է էլ բառի կամ մասնիկի հարադրությամբ:

Բառարանական տեսակետով Համշենի բարբառը գտնվում է երկու իրար հակառակ դրության մեջ: Առաջինն այն է որ երբեմն ամենահասարակ և սովորական հայերեն բառեր ջնջված և փոխանակված են ուրիշ ձևերով: Օրինակ՝

Լնդերը բառը չկա և այս գաղափարի համար ոչինչ չունին: Կերակուր բառը չկա և ասվում է միայն ուտելիք:

Կոխեյ բառը ջնջված է և նրա փոխարեն գործ են անվում

անհարմար դարձվածներ. ինչ. փոխանակ ասելու «մէկի ոտքի վրա կոխել», ասում են «մէկի ոտքի վրա բյոլուշ (քայլել)». փոխանակ ասելու «ոտքդ հոդին կոխիր», ասում են «չէօտկրդ տի՛ր խօղուն (վրա)».

Կոճակ բառը չկա և նրա տեղ ասվում է հիլուն. և որովհետև այս բառը միևնույն ժամանակ նշանակում է ճուլունք, ուստի տարբերելու համար ասում են հալվի հիլուն (=հալաւի ուլունք), որ է «կոճակ»: Սրանից էլ «կոճակել, կոճկել» դառնում է հիլուննին ծնցրնուշ «ուլունքները անց կացնել» կամ մի բառով՝ հիլուշ:

Համշենի բարբառը խճողված է շատ բազմաթիվ թուրքերեն բառերով. սրանց մասին խոսելու ենք առանձին հատվածով: Բայց Համշենի բարբառը ունի մի զարմանալի հատկութիւն ևս, որ ոչ մի լեզվի մեջ չկա: Այդ այն է, որ հայերեն սովորական խոսակցութեան մեջ հանկարծ մեջ է մտնում թուրքերենը, ոչ թե իբրև օտար փոխառյալ բառ, այլ ամբողջական նախադասութեամբ: Այսպեսով Համշենցին դառնում է միաժամանակ երկլեզու:

Այս զարմանալի երևույթի մանրամասնութիւնը կտեսնենք § 378 հոդվածում:

Սրանց հակառակ Համշենի բարբառը հարուստ է գրաբարի այնպիսի հազվագյուտ բառերով, որ ոչ մի բարբառի մեջ կարելի չէ գտնել: Այսպես են անալութ > օնլութ «եղնիկ», անթ կամ անութ > օնթ «գիրկը», աք > աք «ոտք», գահ կամ գեհ > րոհ «բարձունք», գերծանիլ > զէյմնուշ «վերջացնել», կիւ «խեփ» > զիվ «ծամոն», կուենի > զրվրնի «բեկեկնի», հօրու «խորթ հայր», մօրու «խորթ մայր», մաղթ > մախտ «մարխի խեփ», մաշմուրր «շաղանակ», ողն > էօղ, օղօն «երկարանիստ բլրակ», սնար > սնարր «բարձ», տոսախի > դօսիսի (ծառը) ևն: Ունի ընտիր նորակերտ բառեր. ինչ. տալայր, հօքուերայր, մօքքուերայր, տօսախուտ, մաշ(կա)մրդուտ, արեքույր կամ արեքուրիկ «արեածաղիկ», հայադիր «խմորի մեծ տաշտ», սարգրոյն «սարդի ոստայն», անթել «գրկել», անթտակ «թևի տակը», թանքամ «քամած մածուն», թոքալ «հազալ», ժոենի «վայրի խաղողի թուփ», լոկոր «հենց հիմի, մի քիչ առաջ միայն», խրտիչ «խրտովիւկ թռչունները վախեցնելու համար», կամէր գլէի պիտի «քիչ էր մնում պիտի սահելի ընկնել», վառեցուկ «կծու», կնքակին «կնքահոր կինը», կուրիկ «փայտի ածան՝ իբր չափ», մօմայր «հո-

ընդերս կին», ձառ «կաթի քամիչ», մոլիլ «փուշերն ու թուփերը կտրատել», փող «խոնջանի անցքը», հայրպապ, մայրպապ և այլն:

Այս իրար հակառակ երկու երևույթների մի հետաքրքրական օրինակն է ներկայացնում յոյժ բառը, որ դրաբարում ունի երկու իմաստ:—Առաջին սովորական իմաստն է «ողջ, կենդանի», իսկ ավելի քիչ գործածական իմաստն է «բուր, ամբողջ»: Համաձայն թարգմանչական է ճիշտ այն որ անսովոր է (յօխլը «ամբողջ») և ջնջել է այն՝ որ շատ սովորական է՝ փոխանակելով թրք. տալ հոմանիշով: Նկատելի է որ բառը պահված է ր հավելվածով (ողջ>յօխլը), ինչ որ ցույց է տալիս թէ թարգմանչական ժամանակ ունեցել է նաև *յօխլ «ողջ» բառը, որից տարբերացմամբ կազմել է յօխլ ձևը:

Հիշատակելի է հատկապես ծառերի զանազան տեսակների (ընտանի և վայրենի) -ի կամ -նի մասնիկով անունները և -ին մասնիկի գործածությունը, որ ոչ մի թարգմանում գոյություն չունի:

Առանձին հիշատակության արժանի եմ համարում նաև ղլփին բառի գոյությունը թարգմանում: Ծովերի այս նշանավոր ձուկը, որ նավերի ու շոգենավերի հետ հաճախ մրցման է գուրս գալիս, կովկասի Համաշնոց մոտ չի կոչվում ոչ թրք. yonus (Պլ. յոնոզ) և ոչ էլ ռուս. дельфин ձևով, այլ տրվելիս: Այս բառը ճիշտ հյ. ղլփին ձևն է, որի մեջ ղ դարձել է ըստ օրինի տ, իսկ փ հնչվում է ըստ ձանրկցոց սովորության՝ ա: Բայց այս բառի գոյությունը ցույց է տալիս ոչ միայն այն՝ որ թարգմանչական հարազատությամբ պահում է հին հայոց բառական հարթատվությունը, այլ և այն, որ հյ. ղլփին բառը, որ հունարեն փոխառություն է, կատարված է ոչ թէ սոսկ գրքերի և ուսումնականների միջոցով, այլ իսկական հարազատ ժողովրդական փոխառություն է:

Պատմական և աշխարհագրական տեսակետով շատ հետաքրքրական եմ համարում նաև արագ բառը, որ նշանակում է «սեղան, սեղ հեղեղ»: Այս բառը մեր Արաքս գետի անունից է՝ սակայն ոչ թե հին հայկական երասխ (պահված Մեղրիում Արասխ և վրացերեն Բախսխ ձևերով), այլ պարսկական آراس aras ձևով:

Այս բառը Համաշնոց հին բնավայրի և գաղթականության ժամանակի վերջին գեղեցիկ հիշատակն է, որ շարունակում է

իր գոյութիւնը այսօր էլ կովկասյան նոր գաղթավայրում, բայց առանց գիտակցվելու:

Այս բարբառի հետաքրքիր երևույթներին մեկն էլ այն է, որ երբեմն բառերը ջնջված են մի ուրիշ բառի հետ ձևական նույնութիւնից խուսափելու համար: Օր.

Բուշտ «մարմնի վրա դուրս եկած փոքր պալար, բզուկ» բառը չի գործածվում՝ չշփոթելու համար բուրդ > պուշտ բառի հետ. իսկ նրա տեղ գործ է ածվում փաղաքշական ձևը, որ է բշտիկ > պշտիկ:

Բրդել, որ հայ գուլգացու ամենասովորական բառերից մեկն է, ջնջված է այստեղ, որովհետև շփոթվելու էր պշտուշ «բշտել, մարմնի վրա բզուկ հանել» բայի հետ: Բայց կենդանի է ըրդուճ, որ ձևափոխվելով վերածվել է պշտուճ և այստեղից էլ կազմվել է պշտրձուշ բայը:

Երբեմն էլ նույն երևույթը տեսնում ենք euphémisme-ի պատճառով. օր.

կոթ > գէօթ բառը թէև գոյութիւն ունի, բայց խուսափելու համար թրք. համանուն բառի «հետույք» նշանակութիւն» նից, փոխանակված է պոչ > քէօչ բառով, որին արվել է նաև «կոթ» իմաստը:

Պոխել բառը, ինչպես վերն ասացինք (էջ 11—12) ջնջված է և նրա տեղ գործ են ածվում զանազան անհարմար ձևեր: Պատճառը նույն է. այս բառը Համշենի բարբառում պահված է միայն «coite» իմաստով, իսկ Տրապիզոնի շրջանում կարիք չէ զգացված դիմելու euphémisme-ի:

Բառերի ջնջման պատճառներից մեկն էլ թուրքերենի նմանողութիւնն է. օրինակ՝ չամիչ ամենահասարակ բառը, որ հատուկ է ամեն մի բարբառի և նույն իսկ փոխառութեամբ մտած է թուրքերենի մեջ, գոյութիւն չունի այս բարբառում և փոխանակված է խաղէօղի չիր անհարմար բացատրութեամբ, որովհետև թրք. ևս ասվում է quru üzüm «չոր խաղող» = Ֆրանս. raisin sec, որ է «չամիչ»:

Մնում է մեզ խոսել բարբառային տարբերութեանց մասին:

Այնքան ընդարձակ, ավելի ճիշտ ցրված մի բարբառ, որ Ճորոխի ափերից սկսած գնում հասնում է մինչև Մարմարայի ափը, այսինքն 1000 կիլոմետր տարածութիւն ունի, չէր կարող պահած լինել սկզբնական աղբյուրի նույնութիւնը: Եւ արդարև բարբառը ներկայացնում է զանազան տարբերութիւններ:

Բայց մենք չգիտենք օրինակ վերջին սահմանի (Պարտիզակից վերև գտնված Մանիշակ գյուղի) ներկայացրած տարբերությունները: Մյուսների մասին, ինչպես շնչեղ թրթռուն ձայների գոյությունը Մալալում, թավ բաղաձայնների խուլի վերածումը ճանիկում և այլուր, շարունակականի տարբեր կաղմությունները և այլն կքննվեն իրենց պատշաճ տեղում այս աշխատություն մեջ: Այս տարբերությունները սակայն այնպես են, որ ես իրավունք չհամարեցի ենթադրելու տարբեր ենթաբարբառներ:

Ամեն տեղ էլ երևում է քաղաքի ազդեցությունը գյուղացոց (այսինքն Համշենցոց) բարբառի վրա: Տրապիզոնից հեռու և լեռների մեջ քաշված գյուղերը ներկայացնում են ամենից բնիկ ձևը. իսկ քաղաքի մերձակա գյուղերը արդեն փոխված են: Առաջին կարգին է պատկանում Մալա գյուղը, որ Համշենի բարբառի, ամենից հարազատ ձևն է պահում. երկրորդ կարգին է պատկանում Ջեֆանոս, որ քաղաքից գրեթե կես ժամ հեռու մի գյուղ է և շատ պարզված մի բարբառ ունի:

Կիւլէսէրեանը (Բիւր. 1899, էջ 510) ասում է որ Չարշամպացի գյուղացիք ազդված են Չարշամպա քաղաքի տեղի հայերենից, ինչպես որ Իւնիայի գեղացիք էլ ազդված են Իւնիա քաղաքի հայերենից:

Իսկ Սև ծովի ուղևորական եզերքի գաղթականները հավաքված զանազան տեղերից, խոսում են ամեն մեկը իր բարբառը, պահելով նույն իսկ իրենց հին տեղական անունը (Սամսոնցի, Ջէնիկցի, Թէրմէցի, Իւնիէցի և այլն): Այս բոլոր վայրերի հիշատակը գեո շատ վառ է իրենց երևակայության մեջ: Ապագան պիտի ցույց տա թե լեզվական այս խառնուրդից ինչ պիտի ծագի:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անտոնան Հ.—Հայ բարբառագիրտութիւն. *Նոր-Նախիջևան 1911.*—էջ 178—183 խոսում է Տրապիզոնի բարբառի մասին, իսկ էջ 184—195 Համշենի բարբառի մասին: Սրա համառոտութիւնն է Adjarian, Classification des dialectes arméniens, Paris 1909, էջ 58—60:

Արփիարեան Ա.—Համշէնցոց լեզուով նամակ Ալիշահին. *Արևելք 1890, մայ. 23:* Սրա ամբողջականն է՝

Սրեմեան Հ. Ս.—Հայրուսակ. *Բազմ. 1897, էջ 288—290:*

Խոշեան Ն.—Առածներ ի Տրապիզոն. *Մասիս 1886, Օգոստ. էջ 45 (Տր):*

Խոշեան Ն.—Պոնտական գաւառաբարբառներէն նշխարք. *ՀԱ 1895, 183—6 (Բառացանկ Տր):*

Խոշեան Ն.—Ազգային ժողովրդական առածներ Տրապիզոնի. *ՀԱ 1890, 163—4, 289; 1891, էջ 116, 300—301; 1892, 24, 183—4, 382—3; 1893, 358—9; 1895, 13:*

Կիլիկիայան Բ. վրդ.—Ծանրկի վիճակին մէջ գտնուող Համշէնցիներու գաւառաբարբառը. *Բիւր. 1899, էջ 508—13, 558—60, 603—5, 654—6, 699—700, 752—4, 779—80; 1900, 14—16, 29—31, 42—3, 59—62, 82—4, 120—121:*

Կիլիկիեան Բ. վրդ.—Համշէնցիներու հայերէնը. *Լոյս 1906, էջ 40—41 (մի նմոյշ):*

Հայկունի Ս.—Առածներ Տրապիզոնի հայ գիւղացւոց բարբառով. *Արբտ. 1895, էջ 54, 293:*

Հայկունի Ս.—Հանելուկներ Տրապիզոնի հայ գիւղացւոց բարբառով. *Արբտ. 1895, էջ 83—84:*

Հայկունի Ս.—Նշխարներ. *Կորած ու ժողացուած հայեր. Արբտ. 1895, 293—4 (Համշենի բարբառով նմոյշ):*

Հայկունի Ս.—Հայ Գասպարը. *Արբտ. 1895, էջ 397—400. Նույն է Արևելք 1895 դեկտ. 23, 25, 26 և 27.*

Հայկունի Ս.—Տրապիզոնի հայ գիւղացու կեանքը. *Արբտ.*

1905, 737—46, 934—942, 1034—41, 1906, 180—189, (Այս բա-
լորի մեջ կան կարևոր գ. ո. բառեր):

Հայկունի Ս. Տրապիզոնի Զեֆանոզ, Կոստիյա հայ գիւղորէից
սովորութիւններ ու բառաւոր. Արրտ. 1892, 428—47.

Март Н. Материалы по хемшинскому наречию арм.
яз. (Համշենցի թրքացած հայոց բարբառով 115 բառ և նրանց
քննութիւնը). Записки коллегии Востоковедов. I. էջ 73—80.

Սրուճճտեանց Գ. վրդ.—Ժողովրդական խաղասացութիւնք
Կալաֆկայի և Սիւրմենիոյ բնակչաց. Մասիս 1886, 947—8,
963—4, 994.

Ա. ՄԱՍ

ՉԱՅՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

1. Համշենի բարբառի ձայնական դրությունը պարունակում է ընդ ամենը 46 ձայն, հետևյալ ձևով.

Ձայնավորներ՝ 13 հատ.

ա, ա, ե, է, ը, ի,

ո, օ, էօ, ու, իւ.

(Տրապիզոնի մոտիկ գյուղերը չունին *ո, ե, ո* ձայնավորները. առաջին երկուսի տեղ գնում են *է*-ն, վերջինի տեղ *օ*)։ Մալայում նկատելի եմ նաև պարզ *էօ-ի* և բաց *էօ-ի* տարբերությունը (*էօչ*, *էօչ*), ինչպես նաև պարզ *է-ի* և բաց *է-ի* տարբերությունը (օր. *լէն*)։ Երկբարբառ չկա։ Բաղաձայնները ներկայացնում են երեք տարբեր դրություն. Մալայի շրջանը (այն է հին բնիկ Համշենցիք) ունի 3 աստիճան, այն է պարզ թրթռուն, շնչեղ թրթռուն և թավ։ Ծանիկի շրջանը ունի նույնպես 3 աստիճան, պարզ թրթռուն, խուլ և թավ. իսկ Տրապիզոնի կողքի գյուղերը ունեն միայն 2 աստիճան (պարզ թրթռուն և թավ)։

2. Ավելացնենք նաև որ Ծանիկի բաղաձայնները հնչվում են շատ հստակ. պարզ թրթռուն բաղաձայնները այնքան լիառատ թրթռուն են, որ երբեք կարելի չէ շփոթել խուլերի հետ (մի վտանգ, որ սովորական է Պոլսի և Նոր-Նախիջևանի բարբառներում)։ Նմանապես խուլերը այնքան հստակ են, որ կարելի չէ շփոթել թրթռունների հետ. նրանք Երևանի բարբառի խուլներից էլ մի քիչ ավելի շունչ ունին, զրեթե մոտենում են ուսական խուլերին և բռնում են ուրիշ բարբառների սովորական խուլերի և շնչեղ թրթռուն բաղաձայնների միջին աստիճանը։

Ընդհակառակը Մալայի շնչեղ թրթռունները թեև որոշ և հստակ, բայց պարզ թրթռուն բաղաձայնները կատարյալ թրթռուն չեն և շատ են մոտենում խուլերին։

3. Ըստ այսմ Համշենի բարբառի պայթականները ներկայացնում են հետևյալ պատկերը.

Թրթռուն—բ, գ, դ, ձ, ջ (Մալա, Ճանիկ)

Շնչ. Թրթռուն—բ', գ', դ', ձ', ջ' (Մալա)

Պուլ—պ, կ, տ, ծ, ճ (Ճանիկ)

Թավ—փ, ք, թ, ց, չ (Մալա, Ճանիկ)

Այսպեսով Հաժենի բարբառի թե Մալայի ճյուղը և թե Ճանիկի ճյուղը ունեն 15 պայթական բաղաձայն, իսկ Տրապիզոնի գյուղերը քաղաքի նման՝ 10 պայթական միայն:

Սեղմ բաղաձայնները երեք ճյուղերումն էլ 15 հատ են.

զ, ժ, ս, շ

յ, ո, ը, լ, մ, ն, վ, ֆ

հ, դ, խ.

Ճանիկի բարբառում նկատելի է նաև քմայնացած բաղաձայնների գոյությունը. ինչ. գալլ > կ'տլ, գող > կ'էօղ, քալլել > ք'տլուլ:

Բ Մ Ա Ս

ՁԱՅՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ձայնավորների փոփոխությունը

Ա

4. Հին հայերենի ա ձայնավորը Համչենի բարբառում ամեն զիրքում մնում է սովորաբար ա. օր.

Բառասկզբում՝

ալիւր>ալուր, ասեղն>ասէղ, արե >արէվ, արիվ և այլն:

Բառամեջում՝

բարակ>պարագ, դատարկ>տայղագ, հարսն>հոսյս և այլն:

Բառավերջում՝

հապա>աքա, սա>խա, դա>իդա, նա>ինա, ահա>ա'հան:

5. Բաղավաճնակ բառերի մեջ բառամիջի ա ձայնավորը սովորաբար ընկնում կամ դառնում է ը. ընկնում է երկու բաղաձայնների միջև, դառնում է ը՝ մի քանի բաղաձայնների խճողման դեպքում: Եղած օրինակներն են՝ ագանիլ>հաքնուշ, անալի>օնլի, ամանիլ>օմնուշ, ամաչիլ>օմշնուշ, անալուիթ>օնլուիթ <եղնիկ>, անագան>օնկօն, անանուխ>օնլուխք, տնապակ>օնքազ <ցամաք հաց>, անկանիլ>ըղնիլ, ընգնուշ, անցանիլ>օնցնուշ, օննուշ, առաջի, առաջիաւ>ալչի, ալչէվ, արածիլ>ալծուշ, արձակիլ>ացքրուշ, ացկրուշ, արտասուք>ալդրսունք, բանալի>պօնլիք, բուսանիլ>պուսնուշ, գանգատիլ>կանգղուշ, գերանդի>գէրընդի, գիրանալ>կիյնուշ, գնացի>կընցի <Ըստ Օրտուեցոյ>, գտանիլ>կղնուշ, գողանալ>կօղնուշ, դադարիլ>տալծրուշ <հոգնիլ>, ելանիլ>էլլուշ, զարկանիլ>զայնուշ, զերծանիլ>զէյծնուշ <պատրաստությունները վերջացնել>, իջանիլ>իշնուշ, թագավոր>թաքվէօր, թաթալիլ>թաթվուշ, թալանալ>թալնուշ, թաւալիլ>թալվուշ, թաւալուիլ>թավրլվուշ, թքանիլ>թրքնուշ, ժամանիլ>ժլմնուշ, լաւանալ>լավնուշ, լուսանալ>լուսրնուշ, լուցանիլ>լուցուշ, լուանալ>լրվլնուշ, լօվրնուշ, խածանիլ>խա-

փուշ, խեչափառ > խրչրպար, խլանալ > խլընուշ, ֆարաւիլ > ծար-
 վընուշ, կախանալ > գէնուշ կատաղիլ > զաղղուշ, կարկատիլ > զար-
 զըղուշ, կարճանալ > զայջընուշ, կնքահայր > զոնքէր, զընկժոր,
 հաճարի > աժրի, համարի > հօմբոուշ, հառաչիլ > հառչուշ, հայլուշ
 հօրանջիլ, հասանիլ > հասնուշ, հասկանալ > հասկընուշ, համ-
 կըննուշ, հաստանալ > հատընուշ, հարսանիք > հայսնիք, հարցա-
 նիլ > հայցընուշ, հասնիլ > հավնուշ, հաւատալ > հավղընուշ, հավ-
 դուշ, հեծանիլ > հէզնուշ, հեռանալ > հէռընուշ, հիւանդանալ >
 հիվընդնուշ, հիվըննուշ, հօրաքոյր > հօրքուր, ճանաչիլ > ջօնչուշ,
 ճանապարհ > ջօմփա, ճերմակիլ > ջլըմըզուշ, մատանի > մ'աղնի,
 մեծանալ > մէծընուշ, մեռանիլ > մէռնուշ, մոռանալ > մօռնուշ,
 մտանիլ > մլընուշ, մօրաքոյր > մօրքուր, յօրանջիլ > օրընջուշ,
 շալակիլ > շալզուշ, չարչարիլ > չայջըրուշ, պազանիլ > բաքնուշ,
 պալարիլ > բ'սլըրուշ ճոտքը թ'րեւ, պառակիլ > բարզուշ, պատա-
 ռիլ > բաղդուշ, բաղըրուշ, սատակիլ > սաղզուշ, սպանանիլ > ըսպօն-
 նուշ, պօննուշ, տապակիլ > դարզուշ, տեսանիլ > դէսնուշ, տօսա-
 խիլ > դօսխի, տօսախուտ > դօսխուդ, ցամաքիլ > ցօմբուշ, փաթա-
 թիլ > փատտուշ, քառասուն > քառսուն:

6. Այս կարգին են պատկանում մի խումբ այնպիսի երկա-
 վանկ բառեր, որոնք իրենց երկրորդ վանկում ունենալով ա,
 հոլովման ժամանակ վերածվում են եռավանկի և իրենց միջին
 ա ձայնը սղմամբ չորցնում են. ինչ. բերան, սեռ. բերանի >
 պէյնի, ամբար, սեռ. ամբարի > օմբրի, օմրի, ամառն, սեռ.
 ամառան > օմռօն, զանգակ, սեռ. զանգակի > զօնկկի ևն. Այս
 կարգի բառերի ամբողջական ցանկը տես № 287:

7. Այս կարգին են պատկանում նաև մի խումբ բարդ բա-
 ասեր, որոնք Համշենի բարբառում կորցնում են իրենց ա հոդա-
 կապը: Այսպիսով բարդութունը այս բարբառում հաճախ կատար-
 վում է առանց հոդակապի. ինչ. հաւարոյն > հաֆպուն, հաւա-
 դուռն > հաֆտուռ, մաշկամիրգ > մաշմուրք «շազանակ», այսպիս
 նաև մատման > մաղմօն «կանիփի փոքր իլ», քարման > քարմօն,
 սարդոյն > զայտպուն «սարդի ոստայն», սրտառած > սէյրըռած
 «սրդողած, ռի պահած», քթանոց > քընթնէց «հորթի քթի կապ»,
 բէտկընուշ «լաւանալ, առողջանալ» (իբր պէտքանալ) ևն ևն:

8. Կան սակայն մի խումբ բառեր, որոնք չեն հպատակվում
 այս օրենքին և իրենց միջին ա ձայնավորը անփոփոխ պահում
 են: Սրանք ընդհանրապես հին լիզվից փոխ առած կրոնական
 կամ ուսումնական բառեր են. ինչ. աւետարան > աւէղարան,

դանձանակ > կանցանաղ, գաւազան > կավազոն, կիւրակէ > գիրագի, պատարագ > քաղարաք, վարդապետ > վաշտաբէդ, վարժապետ > վարժաբէդ (բայց ասվում է նաև վարջրբէդ), վարադոր > վարաբոր (եկեղեցու խորանի), ճգնաւոր > ջընավոր, խոստովանիլ > խօսողվանուշ, պսակիլ > քսագուշ, աղաչիլ > աղաչուշ, ցաւագար > ցավաքար: Կան նաև սովորական բառեր. ինչ-գիւղացի > կէղոցի, խրատիլ > խրադուշ, ծիծաղիլ > ծիծաղուշ, կնքսմայր > գընքամ էր, *կնքակին > գընկագին, նախատիլ > նախադուշ ասպանիլ, սեռցնել, — իսկ պարապիլ բայը ունի երկու ձև. սղված քարքուշ նշանակում է «վերջանալ, վերջացնել», իսկ քարաքուշ «մի աման մի ուրիշ ամանի մեջ դատարկել»:

9. Ա ձայնավորի ամենից կարևոր ձայնափոխութունն այն է, որ մ ե ն ռնգականներից առաջ վերածվում է Օ. այսպես են՝ ալանջ > օնգօջ, անալի > օնլի, անագան > օնկօն եււշ ցանված (ցանք)», աման > օմօն, ամանիլ > օմնուշ, ամառն > օմառ, ամբար > օմքար, ամիս > օմիւս, ամուր > օմուր, ամպ > օմք, անալուծ > օնլուծ «եղնիկ», անանուխ > օնլուխք, անապակ > օնքագ, աներ > օնիր, անէծք > օնիցք, անիծիլ > օնիծուշ, անիծ > օնիծ, անծոտ > օնծօղ, անծոտիլ > օնծօղուշ, անձնք օնծ, անհամ > օնհօմ, անոյշ > օնուշ, անութ > օնթ, անթատակ > օնթդագ, անուշ > օնուշ, անջորան > օնջուռա, անցանիլ > օնցնուշ, օննուշ, ապրանք > արքօնք, արանց > օրօնց, արժան > էժօն, բան > ւօն, բանալ > ւօնուշ, բանիլ > ւօնուշ, բանալի > ւօնլիր, բանջար > ւօնջար, բարեկենդան > ւարդիդօնք, բերան > ւլրօն, գանգատիլ > կօնգդուշ, գանկ > կօնգ, գաւազան > կավազօն, գերան > գէրօն, գերեզման > գէրէզմօն, դամոն > տօմօն, դանակ > տօնագ, դարման > դէրմօն «ճար, դեղ», տարմօն «յարդ», դերձան > լծէյցօն, դրուժան > դըռժօն, երեկամն > իրիզօմօն, երկան > էրգօնք, զանգակ > զօնգագ, զնդան > զնդօն, զոքանչ > զօքօնչ, թան > թօն, թանքամ > թօնքօմ քամած մածուն», թանկ > թօնգ, թանձր > թօնձրր, թօնգրր, ժամ > ժօմ «հացկերութիւն», ժանդ > ժօնգ, լանդակ > լօնտագ, անլուայ > օնլրվա, օնվա, օլվա, խանձիլ > խօնձուշ, խանութ > խօնլութ, խնամիլ > խնօմի, խորան > խօրօն, ծամիլ > ձօմուշ, ծանր > ձօնդրր, կամէր > զօմօր քիչ էր մնում որ պիտի», կամակ > զօմագ, կամն > զօմ, կանգնիլ > զօնգնուշ, զօղնուշ, կանեփ > զօնէփ, կանթ > զօնթ, կանչիլ > զօնչուշ, համ > հօմ, համար > հօմար (նաև հումար), համարիլ > հօմքուշ, համեմ > հօմիմ, հանիլ > հօնուշ, հանգոյց > հօնգուց, հիւանդ > հի-

վօնդ, ճանաչել> ջօնշուշ, ճանապարհ> ջօմփա, ճանկ> ջօնդ,
 ճանճ> ջօնջ, մաճ> մաճ (բայց նաև մօնջ, որ է մաճն), մամ>
 մօմ «տատա», մանել> մօնուշ, ման գալ> մօն էգուշ, մանգաղ>
 մօնգաղ, մանի> մօնի (ծառը), մանչ> մօնչ, մառան> մառօն,
 մատման> մաղմօն, յեսան> էսօն, նման> լմօն, անման>
 օննրմօն, նշան> նշօն, անօթի> օնօթի, շամամ> շմօմ, շմօմիգ,
 շատրուան> շաղրըվօն, չուան> չիվօն, պանիւր> բօնիւր, պա-
 տանք> բաղօնք, սամի> սօմիւն, սանիկ> սօնիգ, սանդ> սօնդ,
 սանտր> սօնդոր, սատանայ> սաղօնա, սեղան> սէղօն, սպանա-
 նել> սսօննուշ, սօննուշ, վանձնատ> վօզնադ, տանիւր> դօնուշ,
 տանձ> դօնձ, տառջիւլ> դօնջուշ, ցամաք> ցօմաք, ցանիւլ> ցօ-
 նուշ, քամիւլ> քօմուշ, քամի> քօմի, քանի> քօնի, քարման>
 քարմօն, քսան> քսօն, սօն:

10. Այս կարգի բառերի մեջ առանձին ուշադրութեան ար-
 ժանի են այն բաղմամբանկ բառերը, որոնց միջին վանկը ունի
 -ան-. ինչ. մատուանի, մեծանալ ևն: Սրանք կանգնած են երկու
 դիրքի միջև. կամ համաձայն Ծ-րդ կանոնի պիտի սղէին իրենց
 միջաձայնն աւ ձայնավորը և կամ աւ պիտի վերածէին Օ-ի Բայց
 կարող էին նաև աւ ձայնավորը Օ-ի վերածելուց հետո նորից
 սղել, որով կստացվեր նույն արդյունքը: Ա> օ վերածելու մի
 դեպք միայն կա, այն է սատանայ> սաղօնա. իսկ մնացյալ բո-
 լորը կորցրիւ են աւ ձայնավորը. այսպես հարսանիք> հայսնիք,
 հիւանդանալ> հիվըննուշ, մատանի> մաղնի, մեծանալ> մէծընուշ,
 մեռանիւլ> մէղնուշ, մոռանալ> մօռնուշ, և -անել, -անիլ վերջա-
 վորած բայերի ամբողջ շարքը, որ արդեն հիշել ենք № 5:

Երկկամս բառը ստացել է երկու ձևն էլ՝ իլիզօմօն, և
 իլիզրմօն:

Միջոց չունինք իմանալու թե սրանք նախապես աւ վերա-
 ծիւ են օ-ի և ապա ջնջիւ, թե ուղղակի հենց իբրև բաղմամբանկ՝
 միջին աւ ձայնավորը ջնջիւ են:

Կարծում եմ սակայն թե վերջինն է ճիշտ, որովհետև ա> օ
 ձայնափոխությունը շատ ավելի նոր է քան առաջինը: Ա> օ
 ձայնափոխության հետևութեան ապացոյցն էլ այն է, որ նո-
 քապույն թուրքերին բառերն էլ ենթարկված են նույն ձայնա-
 փոխութեան. ինչ. ջզդօն «փողի քսակ» (թրք. jazdan), սախօն
 «կերակրի ափսէ, պնակ» (թրք. sahan), թաւօն «առաստաղ»
 (թրք. tavan), կազօնմիշ «շահել» (թրք. qazanmāş), չօբօն «հո-
 վիվ» (թրք. çoban) ևն:

11. Այն բառերը՝ որ սեռականի մեջ ստանում են -ան, -վան վերջավորութիւնը, համաձայն ընդհանուր օրենքի նույնպէս ա դարձնում են օ. ինչ. ամռան>օմրոն, աշնան>աշնոն, ձմռան, ձմեռվան>ծմրոն, ծմէռվոն, եղան>էզոն, ձկան>ծգոն, ողն, սեռ. ողան>օղոն ևն:

Այստեղ էլ ունինք -ան վերջավորող բառեր, որոնք սեռականի մեջ ստանալով -անի ձևը, մտնում են § 10 յիշատակված բառերի շարքը. ինչ. նշան>նշոն, սեռ. նշնի: Սվելի շատ են սակայն այն դեպքերը, երբ -օն ձևը պահվում է. ինչ. աման>օմօն, սեռ. օմօնի, խորան>խօրօն, սեռ. խօրօնի ևն:

12. Սակավաթիվ են այն բառերը, որոնք կանոնին բացառութիւն կազմելով՝ ան ձայնախումբը չեն փոխում օն, այլ պահում են -ան: Այսպէս են միւսն>մէլան, թանաք>թմանք, նստակ>նամաք, դանձանակ>կանցանաղ, շուշան (թե ծաղիկը և թե անուշը)>շուշան (բայց հները ասում են դեռ շուշօն), կնքամայր>գընքամէր, խոստովանիլ>խօստովանուշ:

Այս բոլորը գրականից նոր փոխառյալ բառեր են:

Այս տեսակետից հետաքրքրական են՝

Աւետարան, որ Տրապիզոնի գյուղերում ունի ավէղարօն ձևը, նոր գաղութի մեջ դարձել է ավէղարան:

Վանք բառը երկրում հնչվում էր վօնք, արդի գաղութի մեջ գրականից նոր փոխառությամբ դարձել է վանք, վանկ:

Ապրանք բառը երկրում հնչվում էր արքօնք, նոր գաղութի մեջ գրականից փոխառությամբ դարձել է արքունք (բայց ավելի գործածական է թրք. մալ):

Անուշ բառը «քաղցր» իմաստով դարձել է օնուշ և այս է բարբառի բնիկ ձևը. սակայն նույնը կա նաև անուշ ձևով և նշանակում է «անուշ լինի»:

Ամէն «եղիցի» բառն էլ կրօնականից փոխառությամբ հնչվում է ամմէն, բայց ավելի շատ ասվում է թրք. ամին, նույնպէս առանց ա>օ ձայնափոխության:

Զարմանալի է «Համշէն» տեղանունը, որից և ժողովուրդը «Համշէնցի», որ Ճանիկցոց մեջ պահված է ա ձայնավորն անփոփոխ, թեև Օրդուցիք արտասանում են Հօմշէնցի (Ճանիկցիք ն ջնջելով ասում են Համշէնցի):

13. Ա ձայնավորը ուղականի մոտ ջնջված է անօսը>նօսը, շամա>շմօմ, շմօմիզ, ժամանել>ժմնուշ, դանակ>տօնազ

(նաև տնագ), գերանդի> գէրէնդի (Տր. քէրէնդի), ամեն(այն)> ըմըն (Տր. էմէն) և անկանիլ> ընշնուշ (Տր. ըշնիլ) բառերի մեջ:

14. Այս բոլորից դուրս ա ձայնավորը (անգականից ազատ) կրում է նաև հետևյալ մասնավոր ձայնափոխությունները. —

ա> է. — այսպես՝ արժան> էժօն (թերևս այժմն ձևից անցնելով. թեև արժեյլ բայի մեջ պահվում է ա. ինչ. ի՛նչ աժէ). ծագիլ> ծըքուշ, վարդավառ> վաշտէվօր (իբր վարդեւոր), յաղթել> էխտուշ (Տր. քաղաքում ըխդուշ), պիծակ> բուջէգ, բուծէգ վայրի մեղու, թափուր> թէփուր «ափսէ»:

ա> է կամ ու. այսպես՝ ուրագ> ուրէք, իւրոք, մարդակ> մէրթէք, մորտոդ (թուրքերենից ետ առնված հայերեն բառ), աահիլ> սէնուշ, սոհուշ, *ջահիլ> ճէնուշ, ճոհուշ «ծագիր», պահել> բոհուշ, բէնուշ:

ա ձայնավորը վերածված է ը ձայնավորի (կամ ջնջված է) մատաղ> մաղաղ, բայց նաև մըղաղ, վագել> ազուշ (եթե այն երկուսը իւր անկապ ունին), առանց> ըռօնց կամ օռօնց, առնիլ> ընուշ (կար. տրի կամ էրի), վարագոյր> վարսըր, վրաքուր (խորանի) բառերի մեջ. վերջինս վրա բառից կարծես լով կազմված:

ա դարձել է ու միայն պուղարջա «կարկանդակ» բառի մեջ, որ կարծեմ թե թրք. boğaç «կարկանդակ» և հյ. բաղարջ «անխմոր հաց» բառերի խաչաձևությամբ է ձևացած:

Ե

15. Ե ձայնավորը միավանկ բառի սկզբում դառնում է յէ կամ յի. եղած օրինակներն են՝ եզն>յէգ, յիգ, ես>յէս, յիս, երբ>յէփ, յիփ, ել>յէլ (վեր կաց), եի>յէփ «եռման (ջուր)», իսկ երգ լինելով զրական փոխառություն՝ ունի միայն յէրք ձևը:

16. Բազմավանկ բառերի սկզբում ե ձայնավորը ըստ օրինի դառնում է է. ինչ. ելանիլ> էլլուշ, կար. եկայ> էզա (որից անուրոշ՝ էզուշ), եղայ> էղա, եղեամն> էղիմ, եղիճ> էղիջ, էղինջ, եղունգ> էղունգ, երդումն> էշթվօնք, երես> էրէս, էրիս, երեսուն> էոսուն, երեալ> էրէվնուշ, երէկ> էրէգ, երեց> էրէց, երթալ> էշդուշ, երինջ> էրինջ, երկաթ> էրգաթ, երկայն> էրգէն, երկանք> էրգօնք, երկինք> էոնինք, երկու> էրգու, եփիլ> էփուշ:

Միավանկ բառերը հոլովմամբ փոփոխված ժամանակ կա-

բող են նախաձայնը զարձնել յէ կամ է. ինչ. հզն>յէզ կամ յիզ, սեռ. յէզօն կամ էզօն, յգ. էզնի, երբ > յէփ, սեռ. յէփօն, նմանապէս եփ>յէփ «եռման», ել>յէլ «վեր կաց», բայց եփել>էփուշ, ելանել>էլուշ:

17. Չորս բառ ունինք, որոնց մեջ նախաձայն *ն* դառնում է ի. սրանք են՝ երկկոյ>իրիզուն, երեք>իրեք, երէց>երէց կամ իրից, երկկամք>իլիզօմօն, Բոլորի մեջ ել *ն* ձայնավորը նախորդում է ը բաղաձայնին և գտնվում է բաց ու մերկ վանկում:

18. Առանձին ձև է եղբայր>ախպոր, որի նախաձայնը *հ* թի արդյունք է նոր ձայնափոխության, այլ հին հայ գավառական մի ձևի:

19. Բառամիջի *ն* ձայնավորը միավանկ բառերի մեջ կրում է երեք տեսակ փոփոխություն, որոնց համար հաստատ կանոններ՝ կարելի չեղավ ինձ գտնել. Այսպես՝

Դառնում է է. — ճեղք>ջէխկ, բեռն>պէռ, գետ>կէդ, գեղ>տէդ, թեռ>թէռ, խենթ>խէնթ, ծեծ>ծէծ, ծեղ>ծէղ, ձեռք>ծէռք, մեղք>մէխկ, մեղր>մէղրը, մեք>մէք, մէջ, սէջք>մէջ, նեղ>նէղ, ներ>նէր (սեռ. նիրի), շեռ>շէռ, տեղ>դէղ և փերթ>փէռթ բառերի մեջ:

Դառնում է ի. — հետ>հիր, վեր>վիր բառերում:

Դառնում է *ո* միայն կեռ>գորռ բառի մեջ:

Բարբառի մի ճյուղում ընդունում է *զ* էւ ձևը և մյուս ճյուղում ի ձևը՝ հետևյալ բառերի մեջ. — Թեր (թերթ)>թէռ, թիռ, թև>թէվ, թիվ, թեփ>թէփ, թիփ, խելք>խէլք, խիլք, ձև>ծէվ, ծիվ, մեծ>մէծ, միծ, յետ>յէդ, յիդ, ներք>նէս, նիս, սեր>սէր, սիր, սերմ>սէրմ, սիրմ, վեց>վէց, վից:

20. Բաղմավանկ բառերի առաջին վանկի մեջ գտնված *ն* դառնում է միշտ *հ* է. ինչ. տեսանել>դէսնուշ, միռանիլ>մէռնուշ, հերկել>հէրզուշ, հերիք>հէրիք, ձևել>ծէվուշ, հեծանել>հէզնուշ, յեսան>էսօն, են:

Այս գեպում *ն* ձայնավորը կրճատվել է խելառ>խլառ, շերեփ>շրէփ (կամ շէրիփ), խեղդել>խըխտուշ (որ և խէխտուշ), ձեղուն>ցխինք, վերայ>վըըն բառերի մեջ:

Դարձել է ըյ՝ միայն խեչափառ>խըչըրպար բառի մեջ:

Սեղմել բառի մեջ *ն* դառնում է ը (սըխմուշ) Թրք. *seğme* բառի ազդեցությամբ:

Նեղու բառի մեջ, ինչպես այլուր, նաև այստեղ ն դարձել է ի (լիզու)։ Նույնպես և քնի՝ քինի։

Ցերեկ՝ ցորէզ բառի մեջ ն դարձել է օ, որ կարծեմ օր բառի նմանությամբ է։ հաճախ ասում են օրը ցերեկին։

21. Վերջավանկում գտնված ն ձայնավորը դառնում է մերթ «է», մերթ ի և մերթ էլ բարբառի մի ճյուղում «է», մյուս ճյուղում ի. այսպես՝

ն դառնում է «է»՝ արեթ՝ ալիլթ, ապէտ, վարդապետ՝ վաշտաբէդ, վարժապետ՝ վարջըբէդ, ասեղն՝ ասէդ, երեք՝ իրէք, ձմեռն՝ ծմէո, պճեղն՝ քէդ, պատկեր՝ բաղզէր, կճեպ՝ ղէկպ, լիսեռն՝ լիսէո, մժեղ՝ մժէխ, մճէդ, թիթեռն՝ թիթէո բառերի մեջ։

ն դառնում է ի՝ ստերջ՝ ըսդիյշ, ըստիճ, կապերտ՝ զարբիդ, աներ՝ օնիր, զկեռ՝ զդիո, ընկեր՝ ղնգիր, աւել՝ ալիլ, համեմ՝ հօմիմ բառերի մեջ.— փրփրեմ բառը դարձել է փրփրիմ։

Մի ճյուղում «է» և մյուս ճյուղում ի է դարձած նախ կանոնաւոր կերպով՝ էվ (և) վերջացող բառերի մեջ. այսպես՝ թեթե՝ թէթէվ, թէթիվ, արե՝ արէվ, արիվ, յետոյ՝ էդէվ, էդիվ, ներքե՝ նէրքէվ, նէրքիվ, և սրանց հետ էլ՝ առջե՝ այշիվ, այշէվ։ Մյուս կողմից կանեփ՝ զօնրիփ, զօնէփ, շերեփ՝ շէրիփ, շրէփ, ցերեկ՝ ցօրիզ, ցօրէզ, գերշեր՝ կիշիր, կիշէր, երես՝ էրիս, էրէս բառերի մեջ։

Մայայի բարբառը պահել է սրանց ամենահին ձևը. ինչ-զիշեր (ն երկբարբառային հնչումով)։

22. Այս կարգի բառերի մեջ պետք է հիշել նաև ամեն(այն), որ իր հաճախական զործածության պատճառով դարձել է էմէն և սղված ըմըն, և առ-աւել, որ ստանալով ի մասնիկը՝ դարձել է ավէլի։ Հմտ. նաև § 54։

23. Շատ փոփոխված բառ է ուղեղ. այս բառը երկու իմաստ ունի. այն է «գլխի ուղեղ» և «ոսկորի ծուծ». այս երկու իմաստները իրարից զանազանելու համար՝ բարբառը առաջինը դարձրել է ուղէղ կամ էղու (սեռականը ուղէղի կամ էղվի), իսկ երկրորդը՝ խիստ կրճատւումով՝ լէդ, որով հասել է նդ «իւղ» ձևին, ասվում է օսկրի յէդ «ոսկորի ծուծ»։

24. Երկուսից ավելի վանկ ունեցող բառերի մեջ միջին ն ձայնավորը երբեմն դառնում է «է» կամ ի, բայց ավելի հաճախ ընկնում է։ Այսպես ունինք՝

և> է.—ալելուք>ալելուք (Մոսկովի երեկոյին երգելու ման գալ), գերեզման>կէրէզմօն, վարդեր>վաշտէվօր, աւետարան>ավէդարան, երեւի>էրէվնուշ, Բոլորն էլ կրօնական բաներ, բացի վերջինից:

և> ի.—երեկոյ>իրիզուն, աւելել>ավիլուշ, աւերել>ավիրուշ, բարեկենդան>պարզիդօնը, ածելի>ածիլի, հրեշտակ>հրիշտագ:

և կրճատված է ալելուք>ալլուք (Բիւր. 1899, 512), գիտենալ>կիրնուշ, կիրնուշ, գիտեցայ>կիրըցա, աւերել>ավիրուշ (նաև ավիրուշ), երեսուն>էոսուն, ունենալ>ուննուշ, հորեղբայր>հօրպոր, հրեշտակ>հոըշտագ (նաև հրիշտագ), երես, սեռ. երեսի>էյսի, կարենամ>գայնօմ, բարեկենդան>պարզիդօնը, սեռ. պարզիդնի, յատկապես բույսերի անունը՝ ուռնի>ուռնի, բալենի>պալընի, մորենի<մօրոնի, կուենի>գրվընի, գկեռնի>գըդընի, թգենի>թգընի, թթենի>թթընի, ընկուզենի>ընգզընի, խնձորենի>խընձըրնի:

է

25. Բառակցրում ունինք միայն հրկու բառ՝ էդ>էք և էշ>էշ. բառավերջում օրինակ չկա, բայց միայն թէ (հարցականի մասնիկ), որ դառնում է Տրապիզոն և Մալա թէ, Ճանիկ տո:

Կիրակէ բառը ունինք գիրագի ձևով:

26. Բառի մեջ «է» ձայնավորը միծաղույն մասամբ պահում է իր երանգը: Եղած օրինակներն են՝ բէճ>փէջ (ջուհակի), դէզ>տէզ, դէմ>տէմ, երէկ>էրէզ, խէզ>խէզ, կէս>գէս, ձէթ>ծէթ «ձկան եղ», մէջ>մէջ «մէջ, մէջք», շէկ>շէզ, շէն>շէն, պէս>բէս, պէտ, պէտք>բէդ ընիմ «սպասեմ», բէթզը «լավ, գեղեցիկ», տէր>դէր, օրէնք «օրէնք»:

Դէշ բառը ստանում է կէշ և կէշ2 ձևերը:

Անէծք և երէց բառերը «է» ձայնավորը դարձնում են մի ճյուղում «է», մյուսում ի. այսպես՝ օնէծք, օնիծք և էրէց, իրից:

Դէր բառը դառնում է կիր:

Դէմ բառը թեև սովորաբար լինում է տէմ, բայց դէմ չառի «չգիմացա» ասացվածի մեջ դառնում է տըմ չառի:

Վերջապես կամէր (գրաբարի անկատար ձևը) դառնալով ապառնիի մասնիկ, ստացել է գօմօռ, գօմմօր ձևը:

27. Բառասկզբում ը ձայնավորով ունինք միայն ընկեր> ընգիր, ընկոյգ> ընգուգ, ընկուգենի> ընգգընի և ընտրել> ընդ-
նուշ բառերը, որոնց բոլորի մեջ էլ ը պահված է անփոփոխ:

28. Բառամիջում ը (անգիր ը) կարող է պահել իր տեղը, կարող է տեղափոխվել, կարող է և բոլորովին անհետանալ: Այս բոլորի համար իբրև օրինակ հիշենք ամաչել> օմլընալ, բարձել> պարցընուշ, գանգատիլ> կօնգոուշ, խնձորենի> խընծ | ըրնի, կշուել> գըշըռուշ, ճնճղուկ> սեռ. ջիննդըգօնը, մեծանալ> մ'էծը-
նուշ, կտր. մ'էծըցա, շատրուան> շաղըրվօն, քրտնիլ> քըյդ | նուշ կամ քըյդընըուշ, լուանալ> լօվընուշ:

29. Բառավերջում հնչման հեշտության համար ը ավելանում է հետևյալ բառերի ծայրին.—նօ'սը> նօ'սըը, բարձը> պա'յսըը, Թանձը> Թօ'նծըը, լիտը> լիդըը, լի> լիքը, ծանը> ծօնդըը, ճիպո> ջիմբըը, մեղը> մ'էղըը, պէտք> բէտկը, սանտը> սօնդըը, տալգը> դէքոը:

Ի

30. Բառասկզբում ի մնում է անփոփոխ. ինչ. իջանիլ> իշնուշ, ինչ> իննը, ինը, ինքն> ինքը, իսկ> իսկի (բնավ), իրեար> իրար, իք> իք «մի բան»:

31. Բառավերջում նույնպես մնում է անփոփոխ. ինչ. ածե-
լի> ածելի, աղի> աղի, անալի> օնլի, գարի> կարի, գերանդի> գերընդի, գինի> կինի, յդի> ըդի, բալենի> պալընի ևն ևն: Բա-
ցառություն չկա:

Միայն հնդի բառը, ինչպես ուրիշ շատ տեղ, նույնպես և այստեղ դարձել է հէռու:

32. Բառի մեջ ի ձայնավորը նմանապես մնում է անփո-
փոխ. ինչ. պանիր> բօնիր, ամիս> օմիս, բուսիկ> պօքիգ, բիր> պիր, բրինձ> պրինծ, բանալիք> պնլիք, գետին> կէղին, գին> կին, երկինք> էռնինք ևն:

33. Երկավանկ բառերի մեջ եղած անսովոր ձայնափոխու-
թյունները հետևյալներն են.

վիշապ> ուշաբ,

պիծակ> բուծէգ, բուջէգ «վայրի մեղու»,

մաշմիրգ> մ'աշմուրք «շագանակ»,

շինել> ջինուշ, շնուշ,

կաթիլ> գաթիլք, գաթէլք,

լինել> ըլլուլ:

34. Երեք և ավելի վանկերով բառերի օրինակները հետևյալներն են.

գիտենալ> կիղընուլ,

անիծել> օնիծուլ,

դարիվայր> տարիվուր,

դարիվեր> տարիվիր,

երկամունք> իլիզամօն, իլիզըմօն,

ծիծաղել> ծիծաղուլ,

սիրտառած> սէյղըռած «արդողած»:

Այս բոլորի մեջ ի մնում է անփոփոխ. միայն վերջինում գառնում է էյ:

Գաղտնիկուր> գաղզուր բառի մեջ միջին վանկը ջնջվել է ամբողջապես:

II

35. Միավանկ բառերի սկզբում ո գառնում է էօ, յէօ, յէ, բայց նաև օ, յօ.

Եղած օրինակները հետևյալներն են.

ողջ> յօխչկ, յօխչկը «բոլորը միասին, ամբողջ»

ոսք> էօթք, յէօտկ, յէտկ

որս> էօյս,

ործ> էօյց,

որթ, հորթ> հէօշտ, հէշտ, հօշտ,

ողն (լեռան)> յէօղ, էօղ, յօղ,

ոչ> էօչ, յէչ (Տր. ուչ),

ոռ> յօռ (Տր. օռ),

օր (շղ.)> յէօր, յօր, օր

Միայն ո՞վ և ո՞ր բառերն են, որ ստանալով նախաձայն վ գառնում են առաջինը վօվ, վէօվ, վլվ, երկրորդը վէօր:

Հորվման ժամանակ այս բառերը վերածվելով երկավանկի, էօ, յէօ կարող են մնալ, բայց ավելի շատ՝ վերածվում են է, օ. ինչ.

ոսք> սեռ. յէտկի, յգ. օղվի,

ոռ> սեռ. օռուն, յօռուն

ողն> սեռ. օղօի, յգ. օղնունք,

որս> սեռ. էօյսի, էյսի, օյսի,

որձ>սեռ. էօյցի, էյցի, օյցի.

որթ, հորթ>հէօշտի, հէշտի, հօշտու, հօշտի.

36. Բազմավանկ բառերի սկիզբը ո զառնում է Օ. Ինչ. ազնի>օզնի, ոլորել>օլըրուշ, ողորմիլ>օղօրմուշ, ոչխար>օշխար, ոջիլ>օշիլ, ռոնալ>օռնուշ, սակք>օսկէօր, օսկէր, որոճալ>օյշուշ, որոտալ>օրօղուշ, որոտ>օրէօդ:

Միայն ոսկի բառն է որ լինում է թէ՛ օսկի և թե վօսկի Տր. և օրծկալ բառն է՝ որ ստանալով եկամուտ կ հավելվածը, դառնում է զօյճզուշ, զօյճկուշ:

Որոշ բառը, ինչպես շատ տեղ, նույնպես և այս բարբառում դարձել է ուրիշ, որից էլ ձևացել է ուրիշուշ և որոշել, բաժանել:

37. Միավանկ բառերի միջին ո ձայնավորը սովորաբար դառնում է «էօ», որի հետ գտել եմ նաև Մալայում էժ, Ճանիկում «է», բայց նաև Օ: Կծ նաև իւ ձևով: Այս բոլոր ձայնափոխում թյունները պատկերացնող լավագուշն օրինակներից հիշելու արժանի են՝

ձոր>ժէօր, ծէօր, ծիւր, ծէր,

գոգ>կէծք, կէօք, կէք,

սոխ>սէօխ, սէխ, սօխ.

չորս>չէօյս, չիւյս, չօյս.

ժոց>ժէօց, ժէց, ժօց.

38. Երբ բառը հոլովվում է կամ որևէ մասնիկ ստանալով նոր բառ է կազմում, այնպես որ ո ձայնավորը շիշտից զրկվում է, դառնում է նորից օ: Այսպես՝

խոփ>խէօփ, սեռ. խօփի,

խոզ>խէօզ, սեռ. խօզու.

թոռն>թէծռ. թէօռ, սեռ. թօռօն.

գող>կէօղ, կող, բայց կօղնուշ «գողանալ»

գոլ>կէօլ «բողափառ», կօլուշ «վառել»;

թոք>թէծք, թէօք «հազ», թօքալ «հազալ»,

Այսպես նաև՝

փոպ>փէօպ, սեռ. փօպի,

փոր>փէօր, սեռ. փօրու,

հող>խէօղ, սեռ. խօղու

հոտ>հէօդ, սեռ. հօդու

քոս>քէօս, սեռ. քօսի

պոշ>բէօշ, բէշ, սեռ. բօշու

կարող է սեռականի մեջ էօ, իւ, է ձայնավորը պահվել. ինչ.
 չոր>չէօր, սեռ. չէօրի, չօրի,
 չոգ>չէսք, սեռ. չէքին, չօքին,
 նոր>նէօր, սեռ. նէօրի, նէրի, նօրի
 չորս>չէօյս, չիւյս, չօյս, սեռ. չէօյսի, չիւյսի, չօյսի են.
 սակայն բառակազմության մեջ էօ, իւ, է չի պահվում:

39. Մ բաղաձայնից առաջ գտնված ո ձայնավորը միավանկ բառերի մեջ դառնում է ու. այսպես են՝ գոմ>կում, մոմ>մում, ծոմ>ծում. — ուրիշ օրինակ և բացառություն չկա:

Բայց նույն իսկ ա՝ ռնգականի մոտ օ դառնալուց հետո տալիս է հրքեմն ու. ինչ. էսմօն, էդմօն, էմօն Տր. դառնում են ձ. ուսմունն, տղմունն, րմունն:

40. Վ բաղաձայնից առաջ գտնված ո ձայնավորը նույն պարագային մնում է օ և չի դառնում էօ, եղած օրինակներն են միայն ծով>ծօվ և կով>գօվ. բացառություն չկա:

41. Այստեղ հիշատակում եմ այն բառերը, որոնց մեջ ո դառնում է ու, իւ (էօ. ի և օ. ի հետ).

ծոպք>ծուպք՝ «կանանց նախշուն գոտի»,

քոդք>քուխկ

պորտ>բույդ

չորս>չիւյս

ձուր>ծիւր

գորտ>կույղ

42. Ամեն տեսակ բառի առաջին վանկում եթե կա ո ձայնավորը, առանց բացառության վերածվում է օ. ինչ. կօրի>գօրի «արտերի միջասանմանը», փօրեւ>փօրուշ, ցօրեան>ցօրին, ծոծրակ>ծօնծրազ, խօրիսխ>խօրիս, լօրտու>լօրդու «խզունջ», ժողովել>ժողվուշ, գոքանչ>գօքօնչ, բոլորտիք>ալօլդիք, գորտնուկ>կօյղնուկ (թեև արմատն է գորտ>կույղ, կէօյղ), մոռանալ>մօռնուշ, մօրենի>մօրրնի, սովորել>սօվրուշ են են:

Ունինք բարբառում ճլթրին բառը, թեև ուրիշ բարբառներում կա ծոթրին, ծաթրին:

Բորոտ բառը կա թե պօրօդ, թե պօրէդ և թե պէօրէօդ ձևերով:

«Մողալ, լողալ» բառերի մեջ ո ընկնելով դառնում են սղուշ, լղուշ:

43. Երկավանկ բառերի երկրորդ (չեղած) վանկում եթե

կա ո ձայնավորը, դառնում է սովորաբար էօ, կամ նաև «է», բայց կարող է նաև մնալ օ. ինչ.

բորոտ > պօրօղ, պէօրէօղ, պօրէղ

լակոտ > լազէօղ, լազէղ

լոկ որ > լօզօր, լօզէր «հենց հիմի, քիչ առաջ»

որոտ > օրէօղ, օրէղ

խաղող > խաղօղ, հավէօղ

խմոր > խրմէօր

խողոր > խօշէօր, խօշէր

խնձոր > խնձէօյ, խնձէր, բայց և խնձիւր

խստութիւն > սրխտէօր, սխտէր

փիլոսոփայ > փիլէօն

կապոյ > զարէօց

շնորհք > շնօրք

պղտոր > բղղէօր

սաղմոս > սաղմօս

վախկոտ > վախկէօղ, վախկէղ:

44. Դառնում է ու միայն դամոն > տամուն «սալոր» և միւսն > մէդուն բառերի մեջ, թեև փիլոն լինում է փիլէօն:

45. Երեք վանկանի բառերի մեջ, եթե վերջին շեշտյալ վանկը ունի ո ձայնավորը, դառնում է դարձյալ էօ, կամ «է» (միևնույն է, եթե միջին ձայնավորը ընկած լինելով՝ վերածվի երկավանկի): Եղած օրինակներն են՝ թագաւոր > թարվէօր, խլընքոտ > խլընլընկէօղ, խընլընկէղ, քթանոց > քընթնէց, օրօրոց, օրոցք > օրէցք (բայց նաև օրիցք), ամպորոտ > օմբոէօղ, օմբոէղ:

Գրական բառեր ենք համարում ճգնաւոր > ջրընսվօր, շնորհաւոր > շնաֆօր:

46. Վերահիշյալ 37 և 42—45 կանոնների համեմատությունից դուրս է գալիս այն ընդհանուր՝ եզրակացությունը, որ ո շեշտի տակ դառնում է էօ (է), իսկ շեշտից դուրս մնում է օ:

Սրա համար է որ երբ մի բառ վերջի վանկում ունի ո, որ դարձել է էօ, (կամ «է»), հոլովման կամ ածանցման ժամանակ նույն էօ ձայնը վերածում է դարձյալ օ-ի. ինչ. լակոտ > լազէօղ, սեռ. լազօղի, բայը լազօղուշ «լակոտներ հանել, ցնկնել», բորոտ > պէօրէօղ, պօրէն, բայր պօրօղուշ «բորոտի», խաղող > հավէօղ, յգ. հավօղնի (թեև կա նաև հավէօղուղ «այգի»), պղտոր > բղղէօր, սեռ. բղղօրի, որոտ > օրէօղ, օրէղ, բայը որոտաւ > օրէօղուշ, օրէղուշ, օրօղուշ:

47. Երեք և չորս վանկանի բաւերի մեջ, եթե միջին վանկերում կա անշեշտ ո, կարող է մնալ օ, բայց ավելի շատ կորչում կամ վերածվում է ը-ի: Այգպես են՝

բոլորտիք> պօլօլդիք,
բորոտիլ> պօրօդուլ,
զլորիլ> կլօրուլ,
թոռոմիլ> թօումուլ,
ժողովել> ժօղվուլ,
խնձորենի> խընձրընի,
խնոցի> խնօցի,
խոստովանիլ> խօստօվանուլ,
կայծոռիկ> գոճօռիգ,
ամպորոտ> օմբոէօդ, օմբոէդ,
մոլորիլ> մօլօրվուլ,
նորոգել> նորգել (ըստ Բիւր. 1900, 48).
շփոթիլ> շփօթուլ,
ուլորել> օլրրուլ,
ողորմիլ> օղօրմուլ,
որոճալ> օյջուլ,
պոռոչել> բօռչուլ,
սովորիլ> սօվրուլ:

Ու

48. Բառակազմում ու ձայնավորը մնում է անփոփոխ ու, ինչ-ու> ու (շաղկապը), ութ> ութը, ուխտ> ուխտ, ունդ> ճումդ, ունենալ> ուննուլ, ունկն> ունգ «կոթ», ուշ> ուշ «անագան», ուռենի> ուռընի, ուռչիլ> ուռուլ, ուս> դւս, ուտել> ուդուլ, ուրազ> ուրէք, ուրբաթ> ուրիաթ:

Ռեննալ բայը լինում է ուննուլ, իսկ ձ. օննուլ:

Ուլն, ուլունք բառը անկանոն կերպով դառնում է հիլուն, իսկ ուղնդ բառի մասին տես § 23:

Ուր բառի մասին էլ տես մակբայների բաժնում:

Բացառաբար ուստի դառնում է վուստի:

49. Բառամիջում ու մնում է անփոփոխ. հիշենք մի քանի օրինակ. ինչ. ամուր> օմուր, անուն> օնուն, արտասուք> ալդր-սունք, բուրդ> պուշտ, դուռն> տուռ, դուրս> տուս, ջուր> ճուր, կաբկուտ> գարգուր, ձուկն> ծուգ, Լուսանալ> լուսընուլ, բուսա-նիլ> պուսնուլ, լուցանել> լուցուլ «վառել», են:

Միակ բացառութիւններն են գլուխ (որ դառնում է կէծիս, կլէխ, իսկ մահմետական հայոց մէջ կէլիս) և կակուղ, որ դառնում է զագէօղ, բայց ֆնում է նաև զագուղ: Այս երկու բառերը Պոլսի բարբառումն էլ բացառութիւն են կազմում և ստանում այս ձևը: Համշենի բարբառում ուրիշ - ուխ կամ - ուղ հանգոյքառ չկա. ունինք միայն հարբուխ > խարփուխ և անանուխ > օնլուխը, որոնք կանոնավոր են: Կա նաև ցիխնը բառը, որ ներկայացնում է ձեղում բառը և շատ անկանոն է:

Փրփուր իբրև բնածայն համարվելով դարձել է փրփրը:

50. Հին հայերենում անուծ բառը երկու ձև ունի. անուծ կամ անթ:—վիճելի է թե այս երկուսից որն է հարադատ: Համշենի բարբառը ունենալով օնթ, ցույց է տալիս միայն անթ:

51. Եռաձայն բառերի միջում գտնված ու ձայնավորը ըստ օրինի պիտի ջնջվեր. բայց այս դիրքով օրինակ ընդամենը չորս հառ ունինք, այն է՝ պատքուսել > քաղոռուսուշ, քաղոռասուշ, պատսել > քրդքրուշ, ընկուզենի > ընգլլնի և սկուսեղ > կանդ <կողքի>: Առաջինի մեջ ու ֆնում է, մյուս երեքի մեջ ջնջված է:

52. Բառավերջում գտնված ու ֆնում է միշտ անփոփոխ. ինչ. լեզու > լիզու, հերու > հէրու, հօրու, մօրու > հօրու, մօրու <խորթ հայր, խորթ մայր>, լու > լու, գու > տում, լորու > լօղու <խղանջ>, կու > գուղի <աղբ> են: Բացառութիւն չունինք:

Երկրաբառների փոփոխությունը

Այ

53. Բառակազմում և բառամիջում այ երկրաբառը դառնում է <է> (Տրապիզոնի շրջանում) կամ ո (Մալայի և Ճանիկի շրջանում). օր. հայր > հէր, հոր, հայս > հէս, հոս, հայսեղէն > հոսեղէն <խմորեղէն>, եղբայր > ախըէր, ախպոր, հօրեղբայր > հօրըէր, հօրպոր, այլ > ոլ, էլ, այրել > էրուշ, որուշ, որբայրի > օրփրվերի, էօրպրվորի, փայտ > փէղ, փող, գայլ > կէլ, կփլ, քայլել > քփլուշ, ի վայր > վէր, վոր, տալք > դէքոր, դոքոր, փայտատ > փէղաղ, փողաղ, վայել > վոյուշ <լաց լինել> են:

Բացառութիւն չկա:

«Այս, այդ, այն» բառերը դառնում են ոս, էդ, ոդ, էն, ըն, իսս, իդս, ինս: Այսպես նաև սրանցից կազմված բառերը՝ խտուս, ոտտուս, ընտուս, իստուս, իտտուս, ինտուս <այստեղ, այնտեղ>, ոսմուն, ոդմուն, էսմուն, էդմուն, ըմուն <այսպես, այդպես, այնպես> (տես § 224):

54. Երբ այ երկրարբառը գտնվում է վերջավանդում՝ ն բաղաձայնից առաջ, դառնում է «է» (Տրապիզոն) և ը (Ճանիկ)։ այսպես են ձայն> ծէն, ծըն (որից և ձայնել> ծնուշ «հրավիրել, կանչել հարսանիքի»), լայն> լէն, լըն, երկայն> էրգէն, էրգըն, այն> էն, ըն, վրայ> վրըն։ Բացառություն և ուրիշ օրինակ չկա։

Այս օրենքը այնպես հաստատ է, որ նույն իսկ հակառակ համաչափության օրենքին մնում է անփոփոխ։ Այսպես այս, այդ, այն, ինչպես տեսանք, տալիս են իսա, իղա, ինս, տա, էդ, տդ, էն, բայց միայն ըն և չկա լոն, ինչպես և ըս, ըդ։

Սրա համար է նույնպես, որ ամեն(այն) բառը տալիս է մի կողմից էմէն և մյուս կողմից ըմըն ձևերը։

Միայնակ բառն էլ ստանալով մըննազ ձևը, մտնում է այս օրինակների շարքը։

55. Այդ «մարդ» բառը ստանում է երեք ձև. նախ ունինք այրիկ «ամուսին» բառը, որ դառնում է Տրապիզոնի շրջանում էրիգ։ Ճանիկի շրջանում տրիգ։ Երկրորդ՝ մտնում է բարդությանց մեջ և դառնում է միևնույն բարբառում մերթ տր և մերթ ար։ Այսպես սխրայր բառի մեջ դառնալով -տր, տալիս է կէսրտր ձևը։ Նույնպես կնքահայր բառի մեջ դառնալով Տրապիզոնի շրջանում էր և Ճանիկի շրջանում տր, տալիս է գնքէր և գընկտր ձևերը։ Բայց ավելի հետաքրքիր են դալար «տալոջ ամուսինը», հորքուրար «հորաքրոջ ամուսինը», մօրքուրար «մորաքրոջ ամուսինը» բառերը, որոնք զուտ հայկական կազմությամբ ընտիր բառեր են, թեև ոչ մի բարբառի մեջ չեն ավանդված։ Կարծում եմ, որ ար, տր ձևերի այս խառնուրդը միմիայն ձայնավորների ներդաշնակության համար է։

56. Մնում է խօսել կայանալ բառի մասին, ուր այ գտնվում է ձայնավորի մոտ («հայելի և վայելել» բառերը ջնջված են այս բարբառից)։ Գու. վրայնկ «անձրև» բառը դառնում է վրահէգ (չ զրված հորանջի պատճառով) կամ վրէգ, ուր այ բոլորվին սղված է։

Կայանալ ներկայանում է մեզ երկու ձևով՝ գէնուշ և գինուշ. երկու դեպքումն էլ միջին ա ձայնավորը ջնջված է, իսկ այ երկրարբառը դարձել է մի ճյուղում «է», մյուսում ի։

57. Բառավերջում այ դառնում է առանց բացառության ա. այսպես են գուրպայ> կուրքա, անլուայ> օնլրվա, օլվա, չուխայ> չուխա, սատանայ> սադօնա, փեսայ> փէսա, տղայ> դղա։

Հոլովման ժամանակ այս բոլորը կորցնում են իրենց ա
ձայնը. ինչ. կուրքի, չուխի, դղի, փէսի ևն:

Այ վերջավանկը ա ձեն ստանալուց հետո, երբ գտնվում է
մը անորոշ հողից առաջ, վերածվում է ը (հմմտ. § 54). ինչ.
սաղօնը մը, փէսը մը, դղը մը, չուխը մը «մի սատանայ, մի
փեսայ, մի սղայ, մի չուխայ»: Նույն իսկ այն ուղեսերեն բառե-
քը, որոնք վերջանում են ա ձայնավորով, մը անորոշից առաջ
ա դարձնում են ը. ինչ. փօշտը մը «մի փոշտա», ըօշկը մը «մի
տակառ», վիկը մը «մի պատառաքաղ», ակուշէնկը մը «մի
մանկաբարձուհի» ևն:

Ջարմանալի է որ միավանկ հայ բառը (մեր ազգի անու-
նը) դառնում է հէյի:

Աւ

58. Աւ ձայնավորից առաջ կամ բառավերջում դառնում է
ավ. ինչ. խաւիձ>խավիժ, հաւանիլ>հավնուշ, ծարաւ>ծարավ,
լաւաշ>լավաշ, թաթաւ>թաթավ «անձրև», լաւանալ>լավնուշ,
պառաւ>բառավ, ևն:

Այս դեպքում կարող է ա ձայնավորը ընկնել և այն ժա-
մանակ կստացվի միայն վ. ինչ. թագաւոր>թաքվէօր, թաթա-
ւել>թաթվուշ, թաւալել>թալվուշ (շրջված), ծարաւիլ>ծար-
վընուշ ևն:

Նմանապես ավ գտնվելով խուլ բաղաձայնի մոտ կարող է
դառնալ աֆ. ինչ. հաւաքույն>հաֆպուն, հաւաղուռ>հաֆտուռ,
կամ նույնը՝ հեռավոր հ-ի ազդեցությամբ՝ շնորհաւոր>շնա-
ֆօր:

59. Բաղաձայնից առաջ գտնված աւ (օ) դառնում է օ. ինչ.
հօրու>հօրու, մօրու>մօրու, տօսախի>դօսխի, յօրանջել>օրն-
ջուշ, մօտիկ>մօղիգ, կաթօտիլ>գարօղուշ, նօթի>օնօթի:

60. Բառի վերջին վանկում գտնված շեշտյալ աւ>օ դառ-
նում է միշտ օ. այսպես են՝ արօտ>արօդ, արօր>հարօր,
աղօթք>աղօթք, անօւր>նօ՝սրը, կտուօն>գրդվօն «կեղև», տօն>
դօն:

Այստեղ միակ բացառությունն է կարօտ, որ բացի գարօդ
ձևից, ստանում է նաև զարէօդ ձևը:

61. Մասնավոր դեպքեր են.

Նօթի (անօթի) բառը, որ ընդհանրապես դառնում է օնօ-
թի, ձօշարա գյուղում դառնում է օնէթի:

Մօրուք բառը, ինչպես այլուք շատ տեղ, նույնպես և այստեղ ստանում է միըուք ձևը:

Յօնք դառնում է ունք և սրա հոգնակին էլ լինում է ընքվի:

Ես

62. Բառի սկզբում չի պատահում. բառամիջումն էլ պատահում է միայն վերջավանկում, շեշտի տակ, ուր տալիս է «է», բայց ոնգականից առաջ միշտ ի. ինչ. լեռան>լէռ (Տր.), վառեալ>վառէգ, սեամ>շիմ, եղեամն>էղիմ, ցորեան>ցօրին, իւրեան>ուրին, իւրեանք>ուրինք, իւրեանց>ուրինց: Մառերի անունների սեռականը՝ -եաց դառնում է միշտ -էց. թղենեաց>թղնէցը, թթենեաց>թթնէցը, ընկուղենեաց>ընգղնէցը:

Միայն իրեար բառը դառնում է իրար, ուր եւ>ա. ինչ. գիւարի գէրօն «իբար կերան»:

Հոլովման ժամանակ այսպես ստացված ի ձայնը ջնջվում է. ինչ. սեամ>շիմ, սեռ. շմի, ցորեան>ցօրին, սեռ. ցօյնի:

-թիւն վերջացող բառերի սեռ. -թեան ձևը, ինչպես և -եաց փոքրայանքը ջնջված են:

Ես

63. Բառասկզբում գտնում ենք միայն եալթն>եօթն բառի մեջ, որ տալիս է օ'խտը. այսպես նաև եօթանասուն>օխտը նասուն: Վերջավանկում ունինք սեռալ>սէվ (Տրապիզոնում սիվ), բարեաւ>պարէվ. նաև առաջեաւ>ալէվ (Տր. ալլիվ):

Եւ

64. Մեծ մասամբ գտնվում է վերջավանկում, ուր տալիս է Տրապիզոնում իվ, ձանիկում էվ. ինչ. արե>արիվ, արէվ, քեթե>թէթիվ, թէթէվ, թե>թիվ, թէվ, ձե>ծիվ, ծէվ, ներքե>նէրքիվ, նէրքէվ:

Բառամիջի համար քիչ օրինակ ունինք, որոնց մեջ նւ դառնում է էվ, երկար բառերի մեջ կարող է կորցնել ձայնավորը. ինչ. ձեւի>ծէվուշ, երկի>երէվնուշ, որբալբի>օրպիվէրի, էօրպիվորի:

65. Այս երկու երկրաբառաներով ունինք ընդ ամենը երեք բառ, որոնք են՝ ալելուիա, լուգիա և միայնակ:

Առաջինը ջնջված է, փոխանակվելով ավելի հայացյալ ձևով, որ է ալէլուք: Ճանիկցիք արտասանում են ալէլուգ և հասկանում են «Ծննդեան երեկոյին տները ման. գալով երգած երգերը»: օր. ոս կիշէր ալէլուգ աստուշի էշտօնը:

Երկրորդը ճանիկցոց մոտ լօբյա ձևն ունի. կա նաև լօբգյա. Տրապիկոնցիք ունին լօբգէ ձևով. ոմանք էլ հնչում են լօբլա. սեռականում լինում է լօբլի, լօբգի. այսպեսով իս դառնում է յա:

Երրորդը դառնում է մըննագ, որի մեջ այն սովորական ձևով ջարձել է ըն. ուստի ի ձայնավորը ջնջված պետք է համարել:

Իւ

66. Բառասկզբի համար ունինք միայն երկու օրինակ՝ իւր և իւղ. առաջինի մեջ իւ դառնում է ու. այսպես փւր>ուր, փւրեան>ուրին, փւրեանք>ուրինք, փւրեանց>ուրինց. իսկ երկրորդի մասին տես § 69:

67. Բառի մեջ՝ իւ շեշտի տակ դառնում է ու. ինչ. ալիւր>ալուր, արիւն>արուն, խիւս>խուս, հարիւր>հարուր, սիւն>սուն, հիւս>հուս «ծամ», ձիւթ>ծութ, ձիւն>ծուն, մրջիւն>մէճում:

Իբրև բացառություն ունինք -ուլթիւն վերջացող բառերը, որոնց մեջ իւ դառնում է ի. ինչ. մեծութիւն>մէճուտին ևն:

68. Բառի մեջ անշեշտ իւ՝ բաղաձայնից առաջ գտնվում է միայն հիւսեիլ>հուսուշ և խիւսեիլ>խուսուշ «խիւս շինեիլ» բառերի մեջ, ուր գարձյալ իւ տալիս է ու:

Բացառաբար ունինք կիւղակէ>գիրագի և միւսոն>մէնուն բառերը, որոնց մեջ իւ տալիս է ի կամ «է»:

69. Դ ձայնից առաջ թե բառասկզբում և թե բառամիջում իւ դառնում է «է». եղած օրինակներն են՝ գիւղ>կէղ, գիւղացի>կէղացի, ծիւղ<ծէղ «լազուտի ցողուն», իւղ>յէղ (անցնելով եղ ձևից).—իսկ ճիւղը բառը դառնում է ջուխը:

70. Բառավերջում, ինչպես նաև բառամիջում՝ ձայնավորից առաջ համարվում է ոչ թե երկբարբառ, այլ ձայնավորից և բա-

դաձայնից բաղկացած մի ձայնախումբ. այս պարագային տա-
լիս է իվ. ինչ. կռիւ> գոիվ (բայց նաև գոէվ), կիւ> գիվ «ծա-
մոն», հիւանդ> հիվօնդ, հիւանդանալ> հիվըննուշ:

Եիւ «ձմերուկի կամ վարունդի թև» բառը դառնում է
Համշենի բարբառում շիւ: Իսկ ճիւ>ջիվ նշանակում է «փոքրիկ
ճիւղ», որի նվազականն էլ լինում է ջիվրիզ (<ճիւրիկ):

Ոյ

71. Բառի թե սկիզբը և թե մեջը շեշտի տակ լինում է ու.
ինչ. ոյթ> ուծ, անոյշ> օնուշ, բոյն> պուն, գոյն> կուն, երե-
կոյն<իրիզուն, ընկոյդ> ընզուզ, թոյլ> թուլ, լոյս> լուս, խոյլ>
խուլ, կապոյմ> գաքուդ, հանգոյց> հօնզուց, պատրոյս> բադրուս,
վարագոյր> վրաքուր, քոյր> քուր, կոյս> գուս:

Գրականից փոխառյալ է յոյս> հույս, որ սակայն նշանա-
կում է «փափագ»:

Բառավերջում ոյ երկբարբառը գտնվում է միայն սեռակա-
նի ֆայրին և դառնում է նմանապես ու. ինչ. մարդոյ> մաշտու, և
Աստուծոյ> աստրծու, իշոյ> իշու են:

Ուս

72. Առհասարակ դառնում է վա. ինչ. Աստուած> աստված,
անլուայ> օնլրվա, օնվա, օլվա, ձուագեդ> ծվագէդ, նեղուածք>
նէղվածկ, տուաւ, տուեց> դրվալ:

73. Երբ սոյն ուս պատահի ռնգականի մոտ, բնականաբար
դառնում է վօ. ինչ. իրիկուան> իրիզվօն, երէկուան> էրէզվօն,
շատրուան> շադրրվօն են:

74. Լուանալ, լուացուիլ բայերը ստանում են թե վա և
թե օվա ձևերը (վերջինը Տրապիզոնի շրջանում). ինչ. լուա-
նալ> լօվընուշ, լրվընուշ, լուացուիլ> լօվացվուշ, լվացվուշ, լը-
ուացք> լօվացկ, լվացկ:

75. Զուան բառը ստանալով ի ձայնավորը՝ դառնում է
չիվօն:

Ուն, ուի...

76. Այս երկբարբառներով քիչ բառ կա. եղած օրինակնե-
րում դառնում է վ. ինչ. կուենի> գրվընի «բեկենի», կուելի>
գրնվուշ, կորսուելի> գօյսրվուշ, կորսուեցայ> գօյսրվէցա, կտուօն>

գրդվան «ծառի կեղև»։ նույնպես և ու վերջացող բառերի սեռա-
կանք։ ինչ։ լու>լուի, լվի, կատու>գաղվի, հեռու>հեռվի, մե-
ղու>մեղվի, լորտու>լոյրու, սեռ։ լոյրվի «խղուշ», թթուաշ>
թրթվաշ, թթուիլ>թրթվուշ։ Իսկ կծու>զծու և թթու>թթու
բառերի վերացական ձևը լինում է թե՛ զծվուտին, թթվուտին և
թե՛ զծուուտին, թթուուտին։

Բաղաձայնների փոփոխությունը

Բ

77. Բ բաղաձայնը Համշենի բարբառում դառնում է բա-
ռասկզբում Մալայի ճյուղում ք, Ճանիկի ճյուղում պ, Տրա-
պիզոնի մոտի գյուղերում ք. օր. բան բառը դառնում է քօն, պօն,
քօն։

Տալիս ենք այստեղ ուրիշ օրինակներ Ճանիկի ճյուղից.—
բանալ>պօնուշ, բերել>պէրուշ, բողկ>պէօղգ, բույն>պուն,
բովել, բոհրել>պօֆրուշ, բոց>պէօց, պօց, բրինձ>պրինձ են։

Բզգալ բառը իբր բնաձայն պահելով իր նախաձայնը դառ-
նում է բզբզուշ, իսկ բուրվառ բառը՝ իբրև եկեղեցական լեզվից
փոխառյալ բառ՝ նախաձայնը վերաճելով Թավի, դառնում է
փուրվառ։

78. Բառամիջում իբրև անկախ օրինակ ունինք միայն
պընթ, խաըն և շաըսթ բառերը, որոնց մեջ ք դառնում է փ
կամ պ. այսպես ասիէթ կամ ասպէտ, խափուշ կամ խապուշ, շա-
փաթ կամ շապառտ։— Սրանց մասին տես ավելի մանրամասն թ
տառի տակ։

Նոր փոխառություն է լորի բառը, որ Համշենի բարբա-
ռում ստանում է լօրգէ, լօրգյա, լօրյա և լօրլա ձևերը, որոնց
բոլորի մեջ էլ ունինք ք։

79. Մնացյալ բառերը ներկայացնում են որոշ ձայնաբա-
նական պայմաններ. այսպես՝

Ռնդականից հետո մնում է ք. այսպես ունինք միայն ամ-
բար>օմբար և թումբ>թումբ։ Եթե այսպեսի ք պատահի ք
բաղաձայնի մոտ, կարող է մնալ և կորչել. ինչ. ամբար, սեռ.
օմբրի կամ օմրի. սրա նման նաև ամպորոտ>օմբոնդ կամ օմ-
ռէդ «որոտում»։

80. Բ բաղաձայնից հետո ք դառնում է փ, որ ըստ Ճանիկ-
ցոց հնչվում է նաև պ. այսպես՝ հարբուխ>խարփուխ, խար-

պուխ, ուրբաթ> ուրփաթ, ուրպատ, սուրբ> սուրփ, սուրպ, սրբել> սրփուշ, սրպուշ, բրբեայրի> օրփրվէրի, էրպրվորի (ձաշարա գյուղում օրբրվէրի), հօրեղբայր> հօրբէր, հօրպոր:

81. Բառավերջումն է, բայց նույնպես ը բաղաձայնից հետո գանվելու պատճառով դառնում է փ՝ երբ> լիփ յէփ բառի մեջ:

82. Խ ձայնից հետո ընկած ժամանակ տալիս է ը՝ կամ պ. այսպես ունինք աղբիր, որ Մալայում դառնում է ախրուր (ձանիկում ջնջված է փոխանակվելով Թբ. պուղար ձևով), եղբայր> ախպոր:

Գ.

83. Բառակզբում զ բաղաձայնը տալիս է Մալայում գ՝, ձանիկում կ, Տրապիզոնի շրջանում գ. օր. գիշեր> գ՛իշեր, կիշէր, գիւղ> գ՛նղ, կէղ, գանգատիլ> գ՛օնգղուշ, կօնգղուշ, գողանալ> գ՛օղնուշ, կօղնուշ, գրել> գ՛րուշ, կրուշ են:

84. Ուրիշ բարբառներից փոխառությամբ նախաձայնը պահում են՝ գերանդի> գէրընդի (այլուր քերէնդի), գուղձ> գունձ ճկողի կոշտ, գունձուկ լիմորի գունդ են)։—գերեզման բառը ունինք Թե կէրէզմօն և Թե քերէզմօն ձևով։—հետաքրքիր է գրբ. զահ, որ այստեղ դարձել է քոհ՝ չղժարանցանի բլուր կամ բարձունք)։—Տրապիզոնից փոխառյալ հմ համարում գաղտիկուր> գաղզուր, որ ճիշտ այս ձևով գործածական է նույն տեղում:

85. Բառամիջի զ անկախ լինելու դեպքում դառնում է ք, որ ձանիկի շրջանում դառնում է կ. օր. հոգի> հօքի, հօկի, ագանիլ> հաքնուշ, հակնուշ, ագայ> հաքա, հակա, ագահ> ալկահ, ծագիլ> ծէքուշ, ծէկուշ, Թագաւոր> Թաքվէօր, գալ, կզգան> գուքօն, գուկօն, պագանիլ> քաքնուշ, քակնուշ, վարագոյր> վաւարքուր, վրաքուր, տայգը> դէքուր, դոկոդ, տարգալ> կղալ, ցաւագար> ցավաքար, ճգնաւոր> ջքնավօր, ջկնավօր, այգ> էքվօն, տկվօն «առավոտուն» են:

86. Թնդականից հետո դառնում է գ. ինչ. դանգակ> գօնգազ (սեռ. գօնկիի), մանգաղ> մօնգաղ (սեռ. մօնկիի), հանգոյց> հօնգուց, հօնգուստ, կանգնիլ> գօնգնուշ (Տբ. գօղնուշ)։—միակ բացառություններն են անագան> օնկօն «աշնան ուշ ցանված (արտ)» և փոնգատլ> փորնքղուշ, փորնկտուշ։—

Առաջինը ցույց է տալիս մեկ թե միջին ձայնավորների անկման օրենքը ավելի ուշ առաջացած մի երեւոյթ է քան բաղաձայնների աստիճանների փոփոխութիւնը բառի ներսում: Երկրորդի մեջ կ'կամ ք հաջորդ տ-ի ազդեցութեամբ է:

87. Բաղաձայնից հետո դառնում է ք (ձանիկ կ), որի համար իբրեւ օրինակ ունինք միայն կարգել > զարքուշ, զարկուշ «ամուսնացնել»:

88. Բառավերջում ձայնավորից հետո դառնում է ք, որ ձանիկի շրջանում տալիս է կ. այսպես են՝ պատարագ > բարաւրաք, բարառակ, էգ > էք, էկ, թագ > թաք, թակ, ուրագ > ուրէք, իւրոկ, մարագ > մարաք, մարակ, շագ > շէօք, շէօկ, ձիգ > ծիք, ծիկը, կարագ > զարաք Տր., ճրագ > ջրաք, ջոակ, գոգ > կէօք, կէօկ, կէկ:

89. Բառավերջում ռնգակաւորից հետո անում է գ. ինչ. ժանգ > ժօնգ, հինգ > հինգ, —իսկ եղունգ՝ իբր թե հոգնակի լինելի դառնում է էղունք (ձանիկի շրջանում էղունկ):

90. Բառավերջում ր-ից հետո դառնում է ք, որի միակ օրինակն է մաշկամիրգ > մաշմուրք չլազանակ > (ձանիկի շրջանում Մաշմուրկ): Գրականից է փոխառյալ երգ > յէրք:

Դ.

91. Դ բաղաձայնը բառասկզբում դառնում է Մալայի ճյուղում՝ դ', ձանիկում տ, Տրապիզոնի շրջանում դ. օր. դաւնալ > դ'աղնուշ, տաղնուշ, դաղնուշ, դուք > դ'ունք, տունք, դունք, գնել > դ'նիւշ, տնուշ, դնուշ, դգում > դ'ընթում, տընտում, դընթում են:

92. Նոր փոխառութեանց մեջ բառասկզբի դ անում է բնականաբար դ. այսպես դարման բառը թեև իբրեւ հին հայերէն բառ «յարգ» նշանակութեամբ դառնում է տարմօն (ձանիկի ճյուղ), բայց «դեղ, ճար, հնար» նշանակութեամբ, իբրեւ նոր փոխառութիւն տալիս է նույն ճյուղում՝ դէրմօն:

93. Տրապիզոնի շրջանում զբական ազդեցութեամբ կամ քաղաքի բարբառից փոխառութեամբ կարելի է գտնել դ > թ. ինչ. դաս > թաս (որ ձանիկում այժմ տաս ձևն ունի) և դերծան > թէյցօն (որ ձանիկում գոյութիւն չունի և նրա փոխառին գործ է ածվում թնոցու):

94. Բառամիջում իբրեւ անկախ օրինակ ունինք միայն դադարիւ և դղում, որոնք Մալայում տալիս են տաթրուշ, տը-

Թում, իսկ ձանիկում տատրուշ, տրտում: Ըստ այսմ բառամիջի դ դառնում է Թ կամ տ: Մյուս օրինակները ներկայացնում են մասնավոր պարագաներ:

95. Բառավերջում ունինք միայն մի օրինակ, որ է այդ>տդ, էդ. որ նաև իդա ձևն է ստացած:

96. Ռնգականից՝ հետո թե բառամիջում և թե բառավերջում դ մտնում է դ. ինչ. սանդ>սոնդ, պինդ>քինդ, սնդուկ>սնդուկ, փոխինդ>փոխինդ, ունդ>հունդ, հիւանդ>հիւսնդ, հիւվանդանալ>հիվընդնուշ (ապա դ-ի անկումով՝ հիվըննուշ), խընդալ>խնդուշ չուրախանալ, զնդան>զնդոն բանտ. 2. մութ գիշեր, բարեկենդան>պարագիղոնք (ապա ն ընկած):

97. Միայն ցնդիլ զգառամությունից ցնորիլ բառի մեջ գտնում ենք Թ (=ձանիկ տ). այսպես՝ ցընթուշ կամ ցընտուշ: Սրա նման նաև գվռ. լանդակ բառի մեջ, որ ձանիկում լինում է լոնտագ «մի տեսակ ջրալի խյուս»:

98. Ի բաղաձայնից հետո, թե բառամիջում և թե բառավերջում դ դառնում է տ, իսկ ր դառնում է շ. ինչ. բուրդ>պուշտ, վարդավառ>վաշտէվոր, վարդապետ>վաշտաբէդ, կարդալ>գաշտուշ, հորդել>հօշտուշ «գոմը թիով մաքրել», մարդ>մաշտ (որից մաշնագ լավ, իբր թե՝ *մարդանակ), երդումն>էշտվընք, երդուել>էշտվըննուշ:

Մալայում և Տրապիզոնի շրջանում այս տ ձայնի փոխարեն գտնում ենք Թ. ինչ. կարդալ>գաշտուշ, գաշթուշ, մարդ>մաշտ, մաշթ:

99. Այս կանոնին բացառություն են կազմում արդար>արթար, արտար և մարդակ>մորտուդ, մէրթէք: Առաջինը փոխառյալ է գրական լեզվից, երկրորդը թեև հայերեն, բայց նախ անցած թուրքերենի և ապա նորից վերադարձած հայերենի, ինչպես ցույց է տալիս դ վերջաձայնը:

100. Վարդապետ բառը ունի երեք ձև. իբրև բնիկ Համշենի բառ՝ դարձել է վաշտաբէդ, գրականից նոր փոխառությամբ վարթաբէդ, իսկ հին միջնադարյան ձևից՝ վարբէդ «վարպետ, ուսուցիչ»:

101. Երբ այսպիսի ընդ ձայնախմբից առաջ գտնվի չչական մի ձայն (ս>զ, ջ>ճ), ինչպես և խ, ըդ>շտ ձայնափոխությունը տեղի չի գւնենալ և ըդ դառնում է յթ, յտ: Այսպես ունինք պարդ>զայթ, զայտ, սարդբոյն>զայտպուն «սարդի ոստայն»,

ծառղարղար> զայլզայտար, ջարդել> ճալթուն, ճայտու, խար-
դախ> խայտաղ:

Ճիշտ այս կանոնի համեմատ՝ ըթ որ Համշենի բարբառում
դառնում է շտ, նման դեպքում մնում է յթ, յտ. այսպես մի
կողմից հորթ> հօշտ և մյուս կողմից զարթուն> զայթուն, զայ-
տուն:

102. Դ բաղաձայնի փոփոխությունները վերջացնելու հա-
մար մնում է միայն մի օրինակ, որ է խեղդել>խըխղուշ, խէխ-
տուշ, որին համապատասխան ուրիշ օրինակ չկա բարբառում:

2

103. Ամեն դիրքով էլ մնում է զ. ինչ.

Բառասկզբում՝ զանգակ>զօնզազ, զատ>զառ, զատիկ>
զաղիզ, զարկանել>զայնուշ, զերծանիլ>զէյծնուշ, զկեռ<զղիւր,
զոքանչ>զօքօնչ:

Բառամիջում՝ բազէ>պազա, բալուկ>պազուզ «ճակնդեղ»,
բզգալ>բզգուշ, բզբզուշ, գաւազան>կավազօն, գերեզման>կէրէզ-
մօն, գզել>կզուշ, ընկուզենի>ընզընի, թզենի>թզընի, լեզու>
լիզու, լիզել>լիզուշ, խզար>խզար, ծառղարղար>զայլզայտար,
կկզիլ>զուզուզուշ, հազար>հազար, յուզել>ուզուշ, ոզնի>օզնի:

Բառավերջում՝ գոյ>կէօզ, դէզ>տէզ, եզն>յիզ, յէզ,
երազ>նէրազ, ընկոյզ>ընզուզ, թիզ>թիզ, թուզ>թուզ, խէզ>
խլէզ, խոզ>խէօզ, կորիզ>զօրիզ, մազ>մազ, նազ>նազ, վազ>
վազ «որթատունչ»:

թ

104. Բառասկզբում մնում է միշտ թ. ինչ թան>թօն,
թաց>թաց, թառիլ>թառուշ, թանձր>թօնձրր, թաւալիլ>թալ-
վուշ, թողուլ>թօղուշ, թզենի>թզընի, թըջել>թըյշուշ, թոք>
թէօք «հազ» են:

105. Այս պարագային ունինք երկու բացառություն, այն
է թասիլ և թէ: Առաջինը՝ գրբ. թասիլ «հեալ» դարձել է այս
բարբառում թաստուշ (ըստ Տր.), բայց ձանրկում լինում է
տաստուշ, ուր նախաձայն տ առաջացել է անշուշտ վերջին տ-ի
ազդեցությամբ: Երկրորդը՝ վերածվելով հարցական մասնիկի,
սովորաբար հնչվում է թէ, բայց ձանրկում դարձել է նաև տո, որի
մասին ավելի մանրամասն տես § 107:

106. Բառամիջուկ, անկախ լինելու պարագային թ մնում է թ. ինչ. Թաթաւ> թաթաւ (անձրև), Թաթաւել> թաթաւում, Թեթեւ> թէթիվ, թէթէվ, Թթու> թծու, Թթեռն> թիթէտ, նօթի> օնօթի, քթանոց> քընթնէց, անթել> օնթուռ «գրկել», Թթենի> թըթընի ևն ևն:

107. Ճանիկի շրջանում ձայնական ընդհանուր օրենք է, որ առն և թ Թալ բաղաձայն (փ, ք, Թ, ց, չ), գտնվելով բառամիջուկում կամ բառավերջում վերածվում է պարզ խուլի (պ, կ, տ, ծ, ճ): Ըստ այսմ բոլոր վերոհիշյալ բառերը ձանիկում հնչվում են տուվ. ինչ. օնօտի «անօթի», թըտընի «թթենի», թէտէվ «թեթև», թիտէտ «թիթեռ» ևն:

Սրա համար է, որ թէ հարցական մասնիկը միանալով նախորդ բառին և իբրև նրա մի մասը համարվելով՝ ձանիկի շրջանում վերածվել է տու:

108. Բառավերջում թ մնում է թ, իսկ ձանիկի շրջանում ըստ նախորդի դառնում է տ. ինչ. արեթ> արիէթ, ապէտ, անալութ> օնլութ, օնլուտ «եղնիկ», արծաթ> ալծաթ, ալծատ, երկաթ> էրգաթ, էրգատ, Թութ> թութ, թուտ, կաթն> գաթ, գատ, հաւկիթ> հավգիթ, հավգիտ, Թաթ> թաթ, թատ ևն:

109. Դտնվելով իս ձայնից հետո, Թ բառամիջուկում և Թե բառավերջում թ դառնում է տ, որ Տրապիզոնի շրջանում կարող է շփոթվել ու հնչման հետ. ինչ. եօթն> օխտը, օխըը, եօթանաւուն> օխտընաւուն, յաղթել> էխտուռ (Տբ. ըխդուռ), Թուղթ> թուխտ «գիրք», մաղթ> մախտ «խէժ», նաև հոլովման ժամանակ, երբ թ ընկնի իս-ից հետո. ինչ. մախաթ, սեռ. մախաթի> մախտի:

110. Ըթ ձայնախումբը վերածվում է շտ. ինչ. մորթել> մօշտուռ, երթալ> էշտուռ, հորթ> հէօշտ, հէշտ, հօշտ, խորթ> խէօշթ, խէօշտ, խէշտ, քերթել> քէշտուռ, բրդուռ> պշտուռ:— Այս գէպում Տրապիզոնի շրջանում լսվում է թ. ինչ. կարդալ> գաշթուռ, գաշթըցի ևն: Բայց երբ ըթ ձայնախմբից առաջ կա շշական ձայն, ըթ դառնում է յթ. ինչպես ունինք զարթուն> գալթուն, գալտուն, դարթնուլ> գալթուռ, գալտուռ: Այս բոլորի համար հմտ. վերը § 98 և 101:

111. Իթ ձայնախմբից առաջ նման փոփոխություն առգիչի ունենում, ինչպես ցույց է տալիս մեր միակ օրինակը՝ փէրթ «կտոր»> փէռթ, փէոտ:

112. Երբ թ ձայնը (վերածվելով տ) ընկնում է ծ բաղա-
ձայնի մոտ, ինքն էլ վերածվում է ծ. այսպես է կթիչ՝ «կաթ
կթելու աման» > զթիչ, գտիծ, սեռ. զրծծի:

113. Թս խումբը տալիս է ծծ. այսպես ունինք վաթսուն >
վածծուն և ութսուն > ուծծուն բառերի մեջ:

114. Փաթաթել բայը սղմամբ դառնալով փաթթել՝ հընչ-
վում է Տրապիզոնի շրջանում փաղղուշ, ձանիկում փատտուշ:

115. Փեթակ բառը այն զարմանալի բառերից է, որ նախ
հայերենից անցել է թուրքերենի և ապա իբրև օտար փոխառու-
թյուն՝ թուրքերենից անցել է հայերենի: Համշենի բարբառում
դարձել է փէտող. իսկ բուն տեղական հայկական բառեր են՝
փորիկ > փորիկ և փորոք > փորէօք «փեթակ»:

Ժ.

116. Ամեն դիրքով էլ տալիս է Ժ. այսպես՝ բառակցքում՝
ժանգ > ժօնգ, ժուռ > ժուռ «վայրի խաղող», ժողովել > ժողվուշ,
ժամանել > ժըմնուշ, ժամ > ժամ՝ ևն:

Բառամիջում մերժել > մէռժուշ, շարժել > ժաժուշ, արժել >
աժուշ, արժան > էժօն, վարժապետ > վարժաբէդ, մժեղ > մժէխ:

Բառավերջում կա միայն ոյժ > ուժ:

117. Մասնավոր պարագաներ.

Շարժք «երկրաշարժ» բառը ժաժք ձևը ստանալուց հետո,
երկրորդ ժ ձայնը՝ հարմարվելով հարակից բաղաձայնի աստի-
ճանին, դարձել է շ. ըստ այսմ ունինք շարժք > ժաշք,
ժաշկ:

Ժ դարձել է շ հետևյալ բառերի մեջ.

Վարժապետ. բուն ձևն է վարջրբէդ. գրականից է փոխառ-
յալ վարժաբէդ:

Մժեղ դարձել է մժէխ, բայց նաև մջէդ:

Գրութան բառը ըստ Գուլի հին հայկաբանների՝ Գուլի
բարբառում դարձել է դրոջան և գործ է ածվում իբրև նախա-
տական վերադիր հույների համար: Նույնը կար նաև Տրապիզո-
նի բարբառում դրոջօն ձևով. այժմ ես չգտա նրա հետքը ձա-
նիկի նոր գաղթականների շրջանում:

Լ

118. Ամեն դիրքով էլ առհասարակ մնում է Լ. ինչ.

Բառի սկզբում.— լաց լինել > լաց ընուշ, լակոտ > լագէօդ,

լոյս>լուս, լի>լիքը, լեղի>լէղի, լնուլ>լլուշ, լեզու>լիզու,
լինիլ>լլուշ, լուանալ>լօվընուշ, լայն>լըն են:

Բառի մեջ.—ալիւր>ալուր, ածելի>ածիլի, անալի>օնլի,
անալութ>օնլութ «եղնիկ», բանալի>պօնլիք, գլորիլ>կօրուշ,
գլուխ>կէօխ, ելանել>էլլուշ, խելք>խիլք, ծալել>ծալուշ, շա-
լակել>շալզուշ, ուլունք>հիլուն են:

Բառի վերջը.—մոայլ>մոուլ «ամպ», այլ>էլ, ուլ, աւել>
ավիլ, բալ>պալ «կենաս», գայլ>կէլ, կ'ոլ, դալ>տալ «առաջին»
կաթք, թոյլ>թուլ, տարգալ>կղալ են:

Խ

119. Ամեն դիրքով էլ ընդհանրապես ֆնում է՝ խ. ինչ.

Բառասկզբում՝ խաբել>խապուշ, խածանել>խածուշ, խառ-
նել>խառնուշ, խաւիծ>խավիծ, խնձոր>խնձիւր, խնծէօյ, խնծէր,
խմել>խմուշ են:

Բառամիջում՝ կախել>զախուշ, ծախել>ծախուշ, մոխիր>
մօխիր, փխար>օջխար, տօսախ>դօսխի, փոխինդ>փօխինդ,
փոխել>փօխուշ են:

Բառավերջում՝ սօխ>սէօխ, վախ>վախ, ցախ>ցախ,
փոխ>փէօխ, քացախ>քացախ, մուխ>մուխ, թարախ>թարախ,
գլուխ<կլէօխ են:

120. Եթե մի բառ սկսում է խ բաղաձայնով, որից հետո
կա նաև դ, այդ խ ձայնը դառնում է հ. այսպես են խաղ>հաղ,
խաղալ>հաղուշ, և խաղող>հավէօղ: Այս բոլորը սակայն ճանի-
կի շրջանում ֆնում են իս ձևով:

121. Եթե մի բառ սկսում է խ բաղաձայնով և վերջանում
է նույնպէս խ բաղաձայնով, այս վերջինը դառնում է դ: Սրա
համար իբրև օրինակ ունինք հարբուխ>խարբուխ>խարփուղ և
խարդախ>խարտաղ:

122. Մասնավոր պարագաներ.

Բառասկզբում խ դարձել է դ՝ միայն իսակ>դագ բառի մեջ.
պատճառը վերջաձայնի թրթռումն է: Նմանապես ճխլիլ բառի
մեջ՝ խ գտնվելով երկու թրթռուն ձայների միջև, դարձել է դ.
այսպես՝ ջղուշ:

Ս

123. Բառասկզբում ամեն շրջանում էլ դառնում է ձ. ինչ.
ծառ>ձառ, ծանր>ձօնորը, ծակ>ձագ, ծաղիկ>ձաղիգ, ծամել>
ձօմուշ, ծով>ձօվ, ծունկ>ձունգ են:

Միայն ծառազարդւոր բառի մեջ նախաձայն ծ ազդվելով հաջորդ գ-ից դարձել է զ և բառը եղել է զայլզայտար:

124. Բառամիջուժ ձայնավորից առաջ գտնված ժամանակ դարձյալ դառնում է ծ. Ինչ. ծիծաղիլ>ծիծաղուշ, ծեծել>ծէծուշ, խածանել>խաճուշ, լծել>լճուշ, թրծել>թրյճուշ, գործել>կոյճուշ, գործելի>կոյճէլի բաժուխ», ածու>աճուք բբանջարանոց», ածելի>աճիլի, կծծի>զուճի (մի ծ ընկած), նորածին>նոյճին եղեռնոր ձագ ունեցած կով», մոծիր>մ'օծիր են:

125. Ուրիշ բարբառների հետ համեմատությունը ցույց է տալիս, որ բաղաձայնից առաջ գտնված դեպքում ծ դառնում է զ: Սրա համար Համշենի բարբառում իբրև օրինակ ունինք՝ հեծանել>հէզնուշ (թեև կտր. հէճա), մածուն>մ'աճուն, բայց սեռ. մազնի, դերձանիլ>զէյզնուշ պատրաստությունները տեսնել վերջացնել» (թեև կա նաև զէյճնուշ, կտր. զէյճու), *կայծատիլ, *կայծտիլ>զոզղուշ «փայլատակել», զոզղից «փայլատակեց», զէ՛զղիչ (իբր *կայծտիչ) «կայծոռիկ միջատը», ծոճրակ>ծօնճրագ, բայց նաև ծօնճրագ: Սակայն անփոփոխ ծ ձևով են մնում ծածկել>ծաճգուշ, կծկել>զճգուշ (նաև «կկզել» նշանակությամբ), ործկալ>զօյճգուշ կամ զօյճկուշ:

126. -ծք վերջավորությամբ բառերը մնում են անորոշ ծք, ծկ, սկ արտասանությամբ. Ինչ. անէծք>անէծկ, նեղուածք>նէղվածկ, լուացուք>լվնուսկ են:

127. Բառամիջի ծ-ի առանձին դեպք է ներկայացնում պիծակ «վայրի մեղու», որ այս բարբառում դառնում է բուճէզ և բուճէզ:

128. Բառավերջում գտնված ծ դառնում է միշտ ծ. Ինչ. լուծ>լուծ, խաւիծ>խաւփիծ, ծհծ>ծէծ, ծիծ>ծիծ, անիծ>օնիծ, այծ>էծ, ոծ, մեծ>միծ, մէծ, կայծ>զէծ, զոծ, ցած>ցած, քած>քած:

4

129. Բառասկզբում կ բաղաձայնը ամեն տեղ էլ տալիս է գ. Ինչ. կաղնի>զաղնի, կանեփ>զօնիփ, կաթն>զաթ, կանչել>զօնշուշ, կարճանալ>զայջընուշ, կիւ>զիւլ «ծամոն», կուենի>զրվընի բեւեկնի», կարմիր>զարմիր են:

130. Բառամիջում ձայնավորից առաջ նույնպես դառնում է գ. Ինչ. երիկամն>իլիզօմօն, բարեկենդան>պարզիղօնը, փակել>փազուշ, ճակատ>ջազսդ, սատակել>սադզուշ, կիրակի>

գիրագիր, պսակել > քսագուշ, կարկուտ > գարգուղ, պակաս > բա-
զաս, հերկել > հէրգուշ, ներկել > նէրգուշ, կակուղ > գագէօղ, ու-
ղարկել > ղրգուշ ևն:

131. Ռնգականից հետո դառնում է նույնպես գ, թե բառա-
միջում և թե բառավերջում. ինչ. ականջ > օնգօջ, տնկել > ղնգուշ,
ընկոյգ > ընգուգ, ընկեր > ընգիր, թանկ > թօնգ, ժանգ > ժօնգ,
խունկ > խունգ, ծունկ > ծունգ, ճանկ > ջօնգ, դանգատիլ > կօնգ-
ղուշ ևն:

Միայն ունկն բառը, որ «ամանի եղերք» իմաստն է ստա-
ցած, հոգնակի կարծվելով դարձել է ունք § 259:

Այսպես նաև գորտնուկ բառը, որ դարձել է կօյղնունք կամ
կօյղնունկ:

132. Բառավերջում ձայնավորից հետո ստանում ենք միշտ
գ. ինչ. շապիկ > շաքիգ, շէկ > շէգ, պտուկ (կովի) > քղուգ, ծաղիկ >
ծաղիգ, կրակ > գրագ, ձուկն > ծուգ, մուկն > մուգ, ցերեկ > ցօ-
րիգ, ցօրէգ, տիկ > ղիգ, տակ > ղագ, ջուլհակ > ճուլագ, վառեակ >
վառէգ. — նաև թրթռուն բաղաձայնից հետո՝ բողկ > պէօղգ:

133. Բառամիջում խուլ բաղաձայնի հետ պատահելու ժա-
մանակ (հատկապես ու-ի հետ) դառնում է կ. ինչ. վախկոտ >
վախկէօղ, խսկի > իսկի, ոսկի > օսկի, հասկանալ > հասկընուշ,
սկիհ > ըսկի, ոսկը > օսկէր, սոսկալ > սօսկուշ, սկեսուր > ըսկէսուր,
ործկալ > զօյծգուշ կամ զօյծկուշ, արձակել > աքքրուշ, աքկրուշ,
պատկեր > քատկէր, որոնք Տրապիզոնի շրջանում կարող են նաև
ստանալ թրթռուն ձև. այսպես՝ քաղգէր, սօսգուշ, ըսգէսուր, ևն:

134. Հետաքրքրական է սկնսուր բառը, որ իր նախաձայնը
կորցնելու գեպքումն էլ հնչվում է խուլ կ-ով (կէսուր). նույնպես
սկնարալը դառնում է կէսրոր:

Ունինք նաև սկուտեղ բառը, որի նախաձայնի ֆնջամբ
ձևացած եմ կարծում կտեղ (հնչվում է նաև գրղղղ) Վոդոգ:

135. Կան բարբառներ, որոնց մեջ նկ ձայնախումբը հաջոր-
դական ն-ի մոտ վերածվում է յ. այսպես անկանել, ընկնել > Պլ.
իյնալ: Համշենի բարբառում այս երևույթը չկա: Այս գեպքումն
էլ նկ դառնում է նգ. այսպես անկանիլ > ընգնուշ, կտր. ընգա
(իսկ Տր. ըղնիլ). նմանապես կանգնիլ բայը տալիս է Հմշ. գօնգ-
նուշ (Տր. գօղնուշ) և զանգատիլ > Հմշ. կօնգղուշ: Գալով դարկա-
նել > գայնուշ բառին, այստեղ ոչ թե կ բաղաձայնն է որ վե-
րածվել է յ, այլ ը բաղաձայնը (իբր դարնել > գայնուշ). — կ պար-
դպես ընկել է:

136. Մասնավոր դեպքեր.—

Կ ձայնը վերածվել է ղ հետևյալ բառերի մեջ.—*զանձանակ* > *կանցանաղ*, *զկեռ* > *զղիր*, *զկոենի* > *զղրընի*, *ճապկտիլ* > *ջաղղղուռ*, *կճեպ* > *ղջէպ* (բայց *կճպել* > *զըջվուռ*):

Պոռուկ «շուրթն» բառը հոգնակի պոկունք ձևի տակ ֆալով բարբառիս մեջ՝ չարաչար ձևափոխվել է և դարձել *բըրբունը*, *բըրմունը* (մահմետական հայոց մոտ *բէրբուր*)։ առաջինի մեջ կ նմանվել է նախաձայն *բ-ին*, երկրորդի մեջ նմանվել է հաջորդ ուղղականին։

Հ

137. Բառասկզբում *հ* ձայնը պահում է իր ուժը անփոփոխ. *քաղմաթիվ* օրինակներից *հիշենք՝ համ* > *համ*, *հայր* > *հէր*, *հոր*, *հայս* > *հէս*, *հոս* «խմոր», *հօրեղբայր* > *հօխպէր*, *հօրպոր*, *հարսանիք* > *հայսնիք*, *հում* > *հում*, *հօրու* > *հօրու* «խորթ հայր», *հինել* > *հինուռ* են։

138. Բառասկզբում *ընկած* ենք գտնում միայն *հաճարի* > *աժրի* և *հապա* > *աբա* բառերի մեջ։

139. Բառասկզբի *հ* վերածվել է *խ-ի*՝ միայն երկու դեպքում. *հող* > *խէօղ* և *հարբուխ* > *խարփուխ*, *խարպուղ*. երկուսն էլ առաջացել են վերջաձայն *խ-ի* կամ *ղ-ի* ազդեցությամբ։ Այսպես և *թուրքերենից* փոխառյալ *հախ*, որ դարձել է *խախ*։

140. Բառամեջում *հ* երկու ձայնավորի միջև պահում է իր գոյությունը. *ինչ* > *սահիլ* > *ստհուռ*, **ջահիլ* > *ճտհուռ* «ծագիլ», *պահել* > *բտհուռ*, *ահա* > *ա'հան*։

141. Վերջավանդում, *ը* բաղաձայնից առաջ *ջնջվել* է աշխարհք > *աշխարք*, *շնորհք* > *շնօրք*, նաև *պահս* > *բաս* բառերի մեջ։

142. Հնչման *թեթևության* համար *ջնջված* է նաև *ջուհակ* > *ճուլազ*, *ճանապարհ* > *ջամփա*, *ճանապարհել* > *ջամփուռ* և մանավանդ *կնքահայր* > *գընքեր*, *գընկ՝տր* բառերի մեջ։

Բովերել > *պօֆրուռ* և *շնորհաւոր* > *շնաֆօր* բառերի մեջ *հ* թեև *ջնջվել* է, բայց իր շուռչը տալով վ բաղաձայնին՝ վերածել է ֆ։

Խոտհունձ բառն էլ կորցնելով *հ* ձայնը՝ վերածվել է *խո-դունձ* ձևին, բայց այս բառը փոխել է իր իմաստը և նշանակում է «խոտավայր, խոտուտ, այն տեղը ուր շատ խոտ է աճում»։

143. Օրհնել>օրթնուշ, օրտնուշ բառի մեջ էլ ՚ ջնջված է, բայց նրա տեղը -ից ն անցման ժամանակ ձևացել է թարմատար թ (կամ տ):

144. Բառավերջում ա ձայնավորից հետո ՚ մնում է. ինչ. դահ>տահ, մահ>մահ, շահ>շահ, գահ>քոհ '«գահաւանդ», ագահ>ակահ: Իսկ ի ձայնավորից հետո ջնջվում է. ինչ. սկիհ>ըսկի, դհհ, դիհ>տի, թի «կողմ»:

2

145. Բառակզրում Մալայի շրջանում դառնում է շնչեղ թրթռուն ծ, Ճանիկի շրջանում ծ, իսկ Տրապիզոնի շրջանում ծ.—օր. ձայն>ծէն, ծէն, ծէն, ձար>ծար, ծար «կաթի քամիչ», ձեռք>ծէռք, ծէռք, ձմեռն>ծմէռ, ծմէռ, ծմէռ, ձուկն>ծուգ, ծուգ, ծուգ են:

146. Ռնգականից հետո պատահած ժամանակ, թե բառամիջում և թե բառավերջում մնում է ծ. ինչ. բրինձ>պրինձ, անձն>օնձ «մարմինը», գուղձն, գունձը>գունձ, պղինձ>ըղինձ «կաթսա», խնձոր>խնձիր, խնձէր, տանձ>ղօնձ, խանձել>խօնձուշ:

Իբրև կրոնական բառ՝ պահված է գանձանակ>կանցանակ ձևի մեջ:

147. Բ ձայնից հետո դառնում է ց, որի համարեղած օրինակներն են՝ որձ>էօյց, բառնալ>պարցընուշ, դարձնել>տարցընուշ:

Արծակել բառը սղմամբ և շրջամբ ստացել է ացբրուշ, ացկրուշ ձևը, որի մեջ ծ նմանապես ը բաղաձայնից հետո ց-ի է վերածված:

148. Ուրիշ բարբառների համեմատությունից գիտենք, որ ծ վերածվում է զ՝ հաջորդ բաղաձայնից առաջ, իսկ եթե հնչվում է ց, վերածվում է ո: Համշենի բարբառում այս երևույթը հաստատող երկու լավ օրինակ կա, այն է՝ թանձր>թօնձրը կամ թօնզրը և բարձր>պայսրը:—Վանձնատ բառը, որ Տրապիզոնի շրջանում դարձել է այս օրենքի համաձայն վօզնադ, գործածական չէ Համշենի բարբառում (ասում են չէօկուլիզ, որ է <թրք. çökelek):—Թնձկալ>թընձգուշ բառը գործածական է, բայց ավելի ասվում է թնձուշ:—Իսկ խնձորենի>խընձընի չի փոփոխում ծ ձայնը՝ խնձէր ձևի ազդեցությամբ:—Կրկնավոր քնձ/քնձուշ «մեկին ծաղրել» նույնպես չի փոխում ծ ձայնը:

149. Բառավերջի համար կա միայն մի օրինակ, այն է օծ-
օց (օծ), ուր ծ ձայնը վերածված է խուլի:

2

150. Բառասկզբում կա միայն ղրզուշ բառի մեջ. որ ծա-
գում է գրաբարի ուղարկել ձեռք և նախաձայն ղ չէ վերածած
խ-ի: Այսպես են ցույց տալիս նաև Ղազար, Ղուգաս, Ղէվօնդ
են հատուկ անունները:

151. Բառամիջում ձայնավորից և թրթռուն բաղաձայնից
առաջ մնում է ղ. բազմաթիվ օրինակներից հիշենք՝ գողանալ
կողնուշ, դեղին> տէղին, եղեամի> էղիմ, եղունգ> էղունք, ժողո-
վել> ժողվուշ, լեզի> լէղի, եղիճ> էղինջ, ջրադացք> ճաղացք,
խղճատանք> խըղճըղօնք, մեղր> մ'էղրը, բողկ> պէօղգ:

152. Խուլ բաղաձայնից առաջ վերածվում է խ. ինչ.
թուղթ> թուխտ, աղջիկ> ախճիգ, խեղդել> խէխտուշ, ձեղք>
ջէխկ, ճիւղ> ջուխկ, մեղք> մէխկ, յաղթել> էխտուշ, եղբայր>
ախպոր, քօղք> քուխկ, մաղթ> մախտ, են:

Սեղմել բայը թեև Տրապիզոնի շրջանում պահում է իր ղ
ձայնը, բայց Համշենի բարբառում, թրք. SƏXƏ բառի ազդեցու-
թյամբ դարձել է սըխմուշ:

153. Բառավերջում ընդհանրապես մնում է ղ. ինչ. գող>
կէօղ, գող> տէօղ, իւղ> յէղ, խաղ> խաղ, գիւղ> կէղ, ասեղն> ասէղ,
աղ> աղ, տեղի> դէղ, փող> փօղ Վստնջանի անցքը, պաղ> բաղ,
ողն (լեռան)> յէօղ, էօղ, նեղ> նէղ, մաղ> մ'աղ, հող> խէօղ, կա-
կուղ> գազէօղ, օղ> օղ, խաղող> հավէօղ, մանգաղ> մօն-
գաղ են:

154. Մի քանի բառ կա, որոնց վերջաձայն ղ ուղադրու-
թյան արժանի է:

Պճնղն (բույսի կամ սմբակի) դառնում է քջէխ, ուր ղ
դարձել է խ. բայց հոլովման մեջ (սեռ. քջղի) ղ մնում է:

Մժնղ բառը կա երկու ձևով. մժէխ և մ՛ջէղ. որով հայտնի
չե թե որն է բուն ձևը:

Դուղճն (հողի) բառը շրջամբ դարձել է նախ զունճո, որից
հետո ղ ընկնելով՝ վերածվել է զունճ ձևին:

Խաղող բառը նույնպես երկու ձև ունի՝ հավէօղ և խաղօղ.
առաջինի մեջ միջին ղ դարձել է վ. վերջաձայն ղ երկու ձևի
մեջ էլ մնում է. բայց սրանից կազմված խաղընի Վխաղողի

Թուփ, խաղողենի» բառի մեջ ղ արագաբանության օրենքով կրճատված է:

Նման մի երևույթ էլ տեղի է ունեցել ուղեղ բառի մեջ, որ վերջաձայնի անկումով ստացել է երկու ձև՝ էղղու «գլխի ուղեղ» և յէղ «ոսկորի ծուծ»:

Ճ

155. Բառասկզբում ամեն տեղ էլ դառնում է ջ. ինչ. ճա-
կատ>ջազաղ, ճանաչել>ջոնչուշ, ճանապարհ>ջոմխա, ճանճ>
ջոնջ, ճիպո>ջիմբոր, ճիւղ>ջուխք են:

156. Բառամիջում և բառավերջումն էլ ճ կանոնաւորապես
դառնում է ջ. ինչ. ճճի>ջիջու, ճնճղուկ>ջինջղուգ, որոճալ>
օյջուշ, խղճմտանք>խրղջմրղոնք, աճուկ>աջուգ, ճանճ>ջոնջ,
կոճ>գէօջ, կարճ>գալջ, եղիճ>էղիջ, բէճ>պէճ (ջուլհակի) են:

157. Մասնավոր պարագաներ.

Հաճարի>աժրի բառը ցույց է տալիս, որ միջին ա ջնջվե-
լուց հետո, ջ բաղաձայնը հաջորդ բաղաձայնից առաջ վերածվել
է Ժ: Այս երևույթը հաճախ է պատահում ուրիշ բարբառների
մեջ. բայց Համշենի բարբառում ուրիշ օրինակ չունենք (հմտ.
§ 148):

Կարելի է հիշել միայն զօժղուշ «կոտրատել» բայը, որ ծա-
գած պիտի լինի կոճտել ձևից և այս էլ կոճոտել բայից:

Այստեղ ճ>ջ բաղաձայնի մոտ անփոփոխ պահվում է, ինչ-
պես ցույց է տալիս լավագույն օրինակը՝ խղճմտանք>խրղջ-
մրղոնք (Պլ. խրժմըղանք):

Բրդուն բառը վերջաձայնը փոխելով դարձել է պշտուծ. կա
նույն իսկ սրանից կազմված բայական ձև՝ պշտուծուշ «բրդուճ
անելով ուտել»:

Մ

158. Բառասկզբում մ մնում է մ. բազմաթիվ օրինակնե-
րից հիշենք՝ մայր>մոր, մէր, մանգաղ>մօնգաղ, միս>միս,
մեղու>մէղու, մանել>մօնուշ, մաշել>մաշուշ, մարդ>մաշտ են:

159. Բառամիջում նույնպես մնում է մ. ինչ. դամոն>
տօմուն, դիմաց>տիմաց, Թոռոմիլ>թօումուշ, Թումբ>թումբ,
Ժամանել>ժմնուշ, խմոր>խմէօր, աման>օմօն, կարմիր>գար-
միր, համար>հօմար, նման>լմօն, սամի>սօմին, ցամաքիլ>
ցօմքուշ, քամի>քօմի են:

160. Բառավերջում նույնպես մնում է մ. ինչ. գոմ>կում, դդում>տընթում, եղեամի>էղիմ, ծոմ>ծում, կամի>գոմ, համ>հոմ, հում>հում, սեամ>շիմ, սերմի>սիրմ ևն:

161. Մասնավոր պարագաներ.

Վանձնատ>վօզնիսդ բառը, որ գործածական է Տրապիզոնի շրջանում, ըստ իս ծագում է հյ. մաճնատ ձևից (տես Արմ. Բռ.) ըստ այսմ մ--ն տարանմանությամբ վերածվել է վ--ն. Ճիշտ նույն երևույթը ունինք Համշենում. մըջիւն>մէճում բառի սեռականը որ պիտի լիներ *մէճմին, տարանմանությամբ տալիս է մէճվին:

Կաղմել>գազնուշ հարսին շորերը հագցնել ու զարդարել, բառի մեջ մ անկանոն կերպով դարձել է ն. նույնպես է նաև գոմդուռ>կունտուռ գոմի դուռը՝ առաջը՝ բառի մեջ:

Երդուել>էշտվըննուշ բառի մեջ վ համապատասխանում է ու-ին. բայց երդումի>էշտվընը ձևի մեջ վ առաջանում է հշ թե մ-ից, այլ ձևացած է նույն ու>վ-ի ազդեցությամբ:

3

162. Այստեղ պետք է խոսինք միմիայն բառակզրի յ բաղաձայնի մասին:

Բառակզրում յ ընդհանրապես ջնջվում է. եթե յ գտնվում է ձայնավորից անմիջապես առաջ, հշ մի փոփոխություն տեղի չի ունենում. ինչ. յօրանջել>օրընջուշ, յուզել>ուզուշ, յեսան>էսօն, յիսուն>իսուն ևն: Իսկ եթե բաղաձայնից առաջ է, յ-ի անկումից հետո դրվում է մի ձայնավոր. ինչ. յղի>ըղի, յտակ>իտուգ:

Յետ բառը յ-ի ջնջումով դառնում է ետ և որովհետև միավանկ բառերի սկզբին ե դառնում է յէ կամ յի, ուստի յետ ևս դառնում է յէդ կամ յիդ: Սակայն յետոյ>էդէվ, էդիվ բառը երկվանկ լինելով՝ նույն հաւելումը չի ստանում:

163. Գրականից փոխառյալ ձև է հույս, որ նշանակում է բարբառում «փափագ»,—իսումն բառն էլ թեև բնիկ բարբառային ձևով լինում է իսումն, բայց գրականից փոխառությամբ կա նաև հիսումն:

Ն

164. Բառակզրում ն մնում է ն. ինչ. ներքս>նիս, նէս, նետել>նէդուշ, նստել>նըստուշ, նոր>նէօր, նեղ>նէդ ևն:

165. Բառամիջուժ ն մնում է նույնպես ն. օր. ողնի>օղնի, ճնճղուկ>ջինջղուկ, շնորհաւոր>շնաճօր, մատանի>մաղնի, սպանանի>սօննուշ, ունենալ>ուննուշ, ընկոյղ>ընզուզ են:

166. Բառավերջում նույնպես ն մնում է անփոփոխ. ինչ. կացի>զացի, մարմին>մարմին, յիսուն>իսուն, յեսան>էսոն, աման>օմոն, տուն>դուն, քսան>սոն են:

167. Լն ձայնախումբը վերածվում է -լլ-. սրա օրինակներն են ելանել>էլլուշ, լնուլ>լլուշ, լինիլ, ընիլ>ըլլուշ, ուլունք>հիլլուշ «կոճկել» (տես էջ 12):

Նլ ձայնախումբը մնում է անփոփոխ. ինչ. բանալի>սօնլիք, անալի>օնլի. իսկ անլուսյ բառը կա թե օնլրվա ձևով, և թե օլվա և օնվա ձևերով:

Նմ ձայնախումբը դառնում է լմ. սրա օրինակն է նման>լմոն, նմանիլ>լմօննուշ, բայց աննման բառը լինում է թե օննրմօն և թե օնլրմօն ձևով:

Նն ձայնախումբը դառնում է նլ. սրա օրինակն է անա-
նուխ>օնլուխք.—նախորդ հատվածում տեսանք սակայն աննման,
որ կա թե օննրմօն և թե օնլրմօն ձևով.—բայական կազմու-
թյանց մեջ էլ -նն- մնում է անփոփոխ. ինչ. ուննուշ «ունենալ»,
սօննուշ «սպանանել», լմննուշ «նմանիլ», էրզըննուշ «երկայ-
նիլ», լրննուշ «լախնալ», հիննուշ «հանալ» են:

168. Գրաբարի բառավերջի ն հանգը Համդենի բարբառում
էլ ջնջվում կամ ը-ի է վերածվում. ինչ. մուկն>մուկ, ձուկն>
ծուկ, տասն>դասը, մասն>մաղ, մասն>մաս, եօթն>օխտը և
միայն երկկամն բառն է, որ հանգը պահելով լինում է իլիզօ-
մօն:

169. Մըջին բառը դառնում է Տը. մէյշում, Հմշ. մէճում.
այս երկուսի մեջ էլ ոչ թե ն ձայնն է, որ բառավերջում վերածվել
է մ-ի, այլ այդ ձևերը առաջանում են գրք. մըջիմն ձևից՝ ն հո-
դի հապավումով:

170. Ինգականի և շրթնայինի հանդիպման ժամանակ ն վե-
րածվում է մ-ի. սրա հանրածանոթ օրինակն է ճանապարհ>
ջօմփա, որից և բայը՝ ջօմփուշ «ճանապարհ դնել»: Բայց հա-
կառակ սրան կա և անապակ>օնըազ «ցամաք հաց» Տը:

171. Ուրիշ բարբառներից գիտենք, որ ծ, ձ, ց, ճ, չ
«կրկնակ» բաղաձայնները մի ուրիշ բաղաձայնից առաջ գտնված
ժամանակ տարրալուծվում և վերածվում են զ, ս, ժ, շ պարզե-
րին: Նմանապես եթե այս կրկնակներից առաջ գտնվի ն ռնգա-

կանը, ռնգականը կջնջվի և դարձյալ կստացվի զ, ս, ժ, շ։ Այս մասին ավելի ընդարձակ տես Քնն. Պոլսահայ բարբ. § 196, Մի օրինակ տալու համար առնենք իջանել բայը, որ նախ դարձել է *ինչնալ, որից էլ իշնալ։ Զգիտենք սակայն թե այս ձայնափոխությունը մի անգամից է եղել, թե միջին մի ուրիշ ձևից անցնելով և այն էլ ինչ կարգով։

Այժմ Համշենի բարբառը հայտնաբերում է մեզ ձայնափոխություն ընթացքը, ներկայացնելով մի քանի միջին ձևեր. այսպես՝

անցանել > օնցնուշ > օնսնուշ > օսնուշ.

իջանել > *ինչնալ > ինչնուշ > իշնուշ, որից հետևում է թե նախ եղել է նց, նշ, ապա նս, նշ, որից հետո ն-ի անկումով ս, շ։

Կիսապայթական բաղաձայնների տարրալուծման ավելի հետաքրքիր օրինակներ տես նաև § 253 գ։

Մանօթ. 1.—Ն ձայնը սղվում է դարձյալ մ-ից առաջ § 224.

Մանօթ. 2.—Ն ձայնը սղվում է ք-ի մոտ հաճախ քերականություն մեջ. օր. եմք > ձ. ինք, Մ. իք։

Շ

172. Ամեն դիրքով էլ մնում է անփոփոխ շ. ինչպես՝

Բառասկզբում՝ շուն > շուն, շապիկ > շաքիգ, շարել > շարուշ են.

Բառամիջում՝ գիշեր > կիշէր, բշտիկ > աշտիգ, աշուն > աշուն, խարշել > խաշուշ, վիշապ > ուշաք, տաշել > դաշուշ, տաշտ > դաշտ և այլն։

Բառավերջում՝ էշ > էշ, թուշ > թուշ «եբես», անոշ > օնուշ, փուշ > փուշ, ուրիշ > ուրիշ են։

173. Միայն շարժիլ բայն է, ուր նախաձայն շ հաջորդ ժ-ի ազդեցությամբ դարձել է շ. ինչ շարժել > ժաժուշ, շարժուիլ > ժաժվուշ, շարժեցնել > ժաժվէցընուշ, շարժք > ժաշք «երկրաշարժ»։—Տարանմանություն մը դառնում է ս՝ միայն սրնչկըմուշ «հեալ» բառի մեջ, որ պործածվում է նաև նախնական շրնչկըմուշ ձևով։

Չ

174. Ամեն դիրքով էլ մնում է չ. ինչ. չոր > չէօր, չորս > չէօս, չուան > չիվօն, կանչել > գօնչուշ, հառաչել > հառչուշ

«յօրանջել», ճանաչել՝ ջօնշուշ, փարչ՝ փայշ, պոչ՝ բէօշ, բէշ, ոչ՝ էօշ, խեչափառ՝ խըշըփար, մանչ՝ մօնչ ևն:

Այս բոլորի մեջ ձանիկի շրջանում դրվում է ճ, բացի նախաձայնից. ըստ այսմ ասվում է բէօճ կամ բէճ, մօնճ, ջօնճուշ, հառճուշ, խըշըփար, աղաճուշ ևն:

Նախաձայն չ վերածվել է շ՝ չոքել՝ չօքուշ, բայց նաև շօքուշ բառի մեջ, որ նշ. «ծունր գնել»: Այս երևույթը չեմ կարծում թե առաջացած լինի շոգել՝ շօքուշ բառի հետ շփոթելով, որովհետև ինչ կապ կարող է լինել «շոգելու» և «չոքելու» միջև: Ուստի լավագույն է բացատրել վերջաձայնի նմանողությամբ՝ վերածված չ՝ շ, որի համար ունինք իբրև ավելի լավ օրինակ՝ հանգչել՝ հօնկշուշ:

175. Ուրիշ բարբառներում, երբ չ գտնվի բաղաձայնից անմիջապես առաջ, կվերածվի շ. Համշենի բարբառում այսպես ենք գտնում միայն խաշտուռ բառի մեջ, որ գործածվում է նաև խաչ + դուռ ձևով և նշանակում է «եկեղեցու դուռը»:

զ

176. Ամեն դիրքով էլ մնում է անփոփոխ բ. ինչ.

Բառասկզբում՝ պանիր՝ բօնիր, պահել՝ բէհուշ, բոհուշ, պագանել՝ բաքնուշ, բակնուշ, պառաւ՝ բառավ, պիծակ՝ բուծէգ, պոչ՝ բէօշ, բէշ, պորտ՝ բէօյդ ևն: Նույն իսկ պսակ, պսակել բառը, որ շատ տեղ փ-ով է հնչվում, այստեղ պահել է բսագ, բսագուշ ձևը:

Բացառություն՝ է միայն պոռչել, որ թէև Տբ. բօռչուշ ձևն ունի, բայց ձ. պօռչուշ:

Բառամիջում շապիկ՝ շաքիգ, ճիպո <ջիմբոր, ճապկտիլ> ջաքդրդուշ, հպարտ՝ հրբայդ, հապա՝ աքա, դպնիլ <տիքնուշ, ապուր՝ աքուր, անապակ՝ օնքագ, ամպորոտ՝ օմքոէդ, տապակել՝ դաքուշ, կապոյտ՝ գաքուդ ևն: Մի խումբ բառեր, որոնք հետին տառադարձությամբ սխալ գրչությունն ունին, բարբառումս հնչվում են բ. ինչ. խպլիկ՝ խըքըլիգ, լոբի՝ լօքյա, գուլպայ՝ կուրքա:

Բառավերջում՝ ամպ՝ օմք, պապ՝ քաք, պարապ՝ քարաք, վիշապ՝ ուշաք, կապ՝ գաք, ևն:—Ծոպ բառը ստանալով հոգնակի ձև՝ հնչվում է ծուփք (Ճ. ծուպկ) «կանանց նախշուն գոտի»:

177. Ծանապարհ բառը, ինչպես ուրիշ բարբառներում, նույնպես և այստեղ ստացել է ջովիւս ձևը, որից էլ բայը՝ ջովփուշ «ճանապարհ դնել»։ Ծանիկի շրջանում հնչվում է ջովպա, ջովպուշ, որ դարձյալ նույն փոփ ձևն է ներկայացնում։

178. Հետաքրքիր է սլավոնները բառը, որ նախաձայն *ս-ի* ազդեցությամբ ստացել է ըսպօննուշ ձևը. և թեև ապա կորցրել է այս նախաձայն *ս*, բայց պահելով բաղաձայնի նախկին աստիճանը՝ հնչվում է սլօննուշ։ Տրապիզոնում չիոթվում է ըսթօննուշ ձևի հետ։

— Պէս նախադրությունը Մալայում ստացել է դէս ձևը. տես § 361։

2

179. Բառակցում Մալայի շրջանում դառնում է ջ', ձանիկի շրջանում *ճ*, Տրապիզոնի շրջանում *ջ*. ինչ. ջուր>ջուր, ծուր, ջուր, ջորի>ջ'որի, ճորի, ջորի, ջարդել>ջ'այլծուշ, ճայտուշ, ջայթուշ ևն։

Միայն ջուխտակ բառն է, որ թերևս թրք. չիֆտ հոմանիշի ազդեցությամբ լինում է չուխտագ։

180. Բառամիջում դառնում է *չ*, որ ձանիկի շրջանում դառնում է *ճ*. եղած անկախ օրինակներն են՝ ոջիլ>օջիլ, օճիլ և հաջել>հաչուշ, հաճուշ։ Մյուսները ներկայացնում են որոշ ձայնաբանական պայմաններ, ինչպես կտեսնենք հաջորդ հոդվածներում։

181. Ռեզականից հետո, ինչպես բառամիջի, նույնպես և բառավերջի ջ մնում է *ջ*. ինչ. տանջել>դօնջուշ, բանջար>պօնջար «մի տեսակ կաղամբ», յօրանջել>օրընջուշ, երինջ>երինջ, խուլինջ>խուլունջ, մուռնջ>մունջ, ականջ>օնգօջ, — և միայն խնջել բառն է, որ լինում է խնչուշ, ձանիկում՝ խնճուշ։

182. Բաղաձայնից հետո, ինչպես բառամիջի, նույնպես և բառավերջի ջ դառնում է *չ*, որ ձանիկի շրջանում լինում է *ճ*. Այս ձայնափոխությունը մնում է, նույն իսկ եթե հետո նախաձայն *ը* (կամ *ո*) ջնջված լինի. ինչ. առաջի, առջև>այլիվ, այլէվ, այնէվ, արջ>այլ, այն, արջառ>աչառ, աճառ, թրջել>թըլշուշ, թըլնուշ, մրջիւն>մէլշում Տր. մէճում ճ, ստերջ>սդիլ Տր., ստիլ, ստիճ ճ։

183. Խ ձայնից հետո հնչվում է *չ* կամ *ճ*. սքա միակ օրինակն է աղջիկ>ախչիկ Տր., ախնիկ ճ։

184. Վերը § 171 խոսեցի՜ք նշ ձայնախմբի փոփոխու-
թյան մասին՝ բաղաձայնից առաջ. մեր ունեցած միակ օրինակն
է իջանել, որ նախ դարձել է ինջանել, որից հետո ինջնուշ և
ապա իշնուշ: Կատարյալում (այսինքն ձայնավորի մոտ) պահ-
վում է դեռ ինչա: Մի երկրորդ օրինակ է մ՛ըշնուզ «հացի մի-
ջուկ», որ ծագում է միջնուկ ձևից:

185. Բառավերջում կա միայն մի անկախ օրինակ, որ է
մէջ՝ մէչ: այս ձևը իբրև նախադրություն սովորական է Տրա-
պիդոնի շրջանում, բայց շանիկի շրջանում մէջ՝ մէճ՝ գործ է
ածվում իբրև գոյական՝ «մեջք» իմաստով. ինչ. մէչս (մէճս)
ցավի գու «մեջք» ցավում է»: իսկ իբրև նախադրություն գործ
է ածվում միշա նէս:

Բ

186. Բառակզբում չի պատահում: Օտար բառերի սկզբին
դրվում է մի ձայնավոր իբրև հենարան:

187. Բառամիջում երկու ձայնավորի միջև կամ ձայնա-
վորից առաջ մնում է ո. ինչ. մառան՝ մառոն, հեռու՝ հէռու,
պառաւ՝ բառավ, վառել՝ վառուշ, վառեակ՝ վառէգ, կոխւ՝ գոխվ,
կշռել՝ գըշըռուշ, ակոսայ՝ ազոսա են:

Չանաղան բաղաձայններից առաջ. ինչ. ձեռք՝ ծէոք, հառա-
չել՝ հառչուշ «հորանջել», կուռիլ՝ գովուշ, պոռոչել՝ բոռչուշ,
փոնգատլ՝ փոնքտուշ, քառասուն՝ քառսուն, ուռչիլ՝ ուռչուշ,
թռչել՝ թռչուշ «ցատկել», թռոմիլ՝ թոմուշ են:

188. Բայց հատկապես ն. ից առաջ. ինչ. մոռանալ՝ մոռ-
նուշ, ոռնալ՝ օռնուշ, խառնիլ՝ խառնուշ, դառնալ՝ տառնուշ,
բռնել՝ պռնուշ, մեռանիլ՝ մէռնուշ, առնուլ՝ առնուշ: Այսպես
նաև ծառնուտ՝ ծառնուդ, երկինք՝ էռնինք են:

189. Բառավերջում դարձյալ մնում է ո. ինչ. ծառ՝ ծառ,
ծուռ՝ ծուռ, ամառն՝ օմառ, արջառ՝ աչառ, բեռն՝ ալէո, դուռն՝
տուռ, թիթեռն՝ թիթէո, գառն՝ գոռ, թոռն՝ թէօո, ճիպո՝ ջիմբ-
ոռ, մացառ՝ մացառ «միսը խրված փուշ», ձմեռն՝ ծմէո են:

190. Հակառակ ր բաղաձայնի, որ հաճախ դառնում է յ,
չի կարող ո ձայնը փոխվել. բացի մի դեպքից, որ է այչիվ, այ-
չէվ, այչի «առջև, առաջի», թեև առաջ բառը մնում է առաջ:

191. Մի քանի դեպքում ո բաղաձայնը փափկիլով վերած-
վում է ր. ինչ. բառնալ՝ պարցընուշ (իբր թե բարձնել, տես
§ 209), որից էլ պայցնուշ (Աբրտ. 1895, 294), խեչափառ՝ խըչը-

փար, պառկիլ>բարգուշ, գկեռ>գղիր, գկեռենի>գրղորնի, վար-
դավառ>վաշտէվօր (վարդեւոր ձեից)։

192. Բոլորովին անսովոր ձեւափոխություններ են՝ առնել>
ընուշ (միջ. հյ. այնել ձեից) և ծառգարդար, որ երկրորդ վանկի-
նմանությամբ դարձել է նախ զարգարդար, որից էլ զայգայտար։

Ս

193. Ամեն դիրքով էլ մնում է ս. ինչ. բառասկզբում՝
սանդ >սօնդ, սանտր>սօնդոր, սեաւ>սիվ, սէվ, սերմն>սիրմ,
սէրմ, սիրտ>սիրդ, սիդ, սատակիլ>սադգուշ են։

Բառամիջում՝ փեսայ>փէսա, ասել>ասուշ, ասեղն>ասէղ,
մրսիլ>մ'սուշ, քսան>սօն, տօսախի>դօսխի են։

Բառավերջում՝ չորս>չէօյս, ուս>ուս, փոս>փէօս, փէս
«հարթ տեղ», քոս>քէօս, ամիս>օմիւս են։

194. Մասնավոր պարագաներ.

Բառասկզբի ս դառնում է զ՝ միայն սարդ>զայթ բառի
մեջ. հմմտ. վրաց. զարդլի «սարդ»։

Բառասկզբի ս դառնում է շ՝ միայն սեամ>շիմ բառի
մեջ։

Բառամիջի թս խումբը տալիս է ծծ՝ վաթսուն>վածծուն և
ռւթսուն>ուծծուն բառերի մեջ։

195. Առանձնապես հետաքրքիր է բառասկզբի ս-ի անկու-
մը։ Այս երևույթը նկատում ենք Պարբերդի բարբառում, ուր
նախաձայն ո՛ր գտնվելով պ և տ ձայներից անմիջապես առաջ,
ընկնում է. ինչ. սպանանել>քաննել, սպիտակ>քիդագ, ստեղ-
ծել>դէղծէլ, ստեպղին>դւքղին, ստերջ>դէրչ։ Համշենի բար-
բառում ունինք միայն սպանանել, որ գործածվում է թե սպօն-
նուշ և թե սօննուշ ձևով։ Իսկ ստերջ>սղիւշ, ստիւշ, ստիճ պա-
հում է նախաձայնը։ Մյուս բառերը չեն գործածվում և հետևա-
բար ուրիշ օրինակ չկա։ Սակայն ունինք կտեղ «կողով» ձևով մի
բառ, որ ևս լսել եմ 1910 թվի ճամբորդությանս ժամանակ՝ բուն
երկրում, այժմ էլ Գաղբրիում լսեցի Իւնիէցիների մոտ՝ գրղրդ
ձևով։ Կարծում եմ որ սա հին հյ. սկուտեղ բառն է, որի ս ըն-
կել է կ-ից առաջ, ճիշտ այնպես՝ ինչպես ունինք սկնսուր, որ
շատ տեղ հնչվում է գէսուր, կէսուր։ Համշենի բարբառում գոր-
ծածական է թե սկէսուր և թե կէսուր ձևով (Տբ. քագէսուր),
բայց սկնսրայր դառնում է միշտ կէսրոր։

196. Ամեն դիրքով էլ մնում է վ. ինչ. բառակզրում՝ վա-
ռել>վառու, վեց>վից, վէց, վառեակ>վառէգ, վաթսուն>ված-
ծուն են:

Բառամիջում և բառավերջում ընդհանրապես գոյություն
չունի. եղած օրինակներն են՝ բուրվառ>փուրվառ, բովերել>
պօֆրու (ուր վ միանալով ՚ հնչի հետ՝ դարձել է պօֆրու, ինչ-
պես ունինք նաև շնորհաւոր>շնաֆօր), դարիվեր>տարիվիր,
ժողովել>ժողվու, խոստովանիլ>խօստովանու, սովորել>սով-
ոու, ծով>ճով, կով>գով, իսկ սուլել բառից կրկնությամբ՝
սվվու:

197. Անկանոն ձայնափոխություններ են ներկայացնում
վիշապ>ուշաք և վաղել>պզու, եթե այս վերջին համեմատու-
թյունը ճիշտ է:

Տ

198. Բառակզրում տ դառնում է բոլոր շրջաններում էլ
դ. ինչ. տանիլ>դօնու, տասն>դասը, տանձենի>դօնծընի, տա-
շել>դաշու, տօսախի>դօսխի, տուն>դուն են:

199. Շատ զարմանալի է տալ բայը, որ երկու տարբեր
առումներով ստանում է երկու տարբեր ձև. այսպես՝ սովորական
«տալ» իմաստով լինում է դվու (կտր. դվի), իսկ հարված տալը
իմաստով լինում է տվվու (կտր. տվվի):

Բառակզրի տ-ի անսովոր ձայնափոխության օրինակ է
ներկայացնում ըզզար «տկար, թույլ, հիւանդոտ» բառը, որ կար-
ծում եմ թե հյ. տկար բառից է առաջացած: Սրանից են նաև
ըզզարուտին «տկարութիւն, հիվանդություն», ըզզայնու «հի-
ւանդանալ, տկարանալ», ըզզայցընու «տկարացնել, հիւանդացը-
նել»:—Չեմ կարողանում միայն բացատրել թե ինչ բառի նմա-
նողությամբ կամ ինչ արտաքին այլ պատճառով տեղի է ունեցել
նախաձայն տ-ի այս անսովոր ձայնափոխությունը, որի օրի-
նակը չունինք ոչ մի այլ բարբառում:

200. Տարգալ բառը տեղափոխությամբ և ձևափոխու-
թյամբ դարձել է կղալ, որի մեջ սակայն տ պահում է իր սովո-
րական ձևը, որ է դ:

201. Բառամիջում տ դառնում է նույնպես դ. ինչ. գօտի>
կօղի, կատու>գաղու, կտտել>գուղըու «չարհարել», ձապկտիլ>

ջաքղըրդուշ, յետոյ>էդէվ, ուտել>ուդուշ, մատանի>մադնի,
լորտու>լօլլու «խխունջ», խղճմտանք>խըղճմըդօնք, դատարկ>
տալլազ, դատիլ>տաղուշ «աշխատիլ, շահիլ», ընտրել>ընդ-
ռուշ են:

202. Խուլ բաղաձայնի մոտ բնականաբար ստանում է տ
հնչյունը, հատկապես ս, շ, խ բաղաձայններից հետո. ինչ. նստել>
նստուշ, յստակ>խստազ, բշտել>պշտուշ, խախտել>խախտուշ,
խստոր>սխտէօր, կուշտ>զուշտ, հաստ>հաստ, հրեշտակ>հորշ-
տազ, ջուխտակ>չուխտազ, ստերջ>ըստիջ են: Նմանապես միտք>
միտկ, հաւատք>հավատկ, ոտք>յէօտկ, պէտք>բէտկը «լափ»
են: Այսպես են հնչում ձանիկցիք: Բայց Տրապիզոնի շրջանում,
ուր խուլի և թրթռունի տարբերությունը չկա, այս կարգի բա-
ռերը հնչվում են անորոշաբար մերթ դ և մերթ տ ձայնով. ինչ.
հորշդազ, դախդազ են. իսկ երկրորդ խումբն էլ բէթգը, միթք,
էօթք են ձևերով:

203. Փետուր բառը շրջամբ դարձել է թէքուր, որի մեջ փ
և տ իրենց ձայնական աստիճաններն էլ փոխանակել են. իսկ
փթիլ բառը հնչվում է Տրապիզոնի շրջանում փթուշ, ձանիկում
փտուշ:

Գաղտնիկուր>գաղզուր բառի մեջ միջին վանկը ամբողջո-
վին ջնջվել է:

204. Բառավերջում տ դառնում է միշտ դ. ինչ. արօտ>
արօդ, գետ>կէդ, կարկուտ>գարզուդ, կուտ>զուդ, հոտ>հէօդ,
հէդ, ճակատ>ջազուդ, մատն>մադ, ամպորոտ>օմբոէօդ և հառ-
կապես - ուտ մասնիկը. ինչ. հողոտ>խէօդէօդ, քարոտ>քարէօդ են:

Միակ բացառությունն է խախուտ բառը, որ թեև Տրապի-
զոնի շրջանում հնչվում է խախուդ, բայց ձանիկում դարձել է
խախուտ, որ է *խախութ:

Օնգօջմուզ «ականջմտուկ միջատը» բառի մեջ տ դարձել է
զ՝ Թյուրիմացությամբ բառը կցելով մուկ բառին. Տրապիզոն-
ցիք ասում են օնգօջմուդ:

Բ

205. Բառակզբում չկա:

Բառամիջում՝ երկու ձայնավորի միջև, ձայնավորից առաջ
և բառավերջում մնում է ր. ինչ. շերեփ>շէրիփ, արօր>հարօր,
աւերել>ավրուշ, երինջ>էրինջ, արև>արէվ, այրել>որուշ,
ամուր>օմուր, խոր>խէօր, ձոր>ծէօր, ալիւր>ալուր, ամբար>
օմբար են: Նմանապես նօսր>նօսրը, թանձր>թօնօրը, ծանր>
ծօնդը, ծուներ>ծունդը, մեղր>մէղրը:

206. Ամենից կարևորն է ը ձայնի ձևափոխությունը հաջորդ բաղաձայնից առաջ: Այստեղ ը ընդունում է երկու ձև. կամ մնում է ը և կամ դառնում է յ. իսկ ատամնականից առաջ դառնում է շ: Այս ձայնափոխությամբ ը ձայնը խստիվ զանազանվում է ուից, որ բնավ չի կարող վերածվել յ կամ շ:

207. Պետք է ճշտել թե՛ որ բաղաձայններից առաջ ը մնում է ը. հավաքելով եղած օրինակները, գտնում ենք հետևյալ դեպքերը.

բ, պ, փ.—պարպել>բարբուշ, սրբել>սրբփուշ, ուրբաթ>ուրփաթ, հարբուխ>խարփուխ, հօրեղբայր>հօրպոր, փրփուր>փրփրր ևն:

գ, կ, ք.—կարգել>գարբուշ, կարկուտ>գարգուդ, կարկատել>գարգրդուշ, հօրաքոյր>հօրքուր, ուղարկել>ղրգուշ, մաշկամիրգ>մաշմուրք «շապանակ», հերկել>հէրգուշ, հերիքել>հէրքուշ, ներքեւ>նէրքիվ, ներկել>նէրգուշ, երկայն>էրգրն, երկանք>էրգօնք, բարեկենդան>պարգիղօնք:

խ—ունինք միայն թարախ բառի սեռական թարխի ձևը, որ ցույց է տալիս թե խից առաջ ը մնում է: Այսպես է նաև թրք. չարխ, սեռ. չարխի, և մարխ, սեռ. մարխի, որ գործածական է մախրը ձևի հետ:

հ—չկա օրինակ.

դ—չկա օրինակ.

մ—սերմն>սէրմ, մարմին>մարմին, կարմիր>գարմիր, ողորմիլ>օղօրմուշ, դարման>տարմօն «յարդ» ևն.

վ—ծարաւիլ>ծարվընուշ, օր, սեռ. օրվան>օրվօն, տարի, սեռ. դարվօն, բուրվառ>փուրվառ ևն:

208. Այն բաղաձայնները, որոնցից առաջ ը վերածվում է յ, հետևյալներն են.

դ—երազ>նէրազ, սեռ. նէյզի, գերծանիլ>գէլծնուշ, բայց նաև գէյզնուշ «պատրաստությունները տեսնել վերջացնել»:

ժ—այս ձայնից առաջ եղած միակ օրինակն է շարժել>ժաժվուշ, շարժք>ժաշք «եղիւրաշարժ»: (Վարժարէդ գրականից է փոխառյալ):

լ—չկա օրինակ.

ծ, ձ, ց.—գործել>կօյծուշ, արծաթ>այծաթ, արածել>այծուշ, թրծել>թրյծուշ, նորածին>նօյծին, բարձր>պալարը, հարցանել>հայցոնուշ, ործկալ>գօյձգուշ, ործ>էօյց, էյց ևն:

ճ, չ, ջ.—կարճ>զայճ, կրճել (ատամի)>զրյճուշ, որոճալ>օյճուշ, մըջիւն>մէջում, մէնում, արջ>այլ, փարչ>փայլ, փայճ, չարչարել>չայչրրուշ, չայճըրուշ, թըջել>թըյշուշ, ստերչ>ստիյլ, ստիյճ, մայրցու>մոյծու «մերան, մակարդ» (որից մոյծ/-վուշ «մակարդել»):

ն.—զարկանել>զարնել>զայնուշ, բերան>պէրօն, սեռ. պէյնի, ցորեան>ցորին, սեռ. ցօյնի, գարուն>կարուն, սեռ. կայնօն, գիրանայ>կիյնուշ, կարենամ>զայնօմ, խնձոր>խնծէօյ, յգ. խընծէյնի, հն:

շ—օրինակ չկա:

ս—կորիւ, կորսուիլ>զօյսըվուշ, չորս>չէօյս, հարսն>հայս, որս>էօյս, երես>էրէս, էրիս, սեռ. էյսի, հարսանիք>հայսնիք հն:

209. Այժմ պետք է խոսինք թե ինչ է դառնում ր ձայնը ատամնականից առաջ:

Րդ. ըտ, ըթ ձայնախմբերի ձայնափոխության մեջ նկատելի են հետեւյալ օրենքները.—ըդ և ըթ դառնում են շթ (շտ), իսկ ըտ դառնում է յդ. ուրիշ խոսքով ր բաղաձայնը խուլ հընչ-վող ատամնականի մոտ դառնում է շ, իսկ թրթռուն ատամնականի մոտ դառնում է յ. ինչ.

րդ, ըթ.—մարդ>մաշտ (որից մաշնակ «լավ»), մորթել>մօշտուշ, կարդալ>զաշթուշ, երթալ>էշտուշ, խորթ>խէօշթ, խէօշտ, երդնուլ>էշտվըննուշ, երդունմ>էշթվունք, քերթել>քէշտուշ, հորդել>հօշտուշ «գոմբ մաքրել թիով», հորթ>հէօշտ, յարդ>էշտ, վարդավառ>վաշտէվօր, վարդապետ>վաշտաքէդ, բուրդ>պուշտ, բրդունճ>պշտունճ:

Այստեղ են պատկանում նաև -որդի բառից կազմված հետեւյալ բարդությունները (թեև որդի բառը առանձին գործածական չէ).

հղթօրորդի>ախպըրօշտի

քրոջ որդի>քրօշտի

քեռու որդի>քէռօշտի

հօրեղբօրորդի>հօրաօրօշտի

հօրաքեռորդի>հօրկուրօշտի, հօրկրօշտի

մօրաքեռորդի>մօրկուրօշտի, մօրկրօշտի

րա.—պորտ>բէօյդ, վարտիք>վայդիք, քրտինք>քըյդինք, քրտնել>քըյդընքուշ, քըյդնուշ, արտ>այդ, բուրտիք>պօլօյդիք, գորտ>կէօյդ, գորտնուկ>կօյդնունք, խրտնիլ>խըյդնուշ, խրտիչ>

խըղիւն «խրովիւակ», սիրտ>սիրի, ցուրտ>ցուրի, հպարտ>հըպիւ, ծիրտ>ծիրի, ծրտել>ծրիւն, լորտու>լօրու «խտունջ», դատարկ>դարտակ>տայդակ, արտասուք>այլըսունք:

Շչող ձայներից հետո ըզ և ըթ չեն դառնում շտ, այլ լինում են յթ, յտ. ինչ. Զարդել>ճայթուշ, սարդ>գայթ, ծառգարդար>գայգայտար, դարթուն>գայթուն, գայտուն, դարթուն>գայթուն:

Շչող ձայների հետ պետք է դնել թերևս նաև «խ, որովհետև ունինք նման մի օրինակ, որ է խարդակ>խայտաղ կամ խարտաղ:

Դրական լեզվից փոխառյալ լինելով՝ օրենքին չեն հպատակվում արդար>արթար, արտար, մկրտել>մրգրրղուշ, օրհնել>օրթնուշ, վարդապետ>վարթարէդ (բնիկ ձևն է վաշտարէդ) և թուրքերենից ետ փոխ առնված մարդակ>մորտող «գերան»:

Երբ ըտ>յո ձայնափոխությունը գտնվի ի ձայնավորից հետո, կարող է յ ձայնը իսպառ վերացվել: Այսպես են սիրտ և ծիրտ, որոնք դառնում են սիրի, ծիրի, բայց նաև սիդ, ծիդ: Ածանցման մեջ սակայն այս բառերը տալիս են ծրիւն «ծրտել» և սէյրուած «ոխ պահած»:

Փնթթ բառը դառնում է փէդթ, որից երևում է որ վերոհիշյալ օրենքները միայն մեզմ հնչված ը-ի համար են և ոչ թե ուրիշ:

210. Ինչպես վերոհիշյալ օրինակներից երևում է, ը-ի այս ձայնափոխությունները տեղի են ունենում ոչ թե միայն բառի ներսում, այլ և հոլովման ու ածանցման ժամանակ, ինչպես նաև նախադասության մեջ բառից բառ: Օր. նոր>նէօր, նէր, ձայնավորով սկսող հաջորդ բառի մոտ մնում է անփոփոխ (նէր օմիւս ընոր ամիս), իսկ բաղաձայնով սկսող բառի մոտ կամ մնում է նէր և կամ նէյ՝ համաձայն բառասկզբի բաղաձայնի: Պետք էր սպասել, որ այս ձայնական հարաբերությունները լինեին ճիշտ այն ձևով, ինչպես նշանակեցինք վերը՝ բառամեջի ձայնափոխությանց համար: Փորձելով զանազան անձանց վրա մեր (միւր, միյ), ձեր (ծիր, ծիյ) և նոր (նէր, նէյ) բառերով զանազան կապակցություններ, հասա հետևյալ արդյունքներին.—

ա) Հները պահել են բառից բառ հարաբերությունները ճիշտ վերի կանոնների համաձայն: Նորերը երկու ձևերն էլ խառն գործ են ածում: Օրինակ՝ Էքսուզեան ընտանիքում, տանտիկինը

(Սառա) պահել էր. որդիները, դուստրը և նույն իսկ ամուսինը խառնում էին:

բ) Տ և Թ ատամնականներով սկսվող բառերի մոտ վերի օրենքը (§ 209) չի պահվում: Օրինակ «մեր Թորոսը, ձեր Թադոսը, նոր դրամ» ասելու ժամանակ, Թեև ունինք ը/թ, ըդ ձայնախմբերը, բայց «մեր, ձեր, նոր» բառերը այստեղ ստանում են /մ/ի, ծ/ի, նէ/ ձևերը և ոչ բնավ /մ/ի, ծ/ի, նէ/:

գ) Քանի որ բառից բառ կապակցությունները լինում են բառամեջի ձայնական օրենքների համաձայն, ուստի վերի կանոնների մեջ ուր որ Թերի մասեր կան, կարելի է լրացնել բառից բառ կապակցությունների միջոցով: Ես փորձեցի սովորական բառեր և ուր որ չկա՝ հատկապես հատուկ անուններ և Թուրքերեն բառեր և գտա որ խ, հ, ղ բաղաձայններից առաջ ը մնում է անփոփոխ, իսկ լ, շ, Ժ բաղաձայններից առաջ դառնում է յ:

211. Կան մի խումբ բառեր, որոնց մեջ ը դարձել է ու այսպես են՝ մերժել>մէժուշ, ընտրել>ընդուշ, լիտր>լիդոր, համարել>հոմըուշ, հրեշտակ>հրիշտագ, բայց նաև հորշդագ, պատրուսել>քաղդուսուշ, մկրատ>մըզուդ Տր., երեսուն>էսուն (ազդեցությամբ քառասուն բառի), արծիվ>առծիվ, ճրագ>ջուակ, տայգը>դոքոր, սանտը>սոնդոր, փշրել>փոշուշ, ապրիլ>աքոուշ, ապրանք>աքոնք, փերթ>փէռթ, պրաս>քուս, դարձնել>տաոցընուշ, բառնալ>պաոցընուշ (վերջին երկուսը դառնալ, բառնալ բայերի ուից ազդված):

212. Անսովոր ձայնափոխություն է ը>լ՝ միայն երիկամն>լիլզուօն բառի մեջ:

8.

213. Ամեն դիրքով էլ մնում է ց. ինչ.

Բառասկզբում՝ ցախուտ>ցախուդ «անտառ», ցած>ցած, ցամաքել>ցոմըուշ, ցանել>ցոնուշ ևն:

Բառամիջում՝ քացախ>քացախ, մացառ>մացառ, հարցանել>հայցընուշ, կացին>գացին, խնոցի>խնօցի ևն:

Բառավերջում՝ Թաց>թաց, հաց>հաց, բաց>պաց, բոց>պէօց, պէց, երէց>իրից, խուց>խունց, ծոց>ձէօց, ձէց ևն:

Ծան.—բառասկզբից հետո գտնված ամեն ց ձանիկի շրջանում հնչվում է ծ:

214. Ուրիշ բարբառներում ց գտնվելով բաղաձայնից ան-

միջապես առաջ՝ վերածվում է ու Համշենի բարբառը այս օրին-
քը հաստատող երեք լավ օրինակ ունի: Առաջինն է՝ լուցանել,
որ իբրև ներգործական լինում է լուցուշ վառել, բռնկցնել», իսկ
իբր չեզոք՝ լինում է լուսնուշ վառվիլ, ալիլ: (Տարբեր է
լուսնուշ «լուսանալ»): Երկրորդն է անցանել, որ այս բարբա-
ռում ստանում է օնցնուշ, օնսնուշ և օսնուշ ձևերը, իսկ երրորդն
է կացին, որի սեռականը լինում է գասնի (որ և գացնի):

Փ

215. Բառասկզբում մնում է փ. ինչ. փեսայ> փէսա, փայտ>
փող, փոս> փէօս, փող> փօղ Վիտնյանի անցքը» են:

Միայն փլանիլ բառի մեջ նախաձայն փ դարձել է Մալայի
շրջանում ք, իսկ ձանիկի շրջանում սլ (բլուշ, բլչիլ, սլչուշ):

Փիտուր բառը, ինչպես տեսանք § 203, տեղափոխությամբ
դարձել է թէքուր, ուր փ և տ իրենց ձայնական աստիճաններն
էլ փոխանակել են:

216. Բառամիջում և բառավերջում փ մնում է նույնպես
փ, որ ձանիկի շրջանում դառնում է միշտ սլ. ինչ. եփել> էփուշ,
էպուշ, եփ> յէփ «եռման», թափել> թափուշ, թափուր> թէփուր
«ափսէ», թեփ> թիփ, թէփ, թուփ> թուի, լափել> լափուշ, խե-
չափառ> խրչըփար, խրչըպար, խուփ> խուի «փակ, գոց»,
խփել> խփուշ, խպուշ «փակել», խոփ> խէօի, խէօսլ, ծափ>
ծաի, ծապ, ծեփել> ծէփուշ, ծէպուշ, կանեփ> զօնիփ, զօնէպ
շեբեփ> շէրիփ, շրէփ, շփել> շփուշ, շպուշ, շփոթիլ> շփօթիլ,
չպօտվուշ, չափ> չաի, չապ, չափել> չափուշ, չապուշ, փրփուր>
փրրփրր:

Միայն չաի բառն է, որ տալիս է չաի և չաք. առաջինը
«չաի, mesure» իմաստով և երկրորդը «քանակ» իմաստով տար-
բերվում են իրարից:

Ք

217. Բառասկզբում տալիս է միշտ ք. ինչ. քոյր>քուր,
քիթ>քինթ, քաջախ> քացախ, քառասուն> քառսուն են:

Միայն քսան բառն է, որ նախաձայնը կորցնելով դառնում
է սօն (Տր. քսօն):

218. Բառամիջում և բառավերջում ձայնավորից, ինչպես և
մ, ն, ւ ը բաղաձայններից հետո մնում է ք. ինչ. աքլոր> աքլար,
թոք> թէօք (որից թոքալ> թօքալ «հազալ»), թուք> թուր, թքա-

նել>թըքնուշ, ինքն>ինքը, երկինք>էոնինք, երկանք>էրգօնք, զոքանչ>զօքօնչ, խելք>խիլք, ներքև>նէրքիվ, դուք>դ'ունք, տունք, արտասուք>այրըսունք, ցամաքիլ>ցօմքուշ:

219. յս ձայնից հետո հնչվում է իբր կ. ինչ. ձեղք>ջէխկ, մեղք>մ'էխկ, քաղաք>քաղաք, սեռ. քախկի:

220. Թք, ծք, չք, տք, պք, ցք ձայնախմբերի մեջ ստանում է անորոշ հնչյուն, իբր տկ, ծկ ևն. ինչ. աղօթք>աղօթկ, աղօտկ, անէծք>անէծկ, անէցկ, աչք>աչկ, հաւատք>հավաթկ, նեղու-
ածք, նէղվածկ, ծոպք>ծուփք, պէտք>բէթգը, բէտկը, ոտք>էօթք, յէտկ, օրօրոց>օրիցք, օրիցկ, միտք>միթկ, միտկ, ջրաղաց>ճաղացք, ճաղացկ:

221. Այս բոլոր դեպքերում, ուր որ ք բառասկզբում չէ, ձանիկի շրջանում հնչվում է կ. ինչ. ներքև>նէրկէվ, մսուրք>մսուրկ, մօրուք>մ'իրուկ, շուք>շուկ ևն ևն. Նույն իսկ այն դեպ-
քերում, երբ ք-ով սկսվող մի բառ կազմում է բարդության երկ-
րորդ մասը, դարձյալ վերածվում է կ-ի. ինչ. մօրաքոյր>մ'օր-
կուր, հօրաքոյր>հօրկուր, թանքամ>թօնկօմ «քամած մա-
ծուն» ևն:

Անկում

222. Ընկնող բաղաձայնների թվում առաջին հերթին պետք է հիշել ը, որի համար եղած օրինակներն են՝

արջառ>աշառ, տարգալ>կղալ, ջրաղաց>ճաղացք, շնոր-
հաւոր>շնաֆօր, մրսել>մսուշ, ճանապարհ>ջօմփա, բարձր>
պարսը (նաև պախը), դուրս>տուս, երբ>յէփ, խորխ>խօխ
(թուք):

Բ-ի անկման հետաքրքրական օրինակ է ներկայացնում Համշենի բարբառի ժողվար «մուրացիկ, մուրացկան» բառը, որ
կա նաև ժողվրվար ձևով: Այս վերջինը ցույց է տալիս որ բա-
ռի նախնական ձևն է եղել ժողովարար>ժողվրրար, ուր առաջին
ը դարձել է նախ նմանողությամբ ժողվրվար և ապա վ ջնջվել
է արագաբանության (haplologie) օրենքով:

223. Տեսանք վերը (§ 208), որ ը բաղաձայնը մի խումբ
բաղաձայններից առաջ վերածվում է յ. բայց այս յ բաղաձայնն
էլ որոշ ձայնավորներից հետո անհետանում է. այսպես ի և է
ձայնավորներից հետո. օր. սիրտ>սիրդ, սիգ, ծիրտ>ծիրդ, ծիդ,
ստերջ>ստիյչ, ստիչ, ստիճ, մրջիւն>մէլչում, մ'էճում, ներս>
նիս, նէս:

վիրարու «իրար վրա» ձևի մեջ արագաբանություն օրենքով կրճատված է իր, իբր թե վիրհրարու «իրարու վրայ»:

Ժ բաղաձայնից առաջ ը միանում կամ ջնջվում է. ինչ. արժան>էժօն, արժէ>աժէ, շարժք>ժաղկ, շարժիլ>ժաժվուշ:

224. Շատ կարևոր է ն բաղաձայնի ջնջումը հաջորդ մ-ից առաջ. ինչ. բան մը>պժմը, օրական մը>օրէգօմը «մի օրական (երախայ)», ձայն մի>ժըմը, բերան մի>պէրօմը «մի անգամ», բոյն մի>պոմը, աման մի>օմօ մը, տուն մի>դոմը, շուն մի>շոմը, շան մը>չօմը, երկան մը>որգըմը «մի ամուսնուն»:

Այս երևույթը ընդհանուր է մի անորոշի մոտ. բայց ուրիշ տեսակի բառերի միջև չկա: Օր. երկայն մոմ>էրգըն մոմ, լայն մատ>լըն մաղ, հոն փնաց>հոն մընաց: Սակայն ունինք նաև ոկվըմո>այգվընմէ «առաւոտուց»:

Նույնը գտնում ենք նաև ըմուն «այնպես» բառի մեջ: Ունինք էսմուն «այսպէս», էդմուն «այդպէս» (որ և տսմուն, ողմուն), բայց երբորդ դեմքն է ըմուն, փխ. *ընմուն: Այս ձևերի մեջ մուն առաջանում է նման բառից, որով էսմուն<այս նման, էդմուն<այդ նման, ըմուն<ընմուն<էնմուն<այն նման: Այսպեսով բացատրվում են նաև Ալշ. Մշ. էսման, էդման, էնման «այսպէս, այդպէս, այնպէս» բառերը:

Միևնույնը գտնում ենք նույն իսկ օտար բառերի հետ. ինչ. ստըկա մը «ստական մը», չըմադա մը «չամադան մը»:

225. Հետաքրքիր է ք կամ պ բաղաձայնի կորուստը, որ կատարվում է հետևյալ ձևով: Երբ բնական ճանապարհով կամ պատահաբար առաջանա մըն (մըր) խումբը, թեթևացման համար ք կորչում է: Օր.

Ամպ և որոտ բառերը միանալով կազմում են ամպորոտ բարդը, «ամպի որոտում» նշանակությամբ: Սղվելով այս եռավանկ բառի միջին ո ձայնավորը՝ ստանում ենք ամբրոտ, որ Համշենի բարբառի ձայնաբանական օրենքներով դառնում է օմըռէղ, օմըռէղ, ինչպես գիտե միջին սերունդը. ավելի նոր սերունդը այս խմբից կտրելով ք ձայնը, հնչում է օմռէղ, օմռէղ, որ գործածում է նախորդների հետ միասին: Նորագույն սերունդը ասում է միայն օմռէղ, որ ամպորոտ բառից միայն մ բաղաձայնն է պահում անփոփոխ:

Ճիպո բառը ստանալով ռնգական մ՝ դարձել է ջիմըռը, որ սեռականում լինում է ջիմըռի. միջին սերունդը երկու ձևն էլ

գիտե, նորագույն սերունդը թեթևացնելով այս ծանր ձայնա-
խումբը, գործ է ածում միայն ջիմնը, որ բուն բառից պահել է
միայն ու ձայնն անփոփոխ:

Համարել բառը, ինչպես այլուր, կորցնելով միջին վանկի
ա ձայնավորը, դարձել է նախ համրել. այստեղ մ և ը բաղա-
ձայնների միջև բնական ձևով ավելացել է ը և ձևացել է համը-
րել, որ դարձել է համբրել>համբուռ: Նորագույն սերունդը
մըռ ծանր խմբից հապավելով ը բաղաձայնը, դարձրել է բառը՝
համբուռ:

Նույն իսկ ամբար>ամբար բառը սեռականում դառնալով
օմբրի, կաբող է կրճատվել և լինել օմրի:

226. Դ բաղաձայնը ընկնում է գուղծ, խաղողենի և ուղեղ
բառերի մեջ, որոնց պայմանները տես § 154: Կրճատված է նաև
քաղհանել>քահնուռ բառի մեջ: Այսպիսի ուժեղ կրճատման են-
թարկվել է նաև հորեղբայր բառը, որ իբրև շատ գործա-
ծական բառ, միջին վանկից զրկվելով՝ դարձել է հօխպէր, հօր-
ըէր Մ, հօրպոր Ճ: Կրճատված է նաև օրիցք, փոխանակ օրօ-
րօցք:

227. Հ բաղաձայնը ջնջված ենք գտնում հաճարի>աժրի,
հապա>աբա, ճանապարհ>ջոմփա, ջուլհակ>ճուլագ, պահա>բաս
բառերի մեջ: Հատկապես հիշելու արժանի է կնքահայր, որ դար-
ձել է զնքէր Տ, զընկոր Ճ:

Դ բաղաձայնը կրճատված է վարդապետ>վարդէդ, մաշնակ
ելավ> (փոխանակ մարդանակ) և հիւանդանալ>հիվըննուռ բա-
ռերի մեջ:

Կ բաղաձայնը ջնջված է գարկանել>գայնուռ բառի մեջ
(ուր յ ձայնը ներկայացնում է ոչ թե կ, այլ ը-ի կրճատ ձևն
է), նույնպես չայնուռ (փխ. չգայնուռ)<չկարենալ (չափազանց
շատ գործածության պատճառով), ինչպես և թնծուռ՝ փոխանակ
ասելու թնծգուռ<թնծկալ, որ նույնպես գործածական է բար-
բառում:

228. Ավելի սակավաթիվ դեպքեր են՝

ը բաղաձայնի անկումը ունի «30» բառի մեջ,

խ—խօրիս<խորիսիս բառի վերջում.

ծ—զուծի<կծծի բառի մեջ.

ն—պարգիղօնք, սեռ. պարգիղնի < բարեկենդան բառի
մեջ:

Ծանոթ.—Առանձնապես կարևոր էր քննել թե՛ն ունգականը

ք-ից առաջ ինչ դիրք է ունենում: Իմ ամբողջ բառապաշարում այս դիրքով ն պահվում է. բաղմաթիվ օրինակներից հիշենք միայն աշուն>աշունը, գարուն>կարունը, աղաչանք>աղաչունը, երկինք>էոնինը, դուք>դունը Մ., ինքն>ինըը, ապրանք>աբոսնը, արժանը, յոնք>ոննը, թանքամ>[թօնքոմ' «քամած մածուն», նույն իսկ գորտնուկ>կօղնունը, արտասուք>ալղըսունը, խինք>խնինը, բանալի>պօնիքը, բայց և պօնինը, բարեկենդան>պարզիդօնը, յօնք>ընթվի, փոնգտալ>փրոընըդուշ, քրտնիլ>քըղընըրուշ, որոնց մեջ կարելի էր սղել կամ չավելացնել ն ուրն-գականը:

Սրանց հակառակ ունինք մեք>մեք Մ, մէք ձ և բայերի խոնարհման մեջ սերեմք>սիրիք Մ=սիրինը ձ, կտր. խօսեցաք>Հմշ. խօսեցաք և նման ձևեր: Իմ օրինակների մեջ կա նաև «արցունքոտ» բառը, որ թեև սովորաբար հնչվում է ալղըսունըէօղ ձևով, բայց կա նաև ալղըսուքէօղ, ինչպես նաև պրկունք>քըղընընը, որ մահմեդական հայոց մեջ թերքուք ձևն ունի:

Միևնույն ժամանակ ունինք Տրապիզոնի շրջանում կերպք>գէրօք, լամք>գուլօք, գամք>քուքօք, տամք>գուղօք և նման ձևեր, որոնք ցույց են տալիս թե նախ եղել է գէրանը, գուլանը, քուքանը, գուղանը, և ապա ն ջնջվել է, այն էլ ա>օ դառնալուց հետո: Այս դեպքում ինչ՞իւ շատ ուրիշ բառեր ազատ են մնում ն-ի կորստից:

Այս անորոշության պատճառով կարելի չէ որոշել թե օրինակ Հմշ. մէք, խօսեցաք ևն ձևերը ուղղակի գրաբարի մնը, խօսեցաք ձևերի հարազատ շարունակությունն են, թե նախապես եղել են մէնը, խօսեցանը և ապա կորցնելով ն՝ դարձել են նորից մէք, խօսեցաք:

Տեղափոխություն

229. Ձայների տեղափոխության դեպքերը Համշենի բարբառում հետևյալներն են.

ականջ>օնգօջ, նախապես օնգօնջ:

արձակել>ացքրուշ, ացկրուշ.

արձակ>ացկար.

աւաղան>ավգօն.

դատարկ>տալլագ.

թաւալիլ>թալվուշ

խստօր>սխտէօր, սխտէր

ծիրանի գօտի > ծինարի կողի
կապերտ > զարբիդ Տբ., զարբէդ ձ.
մարխ > մախրը, մարխ
շնի > շնիք «դէմք»
սկեսարայր > գէրսոր (Իւնիէում)
փետուր > թէքուր
փշրել > փռշուշ
քսել > ըսկուշ, ըսքուշ

Յավելում

230. Առաջին հերթին պիտի հիշել անեզական բառերի քվերջավորութիւնը, որով գրաբարի շատ բառեր անցել են նոր լեզվին և բարբառներին: Այս կարգին են պատկանում երկինք > էռնինք, արտասուք > ալղըսունք, շնորհք > շնօրք, աշխարհ > աշխարք են, որոնք հայտնի են բոլոր բարբառներին: Սակայն անսովոր կամ քիչ գործածական ձևեր են՝ ալէլու > ալէլուք «ծնընդյան աւետիս», ածու > ածուք «բանջարանոց», անանուխ > օնլուխք, աստղ > աստէղք, բանալի > պօնլիք, պօնլինք, բարեկենդան > պարգիղօնք, բայլ > պուլք «թուփ», գոլ > կէօլք «բոցի տաքութիւնը», երդումն > էշտվր'նք, երկանք > էրգօնք, լի > լիքը, ծոպ > ծուփք, կաթիլ > գաթիլք, մսուր > մսուրք, շարժ > ժաշք ձևերը: Այսպես նաև աշունք, կարունք:

Այս կարգի ք-երը շատ անգամ ներկայանում են իբրև կ, հատկապես ձանիկի շրջանում. ինչ. շարժ > ժաշք, ժաշկ, արտասուք > ալղըսունք, ալղըսունկ են:

231. Երկրորդ տեղն է բռնում ն, որ ավելանում է բառի մեջ երբեմն նախասությամբ, երբեմն հարասությամբ և երբեմն էլ այլ պատճառներով: Այսպես են՝ ամաչկոտ > օմօնչկէօդ, բանալի > պօնլինք, գորտնուկ > կօյղնունք, դդում > դընթում, դուք > դունք, տունք, եղիճ > էղինջ, երազ > նէրսազ, երկկամն > իլիգօմօն, երկինք > էռնինք, խլինք > խնլինք, խնընքէօդ, խուց > խունց «դպրոց», ծառուտ > ծառնուդ, ծոծրակ > ծօնօրազ, ճիպւ > ջիմբըր (ն դարձած մ' հաջորդ շրթնականի պատճառով), մաճ > մօնջ, ճութ > չունթ «խաղողի ճութ», միջուկ > մըշնուզ «հացի միջուկ», շնիք > շընլինք, հւր > նի'ր, նէ'ր, սամի > սօմ'ին:

232. Շատ անգամ բառի վերջում ավելանում է ը՝ բաղաձայնների խճողման դեպքում. այսպես են՝ մեղր > մէղրը, տայ-

գըր>դորոր, լի>լիբը, սանտը>սօնդոր, թանձը>թօնճորո,
ժանը>ծօնդոր, լիտը>լիդոր:

233. Հ հավելվածը գրվում է բառակզորում հետևյալ բա-
ռերի վրա.— ագանիլ>հաքնուշ, արօր>հարօր, ունդ>հունդ,
որթ>հէօշու: Բառի միջում հ բաղաձայնի հավելումը տես § 361
վրայ բառը:

234. Առանձնականի հավելում գտնում ենք հետևյալ բառե-
րի մեջ. ասի>աստի «ասացի», թասել>թաստուշ Տր. տաստուշ
ձ հեալը, ծլիլ>ծլուշ, ծլղուշ, ծունը>ծունդոր, պատրոյս>
բաղրուստ, բաղրուս, որից բայը պատրուսել>բաղրուստուշ,
բաղրուստուշ:

Առանձնապես հետաքրքրական է տ բաղաձայնի հավելումը
Յիսուս Բրիստոս ձևի մեջ, որ դարձել է իստուս Բրիստոս,
իստոս Բրիստոս, իստիս Բրիստիս (Հայկունի, Արքմ. 1892, էջ
435, 437, 443):

Հիշենք նաև՝

Ղ հավելում.— էառ>էղառ «առավ», կու>գուղի «աղբ»:

235. Բառի մեջ ձայնավորների հավելում են ներկայացնում
հետևյալ բառերը. լկել>լիգուշ, լուանալ>լօվընուշ, լուացուիլ>
լօվացվուշ, կատեիլ>գուղդուշ «չարչարել», ճճի>ջիջու, ճճղուկ>
ջիջղուգ, նօթի>օնօթի, չուան>չիվօն:

236. Ործկալ բայի սկզբում ավելացվել է գ, որ ծագում է
կ-ից. այսպես ործկալ>*կործկալ>գօյծգալ:

Կրկնություն

237. Կրկնությունը լինում է բառի իմաստը գործցնելու
համար: Բայց Համշենի բարբառը նման օրինակներ քիչ ունի.
օրինակի համար ամենայն>ամէն բառը, որ գրեթե ամեն տեղ
հնչվում է ամմէն, Համշենի բարբառում ունի պարզ էմէն,
ըմըն ձևը (առանց մ-ի կրկնության):

Համշենի բարբառում կրկնված բաղաձայնները հետևյալ-
ներն են.

ամմէն! աղօթքների ծայրին ասված՝ իբրև թե ավելի
սրտագին ձևով:

խլէլ>խլլուշ (ուժգնապես խլիլ).

միայնակ>մըննագ.

յիսուն>հիսսուն (բայց ավելի իսուն).

հասկանալ>հասկըննուշ, կա նաև հասկըննուշ, իսկ նմանիլ>

լմօննուչ բայը կազմված է ոչ թե կրկնությամբ, այլ նման
լմօն ածականից սոր անվանական բայ կազմելով, իբրև *նման-
անալ, *նմաննալ>լմօննուչ:

Ձայնավորների ներդաշնակութուն

238. Թեև Համշենի բարբառը շատ է ազդված թուրքերենից, բայց չի վերցրել նրանից ձայնավորների ներդաշնակության օրենքը: Նույն իսկ այն օրենքը, որով պոլսահայ բարբառում անշեշտ ը դառնում է ու՛ հաջորդ կամ նախորդ ու-ի ազդեցությամբ (օր, ո՛ւթու <ութը>, պուտո՛ւղու <պտուղը>), գոյություն չունի այստեղ: Համշենցին սովորական ձևով ասում է ջոխկունն <ձեղք> և ջրխկո՛ւնը <ձեղք>, առանց որևէ փոփոխություն մացնելու առաջին և վերջին վանկերի ը-ի երանգի մեջ:

Ուշադրությամբ քննելով Համշենի բառարանը՝ ես գտա միայն երկու աննշան դեպք ձայնավորների ներդաշնակության իբրև օրինակ: Առաջինն է կկզել, որ Տրապիզոնի շրջանում ունի գուզուզուչ ձևը, թեև ծանիկի շրջանում լինում է գլզզուզուչ: Երկրորդն է ուրագ, որ ստացել է ուրէք և իւրուք (սեռ. իւրկի) ձևերը.—սրանց մեջ կարծում եմ որ իւ դրված է ու ձայնավորի ազդեցությամբ՝ փոխանակ ու:

Սակայն ձայնավորների ներդաշնակության ավելի հետաքերքեր և ավելի վստահելի երևույթ են ներկայացնում Համշենի բառակազմության հատուկ հետևյալ բառերը.

Տալայր>դալար,

Հօրքուրայր>հօրքուրար,

Մօրքուրայր>մօրքուրար:

Այս բառերը կազմված են բարդությամբ այր <ամուսին> բառի, որ ոչ մի տեղ պահված չէ այս արմատական ձևով և կա միայն էրիկ փաղաքչական ձևով: Ըստ այսմ սրանք համեմատելի են գրբ. սկեսրայր>կէսրուր բառի հետ:

Այր բառը՝ երկբարբառների օրենքի համաձայն պիտի դառնար ուր, ինչպես է նաև կէսրուր բառի մեջ. բայց վերոհիշյալ երեք բառերի մեջ հակառակ օրենքի դարձել է ալ: Անշուշտ սա նրանից է, որ կեսրայր բառի ն ձայնավորը պատկանում է թեթև ձայնավորների խմբին, իսկ վերոհիշյալ երեք բառերի մեջ ա, օ, ու հավասարապես ծանր ձայնավոր են:

Ձայնավորների նույնացման դեպքերն էլ հազվադեպ են.

ես իբրև օրինակ ունիմ երբոր որ> հօփօրօր, որ լսել եմ երկրում, բայց արդի ձանիկցոց մոտ չկա. ինչ. հօփօրօր գալ չէյողը, օրի՞ խօսք գուդէ՛յողը «երբոր գալու չէիր, ինչ՞ա խօսք էիր տալիս»:

Այսպես է նաև տանտիկին> դօնդիգօն, որի վերջածայնը 0 առաջացել է առաջին վանկի ազդեցությամբ:

239. Զայնավորներից դուրս կան նաև մի քանի դեպքեր բաղաձայնների հարմարեցման համար. այսպես են՝ կտուց> գդուծ, սեռ. գրծծի, կթիչ «կաթ կթելու աման»> գթիչ, գտիճ, սեռ. գրծճի ևն:

Եզրակացություն

240. Զայնավորները Համշենի բարբառում առհասարակ պահում են իրենց երանգը. ա, օ, ո, ու ձայնավորները եռավանկ բառերի միջին վանկում ջնջվում կամ ր-ի են վերածվում.— ա ձայնավորը ոնգականից առաջ՝ ամեն տեղ դառնում է օ.— շեշտի տակ գտնված օ ձայնավորը դառնում է «է» կամ ի, ո ձայնավորը՝ էօ կամ էէ». շեշտից դուրս երկուսն էլ պահում են իրենց երանգը:

Երկրաբառները վերածվում են կամ պարզ ձայնավորի և կամ մի ձայնավորից ու մի բաղաձայնից բաղկացած վանկերի:

241. Բաղաձայնները ունին երեք աստիճան. Մալայի շրջանում պարզ թրթռուն, շնչեղ թրթռուն և թավ, իսկ ձանիկի շրջանում պարզ թրթռուն, պարզ խուլ և թավ:

Գրաբարի թրթռուն բաղաձայնները բառասկզբում դառնում են՝ Մալայի շրջանում շնչեղ թրթռուն, Տրապիզոնի շրջանում ֆնում են պարզ թրթռուն, իսկ ձանիկի շրջանում վերածվում են խուլի:

Այսպես քան> ք'օն, քօն, պօն: Գագրիում ես ծանոթացա Գրիգոր Էքսուզեան անուն 68 տվյա մի ծերունու հետ (ծնված ձանիկի Կուրչունյու գյուղում 1877 թ.), որ 2 տարեկան հասակում գտնվում էր իր ծնողների հետ առաջին գաղթողներից հետո եկող մի խմբի մեջ: Ամբողջ 35 տարի ապրեց իր ծնողների հետ Մծաբայում և այլուր, որից հետո ծնողները մեռան: Նա բառասկզբի թրթռուն բաղաձայնները Մալացոց նման հնչում էր ք'. ուստի պետք է ենթադրել թե ք> պ ձայնափոխությունը հետո է առաջացել նոր գաղութում:

Բառամիջուժում և բառավերջուժում դառնում են Մալայում և Տրապիզոնում՝ Թավ, Ճանիկում՝ պարզ խուլ։ Ռնգականից հետո ամեն տեղ մնում են թրթռուն, ը-ից հետո դառնում են Թավ, Ճանիկում՝ պարզ խուլ։

Գրաբարի պարզ խուլ բաղաձայնները ամեն դիրքով և բոլոր շրջաններում էլ դառնում են պարզ թրթռուն։

Գրաբարի Թավ (շնչեղ խուլ) բաղաձայնները ամեն դիրքով էլ մնում են Թավ՝ բոլոր շրջաններում, իսկ Ճանիկի շրջանում Թավ բաղաձայն գոյություն ունի միայն բառակզրում, ուրիշ տեղ (բառամիջուժում և բառավերջուժում) դառնում է միշտ պարզ խուլ։ Առանձին հազվագյուտ երևույթ ամբողջ հայ բարբառների մեջ։

Երբ ես նկատեցի այս երևույթը, առաջին անգամ կարծեցի թե անհատական հատկություն է՝ արդյունք արտասանական թերություն կամ ուսական ազդեցություն։ Արդարև մեր մեջ էլ կան անձինք, թեև շատ սակավաթիվ, որոնք կրթված լինելով ուսական դպրոցում, փ, ք, թ բաղաձայնները հնչում են պ, կ, տ։ Բայց հետո մտածեցի թե ուսախոսները 1) այս արտասանությունները մտցնում են ոչ միայն բառի մեջ, այլ նաև բառի սկիզբը, մինչդեռ այստեղ բառակզրում պահվում է փ, ք, թ, ց, չ արտասանությունը։ 2) ուսախոսները ց և չ ձայները չեն վերածում ծ, ճ, այլ ընդհակառակը հայերենի ծ, ճ հնչյուններն էլ դարձնում են ց, չ, մինչդեռ այստեղ բառակզրում ց, չ մնում են անփոփոխ, իսկ բառամիջուժում և բառավերջուժում դառնում են կանոնավոր կերպով ծ, ճ։ Ի վերջո տեսա որ այս երևույթը հատուկ է ոչ միայն ուսական դպրոց անցած երիտասարդներին, այլ և մանուկներին, ծերերին և անուս մարդկանց։ Մինչև անգամ պատահեցի Ճանիկից նոր գաղթած (1910 թ.) մի ծերունու, որ ուներ դարձյալ նույն արտասանությունը։ Այստեղից հետևեցի, որ այս երևույթը ուսերենից անկախ ձևացած արտասանական մի երևույթ է։ Եվ որովհետեւ ես 1910 թվին Տրապիզոնում Մալացիների, Ապլիօնցիների, Կիւշանացիների և Ճոշարացիների մոտ և առհասարակ այսպիսի երևույթ չնկատեցի, և այժմ էլ չկա նույն երևույթը Տրապիզոնցի գաղթականների մոտ, ուստի պետք է եզրակացնել, որ այդ երևույթը հին է, բայց հատուկ է միայն Համշենցոց բարբառի Ճանիկյան ճյուղին։

Մյուս բաղաձայնները սովորաբար պահում են իրենց երանգը, բացի ը-ից, որ շչական, ճչական, ծեքական, ոնգական և, ինչպես նաև թրթռուն ատամնական բաղաձայնից առաջ դառնում է յ, իսկ մնացյալ բաղաձայններից առաջ մնում է անփոփոխ. խուլ և թավ ատամնականից առաջ էլ դառնում է շ։— Ու բաղաձայնը նման ձայնափոխությունից բոլորովին ազատ է։

Գ. ՄԱՍ

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հոգնակիի կազմությունը

242. Համշենի բարբառը ճանաչում է երեք տեսակ մասնիկ՝ հոգնակիի համար. այն է՝ իր կամ էր, նիր կամ նի և ք։

Միավանկ բառերը ստանում են Մալայի շրջանում իր, իսկ ձանիկի շրջանում էր. օր.

հաց—հացիր, հացէր

այծ—տծիր, տծէր

ալջ—այչիր, այչէր

գայլ—կ'ուլ, կ'ուլէր

հաւ—հավիր, հավէր

արա—այրիր, այրէր

Իսպաղանիկ բառերը ստանում են Մալայի շրջանում նիր, իսկ ձանիկի շրջանում նի. օր.

խնձոր>խնձ'օյնիր, խնձօյնի

աղջիկ>ախճիգ, ախճիգնի

այր>տրիգ, տրիգնի

ջաղացք>ճըղացք, ճըղացքնի

Ի ձայնավորով վերջացող բազմավանկ բառերը ստանում են ք մասնիկը. ինչ. գինի>կինի, կինիր, գօտի>կօղի, կօղիր, գերանդի>գէրընդի, գէրընդիր, գործելի «ածուխ»>կօյծէլի, կօյծէլիր, ածելի>ածիլի, ածիլիր, անալի>օնլի, օնլիր, որբեայրի>էօրպըվտրի, էօրպըվտրիր, վարի>կարի, կարիր, գիւղացի>կէղացի, կէղացիր, Այսպես նաև ծառերի անունները՝ պալընիր, զղընիր, թէղիր, թգընիր, թթընիր, խաղընիր, գաղնիր են։

Միավանկ բառերից թի լինում է յգ. թիյեր, ձի—ծիյեր և ճիյօն. իսկ հայ բառը, որ դարձել է հէյի, հոգնակի լինում է հէյիր։

243. Դրաբարի այն բառերը, որոնք ա ձայնավորը ոնգա-

կանի մոտ դարձրել են օ, հոգնակիում պահում են անփոփոխ
նույն օ ձայնավորը. օր.

ճանճ>ջօնջ, ջօնջիր, ջօնջէր
բան>պօն, ք'օնիր, պօնէր
զոքանչ>զօքօնչ, զօքօնչի

244. Գրաբարի այն բառերը, որոնք վերջավանկում ունենալով ո ձայնավորը, վերածում են էօ-ի կամ «է»-ի, հոգնակիում կարող են պահել «էօ» ձայնը, բայց ավելի շատ պահում են «է» կամ օ. ինչ.

գորա>կէօյդ, կէօյդէր, կէյդէր, կօյդէր
գոգ>կէօք, կէօքէր, կէքէր, կօքէր
հող>խէօղ, խէօղէր, խէղէր, խօղէր
հոա>հէօդ, հէօդէր, հէդէր, հօդէր

245. Գրաբարի այն բառերը, որոնք վերջանում են ր, եթե միավանկ են՝ հոգնակիի էր կամ իր մասնիկի մոտ պահում են իբենց ր ձայնը, բայց եթե բազմավանկ են՝ հոգնակիի նիր կամ նի մասնիկի ն բաղաձայնի պատճառով այս ր վերածում են յ-ի (ըստ § 208). ինչ.

աար>աար, սարէր
խնձոր>խնձէօր, խնձէօյնի, խնձօյնի
ոսկը>օսկէօր, օսկէր, օսկէյնի
խեչափառ>խըյչըպար, խըյչըպայնի
հօրքուրայր>հօրքուրար, հօրքուրայնի
ալիւբ>ալուր, ալույնի

Ու վերջացող բառերը բնականաբար ազատ են այս ձայնափոխությունից. ինչ.

արջառ>աչառ, աչառնի
աստառ>աստառ, աստառնի,
ամառն>օմառ, օմառնի
թիթեռն>թիթէռ, թիթէռնի

246. Եթե բառը վերջանում է ն-ով, հոգնակիում երկու ն ֆուռ են միասին և մեկի չեն վերածվում. ինչ.

արիւն>արուն, արուննի
աման>օմօն, օմօննի
բերան>պէրօն, պէրօննի

247. Գրաբարի այն միավանկ (իրապես մեկ և կես վանկանի) բառերը, որոնք բաղաձայնների խճողման պատճառով ստացել են վերջաձայն ը և վերածվել են երկավանկի, հոգնակիում զրկվում են այս հավելվածական ը-ից և նորից միավանկի վերածվելով ստանում են էր (և ոչ նի) մասնիկը. ինչ.

աանաւր > սօնդոր, սօնդոէր

ծանր > ծօնդրը, ծօնդրէր

ծունր > ծունդրը, ծունդրէր

նօսր > նօսրը, նօսրէր

թանձր > թօնծրը, թօնզրը, թօնծրէր, թօնզրէր

մեղր > մէղրը, մէղրէր

ճիպո > ջիմբոր, ջիմբոէր:

248. Այն բառերը, որոնք վերջավանկումունին շեշտյալ ու, սղման օրենքով կարող են ջնջել այս ու ձայնավորը, բայց երբեմն էլ պահում են. օր.

բուրդ > պուշտ, պշտէր, պուշտէր

շուն > շուն, շնէր

տուն > դուն, դնէր,

մօրուք > միրուք, միրուքնի

ջուր > ճուր, ճրէր

Այս կարգի բառերը կարող են նաև ներմուծել ը՝ հնչման թեթևության համար. օր.

զդում > տընթում, տընթումնի, տընթմընի

եղունգ > էղունք, էղունքնի, էղընքնի

գլուխ > կլէօխ, կլէխ, կլէխնի, կլխընի

բազուկ > պազուգ, պազուգնի, պազգընի

պտուկ (կովի) > քդուգ, քդուգնի, քդգընի

249. Վերջավանկում ի ձայնավորն ունեցող բառերն էլ հոգնակիում կարող են պահել նույն ձայնավորը և կամ վերածել ը. ինչ.

բանալիք > պօնլինք, պօնլինքնի, պօնլընքնի

ամիս > օմիս, օմսընի

բիւր > պիր, պրէր

250. Ի վերջացող բառերը այս պարագային առաջին դեպքում ը վերածում են յ-ի, երկրորդ դեպքում պահում են. ինչ.

ապուր>աքուր, արույնի, արբրնի, արբյնի
ամբար>օմբար, օմբրյնի, օմբրրնի
հարիւր>հարուր, հարույնի, հարրրնի

251. Բացի ի և ու ձայնավորներից, նաև ա և ւ ձայնավորները հոգնակիում կարող են մնալ կամ սղվել և վերածվել ը-ի. ինչ.

գանակ>տնագ, տնագնի, տնգրնի
գանգակ>գօնգագ, գօնգագնի, գօնկկրնի
մանգաղ>մօնգաղ, մօնգաղնի, մօնկկրնի
ամբար>օմբար, օմբայնի, օմբրյնի
աղաման>աղօմօն, աղօմօնի, աղօմրնի
ասեղն>ասէղ, ասէղնի, ասղրնի
օչխար>օչխար, օչխայնի, օչխրյնի
հիւանդ>հիվօնդ, հիվրնդնի
բանջար>պօնջար, պօնջրյնի
գդալ>կդալ, կդալնի, կդրնի, կդրնի
ճակատ>ջագաղ, ջագղրնի

252. Վերջավանկի շեշտյալ ու ձայնավորը կարող է սղվել, ոչ միայն այն դեպքում, երբ նա առաջանում է գրաբարի ու-ից, այլ և երբ առաջանում է գրաբարի ո և ըյ, իւ ձայներից. ինչ.

բոյն>պուն, պնէր, պունէր
գոյն>կուն, կունէր (բայց ոչ կնէր)
դամոն>տօմօն, տօմօննի, տօմրնի
գոմ>կում, կումէր (բայց ոչ կմէր)
սիւն>սուն, սնէր
ձիւն>ծուն, ծնէր

253. Այսպիսի հանդիպումների ժամանակ կարող են տեղի ունենալ հետաքրքիր ձայնաբանական երևույթներ, որոնց մեջ հիշելու արժանի ենք համարում հետևյալները.

ա) Եթե բառի մեջ կա ը բաղաձայնը, երբ պատահի նա այնպիսի մի բաղաձայնի մոտ՝ որ չի ընդունում ը, կվերածվի ըստ օրինի յ-ի (§ 208). օր.

խորիսի>խօրիս խօյսրնի.

Ծան.—սիրտ բառը ունի երկու ձևով հոգնակի՝ սրյդեր և սիդէր:

բ) Լ և Ն բաղաձայնները իրար հանդիպելու ժամանակ ըստ օրինի ըն դառնում է ԼԼ (§ 167). այսպես է ուլունք>հիլուն, հիլուննի, հիլլընի, հիլլըննի—նույն հանդիպումը տեղի է ունենում նաև մույլ>մոմլ «ամպ», յգ. մոմլնի ձևի մեջ, բայց չի փոխվում ԼԼ:

գ) Օրինակներ ունինք նաև կիսապայթական բաղաձայնների տարրալուծման, որով ջ>ժ, ձ>զ, ծ>զ, ց>ս. ինչ.

ականջ>օնզօջ, օնզօժնի
պղինձ>բղինծ, բղինզնի
անիծ>օնիծ, օնիզնի
կապոց>զաքէօց, զաքէօցնի, զաքէօսնի:

254. Այն բառերը որոնց առաջին վանկը սուղ ը ձայնավորն ունի, համարվում են բազմավանկ և հոգնակիում դարձյալ ստանում -նի մասնիկը. ինչ.

պճեղն>բջէղ, բջէղնի
գլուխ>կլէօխ, կլէխնի, կլխընի
ստերջ>ըստիճ, ըստիճնի:

255. Բարդ բառերը թեև բազմավանկ, եթե իրենց երկրորդ մասում ունին միավանկ մի բառ, համարվում են միավանկ և կարող են ստանալ հոգնակիում -էր մասնիկը. բայց համարվում են նաև բազմավանկ և ստանում են -նի մասնիկը. ինչ.

դրկեց- տըրգից, յգ. տըրգըցէր (չկա դրկիցներ ձևը):
մաշմուրք շաղանակ», յգ. մաշմուրքէր, մաշմուրքնի
ձիափուշ խոտ է», յգ. ձիափշէր
իշափուշ խոտ է», յգ. իշափշէր
հօրաքոյր>հօրքուր, հօրքուրէր, հօրքույնի
մօրաքոյր>մօրքուր, մօրքուրէր, մօրքույնի:

256. Ու հանգող բառերը, թեև իբրև ձայնավորահանգ ստանում են հոգնակիում ք մասնիկը, բայց կարող են ու ձայնավորը զարձնել վը և ստանալ -նի մասնիկը. ինչ.

թթու>թրտու, թտուք, թտվընի
առու>առու, առուք, առվընի
կատու>գաղու, գաղուք, գաղվընի
լիզու>լիզու, լիզուք, լիզվընի
ճճի>ջիջու, ջիջուք, ջիջվընի

ուղեգ>էղու, էղուք, էղվրնի
մեղու>մէղու, մէղուք մէղվրնի
Միավանկ լու բառը լինում է լվէր:

257. Ա հանգող բառերը, նույնպես իբրև ձայնավորահանգ-
այիտի կաղմեին իրենց հոգնակին ք մասնիկով, բայց այս ձևը
քիչ է գործածվում և շատ ավելի սովորական է նի ձևով հոգ-
նակին: Այսպես են՝

գուրայ>կուրբրնի, կուրբտք
ակոայ>ագոռնի, ագոտք
բապէ>պագրնի, պագտք
փեսայ>փէսրնի, փէստք
տէր «տէրտէր»>դէրոնի, դէրտք
սատանայ>սադօնրնի, սադօնտք
ճանապարհ>ջօմփա, ջօմփրնի, ջօմփտք
լոբի>լօբյա, լօբյրնի
չուխայ>չուխրնի, չուխտք
անջորան>օնջուռա, օնջուռրնի, օնջուռտք
աղայ>դղրնի, դղրտք:

Վերջինը՝ հակառակ մյուսներին, ավելի սովորական է դղուք
ձևով, քան թե դղրնի:

258. Մարմնի գույգ անդամների անունները կաղմում են
իրենց հոգնակին -վի մասնիկով. բայց կարելի է գտնել նաև
-էր և -վիք ձևով գործածված: Այսպես են՝

աչք>աչք, աչվի, աչվիք, աչքէր
աք>աք «ոտք», արվի
թուշ>թուշ, թշվի, թշէր
ծոց>ծէօց, ճօցվի
ծունկ>ծունգ, ճնգվի, ճունգէր, ճնգէր
ձեռք>ծէռվի, ծէռքէր, ծէռվիք
ճանկ>ջօնգ, ջօնգվի, ջօնգվիք, ջօնգէր
ոտք>յէտկ, յէտկ, օղվի
մատն>մաղ, մաղվի, մաղվիք, մաղէր
յօնք>ունք, ընքվի, ընքվիք, ունքվի, ունքվիք
պակուք «շրթունքներ»>ըրորնրնի, ըրոմընքնի, ըրորընքվի,
ըրոմընքվի
սկանջ>օնգօնջվի, օնգօնջնի, օգօնջվրնի (Արբու. 1895, 294)
կոտոշ>գօղէշվրնի:

Ուրիշ բարբառներում այս ձևով հոգնակի ունենում են միայն միավանկ բառերը. Համշենի բարբառում կան նաև բազմավանկ բառեր, ինչպես են վերջին երկուսը, որոնք ունին նաև սովորական նի ձևով հոգնակի:

Ուրիշ բարբառներում թեև և ճիշտ բառերը՝ թեև միավանկ և չուլգ անդամ ցույց տվող բառեր, բայց չունին վի ձևով հոգնակի: Համշենի բարբառը գիտե թէվվի և թէվվիք ձևերը, թեև կա նաև թէվէր, Իսկ ճիշտ «ոտք» բառը ջնջված է Համշենի բարբառից, ուր ճիշտ նշանակում է «ծառի բարակ ճիւղ»:

259. Այս նույն մասնիկով հոգնակի է դառնում նաև ղուռն>տուռ բառը և լինում է սղմամբ տուվի կամ տուվիք, թեև կարելի է ասել նաև տուռէր, տոնէր և տոէր: Այս ձևերի գործածության մասին տես տակը § 262:

Ծանոթ.— Սխալ գործածության արդյունք է ունկ, որ հին հայերենում նշանակում է «ամանի կանթ, բռնելու տեղ, խուլի», բայց Համշենի բարբառում ստացել է «ամանի եզերք» նշանակություներ, որ նաև թրք. դըյիք բառով է բացատրվում: Սակայն բարբառում կատարվելով երկրորդ թյուրիմացությունը, կարծել են թե այս ունկը աչքի ունքի հետ նույն է (երկուսն էլ կլոր կամարավոր ձև ունին) և ոչ միայն վերջաձայնը դարձել է ք (ունք), այլ և հոգնակին եզել է ունքվի, ունքվիք, իբր թե նա էլ պատկաներ մարմնի զուլգ անդամների թվին:

260. Այն բառերը, որոնք գրաբարում ունին ն հանգը, որից զրկվել են բարբառում, հոգնակիում կարող են վերականգնել իրենց այդ ն ձայնը: Այսպեսով այս կարգի բառերը ներկայանում են կրկնակ ձևով.

թոռն>թէօռ, թօռներ, թօռէր

մատն>մադ, մադներ, մադէր

մուկն>մուգ, մգներ, մուգէր

ծուկն>ծուգ, ծգներ, ծուգներ, ծուգէր

հարսն>հայս, հայսներ, հայսէր

լեռն>լէռ, լէռներ, լէռէր

ղուռն>տուռ, տոնէր, տուռէր, տոէր, նաև տուվիք

եզն>յէզ, էզներ, յէզէր, բայց նաև էզնի, էզնիք.

Այսպես նաև՝

ծառ>ծառ, ծառներ, ծառէր

փուռ>փուռ, փոնէր, փոէր:

261. Վերջում հիշատակված դուռն և եզն բառերի հոգնակին արժանի է առանձին ուշադրութեան:

Եզն բառի հոգնակի էզնի, էզնիք ձևերը շատ անկանոն են. իբրև միավանկ՝ այս բառը չպիտի ստանար -նի մասնիկը, այլ միայն -էր:

Ինչպէս բացատրել այս անկանոնութիւնը:

Անկանոնութիւնը կարելի է բացատրել երկու ձևով. նախ իբրև փոխառութիւն հարևան Սոսրջուրի բարբառից, ուր էզնի կանոնավոր հոգնակի ձև է:

Եթե փոխառութեամբ բացատրութիւնը անհարմար է, կարելի է մեկնել գրաբար եզինք ձևով: Այս բառը շրջմամբ դարձել է նախ եզնիք, ուր ապա ք հոգնակիի նշան համարվելով՝ բաժանվել է բառի մարմնից: Այսպեսով ձևացել է եզնի և այս նի վերջավորութիւնն էլ նույն է համարվել յգ. -նի մասնիկի հետ, որ ոչ մի կապ չունի և զուգադիպորեն միայն նման է նրան:

262. Վերը § 258 հիշված -վի հանգոյ հոգնակիները, ըստ որում զույգ անդամների անուններ են, կապակցվել են երկու գաղափարի հետ, իսկ -էր ձևով հոգնակիները ըմբռնվել են իրապես հոգնակի: Այսպես են հասկացվել նաև տոմի և էզնի բառերը: Դովի > տովի ասելով հասկացվում է մի դռան երկու փեղկերը, իսկ դոներ զանազան տների և սենյակների դռներ: Նույնպես եզնի ասելով հասկացվում է մի զույգ եզ, եզների մի ամուր, իսկ եզներ ասելով հասկացվում է եզների մի խումբ (երկուսից ավելի): Այսպեսով հասել են երկակիի գաղափարին, որ ինչպես հայտնի է՝ կար հին հնդեվրոպական լեզուների մեջ, ապա վերացվեց և այժմ, իբրև մնացորդ խոր հնութեան, մնում է չեխերենում:

Ծանոթ.—Այս լեզվական հետաքրքիր երևույթը դիտելովք ինձ Արտաշէս էքսուզեանը:

263. Էշ և ծի բառերը հոգնակիում ստանում են օն մասնիկը, որ ուրիշ բարբառների -ան մասնիկն է. այսպես՝ իշօն, ծիօն, որոնք ունին նաև սովորական էշէր, ծիյէր, ինչպես և իշօննի, ծիօննի ձևերը: Զկա սակայն լուան ձևով հոգնակի.— Բիւր. 1899, 559 հիշվում է կիշօն (գրված գիշօն) «գէշ մարդիկ», որ նույնպես այս մասնիկով է կազմված. իսկ անդ, 1900, 83 դէղօն «աեղեր»:

264. Պէս > քէս միանալով դերանունների հետ՝ համարվում է մի բառ և ստանում է հոգնակիում -նի և նիք մասնիկները. ինչ-

բեղ պէս> քուբէս, քուբէսնի, քուբէսնիք
մեղ պէս> միրբէս, միրբէսնի, միրբէսնիք
ձեղ պէս> ծիրբէս, ծիրբէսնի, ծիրբէսնիք
ինձ պէս> իմբէս, իմբէսնի, իմբէսնիք:

265. Մատման> մաղմօն բառը, ինչպես նաև-ուտ վերջա-
վորած տեղ ցույց տվող բառերը թեև բաղմավանկ և ստանում
են -նի հոգնակերտ մասնիկը, բայց կարող են ստանալ նաև -էր
մասնիկը, որ հատուկ է միավանկներին, թե ինչպե՛ս այս բացա-
ռությունը՝ ինձ անհնարին եղավ բացատրել: Այսպես ունինք՝

մատման> մաղմօն, մաղմօննի, մաղմօնէր
ցախուտ «անտառ»> ցախուղ, ցախուղնի, ցախուղէր
փշուտ> փշուղ, փշուղնի, փշուղէր
մաշմրգուտ> մաշմրքուղ, մաշմրքուղնի, մաշմրքուղէր
խոտուտ> խօղուղ, խօղուղնի, խօղուղէր
ժոխուտ> ժօխուղ, ժօխուղնի, ժօխուղէր
մացառուտ> մացառուղ, մացառուղնի, մացառուղէր
ընկզենուտ> ընգզընուղ, ընգզընուղնի, ընգզընուղէր
թթենուտ> թթընուղ, թթընուղնի, թթընուղէր
թգենուտ> թգընուղ, թգընուղնի, թգընուղէր
ճաղկուտ> ճաղգուղ, ճաղգուղնի, ճաղգուղէր:

Եվ կարծես թե սրանց հետ հանգ կազմելու համար էլ՝

խախուտ> խախուտ, խախուտէր:

օր. խախուտէրը պի կօլինք «խախուտները բեր վառենք»:

266. Գույն ցույց տվող մի քանի բառ հոգնակի են դուռ-
նում ստանալով -էք մասնիկը. այսպես՝

գարմրէքը «կարմիրները»

ջէրմրգէքը «սպիտակները»

սէվէքը «սևերը»

գարուղէքը «կապույտները»

տէղիկէքը «դեղինները»

գէղէքը «կանաչները»:

Սրանք կարող են սակայն նաև ըստ օրինի լինել գարմիր-
նէր (Տը), գարմիրնի ևն:

267. Միջին հայերենից մնացած և կամ նոր մասնիկներով
ևս աճած անկանոն ու անսովոր հոգնակի ձևեր են:

գուռ—տոմարդուք
 ընկեր—ընգէյդուք (Բիւր. 1899, 604 ընկերտէք)
 եղբայր—ախպըյդուք
 կին—գընգըյդուք (Բիւր. 1899, 754 գնդիք).
 հարս—հայսնըյդուք, հայսօնըյդուք.
 կտրիճ—գողըյշուք
 հայր—հորօնըյդուք, հորէյդուք
 հօրեղբայր—հօրպըյդուք
 հօրու (խորթ հայր)—հօրվըյդուք
 հօրաքոյր—հօրկույդուք
 մայր—մորէյդուք, մորօնըյդուք
 մօրաքոյր—մօրկույդուք
 մօրու (խորթ մայր)—մօրվըյդուք
 ներ—նիքրօնըյդուք
 ոսկր—օսկըյդուք
 սկեսուր—կէսույդուք
 պառակ (լեռան լանջ)—բառգըյդուք
 տայգը—դորէյդուք
 տալ—դալէյդուք, դալօնըյդուք, դալնէր
 տեղ—դէղօնք
 տէր—դիրվըյդուք, դիրօնըյդուք, դիրընըյդուք
 քոյր—քուրէյդուք
 օր—ավույդուք:

Այս բոլորը ունին նաև իրենց սովորական ձևերը. ինչ. դէղէր «տեղեր», օրէր, դորքուէր «տայգրեր», կէսույնի «կեսուր-ներ» են:

Այս կարգի հոգնակիների հետ կարող ենք հիշել նաև՝

սեամ—շիմ, շիմէր, շիմքէր
 ողն (լեռան)—յէօղ, էօղ, յգ. օղնունք
 հոգի—հօքի, հօքիք, հօքվընի
 մօրուք—միրվուք, միրվողուք, միրուքնի
 մըջիւն—մէյշում, մէնում, մէնվընի
 (այս վերջինը ինձ թվում է թե կազմված է տարանմանությամբ
 կանոնավոր մէնումնի կամ *մէնմընի ձևից):

մարգ—մաշտէր, մաշտվի, մաշտվիք, մաշտիք
 թև—թէվ, թէֆքէր Տր.
 աստղ—աստղ, աստէղկ, աստէղկնի:

268. Վերևում արված կանոններին ենթարկվում են նաև թուրքերենից փոխառյալ բառերը. ինչ.

ղըյի «ամանի եզերք», յգ. ղըյիք
պուղար «աղբիւր, ակ», յգ. պուղայնի
ալմամալա «բաղէ», յգ. ալմամալընի, ալմամալէք
էնիշտո «քիռայր», յգ. էնիշտոք, էնիշտընի ևն ևն.

2. Հոլովներ

269. Կը ճյուղի բոլոր բարբառների նման՝ Համշենի բարբառն էլ ունի 6 հոլով՝ թե՛ եզակի և թե՛ հոգնակի. սրանք են՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական և գործիական: Պակասում է ներգոյականը:

Սրանց գործածության մեջ պետք է նկատել, որ

1) Ուղղականը գործ է ածվում նաև իբրև կոչական.

2) Հայցականը շնչավորների մեջ երբեմն նման է ուղղականին և երբեմն էլ տրականին. օր.

Էնիբր Խաչօգին քիչ մը յարալադիլէր.

Կիրկէօրը (կամ Կիրկէօրին) մոքտուրը՝ն հօնէցին «Գրիգորին դպրոցին հանեցին».

Ընէր յէզը մօշտէցին «նրանք հզը մորթեցին».

3) Տրականը թե՛ որոշյալ և թե՛ անորոշ նույն է սեռականի հետ.

4) Հայցականը գործ է ածվում նաև իբր նախդրիվ հայցական.

Ախպոյս կնաց ցախուղը.

Հոյս գունը կնաց.

5) Ներգոյականի համար գործածվում է տրական հոլովը. օր.

Դօնը նստած ու «տանը նստած է».

Ծախուղին մօն կուկա «անտառում ման է գալիս».

Խօնուղին նստած պօնի գու «խանութում նստած աշխատում է»:

Այսպեսով տրական, ներգոյական, հաճախ նաև բացառական նույնանում են. երբ ասում են «Բաղլաքին ի՞նչ ծախին գու, կաբելի է հասկանալ թե՛ «քաղաքում ի՞նչ են ծախում» և թե՛ «(գյուղացիք) քաղաքին ի՞նչ են ծախում»:

3. Հարավում

270. Համշենի բարբառում գոյականները, ինչպես նաև գոյականաբար առնված ածականները ունին 7 հոլովում, հետևյալ ձևով.

Առաջին հոլովում

Առաջին հոլովման վերջավորություններն են սեռական և տրական ի, բացառական ը՛ն (շեշտյալ) կամ էն, գործիական օվ: Օրինակ՝

Ո.	հաց	խնձէօր
Ս. Տ.	հացի, հացէց	խնձօրի
Բ.	հացո, հացը՛ն, հացէցըն	խնձօրո, խնձօրը՛ն
	հացէն,	
Գ.	հացով	խնձօրով

Երկրորդ հոլովում

Ո.	հացէր	խնձէյնի
Ս. Տ.	հացէրու	խնձէյնու
Բ.	հացէրո	խնձէյնէրո, խնձէյնուն
Գ.	հացէրով	խնձէյնէրով

Ծան.—1) հացո, խնձօրո ևն ձևերը անորոշ են, -ըն որոշյալ, իսկ մը-ից առաջ դառնում են ը. օր. այլո, այլը մը, այլըն.

Ծան.—2) Մալա ևն յգ. ուղ. լինում է հացի, բայց մյուս հոլովների մեջ «է» մնում է:

3) Մալա ևն բացառականում որոշյալի մեջ լինում է հացէրուն, հացէրունմէնէն.

4) Մալա ևն յգ. ուղ. լինում է խնձօյնի, խնձօյնին, Ս. Տ. խնձօյնուն, Բ. խնձօյնէրէն, խնձօյնուն, խնձօյնումէնէ, Գ. խնձօյնէրով.

Այսպես են հոլովվում նաև ու վերջացող բառերը. օր. առու.

Ո.	առու	առուք, առվընի
Ս. Տ.	առվի	{ առվընուն, առուցներուն, առուսներուն
Բ.	առվո, առվըն, առուցըն	
Գ.	առվով, առվընով	առվընէրով, առուքով, առուցներով, առուսներով.

2) Այն վերջացող բառերը, որոնք հոլովման ժամանակ կորցնում են ա ձայնը. ինչ. գուլպայ—կուրքի, անճորայ>օնջուրի, չուխայ—չուխի, սատանայ>սաղօնի, տղայ—ղղի, փեսայ—փէսի:

Ծան.—Սղման զեպքում կլինին ձայնաբանական որոշ երեւոյթներ. ինչպես՝ ր>յ, ց>ս, ձ>զ են. օր. երազ—նէյզի, որս—էյսի, կացին—զաննի, մածուն—մազնի, ցորեն—ցօյնի, քաղաք—քախկի, խորիսխ—խօյսի, կտուց—գրծծի, կթիչ—գրծնի են: Առանձնապես դիտելու արժանի է մըջիւն>մէճում, սեռ. մէճվի՝ փոխանակ մէճմի, որ տարանմանությամբ վ դարձրել է մ-ի: Նորերը հոլովում են նաև մէճում—մէճումի—Բարեկենդան բառը սղմամբ դառնում է սեռ. պարզիղնի:

Երկրորդ եղովում

271. Երկրորդ հոլովման նշանն է սեռ—տր. ու, որի տիպական օրինակն է մարդ>մաշտ:

Ո. մաշտ	մաշտէր
Ս. մաշտու	մաշտէրու
Բ. մաշտո, —մտ մաշտէրո, մաշտէրմտ	
Գ. մաշտով	մաշտէրով

Աշխարհաբարում այս հոլովման հետևող բառերի թիվը մեծ չէ. իսկ Համշնի բարբառում բազմաթիվ. ինչ. գետին—կէղնու, երէց—իրիցու, էշ—իշու, խոզ—խօզու, ծով—ծօվու, կէս—զիսու, կով—զօվու, փոք—փօրու, ցաւ—ցավու, հաւ—հավու, հող—խէօղու, առ>օռու, մահ—մահու, մամ—մ'օմու, մանչ—մ'օնչու, պոչ—քօչու, պառաւ—քաովու, պապ—քաքու, հորթ—հօշտու, գայլ—կ'ուլու, արջ—այլու, այծ—ուծու, աստուած>աստրծու:

Ա վերջացող բառերից բացառաբար «ճանապարհ» հոլովվում է հետևյալ ձևով.

Ո. ջօմպա
Ս. ջօմպու
Բ. ջօմպացն
Գ. ջօմպայով, ջօմպով
Ո. ջօմպընի, ջօմպընէր
Ս. ջօմպընուն, ջօմպընէրուն
Բ. ջօմպընուն, ջօմպացնուն, ջօմպանուն
Գ. ջօմպընիյով, ջօմպընէրով

272. Ամենից ավելի բարդ և բազմազան է ի վերջացող բառերի հոլովումը, որի համար օրինակ ենք առնում նախ ծառերի անունները:

Ծառերի անունները գրաբարի նման ունին երկու տեսակ վերջավորութուն. ի և ննի, որոնք բարբառում դառնում են ի և -ընի: Մենք այստեղ դնում ենք մոսախի բառի հոլովումը երկու ձևով.

- | | | |
|----|---|--------------------|
| Ո. | դօսխի | դօսխընի |
| Ս. | դօսխու, դօսխէցը | դօսխընէց, դօսխընու |
| Բ. | { դօսխիյո
դօսխիցըն, դօսխէցըն
դօսխիյըն, դօսխուցո | դօսխընէցըն |
| Գ. | դօսխիյօվ, դօսխէցօվ | դօսխընէցօվ |

Հոգնակի

- | | |
|----|---|
| Ո. | դօսխիք, դօսխիքնի |
| Ս. | { դօսխիքներուն, դօսխիցներուն, դօսխիսներուն |
| Բ. | { դօսխիքնուն, դօսխիցնուն, դօսխիսնուն |
| Գ. | դօսխիքօվ, դօսխիքներօվ, դօսխիցներօվ, դօսխիսներօվ, դօսխիքնօվ. |

- | | |
|----|---|
| Ո. | դօսխընիք |
| Ս. | { դօսխընիքնուն, դօսխընիցնուն, դօսխընիսնուն, |
| Բ. | { դօսխընէքնուն, դօսխընէցնուն, դօսխընէսնուն |
| Գ. | դօսխընիքնօվ, դօսխընիցնօվ, դօսխընիսնօվ |

Այսպես են հոլովվում

պալընի, զըղընի, ընգզընի, թէղի, թզընի, թթընի, խաղընի, խընձընի կամ խնձօրի, գաղնի, պըվընի, աժրի կամ աժըրնի, մաշմըքի, մախըրնի, մօրընի, ուռընի:

Այսպես են հոլովվում նաև ի վերջացող այլ սովորական բառեր. ինչ, խնօցի, գաշի, մագնի ևն:

Ծան.—1) Ի վերջացող բառերը ունենում են երկու տեսակ հոգնակի. ք և նի. բայց որովհետև ծառերի անունները վերջանում են նի, ուստի դօսխի և նման ձևի բառերը չունին *դօսխինի կամ *դօսխընի ձևով հոգնակի. որովհետև այս դեպքում *դօսխընի հոգնակին պիտի շփոթվեր դօսխընի եզակի ծառա-

նունի հետ: Այս դեպքում բարբառը շատ իմաստուն է վարվել շուտ տալով մասնիկների շարքը և կազմել է դօսիսիքնի ձևը:

Ծան. 2) Ամենից կարևորն է «էց, էցըն» ձևով սեռական-բացառականը:

Տարակույս չկա որ զաղնէց, խընծըրնէց ևն ձևով սեռական-տրական բառերը առաջանում են գրբ. կաղնեաց, խնծորնեաց ձևերից. ուրեմն հոգնակին վերածվել է եղակիի: Համշենի բարբառում սեռ-տր. հոլովը նաև բացառական է, ինչ որ առաջանում է գրբ. բացառականից՝ ի նախդիրի հապավումով. բայց որպեսզի բացառականը ափելի պարզորոշ լիներ, ափելի ուշ ափելացրել են *ո* կամ ըն վերջավորությունը, որ եղակի բացառականի սովորական վերջավորությունն է: Միայն մի բառ կա, որ հոգնակի գործածությունը դեռ պահում է. այն է աստղէց «աստղերի», թեև սրա ուղղականը՝ աստէխը եղակի է և նշանակում է «մի աստղ»:

Հոգնակին եղակիի փոխանցվելու այս երևույթը տեսնելուց հետո ամենևին զարմանալի չէ ուրեմն տեսնել նաև տոնէց «դռան», ծէնէց «ձեռքի» ևն բառերի գոյությունը և եղակի գործածությունը՝ գրբ. դրանց, ձեռաց ձևերի փոխարեն. ինչ. ծէնէց վրա բրնէր զու «ձեռքի վրա պահում էր»: Ապա սրանց էլ բացառականը՝ ծէնէցըն ևտի «ձեռքիցն առի», տոնէցըն պոնէց վիր էլավ «դռնից բռնեց բարձրացավ» ևն:

Այնուհետև սեռ-տր. -էց, բց. -էցըն մասնիկը անցել է ուրիշ կարգի բառերի վրա. ինչ. սնէց բէս «սյունի նման», ծառէց վրա «ծառի վրա», ծառէցըն «ծառից», քարէց վրա «քարի վրա», հացէց վրա էգավ «հացի վրա եկավ», հացէցըն փէշ մը գըղ-նէց «հացից մի կտոր կտրեց» ևն:

Այսպես առաջացավ և ընդհանրացավ սեռ.—տր. էց, բց. էցէ, էցըն ձևը, նույն իսկ օտար բառերի հետ: Օր.

կ'ուլոցո «գայից», կ'ուլոցը մը «մի գայից», շնոցո «շնից», հավոցո «հավից», տընդմոցո «դդումից», կինուցը մը «մի գինուց», խալուցը մը «խալիից», առուցը մը «մի առուից», սաղոնացը մը «մի սատանայից», փէսացը՝ մը «մի փեսայից», դղացը մը «մի աղայից», փէղոցը մը «մի փայտից», կտըցո բօլ ինը «գդալից հարուստ ենք», թրք. բառերով՝ դուլիցը մը «ջրհորից», մաղարացը մը «քարայրից», մաշացը մը «ուռնիլից», թավացը մը «տապակից», հավացը մը «եղանակից» ևն:

Վերև տրված բացատրությունը կարևոր է նաև լուծելու

Ծրեանի բարբառի և արդի արեւելահայ գրականի -ից բացառա-
կանի ծագումը: Այստեղ էլ գրաբարի հոգնակին եզակի է դար-
ձել և առաջին հոլովումը (ի) ընդհանուր է դարձել. ի հացից>
հացից:

Երրորդ հոլովում

273. Երրորդ հոլովման նշանն է սեռ.-տր. վոն, որ համա-
պատասխանում է մյուս բարբառների -վան ձևին: Օրինակ՝

Ո. օր

Ս. Տ. օրվօն

Բ. օրվընըն, օրը', օրվօնցու, օրօցը, օրիցը

Գ. օրվընօվ, օրօվ:

Հոգնակին կանոնավոր է. ինչ. օրէր, օրէրու, օրէրէ, օրէրօվ,
կիշէյնի, կիշէյնուն, կիշէյնէրօվ:

Այս հոլովման են հետևում ժամանակ ցույց տվող բառերը,
որոնք են.

դարի, ցօրէզ, ուրփաթ, շապաթ, ծմէռ, կիշէր, էրէզ, դա-
դիզ (սեռ. զադզըվօն), իրիզուն (սեռ. իրիզվօն), առաչ, ինչպէս
նաև մահ (սեռ. մահվօն) բառը:

Հոգնակին կանոնավոր է:

Չորրորդ հոլովում

274. Այս հոլովումը ներկայացնում է -ուծին վեր-
ջացող վերացական բառերը, որոնք Համշենի բարբառում հընչ-
վում են ուծին, բայց նաև -ուծին, իսկ Ճանիկցոց մոտ -տին:
Հոլովվում են հետևյալ ձևով.

Ո. Հ. մաշտութին, մաշտութին

Ս. Տ. մաշտութինի, մաշտութիւնի

Բ. մաշտութինո, մաշտութիւնէ

Գ. մաշտութինօվ, մաշտութիւնօվ

Հոգնակի

Ո. Հ. մաշտութիւններ, — թիննէր

Ս. Տ. մաշտութիւններու, — թիննէրու

Բ. մաշտութիւննէրէ, — թիննէրո

Գ. մաշտութիւննէրօվ, — թիննէրօվ:

275. Այս հոլովմաննշանն է սեռ.—տր. -օն, որ ներկայացը-
նում է ուրիշ բարբառների -ան վերջավորությունը. ինչ. այր-
էրիզ կամ տրիզ, սեռ. էրզօն, տրզօն (ուրիշ բարբառներում էր-
զան կամ էրկան): Տիպական օրինակն է ախճիզ.

Ո. ախճիզ

Ս. Տ. ախճ/զօն

Բ. ախճ/զընտ, ախճ/զընն, ախճ/զընմտ, ախճ/զօնմէնէ,
ախճ/զընմընտ,

Գ. ախճ/զընօվ, ախճ/զընմօվ, ախճ/զօվ:

Հոգնակին կանոնավոր է.

Ո. ախճիզնէր, ախճիզնի

Ս. Տ. ախճիզնէրու ախճ/զընու

Բ. ախճնէրու, ախճքընու, ախճզընէրունմըն,—մընտ

Գ. ախճզընէրօվ:

Գրական հայերենում, ինչպես և բարբառներում այս հոլով-
ման պատկանող բառերի թիվը շատ սակավ է, իսկ Համշենի
բարբառում քսանից ավելի է: Այսպես՝

ախճիզ—ախճզօն

ուրիզ—ուրզօն

պուլկ «թուփ»—պլկօն, պըլկնտ

ամառ—օմոսն, օմոընտ

աշուն—աշնօն, աշնընտ

գարուն—կայնօն, կայնընտ

դուռ—տոսն, տոնտ

ձմեռ—ծմոսն, ծմոընտ

ձուկ—ծուգ, ծզօն, ծզնտ

մուկ—մուգ, մզօն, մզնտ

ճնճղուկ—ջինջղըզօն, ջինջղըզնտ

փուռ—փոսն, փոնտ

ճեղք—ճխկօն, ճըխկնտ

մութ—մտօն, մոնտ

եզ—էզօն, էզնտ

թոռ—թօռօն, թօռնտ

լեռ—լէռօն, լէռնտ

կուշտ—գշտօն, գըշտնտ

Այս հոլովման նման սեռական են կազմում մի խումբ կենդանիների անուններ, որոնք ստանում են - օն վերջավորութունը, բայց բացառականում լինում են առաջին հոլովման նման տ. այսպես են՝

օնլուտ, օնլուտօն, օնլուտտ (անալութ «եղնիկ»)

օչխար, օչխրօն, օչխրտ

գայլ—կուլօն, կուլտ

այծ—տձօն, տձտ

խող—խողօն, խողտ

արծիւ—առձիվ, առձվօն, առձվտ

թիթենոն—թիթէո, թիթէոն.

նույն իսկ թրք. բառերով՝

ղըյապ «աղուէս», զըյապօն, զըյապտ

ղուզիգ «գառն», զուզիգօն, զուզիգտ

Վեցերորդ հոլովում

276. Այս հոլովման նշանն է սեռ.—տր. -օր վերջավորությունը. իբրև օրինակ արձնում ենք հայր բառը, որին հետևում են նաև մայր>մոր, եղբայր>ախպոր, հօրեղբայր>հօրպոր, հօրեղբոր կին>մօմոր, բացառաբար նաև տայգր>դորոր բառերը: Վերջինը բուն պատկանում է ոչ հոլովման,—կնքահայր>զընկ'որ սեռ. լինում է զընկօր, ստացական հոդով զընքօյս, բայց նաև զընքորիս (Տր. զընքերիս):

Ո. հոր, հէր

Ս. հօր

Բ. հօրըն, հօրմըն, հօրվըն, հօրտ

Գ. հօրօվ, հօրմօվ, հօրվօվ

Հոգնակին կանոնավոր է.

Ո. հորէր (Տր. հէրիւ).

Ս. հօրէրու

Բ. հօրէրուն, հօրէրըն, հօրէրէն, հօրէրտ

Գ. հօրէրօվ, հօրէրմօվ.

Տայգր բառը, որ հետևում է նաև ոչ հոլովման, սեռականում ստանում է թէ դորօր և թէ դորէօր, դորէր ձևերը:

277. Այս հոլովումը համապատասխանում է ուրիշ բարբառ-
ներին—ոջ (-օջ) հոլովման: Համշենի բարբառում այս վերջավորու-
թյունը ներկայանում է օջ, էջ, էօջ (ինչպես նաև էճ, էօճ) ձևերով:
Այս հոլովման ենթակա բառերն են՝

աներ> օնիր, օնիրէչ

քոյր> քուր, քուրէչ

տայգր> դէքուր, դուքուր, դոքուօչ, գուքուրիչ, դոքիրօչ

տալ> դալ, դալօչ

ներ> նէր, նիրի, նիրօչ, նիրէօչ, նիրէչ, նիրէճ

տալ-այր «տալոջ ամուսինը»> դալար, դալարէչ

հօրաքոյր> հօրկուր, հօրկուրէչ

մօրաքոյր> մօրկուր, մօրկուրէչ

մօրաքեռայր> մօրքուրար

հօրաքեռայր> հօրքուրար

ընկեր> ընգէր, ընգէրէչ

կնիկ> գնիգ, գնիչ, գնէչ

կնքակին> գընկագին, գնկագնէճ

սկեսուր> սկէսուր, կէսուր, օչ, էչ, էօչ, էճ

սկեսրայր> կէսրոր, կէսրորէօչ

տէր> դէր, դիրիչ, դիրէչ

Այս հոլովման նախատիպն է գրաբարի կին, կնոջ հոլովու-
մը. Համշենի բարբառում թեև կին բառը ջնջվելով՝ փոխանակ-
ված է կնիկ> գնիգ փաղաքշականով, բայց բոլոր հոլովական
ձևերը գրաբարի կին բառից են: Միայն թէ ո>օ ձայնավորը
դարձել է նաև էօ, է, ի: Այսպես ունինք

Ո. գնիգ

Ս. Տ. գնօչ, գնէօչ, գնիչ, գնէչ

Հ. գնիգ, գնիչ...

Բ. գնօչմէ, գնիչմէնէ, գնօչմըն, գնէչվըն.

Գ. գնօչմօվ, գնիչմօվ, գնէչվօվ.

Կարելի է նաև հոլովել գնիգին, գնիգէն.

Հոգնակիւում լինում է գնիգ-նէր կամ գնիգ-նին, որ հոլով-
վում է հետևյալ ձևով.

Ո. Հ.	գնիգ-նէր	գնիգ-նին
Ս. Տ. Հ.	գնիգ-նէրու	գնիգ-նուն
Բ.	գնիգ-նէրո	գնիգ-նուն
Գ.	գնիգ-նէրով	գնիգ-նով

Արկնակ հոլովում

278. Հայերենի հատկություններից մեկն այն է, որ հատկացուցիչից հետո եկող հատկացյալը կարող է ջնջվել և ներմուծվել հատկացուցչի մեջ. այս դեպքում հատկացուցիչը ստանում է որոշիչ հոգեկամ ստացական և իբրև առանձին բառ կարող է հոլովվել: Այսպես «գիշերվայ կաթը ցորեկվայ կաթից լաւ է» ասելու տեղ կարող ենք ասել «գիշերվանը ցորեկվանից լաւ է»: Այս ձևը գործածական է նաև Համշենի բարբառում. ինչ ցորեզվօնը «ցորեկվանը», բայց նաև իւրահատուկ ձևով՝ ցորեզվընցունը «ցորեկվանը», հօրվընցունը «հօր ունեցածը», որ և հոլովվում է՝ սեռ ար. բց. ցորեզվընցընըն, գրծ. ցորեզվընցընօվ, յգ. սեռ. ցորեզվօնցընէրուն ևն:

Նույնը գտնում ենք նաև ստացական և ցուցական դերանունների հետ. ինչ.

իմընցվի, քուզընցվի, միւրընցվի, ծիրընցվի, թաւընցվի, աղընցվի, ընընցվի, բց. թաւընցիցմըն, աղընցիցմըն, ընընցիցմըն, յգ. ծիրընցվընէքը, բց. ծիրընցվընիցըն ևն:

Գրաբարածն հոլովում

279. Գրաբարից ժառանգություն մնացած հոլովները շատ քիչ են. այսպես՝

մօրուք—սեռ. միրվաց

ջրաղաց—սեռ. նաղցուց

հարստնիք—սեռ. հայսնէց

տուն—սեռ. դօն

շուն—սեռ. շօն

աչք—սեռ. աչիչ, միայն աչիչ հիլուն «նազարի ուլունք» ձևի մեջ. սովորական լեզվով աչք բառի սեռականն է աչքի:

Անկանոն հոգնակիների մեջ նկատելի են դիօց, մ'աշտկաց, գընգղաց (ըստ Բիւր. 1899, 754 սեռ. գնիօց, գնիաց), գըղըլջաց, ևն:

4. Սղում

280. Հին հայերենի սղման օրենքը ընդհանրապես պահպանված է Համշենի բարբառում, բայց սլլայնպես խիստ կերպով, ինչպես է գրաբարում:

Ի ձայնավորը երբ դառնվում է վերջավանկում, հոլովման ժամանակ ջնջվում է. այսպես՝

ամիս > օմիս, օմսու,
այրիկ > էրիգ, օրիգ, սեռ. էրգօն,
անիծ > օնիձ, օնձի,
բիր > պիր, սեռ. պրի,
բրինձ > պրինձ, սեռ. պրնձի,
գետին > կէդին, սեռ. կէդնու,
գին > կին, կնի,
գիր > կիր, կրի,
եղիճ > էղիջ, էղջի,
երինջ > էրինջ, էրննջի,
երկինք > էոնինք, էոնընքի,
գատիկ > գադիգ, գադգի, գադգըվօն,
թիգ > թիգ; թգի,
ինն > ինը, իննը, ըննի,
լիտը > լիդուը, լդուի,
խորիսիս > խօրիս, սեռ. խօյսի,
ճադիկ > ձադիգ, ձադգի,
ծիլ > ձիլ, ձլի,
ծիրտ > ձիրյգ, ձիգ, սեռ. ձըյգի,
ծիծ > ձիձ, ձձի.
կադին > գադին, գադնի,
կարմիր > գարմիր, գարմրի,
կացին > գացին, գասնի,
կթիչ > գթիչ, գտիճ, սեռ. գճձի,
կիճ > գիջ, գջի
կծիկ > գձիգ, գձգի,
կորիգ > գօրիգ, գօյգի,
կուի > գուիվ, գուվի,
հին > հին, հնի
հինգ > հինգ, հնգի
ճիպո > ջիմբուը, ջմբուի
ճիտ > ջիդ, ջդի

մարմին> մարմին, սեռ. մարմնի կամ մարմնի
 միս> միս, մսի
 միտք> միտկ, մտկի
 մոխիր> մօխիր, մօխրի
 շապիկ> շաբիգ, շաբգի
 շիւ> շիւ, շիւ
 չիւ> չիւ, չիւ
 պանիր> բօնիր, բօնրի
 պինչ> բինճ, բնճի
 պղինձ> բղինձ, բղնձի
 սիւտ> սիյդ, սիդ, սեռ. սըյդի,
 տեսիլք> դէսիլք, դէսըլքի.
 տիկ> դիգ, դգի
 փոխինդ> փօխինդ, փօխընդի
 քիթ> քինթ, քնթի
 քիստ> քիստ, քստի
 քերտն> քըյդինք, քըյդինկ, սեռ. քըյդընքի, քըյդընկի+

281. Նույն իսկ այլ ձայնավորներ, եթե ձայնափոխու-
 թյամբ վերածվում են ի ձայնավորի, կարող են սեռականի մեջ
 կորցնել ի ձայնավորը. ինչ.

երես> էրես, էյսի.
 դկեռ> գղիր, գղրի
 ստերջ> սդիյչ, ստիճ, սեռ. ըստչի,
 ցորեան> ցօրին, սեռ. ցօյնի
 փռռնիգ, փռռնիթ փռռ նետվելով եփած հաց),
 սեռ. փռռնըղի:

282. Անսովոր, քիչ գործածական կամ սեռականում բաղա-
 ձայնների խճողում առաջացնող բառերի մեջ ի ձայնավորը չի
 սզվում ինչ.

բոկ> պօբիգ, պօբիգի
 դեղին> տէղին, տէղինի
 խաւիժ> խավիճ, խավիճի
 խրտիչ «խրտուիլակ», սեռ. խըյդիչի
 կայծոռիկ> գոձօռիգ, գոձօռիգի
 կապիչ> գաբիչ, գաբիչի
 կիւ> գիվ «ծամոն», սեռ. գիվի

ռւրիշ>ռւրիշ, սեռ. ռւրիշի
վարտիք>վալդիք, սեռ. վալդիքի
փոխէ «գորգ կն», սեռ. փոխի

283. Նույն իսկ շատերն այն բառերից, որոնք ենթարկվում
են սղման օրենքին, կարող են նաև պահել իրենց ի ձայնավորը.
այսպես՝ բիր>պիր, սեռ. պրի կամ պիրի,

բրինձ>պրինձ, սեռ. պրնձի, պրինձի,
բանալի>պօնլինք, պօնլինքի, պօնլընքի
գին>կին, կնի, կինի
գիր>կիր, կրի, կրիւ,
երինջ>երինջ, Էրնջի, Էրնջի
խլինք>խընլինք, խընլինքի, խընլընքի
խորիսխ>խօրիս, խօյսի, խօրիսի
կարմիր>գարմիր, գարմրի, գարմիրի,
կացին>գացին, գասնի, գացինի
կթիչ>գթիչ, գտիճ, սեռ. գտիճի, գճճի.
կծիկ>գճիգ, գճիգի, գճգի,
հինգ>հինգ, հնգի, հինգի
ճիպո>ջիմբոբ, ջիմբոբի, ջըմբոբի,
շիւ>շիւ, շիւ, շիւի
ռջիւ>օշիւ, օշիւ, օշիւի
պանիր>բօնիր, բօնրի, բօնիրի
տեսիլք>դէսիլք, դէսիլքի, դէսըլքի

284. Նմանապես այլ ձայնավորներից ձայնափոխությամբ
առաջացած ի ձայնավորը կարող է սղվել կամ պահվել. ինչ.

արև>արէվ, արիվ, արէվի,
ընկեր>ընդիր, ընդիրի, ընդէրէչ
թևթև>թէթիվ, թէթէվ, թէթէվի
թև>թիվ, թէվ, թէվի
թեփ>թիփ, թէփ, թէփի
խելք>խիլք, խէլք, խէլքի
կանեփ>գօնիփ, գօնէփ, գօնէփի
ձև>ձիվ, ձէվ, ձէվի
շերեփ>շէրիփ, շրէփ, շրէփի
սեամ>շիմ, սեռ. շմի, շիմի
սերմն>սիրմ, սէրմ, սէրմի

վեց> վից, վէց, վէցի

ցերեկ> ցօրիգ, ցօրէգ, սեռ. ցօրիգվօն, ցօրէգվօն

285. Ծիշտ ի ձայնավորի նման, նաև ու ձայնավորը, լինի նա առաջացած գրաբարի ու ձայնավորից և կամ ձայնափոխված մի ուրիշ ձայնավորից, հոլովման ժամանակ երբեմն սղվում է, երբեմն մնում է անփոփոխ, երբեմն էլ միաժամանակ կարող է թե սղվել և թե մնալ ըստ կամու։ Օր.

ալիւր> ալուր, սեռ. ալրի, ալուրի

ածու> ածուք, ածուքի

անալութ> օնլութ, օնլուտ, սեռ. օնլուտօն

անանուխ> օնլուխկ, օնլուխկի

անուն> օնուն, օնունի

աշուն> աշուն, աշուն

ապուր> աբուր, աբրի, աբուրի

արիւն> արուն, արունի, արնի

արտասուք> այգըսունք, այգըսունքի

բոյլք> պուլկ «թուփ», սեռ. պուլկի, պլկի կամ պըլկօն

բոյն> պուն, պնի

բուրգ> պուշտ, սեռ. պշտի, պուշտի են են են։

286. Ու ձայնավորի սղման հարցում առանձնապես հիշելու արժանի է անորոշի -ուշ վերջավորությունը։

Վերջավանկի ու ձայնավորը շ-ի մոտ ընդհանրապես ջընջվում է. ինչ. փուշ—փշի, թուշ—սեռ. թշի, յգ. թշվի, բայց անորոշների -ուշ վերջավորության մեջ ու ձայնավորը չի ջնջվում երբեք. ինչ. բերել> պէրուշ, պէրուշի, ասել> ասուշ, ասուշի են։

Այս բոլորը ցույց է տալիս, որ սղման օրենքը Համշենի բարբառում գտնվում է անցման շրջանի մեջ։ Նա պարտադիր է հնազանդ և շատ սովորական բառերի մեջ, միջին կարգի բառերի մեջ կամավոր, իսկ նոր և հատկապես օտար բառերի մեջ վերացված է։ Սղման օրենքը Համշենի բարբառում ջնջման շրջանում է գտնվում։

287. Ի, ու ձայնավորների նման սղման է ենթարկվում նաև ա ձայնավորը, բայց ոչ միշտ։ Օրինակ ամառն> օմառ, սեռականում լինում է օմոն և կարելի է ասել օմառօն, նույնպես բերան> պէրօն, սեռականում լինում է պէյնի, բայց ընդհանրապես ազան՝ տալիս է սեռ. ազանի և ոչ բնավ ազնի. իսկ

արծաթ> այծաթ, սեռականում լինում է թե՛ այծաթի և թե՛ այծըթի:

Ստորև տալիս եմ բոլոր այն օրինակները, որոնց մեջ աձայնավորը սղվում է կամ կարող է սղվել:

ամբար> օմբար, օմբրի կամ օմրի.

աշխարհ> աշխարք, աշխարքի, աշխրքի.

աստուած> աստված, աստըճու.

արժան> էժոն, էժնի

արծաթ> այծաթ, այծաթի, այծըթի,

արջառ> աչառ, աչառի, աչռի

բանջար> պօնջար, պօնջարի, պօնջըրի

բերան> պէրօն, պէյնի

դանակ> տօնագ, տօնագի, տօնգի.

երագ> նէրագ, նէյգի.

երկաթ> էրգաթ, էրգըթի.

երկանք> էրգօնք, էրգընքի, էրգօնքի

զանգակ> զօնգագ, զօնկ/կի

դռքանչ> դօքօնչ, դօքօնչի, դօքընչի

թարախ> թարախ, թարխի

լաւաշ> լավաշ, լավաշի, լավշի

հիւանդ> հիվօնդ, հիվօնդի, հիվընդի

ճակատ> ջագադ, ճագադի, ջագդի

ճերմակ> ջէրմագ, ջէրմագի, ջէրմըգի

մախաթ> մախաթ, մախատ, ս. մախաթի, մախտի

մանգաղ> մօնգաղ, ս. մօնգաղի, մօնգդի, մօնկխի

մառան> մառօն, մառօնի, մառնի

մատաղ> մըգաղ, մըգաղի, մըգդի

մարագ> մարաք, մարքի

յեսան> էսօն, ս. էսնի քար

նշան> նշօն, նշօնի, նըշնի.

շաբաթ> շախաթ, շապտու, շափթըվօն

շալակ> շալագ, շալագի, շալգի

շիտակ> շիդագ, ս. շիդագի, շիդդի

օչխար> օչխար, ս. օչխրի, օչխրօնը

ուրագ> ուրէք, իւրուկ, ս. իւրկի

չուան> չիվօն, ս. չիվօնի, չիվի

պակաս> բագաս, բագասի, բագսի

պաշար> բաշար, բաշարի, բաշրի
 պառակ> բառագ, ս. բառագի, բառգի
 պառաւ> բառավ, բառավի, բառվու
 պատանք> բաղօնք, բաղօնքի, բաղընքի
 ջրադացք> ճաղացք, ս. ճաղցուց
 ջուխտակ> չուխտագ, ս. չուխտըղի
 սեղան> սէղօն, ս. սէղնի
 տախտակ> դախտագ, դախտագի, դախտըղի
 տարդալ> կդալ, ս. կըղլի
 տաւար> դավար, ս. դավրու
 փայտատ> փէգադ, փէտտի
 քաղաք> քաղաք, քախի

288. Երբ ա ձայնավորը գտնվում է բառավերջում, հոլովման ժամանակ ջնջվում է. եղած օրինակներն են՝

դուրպայ> կուրբա, կուրբի
 կեռիք> ագռա, ագռի
 լոբի> լօբվյա, լօբյա, ս. լօբղի, լօբյի
 ճանապարհ> ջօմփա, ջօմփու
 չուխայ> չուխա, չուխի
 սատանայ> սաղօնա, սաղօնի
 աղոյ> դղա, դղի
 փեսայ> փէսա, փէսի

Բացառութեամբ միայն տէր> դէրա «քահանա» բառն է, որ սեռականում լինում է դէրայի (սղմամբ պիտի լինե՞ր դէրի, որ թուրքերենով նշանակում է «կաշի, մորթի»)։

289. Ուրիշ ձայնավորներից սղման երևույթ են ներկայացնում հետևյալ բառերը.

ասեղն> ասէղ, ասղի
 խաղող> հավէօղ, խաղօղ, սեռ. հավօղի, խաղօղի կամ խաղղի.
 ձմեռն> ծմէռ, ծմռօն կամ ծմէռվօն
 պճեղն> բջէխ, բջէղ, ս. բջղի
 երես> էրէս, էրիս, սեռ. էյսի

Ամփոփման օրենքը ընդհանրապէս ջնջված է Համշենի բարբառում. զրաբարի այս օրենքի վերջին հետքերը հետևյալներն են.

Երէց> Էրէց, Իրիցու
էշ> էշ, Իշու
Կէս> Գէս, Գիսու
Ներ> Նէր, Նիրի, Նիրօշ
տէր> Գէր, Գիրիշ, Գիրէշ

Մյուսները ձայնավորը պահում են անփոփոխ. Ինչ.
Գէշ> Կէշ, Կէյշ, ս. Կէշի
Գէգ> Թէգ, Թէգի

Ծ. Հոդ

290. Անորոշ հոդն է մը. Ինչ. հաց մը, նուր մը, մաշտ
մը, էրգօնը մը ևն.

Ձայնավորից առաջ այս ը կրճատվում է. Ինչ. մաշտ մ'է-
զավ, գօվ մ', օնցավ, օչխար մ'ու օնցավ:

Կարելի է նաև չկրճատել՝ ձայնավորը. Ինչ. հավ մ'ունիմ
կամ հավ մը ունիմ:

Էական բայից և ուղ շաղկապից առաջ կարելի է ը կրճա-
տել, բայց նաև դնել մ'ըն. Ինչ. հաց մ'ու, հաց մ'ըն ու, յէս
ու ինծի հօմար մաշտ մ'իմ (կամ մըն իմ), ըն ու ուր հօմար
մաշտ մ'ու (կամ մաշտ մըն ու):

Կարելի է նաև գոյականից առաջ դնել մէգ Թվականը.
Ինչ. մէգ մաշտ մ'ըն ու:

Մը զրվում է նաև մակբայների մօտ. Ինչ. Պայտըր մը
կօռուաց «բարձր կանչեց», Թէթէվ մը սկէց «Թեթև քսեց»,
սլարազ մը ձվաց «բարակ իմն ծուաց»:

Թվականներից հետո գործածվելով՝ ցույց է տալիս մոտա-
վոր քանակութիւն. Ինչ. իրէք մը մաշտ, չէօյս մը հօքի, հինգ
մը դղա. — իրէք-չէօյս մը մաշտ. — դաս-դասնովօխտ մը հավ:

Առանց որևէ նշանի գոյականը համարվում է անորոշ. Ինչ.
մաշտ էզավ, հաց կուգիմ:

291. Համշենի բարբառի ձայնական օրենքով ամեն բառ որ
վերջանում է ն-ով, եթե պատահի մ-ի մօտ, ն ջնջվում է. ըստ
այսմ ասվում է օմօ մը «աման մը», չիփօ մը «չուան մը»,
կի մը չունի «գին մը չունի», կու մը «գոյն մը», սու մը
«բոյն մը», սու մը «սին մը», սօ մը «բան մը, ոչինչ», քէ մը
«պարզամիտ մէկը» (<Թրք bön «պարզամիտ» բառից):

Բայց մ'ոնգականով վերջացող բառերը չեն հպատակվում

այս օրենքին. ինչ. կում մը «գոմ մը», գոմ մը «կամու մը», խում մը «խնջոյք մը», ժում մը «մի ժում», ժոմ մը «հոգու հաց մը» են:

292. Որոշիչ հոգերն են ը և ն. առաջինը դրվում է բաղաձայնով վերջացող բառերի ծայրին, երկրորդը՝ ձայնավորով. ինչ. միսը, շունը, կինին, ծին «ծին» են:

Ձայնավորով սկսվող հաջորդ բառի մոտ այս ը կարող է մնալ կամ վերածվել ն-ի. ինչ.

Միսը ընու ղվի (կամ) միսն ընու ղվի.

Միսը ընդի առի (կամ) միսն ընդի առի:

Հատուկ անունները (թե անձնական և թե տեղական) նման դրաբարի չեն ստանում հոդ. ինչ. Օվկս կնաց դուն «Յովհաննէսը տաւն գնաց». Արուծ էգավ. Հոմպարց քէզի կօսա զու. Կիվիր ինծի աստաւ «Գէորդը ինձ ասաց». Դիկրուգ միս պէրավ «Տիգրանունին միս բերեց». Սօչա, Սօխում սիրուն դէղէր ին:

Այժմ սկսել են գործածել երբեմն նաև հոգով. ինչ. Հօմպիր (Համբարձումը), Բօղէսը (Պօղոսը) են:

6. Ածականի աստիճանները

293. Դրական ածականը գործածվելով բացառական հոլով գոյականի հետ՝ դառնում է բաղդատական. ինչ. Իսա զունը ըն դընը՝ն մէձ տ:

Իմաստի սաստկացման համար կարելի է ավելացնել ածականի վրա տլ, ավելի կամ թրք. դանա, իսկ ավելի սաստկացրնելու համար ո՛լ ավելի ձեւը: (Ձի գործածվում է՛լ դանա):

Օր. Իսա զունը ըն դընը՛ն ավելի մէձ տ.

» » » » տլ » »

» » » » դանա » »

» » » » տլ ավելի մէձ տ

Որական ածականները առհասարակ կարող են բաղդատականի վերածվել -էօղ կամ այժմ ավելի սովորական -էղ մասնիկով. ինչ. զարմորէղ «մի քիչ ավելի կարմիր», սէվէղ, ջէրմրգէղ, գէղէղ «կանաչաւուն», զարուղէղ կամ զարդէղ, տէղնէղ «գեղնավուն», յէշիլէղ «կանաչավուն», պարագէղ «բարակավուն», հաստէղ, զայջէղ «կարճավուն», մէծէղ «մեծավուն», ձօնդէղ «ավելի ծանր», կլօրէղ «ավելի կլօր», ցածէղ «ավելի ցած», լլնէղ «լայնավուն», նէղէղ «ավելի նեղ» են:

Կա նաև -ուղ մասնիկը, որ կազմում է բաղդատական աս-
տիճան. ինչ. պարագուղ «ավելի բարակ», գլայջուղ «կարճավուն»,
մէծուղ «մեծավուն», հաստուղ «հաստավուն», տէղնուղ «դեղնա-
վուն», գէղուղ «ավելի կանաչ», բիջիգուղ «փոքրավուն», պլայ-
րուղ «բարձրավուն», ձօնղրուղ «ծանրավուն», ցածուղ «ցածա-
վուն», լընուղ «ավելի լայն», նէղուղ «ավելի նեղ», կլօրուղ (որ
և կլօրիգ) «ավելի կլոր» են:

Գուլն ցույց տվող ածականները ավելի հաճախ ստանում
են -եղ ձևը, իսկ մյուս որակական ածականները՝ ավելի շատ
ուղ ձևը:

294. Գերադրական կազմելու համար դրական ածականը
կցվում է 1) ըմընը՝ն կամ ըմընացմը՝ն «ամենքից» բառի հետ
(կարելի է նաև թրք. բիւթունէն «բոլորից»): 2) կամ
ստանում է թրք. ён մասնիկը, որ ստանում է Մալայում հէն և
Ճանիկում հըն ձևը: 3) և կամ ստանում է բինդ բառը, որ թրք.
pek ձևի թարգմանությունն է: Օր.

ըմընընմէձը,	} ամենից մեծը, ամենամեծը
ըմընացմըն մէձը	
հէն միձը Մ = հըն մէձը ձ.	
բինդ մէձը	
բինդ առաջ «ամենից առաջ»	

295. Պոլսահայ բարբառի մեջ սովորական այն ձևը, որով
ածականները գերադրական են դառնում իրենց նախածայնով
կազմված առանձին նախամասնիկներով (տես Գնն. Պոլսահայ բարբ.
§ 327) կա նաև Համշենի բարբառում, բայց շատ տկար չափով:
Այստեղ ֆնում են զաս-զարմիր «շատ կարմիր», տէպ-տէղին
«շատ դեղին», նէպ-նէր «շատ նոր», զաս-զաքուղ «շատ կա-
պույտ», մ'ըս-մ'ըննուգ «բոլորովին մենակ», շիպ-շիդագ «ուղ-
ղակի» ձևերը և թուրքերենից էլ դօս-դօղրու «ուղղակի»: Այս
ձևերն էլ հազիվ կարելի է պատահել խոսակցության մեջ: Այս
ձևով գերադրականը անշուշտ սովորական է եղել Համշենի հին
բարբառում, բայց այժմ ջնջվել է ջիփ (ջիպ) մասնիկի պատ-
ճառով, որ բռնել է հաջողությամբ նախորդի բոլոր գրաված
տեղերը: Մրա ամենից հայտնի օրինակն է ջիփ-ջէրմագ, որ նա-
խորդ ձևով պիտի լիներ ջէփ-ջէրմագ: Ազատօրեն կարելի է
ասել ջիփ-սէվ, ջիփ-էրզըն, ջիփ-լըն, ջիփ-շիդագ, ջիփ-խօշէր
են են:

Այսպես ամեն որակական ածական:

Կարմիր բառի դեմ գաւի-գարմիր ձևը գիտէ Հայկունի (Արբ. 1892, էջ 445), բայց Համշենցոյ մեջ չի գործածվում. կա միայն գաւ-գարմիր:

Գուշների գերադրականը կազմելու համար մի քանի բացառիկ ձևեր էլ կան. այսպես՝ վրո-գարմիլ, որ կարծես թէ «վառ-կարմիր» բառից է, գրո-յէշիլ «շատ կանաչ» (Թուրքերենից փոխառությամբ), վրո-յէշիլ «շատ կանաչ» (որ երկուսի խառնուրդով է կազմված) և ճիլ-գարմիր, որ անշուշտ թրք. զիլ-կըր-մըզի ձևի վրայից է կազմված՝ նմանեցնելով հյ. ճիլ «ծիլ» բառին: Այս բացառութեանս ասպացույց է ճիլն վիր գարմիր («ծիլից ի վեր կարմիր») արտահայտութիւնը, որ նշանակում է նույնպես «շատ կարմիր»:

7. Թվական անուններ

296. Բացարձակ թվականները հետևյալներն են. 1 մէգ, 2 էրզու, էրզուս, 3 իրէք, 4 չէօյս, չիւյս, չէյս, չօյս, 5 հինգ, 6 վէց, վից 7 Օխտը, 8 ութը, ուտը, 9 ինը, իննը, 10 դասը, 20 քսոն, սոն, 30 էսսուն, 40 քառսուն, 50 խսուն, հիսսուն, 60 վածծուն (վաթցուն), 70 օխտընասուն, 80 ուծծուն, 90 ընըսուն, 100 հարուր, 1000 հազար:

Իսկ պիր նշանակում է մեծաքանակ մի թիվ և սովորաբար ասվում է պիր-հազար «բիւր-հազար, անթիվ անհամար»:

70, 80, 90 ըստ Տրապիզոնցոյ գործածվում են թրք. յէթ-միշ, սէքսէն, դօխսան ձևերով, բայց բուն Համշենցոյ մեջ գործածական են վերի հայերէն ձևերը:

297. Տասնավորների միացումը միավորների հետ կատարվում է հետևյալ ձևով. 1) Տասնյակները ստանում են ը վերջավորութիւնը, իսկ միավորը անփոփոխ կցվում է նրան. ինչ. սօնը չէօյս 24, խսունը հինգ 55, վածծունը վէց 66 են: 2) Զայնավորով սկսվող միավորները ներմուծում են նաև վ, որ եւ շաղկապի վիրջին բազմայնի միացորդն է. ինչ. սօնըվօխտը 27, սօնըվուտը 28, սօնովինը 29, քստսունըվօխտը 47, խսունըվուտը 58, օխտընասունը վօխտը 77, ուծծունը վուտը 88, ընըսունը վինը 99.—3) Բացառաբար էրզու և իրէք միավորները թեև ստանում են վ, բայց տասնավորը չի ստանում ը. այսպես՝ սօն-վէրզու 22, սօնվիրէք 23, էսսուն վէրզու 32, խսուն վիրէք 53 են.—4) այս գեղքում դասը բառը դառնում է դասնը՝ բոլոր

միավորների մոտ, բացի 2—3 միավորներից, որոնց մոտ լինում է դատ. այսպես՝ դասնըմէգ, դասվէրգու, դասվիրէք, դասնըչէօյս, դասնըհինգ, դասնըվէց, դասնըվօխտը, դասնըվուտը, դասնըվինը:

Հարուր և հազար բառերը ստանում են թե միավորների և թե տասնավորների մոտ ը. բայց ինչպիս տասնավորները, նոյնպես և միավորները որեւէ հավելած չեն ստանում. օր. հարուրը մէգ, հարուրը էրգու, հարուրը իրէք, հարուրը չէօյս, հարուրը օխտը, հազարը իրէք, հազարը հարուրը ինը, հազարը հարուրը քսոսունը վօխտը:

298. Առարկաների հատը թվելու ժամանակ գործածված բառերն են.

կլէօխ— փոքր և մեծ անասունների համար (այծ, ոչխար, եղ, գոմեշ).

բէչ (պոչ)— մեծատավար (մալ).

կոտոշ > զօղէշ (ծաղրի համար է ասվում տավարների մասին խոսելիս).

Ուրիշ առարկաների համար ասվում է միայն հատ > հադ. փաղաքշաբար՝ հաղիգ. օր. քօնի՞ հաղիգ մւսլ ունիս:

299. Դասական թվական գոյությունն չունի բարբառում. Հարկավոր դեպքում դնում են բացարձակ թվականը: Երբ ես առաջարկեցի այսպիսի մի խոսք թարգմանել Համշենի բարբառին՝

«Ես ունիմ 6 որդի, 5-երորդին չեմ սիրում, բայց 6-երորդին շատ եմ սիրում»,

Պատասխան ստացա՝

«Թէս ունիմ վէց դշա, հինգին չիմ սիրէլ, ամա վէցին շատ սիրիմ գու»:

Երբ ես նկատեցի թե այդ եղավ 11 որդի, շփոթվեցին, դանազան ձևեր փորձեցին, վերջում հրաժարվեցին, թե մեր լեզվով կարելի չէ այդպես խոսք ասել:

Տրապիգոնի շրջանում կա թրք. -ինջի մասնիկի գործածությունը հայերեն թվականների հետ, բայց Համշենում այդ էլ չկա: Ծխախոտի որակավորման ժամանակ գործածում են միայն բիրինջի, իքինջի, իւչինջի, դէողինջի ռառաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ ձևերը:

300. Բացարձակ թվական ածականները կարող են նաև

նառանձին գործածվել. այն ժամանակ կարող են ստանալ որոշ-
յալ հոդ և իրր գոյական հոլովվել հետևյալ ձևով.

մէգը, մէգին, մէգըն, մէգով.
էրգուսը, էրգուսին, էրգուսըն, էրգուսով
իրէքը, իրէքին, իրէքըն, իրէքով
չէօյսը, չէօյսին, չէօյսըն, չէօյսով,
հինգը, հնգին, հնգըն, հնգով
վէցը, վէցին, վէցըն, վէցով
օխտը, օխտին, օխտըն, օխտնով, օխտին, օխտըն, օխտով,
ուտը, ուտին, ուտըն, ուտով
լնը, ըննին, ըննըն, ըննով
դասը, դասնին, դասնըն, դասնով, դասին, դասըն, դասով
սօնը, սօնին, սօնըն, սօնով

Ի հարկին թվականները կարող են նաև հոգնակի գործած-
վել. ինչ. իրէքնին, չէօյսէրը, օխտէրը, ուտէրը, ըննէրը, դասէրը
և այլն:

301. Բաշխականները կազմվում են բացարձակներին՝ կըրկ-
նությամբ կամ ավելացնելով *ւագօն*, *նւագօն* կամ *կօն* մասնիկը.
ինչ.

մէյմէգ, մէգմէգ, մէգագօն, մէգկօն,
էրգուս էրգուս, էրգու էրգու, էրգըսագօն, էրգըսնագօն,
էրգըսկօն
իրէք իրէք, իրէկկօն, իրէքագօն, իրէքնագօն,
չէօյս չէօյս, չէօյսագօն, չէօյսնագօն, չէօյսկօն,
հինգ հինգ, հընգկօն, հընգագօն, հընգնագօն,
վէց վէց, վէցագօն, վէցկօն, վէցնագօն
օխտը օխտը, օխտագօն, օխտնագօն, օխտկօն,
ութ-ութ, ութագօն, ութնագօն, ութկօն,
ինը-ինը, ինագօն, իննագօն, ըննագօն,
դասը դասը, դասնագօն, դասագօն, դասկօն:

302. Չափականները կազմվում են բացարձակների վրա
ավելացնելով *նէց*, *ընէց*, *նէօց*, *ընէօց* մասնիկները. ինչ.

մէգնէց, մէգընէց, մէգնէօց, մէգընէօց
էրգուանէց, էրգուսընէց, իրէքնէց, չէօյսնէց, հինգնէց,
վէցնէց, օխտնէց, ութնէց, ըննէց, դասնէց, հարույնէց, հազայ-
նէօց են:

Ծանոթ.—Հարուր և հազար բառերը միավորի և տասնա-
փորի հետ միացած ժամանակ կարող են ստանալ նաև ու կողը,
ինչպես հարուր ու մէգ, հարուր ու չէօյս, հազար ու քառսուն
ևն: Այս ու ամենահին ձևն է, որ ապա դարձել է ը, այնուհետև
ջնջվել: Ոմանք հններից պահում են դեռ ու ձևը, ընդհանրապես
գործածվում է ը ձևը:

8. Միջակ ամուսններ

303. Ըմընը «ամենը, բոլորը», ըմընին, ըմընը՝ն «ամեն-
քից», ըմընով, ըմընին կամ ըմընէրը, ըմընէրուն...: Այս իմաս-
տով կա նաև էդինը «բոլորը», որ կարծեմ թե «մինչև յետինն»
գաղափարից է ձևացած:

Ըմըն մէգը, ըմըն մէգին, ըմըն մէգը՝ն,

Մէգը, մէգին, մէգը՝ն, մէգով, մէգէրը, մէգօնը «ոմանք»,
մէգէրուն, մէգէրը՝ն «ոմանցից».

Մէգն ու մէգը «որևէ մէկը», մէգն ու մէգին, մէգն ու մէգը՝ն,

Ղս մէգը, իդա մէգը, թգ մէգը, ինա մէգը, ըն մէգը, ըն
մէգօնը «այն մի քանի հոգին», ըն մէգէրը «այն մի քանիսը»,
հէչ մէգը, հիչ մէգը «ոչ ոք», հիչ մէգէրը չէգօն:

Միգուրը, միգուին, միգուըն, միգուով, միգուինին, միգու-
նէքը, մէգուները «մյուսները». մէգուներ, միգուներ, միգուներց,
միգուօնց, մէգուներց ևն:

Քօնի մը, քօնիի մը, քօնիսը մը, քօնիսնուն, քօնիքնուն,
քօնիսնէք, քօնիսնէքուն, քօնիսնէքըն «քանիններից»:

Ինչ, ինչը, ինչին կամ ընչին, ինչը՝ն կամ ընչը՝ն, ինչով կամ
ընչով, ինչէր, ինչէրուն, ինչէրըն, ինչէրով.

Ինչիդ «մի քիչ բան. 2. ոչինչ».

Վէվ, վէով (օր. վճւմ դունը «որի՞ տունը»), վճւմ դվիր կամ
վօրի՞ն դվիր:

Ո.	վէով, վէվ	վօրօք, վօրէօք, վօրէք, վօրէկ
Ս. Տ. Հ.	վոււմ, վօրին	ոււմինց, վոււմինց, վօրինց, վօրէց, վօրէօց
Բ.	վոււմմէն, վոււմմո ոււմմէն, վոււսսմո վոււմըն, վոււմըն	ոււմինցմէն, վօրօցմէն, վօրինց- մէն, վոււմէցմէն, ուււօցմէն, վօրէցմըն
Գ.	վոււմ հիդ, վօրւով, վօրով	ոււմինցմով, վոււմինցմով, վօրօց- մով, վօրէցմով, վօրէցմով,

Վէճվ վէճ «ոսկրեր»․ օր․ վէճ վէճ էգօն (կամ էգավ)։
Վէօր մէզը, վէօր մէգին, վէօր մէգը՝ն, վէօր մէգով, վէօր
մէգէրը...

Վէօրը, վէօրին հն։

Մէգը-միգտը, մէգը-միգտին...

Հիչ մէգը, հէչ մէգը «ոչ ոք», հիչ մէգին, հիչ մէգէրը...

Ուվէք «ոչ ոք» (Տ․ օվէք)․ օր․ ուվէք էգամ չոունի «ոչ ոք
չի եկել»։

Շատը, շագէրը...

Իրար, գիրար, իրարու, իրաց «իրերաց» (օր․ իրաց հէգ
ույմիչ կօնք), իրարմո, իրարմընո, իրարով, իրարմընով, իրար-
մով․ իրարվիր «իրար հետ միասին»․

Մէգըսմէգ, մէգըսմէգիս, մէգըսմէգտլիս...

Ու ըն, տսու ընու, տստի ընդի «սա նա, սրա նրա, սխանից
նրանից»...

Բազիքը «ոմանք»,

Վէօր մը «ոմանք» (իւ կամ անձ)․ վէօր մը գարմիր էյնը,
վէօր մը սէվ․ Վէօր մը կուգո, վէօր մը չի ուղէլ․ Վէր մը մաշո
«ոմանք, որոշ մարդիկ»․

9. Դերանուններ

304. Անձնական դերանուններն են․

Ա ո ա ջ ի ն գ ե մ ք

Պ․ յէս

Կ

Ս․ իս

Տ․ ինձի, ինձիգի

Հ․ ինձի, ինձիգի, դիս

Բ․ ինձմո, ինձնո, ինձմէն, ինձմը՝ն, ինձնը՝ն, ինձիգիմէնէ
(Արրտ․ 1895, 83)

Գ․ ինձմով, ինձնով, ինձմընով

Ե ը կ ը ո ը դ գ ե մ ք

Ո․ դ՛ուն, տուն

Ս․ քու

Տ․ քէդի, քէդիգի

Հ․ քէդի, քէդիգի, դքէդ (գքի Բիւր․ 1899, 604), իսքի
(Արրտ․ 1895, 294 բ)

Բ. քէզմո, քէզնո, քէզմէն, քէզմը՛ն, քէզնը՛ն
Գ. քէզմով, քէզնով, քէզմընով

Ե Ր Ր Ր Ր Դ Դ Ե Դ Ք

Ո. էն, ըն, ինա
Ս. էնու, ընու, ինու
Տ. էնու, ընու, ինու
Հ. էն, էնու, զըն, ընու, ըն
Բ. էնդի, ընդի, ինդի, ընուրմէն Տ. ընուրմէնէն Տ.
Գ. էնով, ընով, ինով, ընուրով Տ. ընուրմէնով Տ.

Ո. ինքը, ինկը
Ս. ուր (ույ), ուրին, ուրինը
Տ. ուրին, ընուրը
Հ. ուրինը, զինքը, զինկը
Բ. ուրմէն, ուրմըն, ուրինմէն, ուրինմըն, ուրինըն
Գ. ուրինով, ուրինմով (ուր հիդ, ուրինը հիդ)

Հոգնակի՝

Ա դեմք

Ո. մէք (Տր. միք).
Ս. միբ (միյ)
Տ. մէզի, մէզիզի
Հ. մէզի, մէզիզի, (զմէզ)
Բ. մէզմէն, մէզմը՛ն, մէզիմէն, միբմըն
Գ. մէզմով, մէզիմով

Բ դեմք

Ո. դ՛ուհք Ս, առնք, առնկ
Ս. ձ՛իբ (ձ՛իյ), ծիբ (ծիյ)
Տ. ձէզի, ձէզիզի, ծէզի, ծէզիզի
Հ. » » » » (զծէզ)
Բ. ձէզմէն, ծէզմը՛ն, ծէզիմէն, ծիբմըն
Գ. ձէզմով, ծէզմով, ծէզիմով

Ծանոթ.—վերոհիշյալներին -զի վերջավորությամբ կազմված
ձևերը (մէզիզի, քէզիզի ևն) կարող են գործածվել բային թէ
առանձն և թե վերջը:

Գ դեմք

Ո. էսիբ, ինիբ, ընիբ, ընէբ
Ս. Տ. էսուց, ինուց, ընէց, ընէօց

- Հ. էնուց, ինուց, ընէց, ընէօց, ընէր (ընէյ), ղէնիր,
 ղընիր, ղինիր, ղընէր (զընէյ)
 Բ. էնուցմէն, ինուցմէն, ընէցմըն, ընէօցմըն
 Գ. էնուցմով, ընէցմով, ընէօցմով.

Հոգնակի գործիականը շատ բազմազան է. ինչ. էնուցմէրով,
 էնիցմէրով, ընիցմէրով, ընուցմէրով, ընէցմէրով, ընէօցմէրով,
 ընուցմով, բայց չի ասվում ինուցմով:

- Ո. ուրինք
 Ս. Ս. ուրինց
 Հ. ուրինց, ուրինք, զուրինք
 Բ. ուրինցմըն
 Գ. ուրինցմով (ուրինց հիդ):

Ծանոթ.—հայցականի զ նախդիրով ձևը նորերը չեն գործածում.
 հները միայն գիտեն դեռ:

305. Դերանվանական ձևերն են՝ մէք մէզի, տունք ծէզի,
 տուն քէզի, յէս ինձի, ինքն ուրինը, ինքըղինքը, ինքնուղինքը
 և այլն:

- Գ ղեմքի համար ս, դ, ն հոդերով կան՝
 Ո. ինքսղինքս, ինքըղղինքըղ, ինքըղինքը
 Ս. Ս. ինքսղինքիս, ինքըղղինքիդ, ինքըղղինքին
 Բ. ինքսղինքոս, ինքըղղինքոդ, ինքըղղինքըն
 Գ. ինքսղինքովս, ինքըղղինքովդ, ինքըղղինքովը

Հոգնակի

- | | | | |
|-------|------------------|------------------|-----------------|
| Ո. | ինքղինքէյս, | ինքղինքէյդ, | ինքղինքէրը |
| Ս. Ս. | ինքղինքէրուս, | ինքղինքէրուդ, | ինքղինքէրուն |
| Բ. | ինքղինքէրոսս, | ինքղինքէրոդդ, | ինքղինքէրըն |
| Գ. | ինքղինքէրովս, | ինքղինքէրովդ, | ինքղինքէրով |
| | ինքղինքէրովնիս, | ինքղինքէրովնիդ, | ինքղինքէրովնին |
| | ինքղինքնէրովս, | ինքղինքնէրովդ, | ինքղինքնէրով |
| | ինքղինքնէրովնիս, | ինքղինքնէրովնիդ, | ինքղինքնէրովնին |
- Կարելի է նաև կազմել հետևյալ ձևերով.

Եզակի

ինքնուրինս
 ինքնուղինքս
 ինքուրինս
 ինքզուրինս

Հոգնակի

ինքէյս	ինքնուրինքս
ինքէյնիս	
ինքզինքէյս	ինքնուրինքէյս
ինքզինքնէյս	ինքնուրինքնէյս
ինքզինքնիս	ինքնուրինքնիս
ինքզինքնէյնիս	ինքզուրինքս
ինքինքէյս	ինքզուրինքէյս
ինքինքնէյս	ինքզուրինքնէյս
ինքինքնիս	ինքզուրինքնիս
ինքինքնէյնիս	ինքզուրինքնէյնիս
ինքինքնէյնիս	ինքնուրինքնէյնիս
ինքնինքէյս	ինքնուրինքէյս
ինքնինքնիս	ինքնուրինքնիս
ինքնինքնէյնիս	ինքնուրինքնէյնիս
ինքնինքնէյնիս	ինքնուրինքնէյնիս

Այսպէս նաև մյուս դեմքերը.

Փոխադարձ դերանուններն են՝ իրար, իրարու, իրարմո
կամ իրարմոն, իրարով կամ իրարմով:

306. Ցուցական դերանուններն են՝

էս, տա, իսա
էդ, ոդ, իդա
ըն, ինա

Սրանք հավասարապէս ածական և դերանուն են. հավա-
սարապէս կարելի է ասել՝

տա մաշտը, տա էգավ,
իսա մաշտը, իսա էգավ.

Իբրև դերանուն հոլովվում են հետևյալ ձևով.

Եզ.

Հոգ.

Ո. տա, իսա

տսէր, իսէր, էսիւր, իսիւր

Ս. Տ. տսու, իսու, էսու

տսէց, իսէց, էսուց, իսուց

(Իսուր Արրտ. 1895, 400ա)

Հ. տա, էս, իսա, զէս.

Հ. իսիւր, զէսիւր, զիսիւր.

Բ. տատի, իստի, էստի

Բ. տսէցմո, իսէցմո, էսուցմէն,
տսէցմըն, իսէցմըն, իսուցմէն
տսէցմէրըն, իսէցմէրըն

Գ. ասօվ, իսօվ ասէցմօվ, իսէցմօվ
 ասէցմէրօվ, իսէցմէրօվ
 էսուցմէրօվ, էսուցմօվ
 էսիցմէրօվ

Ո. ադ, իդա, էդ ադէր, իդէր
 Ս. Տ. ադու, իդու ադէց, իդէց

Հ. ադ, իդա, էդ, դէդ
 Բ. աատի, իատի, էատի ադէցմո, իդէցմո
 ադէցմըն, իդէցմըն
 ադէցմէրըն, իդէցմէրըն

Գ. ադօվ, իդօվ ադէցմօվ, իդէցմօվ, էդուցմօվ
 ադէցմէրօվ, իդէցմէրօվ
 էդիցմէրօվ, էդուցմէրօվ

Ո. ըն, ինա ընէր, ինէր
 Ս. Տ. ընու, ինու ընէց, ինէց

(ինուր Արրտ. 1895, 400)

Բ. ընդի, ինդի ընէցմո, ինէցմո
 ընէցմըն, ինէցմըն, ընէցմըն
 ընէցմէրըն, ինէցմէրըն
 էնուցմէն, ինուցմէն

Գ. ընօվ, ինօվ ընէցմօվ, ինէցմօվ, ընէցմօվ
 ընէցմէրօվ, ինէցմէրօվ
 էնուցմօվ, էնուցմէրօվ,
 էնիցմէրօվ, ընիցմէրօվ
 ընուցմօվ, ընուցմէրօվ
 (չկա ինուցմօվ ձևը):

307. Ստացական ածականներն են՝

Ա. դեմք—իմ, յգ. միւր (միյ)

Դ. դեմք—քու, յգ. ձ'իւր, ծիւր (ծիյ)

Գ. դեմք—ուր, ընու, յգ. ուրինց, ընէց

Այս բոլորը գործածվում է գոյականից առաջ և գոյականը ստանում է դիմորոշ հոգ. առաջին դեմքի համար ու, երկրորդ դեմքի համար դ. իսկ բոլոր դեմքերի համար թե եզակի և թե հոգնակի ը (կամ ն), ինչ.

իմ դունս, իմ դունը,	կամ դունէբս
քու դունդ, քու դունը,	» դունէրդ
ընու դունը, ուր դունը	» դունէլը
միյ դունը	» »
ծիյ դունը	» »
ընէց դունը, ուրինց դունը	» »

308. Ստացական ածականները կարող են դործածվել նաև անկախ կամ առանձին և դառնում են ստացական դերանուն. այս դեպքում ստանում են դիմորոշ հոդ և կարող են հոլովվել.

Ո. իմս, իմը, իմինը, իմինս.

Ս. Տ. իմիս, իմի, իմին, իմինիս, իմինին

Բ. իմոս, իմո, իմը՛ն, իմինոս, իմինը՛ն

Գ. իմովս, իմով, իմովը, իմինով(ը), իմինովս

Ո. քուզըդ, քուզը, քուզինդ, քուզինը

Ս. Տ. քուզիդ, քուզի, քուզինիդ, քուզինին

Բ. քուզոդ, քուզը՛ն, քուզինոդ, քուզինը՛ն

Գ. քուզովդ, քուզով(ը), քուզինով(ը), քուզինովըդ

Ո. ուրինը, ուրինինը

Ս. Տ. ուրինին, ուրինինին

Բ. ուրինինըն

Գ. ուրինինով

Ո. ընուրը, ընուրինը

Ս. Տ. ընուրին, ընուրինին

Բ. ընուրինըն

Գ. ընուրինով

Ո. միբը, միբինը

Ս. Տ. միբին, միբինին

Բ. միբինըն

Գ. միբինով

Ո. ծիբը, ծիբինը

Ս. Տ. ծիբին, ծիբինին

Բ. ծիբինըն

Գ. ծիբինով

Ո. ուրինցը, ուրինցինը

Ս. Տ. ուրինցին, ուրինցինին

Բ. ուրինցինըն

Գ. ուրինցինով

Ո. ընէցը, ընէցինը

Ս. Տ. ընէցին, ընէցինին

Բ. ընէցինըն

Գ. — ընէցինով

Հոգնակի

Ո. իմէքս,

իմէրը,

իմինէքս,

իմէքը,

իմէյս,

իմինէքը,

Ս. Տ.	իմէքուս, իմէքուն,	իմէրուն, իմէրուս,	իմինէքուս իմինէքուն,
Բ.	իմէքոս, իմէքըն, իմէցմոս, իմէցմըն,	իմէրըն, իմէրոս, 	իմինէքոս, իմինէքըն, իմինացմոս, իմինացմըն, իմինացոս, իմինացըն, իմինէքէրոս, իմինէքերըն,

Գ.	իմէքով, իմէքովս իմէցմով իմէցմովս իմինէցէրով(ս) իմինէցմէրով(ս) իմինացէրով(ս) իմինացմէրով(ս)	իմէրով, իմէրովս, իմինացով, իմինացովս, իմինէքէրով, իմինէքէրովս,
----	---	---

Ո.	իմինէրը, իմինէյս,	իմէքէրը իմէքէյս	Գ.	իմինէրով, իմինէրովս,	իմէքէրով իմէքէրովս
Ս. Տ.	իմինէրուն, իմինէրուս,	իմէքէրուն իմէքէրուս		իմինէցով, իմինէցովս,	իմէքէրոցով, իմէքէրոցովս
Բ.	իմինէրըն, իմինէրոս, իմինէցըն, իմինէցոս, իմինէցմոս, իմինէցմըն, իմինէքէրոսմոս, իմինէքէյսմոս	իմէքէրըն, իմէքէրոս, իմէքէրուց իմէքէրուցը իմէքէրուցս 		իմինէցմով, իմինէցմովս իմինէքէրոցով իմինէքէրոցովս	

Ո. քուզէքդ, քուզէյդ, քուզինէքդ, քուզինէյդ, քուզէքէյդ
քուզէքը, քուզէրը, քուզինէքը, քուզինէրը, քուզէքէրը

Ս. Տ.	քուզէքուդ,-իդ քուզէքուն, քուզինացդ,	քուզէրուդ, քուզէրուն, քուզինացդ,	քուզինէքուդ,-իդ քուզինէքուն, քուզինացդ,
Բ.	քուզէքոդ, քուզէքըն, քուզէցմոդ, քուզէցմըն,	քուզէրը՛ն, քուզէրոդ, քուզինէցմոդ, քուզինէցմըն,	քուզինէքոդ, քուզինէքըն, քուզինացմոդ, քուզինացմըն, քուզինացոդ, քուզինացըն, քուզինէքէրոդ. քուզինէքէրը՛ն, քուզէքմոդ

Ս. Տ.	քուզինէրուդ, քուզինէրուն,	քուզէքէրուդ, քուզէքէրուն
Բ.	քուզինէրըն, քուզինէրոդ, քուզինէցըն, քուզինէցոդ, քուզինէքէրոդմո, քուզինէքէրոդմո	քուզէքէրոդ, քուզէքէրոդ, քուզէքէրըն, քուզէքէրուց քուզէքէրուցը քուզէքէրուցը

Գ. քուզէքով, քուզէքովդ, քուզէցմով քուզէցմովդ, քուզինէրով, քուզինէրովդ, քուզէքէրոցով քուզէքէրոցովդ	քուզէրով, քուզէրովդ, քուզինացմով, քուզինացմովդ, քուզինէրով, քուզինէրովդ, քուզէքէրոցով քուզէքէրոցովդ	քուզինէքով, քուզինէքովդ, քուզինէցով, քուզինէցովդ, քուզէքէրով քուզէքէրովդ,
--	--	--

քուզինէցէրով(դ) քուզինէցմէրով(դ) քուզինացէրով(դ) քուզինացմէրով(դ)	քուզինացով, քուզինացովդ, քուզինէքէրով, քուզինէքէրովդ,	քուզինէցմով քուզինէցմովդ քուզինէքէրոցով քուզինէքէրոցովդ
--	--	--

Ո.	ուրէքը,	ուրէրը,	ուրինէքը,
Ս. Տ.	ուրէքին ուրէքուն	ուրինէրը, ուրէրուն, ուրինէրուն, ուրինացը,	ուրինէքին ուրինէքուն, ուրինէքուն,
Բ.	ուրէքըն	ուրինէրըն, ուրէրըն, ուրէրմըն, ուրինէրով	ուրինէքըն, ուրինէցմըն ուրինէցըն ուրինէքով
Գ.	ուրէքով	ուրինէրով ուրէրով ուրէրմով	ուրինէքով ուրինէցմով ուրինէցով

Ո.	ուրէքէրը,	ուրինէքէրը
Ս. Տ.	ուրէքէրուն,	ուրինէքէրուն
Բ.	ուրէքէրըն, ուրինացմըն, ուրէքէրուց, ուրինէքով ուրինացմով ուրինացով ուրէքէրմով	ուրինէքէրըն ուրէցմըն ուրինէքէրմըն ուրինէքէրով ուրէցմով ուրինէքէրմով

Ո.	ընուրէքը,	ընուրէքէրը,	ընույնին,	ընուրինէքը.
		ընուրինէքէրը		
Ս. Տ.	ընուրէքին ընուրէքուն,	ընուրէքէրուն, ընուրինէքէրուն, ընուրինէցէրուն,	ընույնուն, ընուրինէքուն, ընուրինէցը	ընուրինէքին ընուրինէքուն, ընուրինէցը
Բ.	ընուրէքըն, ընուրինէքէրըն, ընուրինէքէրըն, ընուրէցմըն, ընուրինացըն	ընուրէքէրըն, ընուրինէցէրըն, ընուրինէցմըն, ընուրինէքէրմ	ընուցնուն, ընուրինէցըն ընուրինացմըն, ընուրինէքըն.	
Գ.	ընուրէքով, ընուրէցմով, ընուրինէցէրով, ընուրինացէրով ընուրինէրով, ընուրինէցով, ընուրինէցմով, ընուրինէքէրօցով		ընուրինէքով, ընուրինացմով, ընուրինացով, ընուրինէքէրով, ընուրէքէրով, ընուրինէքէրցով,	

Ո.	միւրէքը,	միւրինէքը,	միւրէրը
Ս. Տ.	միւրէքուն,	միւրինէքուն,	միւրէրուն
Բ.	միւրէքըն,	միւրինէքըն,	միւրէրուն
	միւրէցմըն,	միւրինացմըն,	միւրէրըն
		միւրինէցմըն,	միւրինէցըն
		միւրինէքէրըն,	միւրինացըն
		միւրինէքէրմըն	միւրինէքէրմո

Ո.	միւրինէրը,	միւրէքէրը,
Ս. Տ.	միւրինէրուն,	միւրէքէրուն,
Բ.	միւրինէրուն,	միւրէքէրուն,
	միւրինէրըն	միւրէքէրըն
		միւրէքէրուց

(Նաև կրկին բացառականով մէրինէքմընըն, մէրինէքէրմընըն) .

Դ.	միւրէքով,	միւրէրով,	միւրինէքով,
	միւրէցմով,	միւրինացմով,	միւրինէցով,
	միւրինէցէրով,	միւրինացով,	միւրինէցմով,
	միւրինէցմէրով,	միւրինէքէրով,	միւրինէքէրոցով
	միւրինացէրով,		միւրէքէրով
	միւրինէրով,		
	միւրէքէրոցով		
	միւրէքմէրով		

Ո.	ծիւրէքը,	ծիւրինէքը,	ծիւրէրը,
Ս. Տ.	ծիւրէքուն,	ծիւրինէքուն,	ծիւրէրուն
Բ.	ծիւրէքըն	ծիւրինէքըն	ծիւրէրուն
	ծիւրէցմըն	ծիւրինացմըն	ծիւրէրըն
		ծիւրինէցմըն	ծիւրինէցըն
		ծիւրինէքէրըն	ծիւրինացըն
		ծիւրինէքէրմըն	ծիւրինէքէրմո

Ո.	ծիւրինէրը,	ծիւրէքէրը
Ս. Տ.	ծիւրինէրուն	ծիւրէքէրուն
Բ.	ծիւրինէրուն	ծիւրէքէրուն
	ծիւրինէրըն	ծիւրէքէրըն
		ծիւրէքէրուց

(Նաև կրկին բացառականով՝ ծէրինէքմընըն, ծէրինէքէրմընըն)

Գ. ծիրէքով	ծիրինէքով	ծիրէքով
ծիրէցմով	ծիրինացմով	ծիրէքէքով
ծիրինէքով	ծիրինացով	ծիրէքէքօցով
ծիրինէցէքով	ծիրինէցով	ծիրէքմէքով
ծիրինէցմէքով	ծիրինէցմով	ծիրինէքէքով
ծիրինացէքով		ծիրինէքէքօցով
ծիրինացմէքով		

Ո. ուրինցէքը,	ուրինցէրը,	ուրինցինէքը, ուրինցինոքը,
	ուրինցինէրը,	ուրինցէքէրը, ուրինսնին
Ս.Տ. ուրինցէքուն,	ուրինցէրուն,	ուրինցինէքուն, ուրինցի-
	ուրինցէքէրուն,	ուրինսնուն. նէրուն,
Բ. ուրինցէքըն,	ուրինցէրըն,	ուրինցինէքըն, ուրինցինէրըն
	ուրինցէքէրըն,	ուրինսնըն, ուրինսնուն.
	ուրինցացմըն, ուրինցինացմըն,	ուրինցէքէրուց,
	ուրինցինացըն, ուրինցինէմըն.	ուրինցինէքէրըն
	ուրինցինէքէրմըն.	

Ո. ընէցէքը,	ընէցէրը,	ընէցինէքը, ընէցինոքը,
	ընէցինէրը,	ընէսնին
Ս.Տ. ընէցէքուն,	ընէցէրուն,	ընէցինէքուն, ընէցինէրուն,
	ընէցէքէրուն,	ընէսնուն.
Բ. ընէցէքըն,	ընէցէրըն,	ընէցինէքըն, ընէցինէրըն,
	ընէցէքէրըն,	ընէսնըն, ընէսնուն,
	ընէցացմըն,	ընէցինացմըն, ընէցէքէրուց
	ընէցինացըն,	ընէցինէցմըն, ընէցինէքէրըն, ընէցինէքէր-
		մըն:

309. Ստացական հոգերն են ս (առաջին դեմքի համար), ր (երկրորդ դեմքի համար), ը կամ ն երրորդ դեմքի համար (առաջինը բաղաձայնահանդ, երկրորդը ձայնավորահանդ բառերի համար). օր. քացախս, քացախդ, քացախը, կինիս, կինիդ, կինին: Ծան. 1—Ուրիշ բարբառներում այսպիսի բառերը սովորաբար հնչվում են ը ձայնավորը ներմուծելով քացա'խրս, քացա'խրդ ևն: Համեմատի բարբառում ամենեին չի լսվում այդպիսի ը.

և երկու բաղաձայնները միաշունչ հնչվում են. ինչ, դոմնա, քա-
ցախն, ծընն, ծընն՝ «ձայնս, ձայնդ» են:

Ծան. 2.—Մյա համար էլ ը վերջացող բառերը ստացական
հոգի մոտ դարձնում են ը>յ. ինչ, մոյս «մայրս», ախպոյս
«եղբորս», ախպոյդ «եղբորդ» են:

Ծան. 3.—Բաղաձայնների խճողման, կրկնություն և նման
ձանր դեպքերում ներմուծվում է ը. ինչ. պուշտը, հայրս,
փողըս «բուրդդ, հարսս, փայտս» են:

310. Երբ ստացեալը հոգնակի է, բնականաբար գոյականը
ստանում է հոգնակիի նշանը, որ լինում է բաղաձայնով վերջա-
ցող բառերի համար էր, նէր, ձայնավորով վերջացող բառերի
համար ք. ինչ. քացախնէյս, քացախնէյդ, քացախնէրը, կինիքս,
կինիքդ, կինիքը:

Երբ ստացողը հոգնակի է, իսկ ստացյալը եզակի, ստացա-
կան հոգերը դառնում են նիս «մեր», նիդ «ձեր», նին «իրենց
կամ նրանց». օր. քացախնիս, քացախնիդ, քացախնին, կինիք-
նիս, կինիքնիդ, կինիքնին:

Երբ ստացողը հոգնակի է և ստացյալն էլ է հոգնակի, ավե-
լանում է նաև հոգնակիի նէր մասնիկը, որ հաջորդ բաղաձայնի
մոտ զանվելու պատճառով դառնում է միշտ նէյ. ինչ.

քացախնէյնիս, քացախնէյնիդ, քացախնէյնին,
կինիքնէյնիս, կինիքնէյնիդ, կինիքնէյնին:

Ուրիշ բարբառներում երբ գոյականը միավանկ է, ստա-
ցողը հոգնակի լինելու դեպքում, ստացյալը թե եզակի և թե
հոգնակի միևնույն ձևն է ստանում: Օրինակ Պոլսի բարբառում
հացէրնիս նշանակում է թէ՛ «մեր հացը» և թէ՛ «մեր հացերը».
այսպես նաև Երեանի բարբառում հացներս: Իսկ Համշեհի բար-
բառը ազատ է այս երկդիմությունից և հստակ կերպով որո-
շում է՝

հացս «իմ հացը»,

հացէյս «իմ հացերը»,

հացէյնիս «մեր հացը»,

հացէյնէյնիս «մեր հացերը»:

Այս բառերը հղովվում են սովորական գոյականների նման.
Ինչ. հացիս, հացիդ, հացին, հացէյնուս, հացէյնէյնուս հօմը
«մեր հացերի հոտը»:

311. Հայր, մայր, եղբայր բառերի հոգավոր ձևերի հոլովման ժամանակ կարելի է վերցնել թե ուղղականի և թե սեռականի ձևը. օր.

Ո. հորէյնիս	մորէյնիս	ախպոյնիս
Ս. { հորէյնուս	մորէյնուս	ախպոյնուս
{ հօրէյնուս	մօրէյնուս	ախպօյնուս

Հոլովման մեջ ստացական հոգը կարելի է հոլովական վերջավորութիւններից թե առաջ դնել և թե վերջը. ինչ.

հօյսմըն, մօյսմըն, ախպօյսմըն, հօյսմօվ, դնէյսմո, հացէյսմո, շոհոյնէյսմո, հօյսմըն, գնէչսմո, գնէչըգմո ևն:

312. Հարաբերական դերանունը ունի օր (օյ) ձևը, որ կարող է գործածվել թե մենակ և թե միացած որ (վօր, վէյ) բառին, և հոլովվել: ինչ.

ըն դունն օյ դէսար, իմն էր,
ըն դնէրը՝ վօրէքը դէսար,
ըն դունը՝ վէյն օյ դէսար,
ըն դունը՝ վօրըն օյ դէսար,

Որ հարաբերականը հոլովվում է հետևյալ ձևով.

վօր, վէօր	վօրէքը,	վուրօքը,	վուրօնքը
վօրին	վօրէցնուն,	վուրօցը,	վուրօնցը
վօրըն, վօրմէն	վօրէցմըն,	վուրօցմէն,	վուրօնցմէն
վօրօվ	վօրէցմօվ,	վուրօցմօվ,	վուրօնցմօվ

Կամ նաև օր «որ» բառի հետ միացած՝ վօյն օր, վօրին օր, վօրէցնուն օր, վօրէցմըն օր ևն:

10. Բ ա յ

313. Լծորդութիւններ.—

Հին հայերենի չորս լծորդութիւնները (ել, իլ, ալ, ուլ) և նրանց երկրորդ տիպարները (անել, անիլ, անալ, նուլ) Համշենի բարբառում կրում են հետևյալ ձևափոխութիւնները.

Ա. լծորդություն.

ներկ.

հմ> իմ
 հս> էս ձ, իս Մ
 է> ու ձ, է Մ
 հմք> ինք ձ, էք Մ
 էք> էք
 հն> ին

կտր.

հցի> էցի
 հցեր> էցիւր
 հաց> էց (Մ ից)
 հցաք> էցաք
 հցէք> էցիք
 հցին> էցին

անկատար

էի> է' լը ձ, էյի Մ
 էիւ> էյիւ ձ, էյիւր, էյիւր Մ
 էր> էր

էաք> ա'յըլը ձ, ա'յըլը Մ
 էիք> է'յըլը ձ, էըլը Մ
 էին> է'յնը

Բ լծորդություն.

ներկ.

իմ> իմ
 իս> իս
 ի> ի
 իմք> ինք
 իք> իք
 ին> ին

կտր.

եցայ> էցա
 եցար> էցար
 եցաւ> էցավ
 եցաք> էցաք
 եցայք> էցոք
 եցան> էցոն

Անկատարը նույն է Ա. լծորդության հետ.

Գ լծորդություն.

ներկ.

ամ> օմ
 աս> աս
 այ> ա
 ամք> օնք
 այք> օք
 ան> օն

կտր.

ացի> ացի
 ացեր> ացիւր
 աց> աց
 ացաք> ացաք
 ացէք> ացիք
 ացին> ացին

անկ.

այի> ա' լը
 այիւ> ա'յիւ
 այր> օր

այաք> ա'յըլը
 այիք> ա'յիւր
 ային> ա'յնը

Գ լծորդության.

ներկ.	անկ.
ոււմ> ում	ուի> էյ
ուս> ուս	ուիւր> էյու
ու> ու	ույր> ուր
ոււք> ունք	ուաք> ա'յքը
ուք> ուք	ուիք> է'յքը
ուն> ուն	ուին> է'յնը

կտր.

ի> ի	աք> աք
իր> իր	էք> իք
—> ավ	ին> ին

Ա լծորդության Բ տիպարը ջնջուա՞ծ է.

Բ լծորդության Բ տիպար.

ներկ.	անկ.	կտր.
անիւմ> նիւմ	անէի> նէ'յը	այ> ա
անիւս> նիւս	անէիւր> նէ'յու	ար> ար
անիւ> նի	անէր> նիր	աւ> ավ
անիւք> նինք	անէաք> նա'յքը	աք> աք
անիք> նիրք	անէիք> նէ'յքը	այք> արք
անին> նին	անէին> նէ'յնը	ան> օն

Գ լծորդության Բ տիպար (անորոշն է նուշ կամ ընուշ՝ միջին ա ջնջելով կամ սղելով).

ներկ.	անկ.	կտր.
անամ> նօմ	անայի> նոյը	ադայ> ցա
անաս> նաս	անայիւր> նոյու	ադար> ցար
անայ> նա	անայր> նոր	ադաւ> ցավ
անամք> նօնք	անայաք> նա'յքը	ադաք> ցաք
անայք> նոք	անայիք> նո'յքը	ադայք> ցոք
անան> նօն	անային> նո'յնը	ադան> ցօն

Դ լծորդության Բ տիպար.

ներկ.

անկ.

նում>նում

նու>նու

նու>նու

նումք>նունք

նուք>նուք

նուն>նուն

նուի>նէյ

նուիք>նէյդ

նուր>նուր

նուաք>նա'յք

նուիք>նէ'յք

նուին>նէ'յն

կար.

(ց)ա>ա

(ց)ար>ար

(ց)աւ>ավ

(ց)աք>աք

(ց)այք>ոք

(ց)ան>ծն

Դ լծորդությունը այս բարբառում չի ջնջված և պահվում է ըստ կարելիության հարադատ ձևով. բայց նույն լծորդության երկու տիպարները չեն համապատասխանում գրաբարի երկու տիպարներին: Առաջին տիպարից մնու է են փայն թողուլ, հարուլ, և երկրորդ տիպարից միայն զերծնուլ, առնուլ, լնուլ, իսկ մյուսները ձևափոխված են առաջին լծորդության երկրորդ տիպարից:

Ըստ այսմ Համշենի բարբառը ունի Ա, Բ, Փ, Դ լծորդությունների առաջին տիպարները և Բ, Փ, Դ լծ. երկրորդ տիպարները, որոնց խոնարհման համար օրինակ կառնենք հետևյալ բայերը.—

Ա լծ. սիրել

Բ լծ. խօսիլ հոգնիլ

Փ լծ. խաղալ մոռանալ

Դ լծ. թողուլ (մտնել)

314. Ա լծորդություն

Ստոր. ներկ.

Ստոր. անց.

(ձանիկ)

(Մալա)

(ձանիկ)

սիրիմ

սիրիմ

սիրէ'յը

սիրէյի

սիրէս

սիրիս

սիրէյդ(ը)

սիրէյը, սիրէյիը

սիրո

սիրէ

սիրէր

սիրէր

սիրինք

սիրիր

սիրայքը

սիրաքը

սիրէք

սիրէք

սիրէ'յքը

սիրէքը

սիրին

սիրին

սիրէ'յնը

սիրէ'յնը

կտր.	դերբ.
սիրէցի	սիրօղ
սիրէցիր	սիրաձ
սիրէց (Մ. սիրից)	սիրէլ
սիրէցաք	սիրուշ
սիրէցիք	սիրէլիք
սիրէցին	սիրէլու

Հրամ. սիրո, սիրէցէք
Այսպէս է խոնարհվում բայերի մեծագույն մասը՝ ինչ-պես.

Աղահել> աղաչուշ, աղաչէցի, աղաչո
Աւելել> ավիլուշ, ավիլէցի, ավիլո
Աւերել> ավիրուշ, ավիրէցի, ավիրո
Բռնել> պռնուշ, պռնէցի, պռնո
Կանչել> գօնչուշ, գօնչէցի, գօնչո
Ծամել> ձօմուշ, ձօմէցի, ձմո
Ճանաչել> ջօնչուշ, ջօնչէցի, ջօնչո
Վախենալ> վախուշ, վախէլ, վախէցա, վախո!
Կաթել> գաթուշ, գաթէցի, գաթո

315. Առաջին լծորդության երկրորդ տիպարի բայերից պահված են միայն թքանել, խածանել, ք... պաղանել, զարկանել և սպանանել բայերը: Համշենի բարբառում այս բայերը ստացել են հետևյալ ձևերը.

Թքանել> թքնուշ, կտր. թքնէցի, հրմ. թքնո՝
խածանել> խածուշ, կտր. խածէցի, հրմ. խածո՝
պաղանել> բաքնուշ, կտր. բաքնէցի, հրմ. բաքնո
զարկանել> զայնուշ, կտր. զարգի, զայնէցի, էզարգ կամ էզարգ, հրմ. զայնո,
սպանանել> սպօննուշ, սպօննէցի, սպօննո

Իսկ երրորդ բայը ստացել է երկու ձև. մեծերի համար փնուշ<զրբ. փին արժատից (կտր. փնէցի, հրմ. փնո), իսկ փոքրերի համար քաքուշ (կտր. քաքէցի, հրմ. քաքո): Այսպեսով Ա. լծորդության Բ տիպարը կանոնավորված և ջնջված է լեզվից:

Անկանոն է միայն ելանել> էլուշ, էլա, յէլ, մի էլէլ:

316. Բ լծորդություն

Ստոր. ներկ.	Ստոր. անց.
խօսիմ	խօսէ՛յլ
խօսիս	խօսէյդ(ը)
խօսի	խօսէր
խօսինք	խօսանայքը
խօսիք	խօսէ՛յքը
խօսին	խօսէ՛յնը

Տր. ներկայի յգ. ա և բ լինում են խօսիք, խօսեք. իսկ անկ. եզ. բ -էյդը, գ. -իր, յգ. աքը, էքը, էյնը.

Կտր.	Դերբ.
խօսեցա	խօսօզ
խօսեցար	խօսած
խօսեցավ	խօսիլ
խօսեցաք	խօսուշ
խօսեցաք	խօսելիք
խօսեցօն	խօսելու

Հրամ.— խօսո, խօսեցէք
Այսպես են խոսարհվում՝

կակղիլ > գագղուշ, գագղէցա, գագղո.
հոտոտիլ > հօղմըղուշ, կտր. հօղմըղէցա, հրմ. հօղմըղո.
կաթիլ > գաթուշ, գաթէցա, թո

317. Բ լծորդության բ տիպար

Ստոր. ներկ.	Ստոր. անց.
հաքնիմ	հաքնէյլ
հաքնիս	հաքնէյդ
հաքնի	հաքնիր
հաքնինք	հաքնայքը
հաքնիք	հաքնէ՛յքը
հաքնին	հաքնէ՛յնը

Կտր.	Դերբ.
հաքա	հաքնօղ
հաքար	հաքած
հաքավ	հաքնիլ
հաքաք	հաքնուշ
հաքոք	հաքնէլիք
հաքօն	հաքնէլու

Հրամ.— հաքիւր, հաքէք.

Այսպէս են խոնարհւում՝

անկանիւ՝ ընգնուշ, ընգա, ընգի(ր)

անցանիւ՝ օնանուշ, օնցա, օնցի(ր)

բուսանիւ՝ պուսնուշ, սա, սի(ր)

մեռանիւ՝ մէռնուշ, ոա, ոի(ր)

լուքանիւ՝ լուսնուշ, քվառվել, լուսնիք, լուքա, լուքիք

Այսպէս են խոնարհւում նաև -չիլ վերջավորած բայերը, որոնք կատարյալի, հրամայականի և անցյալ դերբայի մեջ է ձայնը կորցնում են. այսպէս՝

թռչիւ՝ թռչուշ, ցատկել, թռա, թռիւր, թռած.

ուռչիւ՝ ուռչուշ, ուռա, ուռիւր,

փախչիւ՝ փախչուշ, փախա, փախի(ր)

փլչիւ՝ պլչիւ, պլա, պլչո՛!

Դպլչիլ բայը ստացել է տիրնուշ ձևը՝ գլխիւ. 2. ըմբշամարտիւ՝ նշանակությամբ, կտր. տիբա, հրմ. տիբի(ր), այսպէս նաև ուռչիլ բայը՝ որ ուռչուշ ձևի հետ ունի նաև ուռնուշ ձևը:

Ձիսկ հանգչիւ՝ հօնկշուշ բայը վերածվելով Բ լծ. ա տեսակին, դառնում է կտր. հօնկշեցա, հրմ. հօնկշո:

318. Գ լծորդություն

Ստոր. ներկ.	Ստոր. անց.
խաղօմ	խաղո՛յլ
խաղաս	խաղո՛յդ
խաղա	խաղոր
խաղօնք (Տր.—օք)	խաղո՛յթը
խաղոք (Տր. էք)	խաղո՛յթը
խաղօն	խաղո՛յնը

Կտր.

Դերբ.

խաղացի
խաղացիր
խաղաց
խաղացաք
խաղացիք
խաղացին

խաղացող, խաղող
խաղ(ա)ցած
խաղալ
խաղուշ
խաղալիք
խաղալու

Հրամ.—խաղահ, խաղացեք.

Այսպես են խոնարհվում՝

հինեւել> հինուշ, հինօմ, հինացի,
խնջեւ—խնչուշ, խնչացի, խնչահ
ծծեւ—ծծվուշ, ձձվացի, ձձվահ

լուանալ { լվլլնուշ, լվացի, լվահ
լվլլնուշ, լվացի, լվահ

խրտնեւ> խըյդուշ, խըյդօմ, խըյդացի, խըյդահ ձ.

Այս լծորդության խոնարհման ժամանակ պատահում են բայեր, որոնք միջին վանկում ունենալով ա ձայնավորը՝ կրճատում են այն. ինչ.

խաղալ—խաղացի կամ խախցի, խախցիր...

աղալ—աղացի կամ ախցի.

319. Գ լծորդության բ տիպար

Ստոր. ներկ.

Ստոր. անց.

մօռնօմ

մօռնոյ(ը)

մօռնաս

մօռնոյդ

մօռնահ

մօռնոր

մօռնօնք

մօռնայքը

մօռնաք

մօռնոյքը

մօռնօն

մօռնոյնը

Կտր.

Դերբ.

մօռցա

մօռցող

մօռցար

մօռցած

մօռցալ

մօռնալ

մօռցաք

մօռնուշ

մօռցաք

մօռնալիք

մօռցօն

մօռնալու

Հրամ.— մօռցի, մօռցէք

Այսպես են խոնարհվում՝

գողանալ > կողնուել, կօխցա, կօխցի(ր)
գիտենալ > կիղընուել, կիղըցա, կիղըցի(ր),
ամաչել > օմչընալ, օմչըցա, օմչըցի(ր)
երդնուել > էշտվըննուել, վընցա, վընցի(ր)
երեւիլ > էրէվնուել, էրէվցա, էրէվցի(ր)
թալանալ > թալնուել, թալցա, թալցի(ր)
ունենալ > ուննուել, օննուել, օննըցա, օննըցի(ր)
հասկանալ > հասկըննուել, հասկընցա, հասկընցի(ր)

320. Գ լծորդության բ տիպարին են պատկանում անվա-
նական բայերը, որոնք շատ բաղմամբիվ են և վերջավորում են
-անալ կամ -նալ. ինչ.

լայնանալ > լըննուել, լընցա, լընցի(ր)
լուսանալ > լուսընուել, ըցալ, ըցի(ր)
հաստանալ > հաստընուել, հաստըցա, ցի(ր)
օնօթենալ > օնօթընուել, տըցա, ըցի(ր)
նմանիլ > լմօննուել, լմօնցա, լմօնցի(ր)
չորանալ > չօյնուել, չօյցա, չօյցի(ր)
երկայնիլ > էրգըննուել, էրգընցա, գընցի(ր)
մեծանալ > մէձընուել, մէձըցա, մէձըցի(ր)
հայանալ > հոյընուել, հոյըցա, հոյըցի(ր)
շատանալ > շաղընուել, շաղըցա, շաղըցի(ր)

321. Գ լծորդություն

Ստոր. ներկ.

Ստոր. անց.

մղնում

մղնէյ

մղնումս

մղնէյդ

մղնու

մղնուր

մղնունք

մղնայքը

մղնուք

մղնէ'յքը

մղնուն

մղնէ'յնը

Կտր.

Դերք.

մդա

մդնող

մդար

մդաձ

մդավ

մդնուլ

մդաք

մդնուշ

մդաք

մդնէլիք

մդօն

մդնէլու

Հրամ.— միդ, մդի(ւ), մդէք:

Այսպես են խոնարհւում:

տեսանել>դէսնուշ, դէսա, դէս (դէսի, դէսիւ)

գտանել>կդնուշ, կդա, էկիդ, կիդ (կդի, կդիւ)

զերծնուլ>զէյձնուշ, զէյձա, զէյձի, զէյձիւ (չիք զէյձ)

առնուլ>առնուշ, առի (առիւ, առավ=էղառ, առաք, առիք,

առին), առ, առէ՛ք

իջանել>իշնուշ, ինչա (ինչար, ինչավ, ինչաք, ինչաք,

ինչօն), իչ (իչի Տ, իչիւ Տ, ինչի, ինչիւ), ինչէք, իչէք Տ.

լնուլ>լուշ, ներկ. ւոււ, անկ. ււէյ (ււէյդ, ւուր, ււալքը,

ււէ՛յքը, ււէ՛յնը), ւցի (ւցիւ, էլից=ւցավ, ւցաք, ւցիք, ւցին=

էլին), լից, ւցէք

թողուլ>թողուշ, ն. թողում, թողումա, թողում..., անկ. թողէյ,

թողէյդ, թողուր, թողալքը, թողէ՛յքը, թողէ՛յնը, կտ.

թողի, թողիւ, թողավ=էթէի, թողաք, թողիք, թողին),

հրմ. թէօխ=թէիս թողէք:

հարուլ «եղջերցել, եզան հարու տալը»>հարուշ, ներկ. հա-

րու, կտր. հարավ (կմ. հարուց), հրմ. հարու, մի հա-

րուլ:

հեծանիւ>հէզնուշ, ներկ. հէզնում, կտր. հէձա, հրմ. հէձի,

հէձիւ, մի հէզնուլ:

Այս բոլորը ստոր. անց. եզ. գ դեմքում լինում է դէսնուր,
գդնուր, զէյձնուր, հարուր, հէզնուր, առնուր, իշնուր, ւուր,
թողուր:

322. Պակասավոր բայեր

1. եմ>իմ

Ներկ.—իմ, էս, տ, ինք, էք, ին

(Տր. իմ, իս, է, իք, էք, ին)

Անկ.—էյը, էյդ(ը), էր, ալքը, էլքը, էյնը

(Տր. աքը, էքը):

2. կամ > գօմ

Ներկ.—գօմ, գաս, գա, գօնք, գժոք, գօն

Անկ.—գժոյ, գժոյդ, գժօր, գժայքը, գժոյքը, գժոյնը
(մնացյալը լրանում է ըղլա կամ կղնլուշ բայով):

3. ունիմ > ունիմ

Ներկ.—ունիմ, ունիս, ունի, ունիք, ունիք, ունին

Անկ.—ունէյ, ունէյդ, ունիր, ունայքը, ունէյքը, ունէյնը
(մնացյալը լրանում է «ունենալ» բայով):

4. գիտեմ > կիղիմ

Ներկ.—կիղիմ, կիղէս, կիղո, կիղինք, կիղէք, կիղին

Անկ.—կիղէյ, կիղէյդ, կիղէր, կիղայքը, կիղէյքը,
կիղէյնը
(մնացյալը լրանում է գիտենամ բայով):

323. Զարտազի բայեր

Ա. լծորդության Ա տիպարից զարտուղում են հետևյալ բայերը.

ասուշ	աստի ¹⁾	հրմ. աստ, աստէք
«ասել»	աստիր	դերբ. աստաձ
	աստավ	
	աստաք	
	աստիք	
	աստին	

պէրուշ	պէրի	պէրաք	հրմ. պիր, պի ²⁾
«բերել»	պէրիր	պէրիք	պէրէք
	պէրավ	պէրին	
	(էր՛իր)		

լծորդությունից՝

նստուշ	նստա	հրմ. նիստ,
«նստիլ»	նստար	նստէք
	նստավ	
	նստաք	
	նստոք	
	նստօն	

Գ Լծորդութիւն.

պացի	պացաք	տառցա	տառցաք
պացիր	պացիք	տառցալ	տառցաթ
պացավ	պացին	տառցալ	տառցօն
(=էպաց)			
հրմ. պաց,	պացէք	տառցի(ր),	տառցիք

Զարտուղութեանց կարգը կարելի է դասել նաեւ այն դեպքերը, երբ միջին ձայնավորը սղվում է խոնարհման ժամանակ. ինչ. աղալ > աղուշ, կտր. աղացի > ախցի, ախծի, խաղալ > խաղուշ, կտր. խաղացի > խախծի, կարգալ > գաշտուշ, գաշտըցի, հրմ. գաշտըցէք են:

Ծան.—1) Այստեղ ավելացել է տ բաղաձայնը: Զայնավորի հաջորդող ու-ից հետո ավելացած տ-ի օրինակ շատ ունինք բարբառներում. ինչ. Սաղամաս > Սալմաստ, ալմաս > ալմաստ, սուս > սուստ, Ռուս > Ռուստ, կալբաս > կալբաստ, մատրաս > մատրաստ, էսպէս > էսպէստ, նույն իսկ լսել եմ սիֆիլիս > սիֆիլիստ: Համշեհի բարբառում այս մասին ուրիշ օրինակ է թասել «հեալ», որ դարձել է թաստուշ, տաստուշ:

Այստեղ հիշում եմ հատկապես Երև. թաշախուստ «սնափառ պճնանք» բառը, որ ըստ իս չարաբ. تاشخش tašaxxuš ձևն է: Այս բառը բառարանում մեկնվում է «անձը ճանաչվիր»:

2) Ըստ որում ր-ից առաջ շեշտյալ ն դառնում է ի. ինչ. վեր > վիր, կեր > զիր, մեր > միր, ձեր > ծիր, կամ երբեմն էլ ը կորչում է. ինչ. կեր > զի (տես § 19 և 223):

324. Անկանոն բայեր

1. առնել > ընուշ

Ներկ.— ընիմ, ընէս, ընտ, ընինք, ընէք, ընին
Անկ.— ընէյ, ընէյդ, ընէր, ընայքը, ընէյքը, ընէյնը
Կտր. տրի (էրի), տրիր, տրավ, տրաք, տրիք, տրին
Հրամ.— տրա (էրէ), տրէք
Դերբ.— ըղաձ¹), ընէլ, ընող, ընէլիք, ընէլու:

2. գալ > էգուշ

Ներկ.— կօմ, կաս, կա, կօնք, կ'տք, կօն
Անկ.— կոյ, կոյդ, կտր, կայքը, կոյքը, կոյնը
Կտր.— էգա, էգար, էգավ, էգաք, էգ'տք, էգօն
(Բիւր. 1899, 604 ունի էրի «եկավ» ձևը):

Հրամ.—աբի (Տր. էգէ'), էգէք²)

Դերբ.—էգօղ, էգած, կալ, կալիք, կալու:

3. դնել > տնուլ

Ներկ.—տնիմ, տնէս, տնո, տնինք, տնէք, տնին

Անկ.—տնէյ, տնէյդ, տնէր, տնայքը, տնէյքը, տնէ'յնը

Կար.—տրի=էտի, տրիբ, տրավ=էտիբ, տրաք, տրիք,
տրին

Հրամ.—տի (տիբ), տրէք

Դերբ.—տնօղ, տրած, տնէլ, տնէլիք, տնէլու:

4. երթալ > էշտուլ

Ներկ.—էշտօմ, էշտաս, էշտա, էշտօնք, էշտոք, էշտօն

Անկ.—էշտոյ, էշտոյդ, էշտոր, էշտայքը, էշտոյքը, էշտոյնը

Կար.—կնացի, կնացիր, կնաց, կնացաք, կնացիք, կնացին

Հրամ.—կնա, կնացէք

Դերբ.—էշտօղ, կնացած, էշտալ, էշտալիք, էշտալու:

5. լալ > լացուլ, յաց ընուլ (Տր.)

Ներկ.—լօմ, լաս, լա, լօ(ն)ք, լէք, լօն

Անկ.—լէյ, լէյդ, լէր, լէքը, լէյքը, լէյնը

Կար.—լացի, լացիր, լացավ=էլաց, լացինք, լացիք, լացին

Հրամ.—լաց, լացէք

Դերբ.—լացօղ, լացած, լալ, լալու, լալիք:

6. լինել > ըլլուլ

Ներկ.—ըլիմ, ըլիս, ըլի, ըլինք, ըլիք, ըլին

Անկ.—ըլէյ, ըլէյդ, ըլիր, ըլայքը, ըլէյքը, ըլէյնը

Կար.—ըղա (էղա), ըղար, ըղավ, ըղաք, ըղոք, ըղօն

Հրամ.—ըղի, ըղէք

Դերբ.—ըլօղ, ըղած (Տր. էղած), ըլի, ըլիք, ըլելու:

7. ուտել > ուլուլ

Ներկ.—ուդիմ, ուդէս, ուդո, ուդինք, ուդէք, ուդին

Անկ.—ուդէյ, ուդէյդ, ուդէր, ուդայքը, ուդէյքը, ուդէ'յնը

Կար.—գէրա, գէրար, գէրավ, գէրօնք, գէրոք, գէրօն

Հրամ.—գիր (գի), գէրէք

Դերբ.—գէրած, ուդէլու:

8. տալ > դնուշ

Ներկ.— դօժ, գաս, դա, դօնք, դոք, դօն

Անկ.— գո կամ գոյը, գոյդ, գոր, դոյքը, գոյքը, գոյնը

Կտր.— գվի, գվիր, գվավ=էրէդ (էրիդ Տ), գվաք, գվիք,
գվին

Հրամ.— գուր=գու, գվէք

Դերբ.— գվօդ, գվաձ, դալ, դալիք, դալու:

9. տանիլ > դօնուշ

Ներկ.— դօնիմ, դօնիս, դօնի, դօնինք, դօնիք, դօնին

Անկ.— դօնէյ, դօնէյդ, դօնիր, դօնայքը, դօնէյքը, դօնէյնը

Կտր.— դարի, դարիր, դարավ, դարաք, դարիք, դարին

Հրամ.— դար, դարէք

Դերբ.— դօնօդ, դարաձ, դօնիլ, դօնէլիք, դօնէլու:

10. տալ «ծեծել»

Զարմանալի բայ է տալ «ծեծել», որ խոնարհվում է հետևյալ ձևով.

Ներկ.— տօժ, տաս, տա, տօնք, տոք, տօն

Անկ.— տոյ, տոյդ, տոր, տայքը, տոյքը, տոյնը

Կտր.— տըվի, տըվիր, տըվավ, տըվաք, տըվիք, տըվ-
վին

Հրամ.— տուր (տու), տվէք

Դերբ.— տվօդ, տվաձ, տվուշ, տալ, տվէլու, տվէլիք,
տվէլու, տվէլիք:

(Այս բայի զարմանալի կետերը սրանք են. 1) նախաձայնը հակառակ օրենքի լինում է տ (և ոչ դ). 2) ավելանում է կրկնակ վ. 3) կը մասնիկը ստանալու դեպքում դառնում է զուտտօմ, զուտտու... 4) արգելականը կազմելու ժամանակ տ կրկնվում է և լինում է միտ տար, տալ մի):

325. Ծանոթություն

1) Առնել > ընուշ բայի անցյալ դերբայը պիտի լիներ տրած, ինչպես գործածական է Օրդու և այլուր. բայց ճանիկցիք ջնջել են այս ձևը և փոխանակել ըղած ձևով, որ լինել > ըլլուշ բայի դերբայն է և սովորական գործածություն ունի արդեն բարբառում: Այս միջոցին դիմել է բարբառը միմիայն այն նպատակով, որ չզփոթվի տրած «այրած» բառի հետ, ինչպես

նկատել տվեց ինձ տ. Սառա Էքսուզեանը (1944 օգ. 21): Նման երևույթ ունինք նաև Պոլսի բարբառում, ուր ընել բայը չունի կրավորական և նրա փոխարեն գործածվում է ըլլալ բայի կրավորական ձևը՝ ըլլըվիլ (տես Քնն. Պոլս. բարբ. § 382):

2) Արի՛ բառի հոգնակին պիտի լինեք արէք, արէցէք կամ արիք. բայց այս դեպքում առաջինը (արէք) կշփոթվեր «անել» բայի հրմ. տրէք ձևի հետ, երկրորդը (արէցէք) կշփոթվեր բարբառի տրէցէք «այրեցէք» բառի հետ, իսկ երրորդը (արիք) կշփոթվեր «անել» բայի կտր. տրիք ձևի հետ: Ուստի փոխանակվել է էգէք ձևով, մինչդեռ Տրապիզոնի շրջանում ընդհանրապես հնարվել է եզ. էգէ՛ (նկատողություն Արտաշէս Էքսուզեանի, 1944 թ. օգ. 21):

326. Բարդ ժամանակներ

Սահմ. ներկայ

Սահմանական ներկան կազմվում է ստոր. ներկայի վրա դնելով գ կամ զու մասնիկը. զու դրվում է բաղաձայնով սկսող բայերի վերջը, իսկ գ դրվում է ձայնավորով սկսող բայերի սկիզբը. ինչ.

գուղիմ	պէրիմ գու
գուղէս	պէրէս գու
գուղո	պէրո գու
գուղինք	պէրինք գու
գուղէք	պէրէք գու
գուղին	պէրին գու

Մալայի շրջանում խոնարհվում է՝

բէրիմ գու	գուղիմ
բէրիս գու	գուղիս
բէրէ գու	գուղէ
բէրիք գու	գուղիք
բէրէք գու	գուղէք
բէրին գու	գուղին

Միավանկ բայերը ստանում են զու մասնիկը, որ ձայնավորով սկսվող բայերի մոտ լինում է նախադասւ Այս կարգի բա-

յերբ երեք են (զամ, լամ, տամ), բայց Համշենի բարբառում ջնջվել է լամ (գործածվում է միայն Տրապիզոնի շրջանում, իսկ ձանիկցիք փոխանակելն են վայել՝ վոյուշ ձևով)։—զամ՝ բայի մոտ գոլ դառնում է կու։ Այսպէս՝

Տր.

Տր.

գուլօմ	գուդօմ	կուկօմ	քուքօմ
գուլաս	գուդաս	կուկաս	քուքաս
գուլա	գուդա	կուկա	քուքա
գուլօ(ն)ք	գուդօնք	կուկօնք	քուքօ(ն)ք
գուլէք	գուդոք	կուկոք	քուքէք
գուլօն	գուդօն	կուկօն	քուքօն

Երեք բայ (ուզել, ելլել և ընկնել) նմանապես ստանում են կ՝ փոխանակ գ. իսկ Տրապիզոնի շրջանում մնում է գ. այսպես՝ զըղնիմ՝ Տր=կընգնիմ ձ, գէլլիմ՝ Տր.=կէլլիմ ձ.

Տր. գուզիմ ձ. կուզիմ
գուզիս... կուզիս...

Իւղոտիլ՝ յէղօղուշ բառը համարվում է բաղաձայնով սկրսւ-վող և ներկան լինում է յէղօղիմ գու։

Կարելի չէ կրկնել մասնիկը՝ ոչ կուտիմ կու ձևով, ոչ կու-զիմ կու, ոչ էլ կուտօմ կու են։

327. Սան. անկատար

Կազմվում է նույնպես գ կամ գոլ մասնիկով, ստոր. անկ-ձևից, ճիշտ նախորդին համապատասխան ձևով. ինչ.

պուդէ՛յը	պէրէյը գու
գուդէ՛յդ(ը)	պէրէյդ գու
գուդէր	պէրէր գու
գուդայքը	պէրայքը գու
գուդէյքը	պէրէյքը գու
գուդէ՛յնը	պէրէյնը գու
կուկոյը	գուդոյը
կուկոյդը	գուդոյդ
կուկո՛ր	գուդոր
կուկայքը	գուդայքը
կուկոյքը	գուդոյքը
կուկոյնը	գուդոյնը

Մալայի շրջանում լինում է՝

բ'երէյի գու,	բ'երէյը գու	գուդէյի
{ բ'երէյիը գու		գուդէյիը
	բ'երէյդը գու	գուդէյդը
բ'երէր գու		գուդէր
բ'երաքը գու		գուդաքը
{ բ'երէքը գու		գուդէքը
	բ'երէյդք գու	գուդէյքը
բ'երէյնը գու		գուդէյնը

Այստեղ էլ կարելի չէ ասել մասնիկի կրկնությամբ՝ գուդէյի գու են:

Միավանկ բայերը լինում են նախորդի նման՝

գուդոյը	կուկոյ
գուդոյդ	կուկոյդ
գուդոք	կուկոք
գուդայքը	կուկայքը
գուդոյքը	կուկոյքը
գուդոյնը	կուկոյնը

328. Սահմ. շարունակական ցերկ.

Սահմանական ներկայի շարունակական ձևը Տրապիզոնի շրջանում և Մալայում կազմվում է ունի կամ գունի ձևով, իսկ Ճանիկի շրջանում հնարվել է բոլորովին նոր մի ձև.—անորոշ գերբայի հետ խոնարհվում է էական բայի ներկան: Օր.

բ'երիմ գունի	բ'երիք գունի
բ'երիս գունի	բ'երիք գունի
բ'երէ գունի	բ'երին գունի

(որ և բ'երիմ ունի, բ'երիս ունի են), գաշտըցընիմ ունի «կարդացնում եմ (այժմ)».

Ձայնավորով սկսվող բայերը ստանում են միայն ունի ձևը. այսպես՝ գուդիմ ունի «ուտում եմ այժմ», բայց չկա գուդիմ՝ գունի. սրանից հետևում է որ գունի ձևի նախաձայնը նույն կը մասնակն է:

Ճանիկում գերբայը գործածվում է երկու ձևով. հսկերը դնում են ուղղական հնթակա, որին կցում են անորոշ գերբայը՝

ալեւացնելով էական բայի ներկա եզ. Գ դեմքը. իսկ նորերը՝
այս ձևը չգիտեն, և հնթական դնում են սեռական հոլովով՝
(ստեփական դերանվան ձևով):

Այսպես ըստ հների՝

յէս էգուշ տ	մէք էգուշ տ
տուն էգուշ տ	տունք էգուշ տ
էն էգուշ տ	ընէր էգուշ տ

Իսկ ըստ նորերի՝

իմս (իմք) էգուշ տ «ես գալիս եմ (այժմ)»
ըուզը (ըուզք) էգուշ տ «դու գալիս ես (այժմ)»
ընուըր էգուշ տ «նա գալիս է (այժմ)»
միրը էգուշ տ «մենք գալիս ենք (այժմ)»
ծիրը էգուշ տ «դուք գալիս եք (այժմ)»
ընէցը էգուշ տ «նրանք գալիս են (այժմ)»

Առաջինը նման է անգլիական անթեքական ձևին, երկրորդը՝
գրաբարի սեռականով հնթականի ձևին:

Սրանով հասկանում են որ գործողությունը դեռ սկսված չէ,
բայց սկսվելու վրա է:

329. Սահմ. շարունակական անկ.

Սահմանականի շարունակական անկատարը կազմվում է
նախորդի նման Մալայի և Տրապիզոնի շրջանում անկատարի
վրա ալեւացնելով ունի կամ գունի ձևը, իսկ ձանիկի շրջանում
էական բայի անկատարը կցելով անորոշ դերբային (հնթական
պահելով ուղղական կամ սեռական): Օր.

բ'էրէյը գունի
բ'էրէյդը գունի կն:

Իմս էշտուշ էր, ջօմփոս գըգրէցին, չայցի էշտաւ.

Միրը էշտուշ էր, ամա վրէգը թօղավ էչ.

Ընէցը էշտուշ ուզուշ էր, չայցին «նրանք ուզում էին
դնալ, (բայց) չկարողացան»:

330. Պարզ անպառճի

Պարզ ապառնին երկու ձև ունի. առաջինը կազմվում է
ներկա դերբայով, երկրորդը սլիտի մասնիկով, որ կցվում է

աւոր. ներկային և լինում է սովորաբար յետադաս: Կարելի է նաև առաջ դնել: Առաջինը ցույց է տալիս ոչ հաստատ մտադրութիւն, երկրորդը՝ հաստատուն մտադրութիւն: Օր.

(յէս) էշտօղ իմ «կգնամ»
(տուն) էշտօղ էս «կգնաս»
(ըն) էշտօղ տ «կգնայ»
(մէք) էշտօղ ինք «կգնանք»
(տունք) էշտօղ էք «կգնաք»
(ընէր) էշտօղ ին «կգնան»

Մ. բ'էրիմ իդի (ինի)	Ճ. էշտօմ իդի (ինի)
բ'էրիս բիդի	էշտաս բիդի
բ'էրէ բիդի	էշտա բիդի
բ'էրիք բիդի	էշտօնք բիդի
բ'էրէք բիդի	էշտօք բիդի
բ'էրին բիդի	էշտօն բիդի

Ինչպես տեսնում ենք, ապառնիի պիտի մասնիկի նախաձայնը միանալով առաջին դեմքի մ' վերջավորութեան հետ դարձել է մ' (նախապես ասվել է էշտօմ միդի), ապա երկու մ' միանալով՝ վերածվել է մեկի (էշտօմ իդի), ավելի ուշ էլ այս դ ազդվելով մ'-ից՝ վերածվել է ն (էշտօմ ինի): Մյուս դեմքերում որևէ փոփոխութիւն չկա, ինչպես նաև եզ. Ա դեմքի մեջ՝ եթե նախադաս է պիտի մասնիկը:

Մի քանի բայ միասին գործածվելու դեպքում կարելի է պահել միայն վերջին պիտի մասնիկը. օր.

էշտօմ դէսնում առնում պէրիմ ինի (իդի):

331. Անցյալ ապառնի

Նախորդի նման ունի երկու ձև, առաջինը կազմվում է ներկա դերբայի հետ դնելով էական բայի անկատարը, իսկ երկրորդը ստորադասականի անկատարից հետո դնելով պիտի մասնիկը, որ բնավ չի սղվում: Իմաստի տարբերութիւնը նախորդին նման է:

(յէս) էշտօղ էյ «կերթայի»
 (տուն) էշտօղ էյդ «կերթայիր»
 (ըն) էշտօղ էր «կերթար»
 (մէք) էշտօղ այքը (կերթայինք)
 (տունք) էշտօղ էյքը «կերթայիք»
 (ընէր) էշտօղ էյնը «կերթային»

Մ. բ'էրէյի բիդի	Ճ. էշտոյը բիդի
բ'էրէյդը բիդի	էշտոյդ բիդի
բ'էրէր բիդի	էշտոր բիդի
բ'էրաքը բիդի	էշտայքը բիդի
բ'էրէ'քը բիդի	էշտայքը բիդի
բ'էրէյնը բիդի	էշտոյնը բիդի

Մի քանի բայ իրար ետևից շարվելու դեպքում, կարելի է պիտի մասնիկը չկրկնել և պահել միայն վերջինին. օր.

էշտոյ աշէյ առնէյ պէրէյը բիդի...

Անցյալ ապառնիի հետ կազմված գեղեցիկ մի ձև է զօմօր Մ. կամ զօմ'մ'օր ձ, որ առաջանում է գրբ. կամէր ձևից. և նշանակում է «քիչ փնաց որ». օր. Այլի օրը զօմօր գ'լէի բիդի. ձ. զօմ'օյ կլէյի բիդի «քիչ էր փնում սահէի»:

332. Հրամայականի Բ ձև

Հրամայականի պարզ ձևը գործածական է միայն եզ. և յզ. Բ դեմքի համար. իսկ Ա և Գ դեմքերը, ինչպես և անցյալը կազմվելու համար գործածվում է բարդ ձևը, որ կազմվում է [Թող մասնիկով: Հաժշենի բարբառում այս մասնիկը ստանում էյճ ձև. [Թէօղ, [Թէղ, [Թօղ և վերջաձայնը վերածելով իւ-ի՝ [Թէօիւ, [Թէիւ, [Թօիւ.—բայց սրանք կարող են նաև փոխել նախաձայնը տ, որով կունենանք 6 ձև ևս (տէօղ, տէօիւ ևն): Կարող են դրվել միայն բայից առաջ, ավելի սովորական ձևով՝ բայից հետո, բայց նաև միաժամանակ թե՛ առաջ և թե՛ հետո: Օր. [Թէօիւ էշտա, [Թէիւ էշտա [Թէիւ, [Թէիւ էշտա տօղ ևն: Եւ որովհետև [Թող նշանակում է նաև «ձգիր, բաց թող, թույլ տուր», ուստի հաճախ այս մտքով գործածվում է նաև արօլ. օր. արօլ, [Թէիւ էշտա կամ արօլ, էշտա տօղ:

Անցյալ՝ արօլ, [Թօիւ էշտոր կամ արօլ, էշտոր տօղ ևն:

Մի քանի բայերի կրկնության ժամանակ, կարելի է գործածել միայն մի անգամ [Թօղ. օր.

Թող էշտօմ դէսնում,
 Թող էշտոյդ դէսնէյդ,
 Ավելի սովորական ձևով՝

էշտօմ դէսնում Թող (թէխ, տէխ...)
 էշտոյդ դէսնէյդ Թող (տօղ, տէխ...)
 էշտոյ դէսնէյ Թող (տօղ, տէխ...)

Ավելի զարմանալի է այն ձևը, որ կազմված է ըլլի բայով. օր.
 Յէս դէսած չունէյ նա, տուն տօղ ըլլի դէս
 կամ Յէս դէսած չունէյ նա, տուն տօղ ըլլի դէսնէյդ.

Սրանց հոգնակին էլ լինում է այսպես.

Մէք դէսած չունայք նա, տունք տօղ ըլլի դէսնէյք կամ
 ... տունք տօղ ըլլի դէսէք:

Այս բոլորի մեջ Թօղ ըլլի նշ. «գոնէ» և թարգմանված է
 թրք. օլտուն ձևից:

333. Բաղադրյալ ժամանակներ

Պոլսահայ բարբառի քննության մեջ § 367 հիշատակված
 են 38 բաղադրյալ ժամանակներ, որոնք գործածական են նույն
 բարբառում չլամշենի բարբառը չունի այսքան մեծ հարստու-
 թյուն այն պարզ պատճառով, որ չունի նախ անցյալ դերբայի-
 -նի ձևը (սիրել եմ, բերել էի), չկա նաև -ելու ապառնի դեր-
 բայը: Թեև Տրապիզոնի շրջանում կարելի է գտնել գնացած իմ
 և գնացիր իմ ձևով բաղադրյալ ժամանակներ, բայց սրանք սո-
 վորական չեն: չլամշենի բարբառը իր բաղադրյալ ժամանակները
 կազմում է սովորաբար ունիմ բայով: Այսպես՝

ցօնած ունիմ	ցօնած ունէ՛յը
» ունիս	» ունէյդ
» ունի	» ունիր
» ունիք	» ունայքը
» ունիք	» ունէյքը
» ունին	» ունէյնը
ցօնած օննօմ	ցօնած օննայը(օննոմ)
» օննաս	» օննայդ
» օննա	» օննոր
» օննօնք	» օննայքը
» օննաք	» օննայքը
» օննօն	» օննայնը

ցօնաձ	գօննօմ	ցօնաձ	գօննոյլ (-նո)
»	գօննաս	»	գօննոյդ
»	գօննա	»	գօննոր
»	գօննօնք	»	գօննայքը
»	գօննոք	»	գօննոյքը
»	գօննօն	»	գօննոյնը

ցօնաձ	օննօմ իդի	ցօնաձ	օննոյլ բիդի
»	օննաս բիդի	»	օննոյդ բիդի
»	օննա բիդի	»	օննոր բիդի
»	օննօնք բիդի	»	օննայքը բիդի
»	օննոք բիդի	»	օննոյքը բիդի
»	օննօն բիդի	»	օննայնը բիդի

Կարելի է պիտի մասնիկը նախադաս դնել և ասել՝

ցօնաձ բիդի օննօմ...
ցօնաձ բիդի օննոյլ...

Եւ ինչպէս տեսնվում է, եզ. Ա դեմքում իդի զերստանում է իր նախկին ձևը՝ բիդի:

Տրապիզոնի շրջանում, կամ նույն իսկ Մալաթում գործածական է նաև եալ՝ իր դերբայը. նույնպէս ունիմ օժանդակի փոխարեն կարելի է դնել նմ էակաւ բայը. ինչ. գնացիր իմ, գնացած իմ, աստած էյը «ասած էի» ևն: Բայց այս ձևերը ընդհանուր գործածութիւն չունին:

334. Թեական եղանակը Համշենի բարբառում կազմվում է յետադաս նա մասնիկով, որ համապատասխանում է միջին հայերենի նա և Պոլսահայ բարբառի նէ ձևին: Օր.

սիրիմ նա	սիրէյ նա
սիրէս նա	սիրէյդ նա
սիրո նա	սիրէյ նա
սիրինք նա	սիրայք նա
սիրէք նա	սիրէ'յք նա
սիրին նա	սիրէ'յնը նա

Կարելի է բայից առաջ դնել թո (տո) կամ օր և կամ թրք. էգէրէմ՝ «եթէ» շաղկապը. ինչ.

Թոտ սիրիմ նա, տոտ սիրէյ նա
էգէրէմ Բ'էրիմ նա «եթէ բերեմ»
էգէրէմ Բ'էրէ'յղը նա «եթէ բերէիր».

Այս նա մասնիկով կազմվում է նաև մի տեսակ հորդորա-
կան կամ մեղմ հրամայական. ինչ. Բ'էրիս նա Մ=պէրէս նա
«եթէ կարելի է՝ բեր»:

335. Պատմողական եղանակը կազմելու համար Համշենի
բարբառում գործածվում է «ըղամ ունի» ձևը կամ Թրք. էմիշ,
որոնք ավելի հեզնանք են արտահայտում: (Թրք. էմիշ ձևը նո-
րերը չգիտեն, մեծերի մեջ էլ հազվագյուտ է): Օր.

Մէգ սահտունն չէօյս այդ քաղամ ըղամ ունի կօյո.

Ըմրն օր գէշտա էմիշ:

336. Անցողական բայ.

Անցողական բայերը Համշենի բարբառումն էլ կազմվում են
տալ բայով և կամ -ցնուշ, -ացնուշ, -էցնուշ վերջավորությամբ:

Ուրիշ բարբառներում -ցնել ձևը հասուկ է ոչ-բաղմաթիվ և
շատ սովորական գործածություն ունեցող բայերի. իսկ բայերի
մնացյալ ահագին մեծամասնությունը կազմվում է տալ բայով:
Համշենի բարբառը այն մեծ տարբերությունն ունի, որ զբարա-
բի նման կարող է գրեթե ամեն բայ անցողականի վերածել
-ցնել ձևով, իսկ փոքրագույն մասը միայն՝ տալ բայով:

Իբրև օրինակ հիշում ենք այնպիսի բայեր, որ մեր բար-
բառների և աշխարհաբարի համար բոլորովին անսովոր են.—

ամանել > օմնուշ—օմնէցընուշ

այրել > տրուշ,—տրէցընուշ

անկանել > ընգնուշ—ընգնէցընուշ

առնուլ > առնուշ—առնէցընուշ

ասել > ասուշ—ասէցընուշ

արձակել > ացկըրուշ—ացկըրէցընուշ

աւելել > ավիլուշ—ավիլէցընուշ

եփել > էփուշ—էփէցընուշ

ընտրել > ընդուշ—ընդուէցընուշ

գործել > կօյձուշ—կօյձէցընուշ

Թաղել > Թաղուշ—Թաղէցընուշ

Թափել > Թափուշ—Թափէցընուշ

գրել > կրուշ—կրէցընուշ

բովհրել > պօֆրուշ—պօֆրէցընուշ

ունենալ > օննուշ — օննըցընուշ
 որոշել > ուրիշուշ < քարերը ջոկել, հատեղէնները մաքրել,
 իրարից անջատել կովոդներին > — ուրիշէցընուշ
 տեսանել > դէսնուշ — դէսըցընուշ
 կարենալ > գայնօմ — գայցընուշ
 աղալ > աղուշ — ախցընուշ (դ > խ ց-ի պատճառով):

337. Անցողական կազմելու կանոնը հետևյալն է. — վերցը-
 նում ենք կատարյալի եզակի Ա դեմքը, հանում նրա վրայից
 ի, ա, ցի, ցա վերջավորությունները և մնացյալի վրա ավելաց-
 նում ենք -ցընուշ վերջավորությունը:

Կրավորական բայերն էլ (կամ նաև կրավորակերպ չեղոք
 բայերը) կարող են կազմել այս ձևով անցողական. ինչ.

Թաւալիլ > Թավըլուշ — Թավըվէցընուշ
 ածիլուել > ածիլվուշ — ածիլվէցընուշ
 փաթաթուել > փատտըվուշ — փատտըվէցընուշ
 մոլորիլ > մօլօրվուշ — մօլօրվէցընուշ
 կորսուել > գօյսըվուշ — գօյսըվէցընուշ
 Թողվել > Թօղվուշ — Թօղվէցընուշ «ապահարզան տալ»
 խաբվիլ > խափվուշ — խափվէցընուշ
 զդուիլ > կզվուշ (շների) — կզվէցընուշ:

Կան բայեր, որոնք միաժամանակ ստանում են մի քանի
 ձևի անցողական. ինչ.

բռնել > պռնուշ — պռնցընուշ, պռնէցընուշ
 զերծանիլ > զէյձնուշ — զէյձցընուշ, զէյձըցնուշ,
 զէյձընցնուշ
 անցանել > օնցնուշ, — օնցցընուշ, օնցընուշ (առաջինը
 կանոնավոր, երկրորդը անկանոն)
 Թռանիլ, Թռչիլ > Թռշուշ — Թռչէցընուշ, Թռցընուշ
 «ցատկել»
 առնել > ընուշ «անել» — ընէցընուշ, ընըցընուշ,
 որէցընուշ:

338. Մի խումբ բայեր չեն հետևում վերի կանոնին և
 իրենց անցողականը կազմում են անկանոն կերպով: Այս-
 պես են՝

դնել> անուշ—տնէցընուշ

զարկանել> զայնուշ—զայնէցընուշ (հանելով զայնէցի կատարյալից և ոչ թե զարգի ձևից)

իջանել> ինշնուշ—ինշէցընուշ, ինշացընուշ

երթալ> էշտուշ—էշտըցընուշ (կտ. կնացի)

ուտել> ուղուշ—ուղէցընուշ (կտ. գէրա) (այլուր բոս կանոնի կերցնել)

բերել> պէրուշ—պէրէցընուշ

գալ> էգուշ—էգձըցընուշ (եկած դերբայից և ոչ թե էգա կատարյալից կազմված)

ելանել> էլուշ—էլէցընուշ

լինել> ըլուշ—ըլլէցընուշ, ըլլըցընուշ

անկանիլ> ընգնուշ—ընգնէցընուշ:

Այն բայերը որոնք չունին -ցնել ձևով անցողական և գործածվում են տալ բայով՝ հետևյալներն են. լլէլ դալ (լցնել տալ), խփէլ դալ (փակել տալ), տնէլ դալ (կա և տնէցընուշ), ծէծէլ դալ (կա և ձէձէցընուշ), գախ ընէլ դալ (գլխի տալ), ընգնէլ դալ (կա և ընգնէցընուշ), ծծէլ դալ (կա և ձձէցընուշ), դալ դալ և այս բոլորից հետո հետաքրքրական պացրցընէլ դալ «բանալ տալ» ձևը, որ միևնույն ժամանակ ունի նաև պացրնուշ և պացրցընուշ ձևերը: Այս օրինակը հայտնապես ցույց է տալիս, թե դալ ձևով անցողականի գործածությունը բազմաթիվ ց-երի խճողումից խուսափելու համար է: Բանալ բայի կանոնավոր անցողականն է պացրնուշ (կտր. պացի ձևից կազմված), որ սակայն պիտի շփոթվեր պաց ընուշ «բաց անել» ձևի հետ, որ հասարակ ներգործական ձև է և ոչ թե անցողական: Շփոթության առաջը առնելու համար ստեղծել են պացրցընուշ, որ թեև հարմար է, բայց կատարյալում տալիս է պացրցուցի: Սրա ց-երի խճողումից խուսափելու համար ահա կազմվել է պացրցընէլ դալ, օրի կատարյալն է պացրցընէլ դվի: Նման պատճառաբանությամբ ձևացած են նաև ծէծէլ դալ (=ձէձէցընուշ) և ծծէլ դալ (=ձձէցընուշ):

339. Անցողական բայերը խոնարհվում են հետևյալ ձևով.

Ստոր. ներկ.

Ստոր. անկ.

խըմէցընիմ

խըմէցընէյ

խըմէցընիս

խըմէցընէյդ

խըմէցընո

խըմէցընէբ

Սառք. ներկ.

խմէցընինք

խմէցընէք

խմէցընին

Սառք. անկ.

խմէցընայքը

խմէցընէյքը

խմէցընէյնը

Կար.

խմէցուցի

խմէցուցիր

խմէցուց

խմէցուցաք

խմէցուցէք

խմէցուցին

Հրամ.— խմէցու, խմէցուր, խմէցուցէք.

Դերբ.— խմէցընօդ, խմէցընէլու, խմէցընէլիք.

Հարցանել՝ հայցընուշ բառի հրամայականը լինում է հայց,
Կար. եղ. Գ. դէմքը է հայց:

340. Ի տես անսովոր անցողականների այս առատ գործածության՝ հարց է առաջանում, թե ի՞նչ է այս երևույթի բացատրությունը: Արդյոք այստեղ էլ ունինք բարբառիս մեջ սովորական վաղնջական երևույթներից մեկը, թե՞ կա նաև մի այլ գրգռապատճառ: Կարծում եմ որ դարձյալ թուրքերենի ազդեցությունը պետք է տեսնել այստեղ: Թուրքերենը չունի բնավ տալ բայով կազմված անցողական, բայց ազատօրեն շինում է բոլոր բայերից dər և dərť մասնիկներով անցողական ձև: Թուրքերենի այս երևույթը ազդել է նաև Համշենի հայ բարբառի վրա, որպես զի լավ պահի գրաբարից ժառանգած հին հարստությունը և ընթացք չտա անցողականի երկրորդ ձևին, որին դիմել են առավելապես հայերենի մնացյալ բոլոր բարբառները:

341. Կրավորական բայ

Կազմվում է սովորական ձևով՝ արմատի և վերջավորություն մեջ ներմուծելով վ. խոնարհումը լինում է Բ լծորդություն հոմաձայն. օր.

Ստոր. ներկ.

Ստոր. անկ.

սիրվիմ

սիրվէ՛յլ

սիրվիս

սիրվէ՛յլ(ւ)

սիրվի

սիրվիր

սիրվինք

սիրվա՛յլ(ւ)

սիրվիք

սիրվէ՛յլ(ւ)

սիրվին

սիրվէ՛յն(ւ)

կոր.

Դերբ.

սիրվեցա

սիրվօղ

սիրվեցար

սիրվաճ

սիրվեցաժ

սիրվիլ

սիրվեցաք

սիրվուշ

սիրվեցուք

սիրվէ՛յիք

սիրվեցօն

սիրվէլու

Հրամ. — սիրվա, սիրվեցեք.

Կարևոր է հիշատակել անկատարի մեջ վիր վերջավորութիւնը, որ միակ տարբերութիւնն է ներկայացնում Բլծոր-դութիւն խոնարհման մեջ: Այս տարբերութիւնը առաջացել է հաջորդ ը-ի պատճառով, որ իրանից առաջ գտնված շնչայալ է, է ձայնավորը դարձնում է հաճախ ի (աես § 19):

Կրավորական կազմելու ժամանակ նկատելի է ն ձայնի կորուստը վ-ից առաջ մի խումբ բայերի մեջ. ինչ.

պըղըվուշ «բռնուիլ»,

կըղըվուշ «գտնուիլ»,

հաքըվուշ «հագնուիլ»,

դէսըվուշ «տեսնուիլ»,

խաղըվուշ «խառնուիլ»

342. Կան մի խումբ բայեր, որոնք ձևով ներգործական, բայց իմաստով թե ներգործական են և թե կրավորական: Այսպէս՝ խէխտուշ բայից՝

Ճուրն ընգա, խէխտիմ գու.

Հիմի կէլլիմ քէզի խէխտիմ գու.

այսպէս են նաև հալուշ, մաշուշ, նէղուշ, տրուշ և այլեր, ծնուշ

«ծո՞ր!» ևն: Այս բոլորը նրանից է, որ այդ բայերը հին հայերենում ունեցել են ներգ.—*իմ*, *չեզ*.—*իմ*՝ ձեզ, որոնք Համշենի բարբառում հավասարապես դառնում են *-իմ*: Եզ. Բ դեմքից սկսած երկու սեռերը տարբերվում են. *խէխտէս* գու, *խէխտիս* գու ևն:

343. Բացասական բայ

Բայերի բացասականը կազմելու համար դրվում է նախադաս չ, չի կամ յետադաս ուչ (էչ).—*վերջին* երկուսից ուչ Մալայի ձևն է, իսկ էչ՝ Ճանիկցոց. նմանապես նախադաս չի դնում են Մալայիք, չ ձանիկցիք: Օր.

Սահմ. ներկա

Մ չիմ բ'էրիլ	Ճ չիմ լսէլ	լսէլ չիմ
չիս »	չէս »	» չէս
չի »	չի »	» չի
չիք »	չինք »	» չինք
չէք »	չէք »	» չէք
չին »	չին »	» չին

Անկատար

Մ չէ՛յլ »	Ճ չէյլ »	» չէյ
չէ՛յլր »	չէյդ »	» չէյդ
չիր »	չէր »	» չէր
չաքլ »	չաքլ»	» չաքլ
չէ՛քլ »	չէ՛յքլ»	» չէ՛յքլ
չէ՛յնլ »	չէ՛յնլ»	» չէ՛յնլ

Միավանկ բայերը (լալ, գալ, տալ) ներկայի կազմության մեջ հետևում են նույն կանոնին. ինչ. *չիմ դալ* ևն:

344. Կատարյալը ունի երկու ձև՝ նախադաս բացասականով և յետադաս բացասականով. օր.

Մ չի բ'էրի	կամ	բ'էրի ուչ
չի բ'էրիր		բ'էրիր ուչ
չի բ'էրավ		բ'էրավ ուչ
չի բ'էրաք		բ'էրաք ուչ
չի բ'էրիք		բ'էրիք ուչ
չի բ'էրին		բ'էրին ուչ

չլտեցի	կամ	լտեցի էչ
չլտեցիր		լտեցիր էչ
չլտեց		լտեցի էչ
չլտեցաք		լտեցաք էչ
չլտեցիք		լտեցիք էչ
չլտեցին		լտեցին էչ

345. Ապառնին ունի 3 կամ 5 ձև. Մալայում բացասականը դրվում է սկիզբը, մեջտեղը կամ վերջը. օր.

չի բիդի բ'երիմ բ'երիմ ուչ բիդի, բ'երիմ իդի ուչ
 չի բիդի բ'երիս բ'երիս ուչ բիդի, բ'երիս բիդի ուչ ևն.
 ձանիկում լինում է 5 ձև, այսպես՝

չբիդի պերիմ
 պերիմ յօ՛չ բիդի, սիրիմ էչ բիդի
 պերիմ իդի յօչ, սիրիմ իդի յօչ
 բիդի չպերիմ, բիդի չսիրիմ

և ապառնի մասնիկը կրկնելով՝

սիրիմ իդի յօչ բիդի...

այս վերջինը հին ձև է և այժմ սակավադեպ:

Անցյալը՝ չբիդի սիրէյ, սիրէյ էչ բիդի, բիդի չսիրէյ...

Ներկայի և անկատարի շարունակական ձևերը լինում են՝

իմս չէշտուշ տ «ես չեմ գնում»

իմս չէշտուշ էր «ես չէի գնում»...

346. Ստորադասականի ներկան և անկատարը ստանում են հրկու ձև. բացասականը նախադաս կամ յետադաս.

չլսիմ	կամ	լսիմ էչ
չլտէս		լտէս էչ
չլսո		լսո էչ
չլսինք		լսինք էչ
չլտէք		լտէք էչ
չլսին		լսին էչ
չլտէ՛յը		լտէյ էչ
չլտէ՛յդը		լտէյդ էչ
չլտէր		լտէր էչ
չլսա՜յքը		լսայք էչ
չլտէ՜յքը		լտէյք էչ
չլտէ՛յնը		լտէյն էչ

Ինչպէս տեսնվում է, բայի վերջի թարմատար ձայնավորը կրճատվում է, երբ «է» յետադաս է (ձայնավորների հանդիպումից խուսափելու համար):

347. Բաղադրյալ ձևերը կազմվում են նույնպէս երկու ձևով.

չսիրած ունիմ կամ սիրած չունիմ,

չսիրած ունէյր » սիրած չունէյ.

բայց նաև էական բայով.

լսած չիմ, լսած չէս, լսած չու,

լսած չէյդ «լսած չէիր»...

էշտըցած չիմ կամ կնացած չիմ...

Դերբայների մեջ բացասականը միշտ նախադաս է. ինչ. չլսող, չլսած, չլսուշ, չլսէլիր, չլսէլու:

348. Արգելական մասնիկն է մի, որ հոգնակիւմ կարող է ստանալ մի՞ք ձևը և կարող է լինել թէ՛ նախադաս և թէ՛ յետադաս. ինչ.

մի լսէլ, լսէլ մի մի լալ, ձիձադիլ մի,

մի լսէք, լսէք մի, խօսիք մի, մի հաքնիք,

միք լսէլ, լսէլ միք

միք լսէք, լսէք միք, մի խաղաք, մի մղնուք,

Մարայում կա և մեր ձևը. ինչ. մեր քէրիլ, մեր լալ (երկբարբառային ն-ով):

Մահմ. ներկայի ձևը ունի թե ներկայի և թե ապառնի նշանակութիւն. այսպես չիմ դալ «չեմ տալիս» և «չեմ տայ», չի էշտալ «չի գնում» և «չի գնալ»:

Արգելականի երկրորդ ձևն է չպէրէս, չդօնիս, որ ավելի հորդորական նշանակութիւն ունի. Այսպէս նաև յետադիր ձևով՝ մօռնար ու «չմոռանաք» ևն:

349. Հրամայականի երկրորդ ձևը (թօղ, թէղ) գործածվում է նաև բացասական ձևով. ինչ. ընլսէր է՛ջ թօղ «թող նա չլսէր». բայց այստեղ կա զարմանալի մի ձև, որ հատուկ է միայն երկրորդ դէմքին. կազմվում է անցյալ դերբայից, դուրկ է հարադիր էական բայից և հոգնակիւմն էլ ստանում է ք հոգնակերտ նշանը. ինչ.

տուն լսած է՛ջ «չլսէիր», որ և լսած է՛ջ թօղ.

տունք լսածք է՛ջ «չլսէիք», որ և լսածք է՛ջ թօղ.

օր. Ըն՝ տասցամա, տուն լսած էչ.

ընէր պէրին ամա, տունք առածք էչ.

բաղաձայնների խճողման դեպքում գրվում է ը. օր. տառօքը յէչ:

Դերբայով ապառնին էլ ունի իր բացասականը. ինչ.

յէս լսող չիմ՝ «չպիտի լսեմ»,

տուն լսող չէյդ՝ «չպիտի լսէիր»...

Ծան.—Փոխանակ էչ ձևի, գտնում ենք նաև հէչ. օր. դվավ
հէչ «տվավ ոչ; չտվավ», դէսնու հէչ «չտեսնիր»:

350. Հարցախոնք բայ

Թուրքերենի նման, Համշենի բարբառն էլ ստեղծել է բայերի հարցական ձևը կազմելու համար մի առանձին մասնիկ, որ որևէ ուրիշ հայ բարբառում գոյություն չունի: Ուրիշ բարբառներ թուրքերենից փոխ են առնում մի՞ մասնիկը. ինչ. Գլ. ունի՞ս մի, չունի՞ս մի «ունի՞ս» թէ չունիս»: Իսկ Համշենի բարբառը այս թէ շողկապին տվել է հարցական մասնիկի պաշտոն: Օր. չունի՞ թէ. խնձօյնին էդօ՞ն թէ. մաշտ գա՞ թէ.

Մասնիկը կարող է զանազան դիրքեր ստանալ. օր.

Մ. չի՞ն թէ գալ, գալ չի՞ն թէ, չի՞ն գալ թէ.—

որոնք հավասարապես նշանակում են «գալու չէ՞ն»:

Սա Մալալի հատուկ ձևն է:

Ըստ որում թավ բաղաձայնները բառասկզբից հետո գառնում են պարզ խուլ, ճանիկի շրջանը այս քաղը համարելով իբրև բայի անբաժան մի մասը, վերածել է թ>տ. և որովհետև բառավերջում չգիտե «է», այլ միայն տ, ուստի թէ դարձել է տտ:

Եթե բայից առաջ, հարցական միջակ ածուն կամ մակբայ կա, թէ մասնիկը ավելորդ է. ինչ.

բօնի՞ հօրի յիք «քանի՞ հոգի էք»,

ի՞նցօ էրիք «ինչպես արեք»

վէօ՞ր մաշտը էգավ «ո՞ր մարդն եկավ»,

հօբօր օր գալ չէյդը, օրի՞ խօսք գուդէյդը «երբոր

գալու չէիր, ինչո՞ւ խոսք կտայիր»:

Ընդհակառակը ասում են

էսա՞ դօմ թէ «այս տամ»,

մէ՞ք թէ «մենք»

դո՞ն գացիր թէ «տուն գնացիր»:

եմ ախպես Ճանիկի շրջանում էլ, ամեն բառ որ հարցա-
կան է դառնում, ստանում է անպայման տոմ մասնիկը. ինչ.

յէ՞ս տոմ «էս»,

հունիս՞ տոմ «այնտեղ» են:

Տրապիզոնի շրջանում կարելի է գործածել նաև թրք. մի՞
մասնիկը. ինչ.

ունի՞ս մի, չունի՞ս մի.

Նույն իսկ կարելի է ավելացնել սրան նաև թէ մասնիկը. ինչ.
ունի՞ս մի թէ, չունի՞ս մի թէ.

Ախպեսով ստացվում է հին հայերենի միթէ ձևը, որ սա-
կայն ոչ մի կապ չունի սրա հետ:

Ճանիկցիք չունին ոչ մի՞ և ոչ էլ մի՞ թէ հարցականները:

351. Բայական մասնիկներ

Հիշելու արժանի են.

ա) ո մասնիկը.—մ'աշտըրոու Վեծանալ, մարդ դառնալ, յէզըրոու Վորթը մեծանալով եղ դառնալ, գովըրոու Վերինջը մեծանալով կով դառնալ, շընըրոու Վալկուսը մեծանալով շուն դառնալ, աշտըրոու Վարդեն աշառ դառնալ, եղ դառնալու մօտ լինել, գաղվըրոու Վփիսիկը մեծանալով կատու դառնալ, տօըրոու Վուլը մեծանալով այծ դառնալ, զընգըրոու Վաղջիկը մեծանալով արդեն կնիկ դառնալ, օջիւրըրոու Վգառը մեծանալով ոչխար դառնալ, ծիյըրոու Վքուռակը մեծանալով ձի դառնալ, ախըզգոու Վփոքրիկը մեծանալով չափահաս աղջիկ դառնալ, էշըրոու Վէշի քուռակը մեծանալով էշ դառնալ, խօզըրոու Վխոճկորը մեծանալով խոզ դառնալ, վոըրըրոու Վընտանի կենդանին անխնամ մնալով վայրենանալ, (հակառակն է դօնընու Վընտանենալ), մօջվոըրոու Վմօջի թխսմայր դառնալ, վառէզըրոու Վճուտիկը մեծանալով վառեակ դառնալ, հավըրոու Վճուտը հավ դառնալ, հաֆըրոու թռչունի ձագը մեծանալ, հէշտըրոու Վկօվի փօքը ձագը հորթ դառնալ են:

բ) տր մասնիկը. — հաքնըվօրու Վհագնվել, հաքըստվօրու Վհագուստները հագներ, դէղավօրու Վտեղավորել, գէյգնըվօրու Վմեկին պատրաստել մեկնելու, գէյգնըվօրվիւ Վպատրաստվել մեկնելու, պաժնըվօրու Վհայրը իր որդիներին բաժանելով առանձին ընտանիք կազմել, պաժնըվօրվու Վնույնի կրավորակներ, հազըրվօրու Վպատրաստություն տեսնել են:

352. Հահախական բայերից հիշատակելի է այն խումբը, որ կազմվում է ըստ մասնիկով. այսպես՝

մանրել—մօնղըռտուշ

կտրել—զըղըռտուշ

փետել—փէղըռտուշ

պատռել—բաղըռտուշ

*պտռել—բըղըռտուշ (մանկիկի թոթովանքը)։

Այս բոլորի մեջ իմաստի, ուժգնություն տալու համար դրված է ո սաստկականը, որի հաջորդ տ բաղաձայնն էլ փոխանակ ըստ օրինի դառնալու դ, դարձրել են տ։

Այլ մասնիկներով են՝

հառչկուշ «յօրանջել»

գօխկըդուշ «կոխոտել»։

353. Թուրքերենից փոխառյալ բայեր

Թուրքերենից փոխառյալ բայերը շատ բազմաթիվ են. ընդհանրապես վերցված են դերբայական ձևով կամ հայերեն ընտել, ըլլուշ օժանդակներով. ինչ.

խապիս ընտել—բանտարկել

յէղմիշ ընտել—գիգել

կայիբ ըլլուշ—կորչել

շաշմիշ ըլլուշ—զարմանալ են։

Շատ ավելի քիչ են այն բայերը, որոնք հայերեն բայական վերջավորություն ստանալով՝ բոլորովին հայացել են և խոնարհվում են հայերեն ձևով. օր.

յէղնուշ կամ յէղմուշ «գիգել», սըխմուշ «սեղմել», բաշընուշ «վերջացնել», պարըշէցընուշ «հաշտեցնել», չօքուշ «ծնրադրել», չալուշ «նուագել», բէջորուշ «գլուխ հանել», տզմուշ «ձգվել, ձմռել», կսնկուրմուշ «համոզել», ղալալուշ «անագաղօծել», դըմըշուշ «խնայել», կավուրմուշ «տապակել», որից օր. կավուրմէցի «տապակեցի», կավուրմիմ ինի «պիտի տապակեմ», կավուրմո «տապակիր» են։

354. Գերբայ

Դարեր շարունակ հայ ժողովուրդը աշխատել է կրճատել իր յծորդությունները. բայց չէր բերել հասել իր նպատակին, որ է

մեկի վերածելն րանց թիվը: Համշենի բարբառը կարողացել է կատարել այդ և ստեղծել է մի միակ անորոշ դերբայի ձև, որ կազմվում է -ուշ մասնիկով: Այսպես սիրել > սիրումշ, խօսիլ > խօսումշ, խաղալ > խաղումշ, հագնիլ > հաքնումշ, առնուլ > առնումշ, թողուլ > թօղումշ:

Ո՞րտեղից է արդյոք ծագում առել այս մասնիկը, որ Համշենի բարբառի ամենից բնորոշ կողմն է կազմում և բաժանում է հայերենի մնացյալ բոլոր բարբառներից:

Հայերենով մեկնել անհնարին եղավ ինձ:

Ինձ թվում է թե հիշյալ մասնիկը փոխառյալ է թրք. իշ (և պրս. իշ) մասնիկից, որ նույնպես բայանուն է շինում. ինչ. թրք. aləş-veriş «առևտուր» (այն է՝ առումն ու տալն), gördüş «իրար տեսնելը», deyiş—doquş «փոփոխումն և փոխանակություն», պրս. āsāyish «հանգիստ, հանգչելն» ևն:

Ձայնաբանօրեն դժվարությունն չի ներկայացնում այն հանգամանքը, որ թրք. iş մասնիկը ունի 1 ձայնավորը և քչ ս: Թրք. մասնիկի թեթև ձևն է iş, որի ծանրն է əş, որ ս, ü, ö, ð ձայնավորներից հետո հնչվում է ս, ü. այսպես օր. şür-üş «հարուածելն», öp-üş «համբուրելն» ևն:

Բայց ավելին ունինք:

Հաղիստանի ժողովուրդը (թուրք և լազ) սովորություն ունի ոչ միայն օ, ս, ալ և ուրիշ ձայնավորներից հետո էլ գործածել ս. այսպես՝

.. թրք. helalləq—լազ. helalluği

թրք. qalabaleq «ամբոխ»—լազ. qalabalugi

թրք. alər-mə-sən «կառնե՞ս» հարցականը լազերը հնչում են alúr-mu-sun, ուր բոլոր ձայնավորները դարձել են ս:

Չգիտեմ թե այսօր Հաղիստանում թրք. əş, iş մասնիկը ինչ ձև ունի. արդյոք ընդհանրապես սֆ ձևն ստացած չէ՞: Ինձ շատ հավանական է թվում: Բայց նույն իսկ եթե չէ, իրավունք եմ համարում ենթադրել որ առաջները այդպես է եղել:

355. Համշենի բարբառի -ուշ մասնիկը կազմելով դերբայ, տալիս է այդ դերբային նաև գոյականի արժեք, որով նա կարող է հոլովվել թե՛ եղակի և թե՛ հոգնակի՝ Ա. հոլովման համաձայն:

Օր.	Ո. Հ. ք'էրուշ	ք'էրուշնին
	Ս. Տ. ք'էրուշի	ք'էրուշնուն
	Բ. ք'էրուշու(-շըն)	ք'էրուշնուն
	Գ. ք'էրուշով	ք'էրուշնէրով:

356. Ստեղծելով -ուշ ձևով դերբայը, Համշենի բարբառը թեև կարողացել է անորոշի բաղմագանությունը վերացնել, բայց ոչ կարողացել է կրճատել խոնարհման ձևերը և ոչ էլ նույն իսկ դերբայի զանազան բնիկ ձևերի գործածությունը խալառ վերացնել: Ընդհակառակը ոչ միայն լծորդությունները մնում են, այլ և մնում է Դ լծորդությունը, որ ուրիշ ամեն տեղ ջնջված է: Մնում են նաև -ել ձևով անորոշի ուրիշ մի քանի գործածություններ, որ կտեսնենք քիչ հետո: Այս պարագային -ուշ դերբայի ստեղծումը պատճառ է դարձած լինում դժվարացնելու անմիջապես որոշել թե բայը որ լծորդության է պատկանում և ինչ ձևով պետք է խոնարհել: Սրա համար պետք է դիմել ուրիշ միջոցների, ինչպես կտեսնենք քիչ հետո:

357. -ուշ վերջացող անորոշ դերբայը միանալով պէս բառի հետ, ցույց է տալիս, անմիջական գործողություն. օր.

- Յասնուշին քէս—հենց որ հասավ
- պէրուշին քէս—հենց որ բերավ
- ուղուշին քէս—հենց որ կերավ
- ուղուշիս քէս—հենց որ կերա
- ասուշիդ քէս—հենց որ ասացիր
- լսուշնուս քէս—հենց որ /մենք լսեցինք:

Միավանկ բայերը (գալ, տալ, լալ) այս դեպքում ստանում են ոչ թե -ուշ ձևը, այլ -ալ ձևը. ինչ.

- կալուն քէս—հենց որ եկավ
- դալուս քէս—հենց որ տվի:

Արդեն վերը տեսել ենք -ուշ ձևի գործածությունը շարունակական ներկա և անկատար կազմելու համար (§ 328—9):

358. -ուշ ձևի դերբայը կազմում է նաև մի տեսակ մակբայ. ինչ.

- իմ կիդէնուշովրս—իմ կարծիքով
- իմ լսուշովրս—իմ լսածի համաձայն
- իմ իմընուշով—ըստ իս: *

-ել ձևով սովորական դերբայները կենդանի են մնում հետևյալ դեպքերում.

Ա) Թրք. -իկըն (آیken) մասնիկի մոտ, որ այս դեպքում միանալով դերբայի հետ նշանակում է ժամանակը. ինչ.

ուղէլն իկըն «ուտելու միջոցին»
պէրէլն իկըն «քերելիս»
դօնէլն իկըն «տանելիս».

կարելի է նաև ստացական հոդերով ասել՝
ուղէլս իկըն «երբ ես ուտում էի»
ուղէլդ իկըն «երբ դու ուտում էիր»
ուղէլնիս իկըն «երբ մենք ուտում էինք»
ուղէլնիդ իկըն «երբ դուք ուտում էիք»:

Բ) Այս նույն դերբայի վրա ավելացնելով ուչ «ոչ» մակ-
բայը և միացնելով թրք. *iken* մասնիկին՝ ստացվում է մի
տեսակ բացասական. ինչ.

փօրէլուչիկըն «դեռ չփորած»
գարէլուչիկըն «դեռ չկարած»
լվընալուչիկըն «դեռ չլուացած»
էպէլուչիկըն «անեփ տեղը, դեռ չեփած» ևն:

Գ) Արգելականի կազմության մեջ. ինչ. մի՛ խաղալ, մի՛
լսէլ, մի՛ խօսիլ, մի՛ հաքնիլ, մի՛ մըղնուլ և սրանց օրինակով՝
մի՛ խաղոք, մի՛ լսէք, մի՛ խօսիք, մի՛ հաքնիք, մի՛ մըղնուք:

Դ) Կա նաև ուզել բայի հետ գործածության մի ձև, որ
ավելի սովորական է Տրապիզոնի շրջանում. — ինչ. կուզիմ՝ հէղդդ
խօսիլ:

Ե) Պէս բառը միավանկ բայերի հետ գործածելու դեպքում,
ինչպէս տեսանք § 357

Ձ) Բացասական բայի սահմ. ներկայի անկատարի կազմու-
թյան ժամանակ § 343

Է) Մակբայի այն ձևը որ ուրիշ բարբառներում կազմվում
է բացառականով և գործիականով, կա նաև այստեղ. ինչ.

ուղէլը՝ն գէշուս «ուտելէն կերթայ»,

բայծիննալըն (կամ բայծիննալով) խօսի գու «պարծենա-
լով խոսում է».— Բայց սրանց իրահատուկ գործածությունը
հետևյալ ձևով է.

էշտալը գուղտ «գնալու ժամանակ ուտում է».

խօսէլը բայծիննա գու «պարծենալով է խօսում»:

359. Ներկա դերբայը թեև ծառայում է կազմելու ապառնի,
բայց և այնպես պահում է իր բուն ժամանակը. ինչ.

պէրօղը պէրավ, էշտօղը կնաց, էգօղը էգավ... բայց պէրօղ

իմ «պիտի բերեմ», էշտօղ իմ «պիտի երթամ», էգօղ իմ «պիտի գամ» են:

Անցյալ դերբայն էլ կարող է ստանալ թրք. *iken* մասնիկը և ցույց է տալիս ժամանակը. *ինչ*.

ցօնած իկըն, դարած իքըն, աստած իքըն:

Անցյալ դերբայը իբրև ածական դրվում է գոյականից առաջ և այս դեպքում ստանում է դիմորոշ հոգ, որ ստացական երևույթ ունի. *ինչ*.

դէսած մ'աշտս (իմ տեսած մարդը)

գէրած հացդ (քո կերած հացը):

Անցյալ դերբայը ունի առանց էական բայի գործածության մի ձև, որ ուրիշ բարբառներում չկա. այսպես՝

Ըն ասաց ամա, տուն լսած էչ:

Ընէր պէրին ամա, տունը առածք էչ (տես վերը § 349).

Տուն խաս աշկալջի էյդ նա, հօնած շիղսգ «եթե դու լավ նկարիչ էիր, շիտակ նկարէիր»:

Տուն տո բէտկը թորգի էյդ նա, զարած թէմիգ:

Յէս տէսած չունէյ նա, տուն դէսած:

Անցյալ դերբայը սեռ.—տր. հոլովածևով միացած պէս բառի հետ ցույց է տալիս անմիջական գործողություն. *ինչ*.

աստածիս բէս փախա «հենց որ ասացի՝ փախայ»

առածին բէս գէրավ «հենց որ առավ՝ կերավ»:

360. Ապառնի դերբայն է -լու և -լիք ձևով, որոնք գործածվում են ավելի սակավ քան ուշի. օր.

ասուշի պօն ունի՞ս տո

ասէլիք պօն ունի՞ս տո

(ասէլու պօն ունի՞ս թէ Տր.):

Նույն -ուշ դերբայը միանալով տի (<դի «կողմ») բառի հետ՝ կազմում է ապառնի դերբայի մի ձև, որ ցույց է տալիս քիչ հետո կատարվելու գործողություն. *ինչ*.

մէռնուշի տի յո «մեռնելու վրա է»

էպուշի տի յո «մոտ է ելավելու»

թուռշին ըլլուշի տի յոր «թթուն հասնելու վրա էր»:

դօնծէրը նասնուշի տի էյնը «տանձերը հասնելու վրա էին»:

361. Առաջ, քէզմէ առաջ, տստի առաջ «արանից առաջ», առաջվօն «առաջվա», առաջը՝ն «առաջից, առջևից»:

Այլի «առաջի», այլիվ, այլէվ, այճէվ «առջև», իմ այլէվս, քու այլէվդ, ընու այլէվը, միւր այլէվը, այլէվէս... այլի դիյս Մ «առջև»:

Պօլէր «շուրջը». Ձառէց մը ոլօլէր «ծառի մը շուրջը»:

Պօլօյդիքը «բոլորտիքը, շուրջը»:

Տէմ «դէմ», միյ (քու, ընէց) տէմ խօսի դու, տիմը «դէմը», տէմ-տիմաց, տիմացը, միյ դօնը տիմացը:

Տիմնիստու «դէպի», ձառին տիմնիստու «դէպի ծառը», դօնը տիմնիստու «դէպի տունը», կամ հաւ դումնիստու «դէպի տուն», ձառնիստու «դէպի ծառը», տուննիստու «դէպի դուրս»:

Դիու Մ, տու ծ «դուրս», տու կնաց «դուրս դնաց», տուսը՝ն էզավ «զրսից եկավ»:

Էդէվ «ետևը», էդէվը՝ն «ետևից», դօնը էդէվը «տան ետևը», էդիվ, էդէվ, էդեվ Մ «յետոյ»:

Հօմար, հումար «համար, վասն», էսու հօմար «սրա համար», Խնչ հօմար, Խնչ օմար «ինչև համար»:

Հէռու, սեռ. հէռվի, ինձմը՝ն հէռու, դընը՝ն հէռու «տնից հեռու», հացը՝ն հէռու (առացված է. «հեռու սուրբ սեղանից» նշանակությամբ):

Հիդ Մ, հէդ ծ, հէդս, հէդտ, ընու հէդը «սրա հետ», միւր հէդը:

Մէչ՝ Մ. և Տ. իսկ ծ ջնջված է՝ չըփոթելու համար մէչ «մէջք» բառի հետ. փոխարենը գործ է անվում նէս. օրինակ՝ միյ նէս «մեր մեջ», ծովումն նէս «ծովի մէջ, ծովում», փօրումն նէսը «փորի մէջ», աչքին նէսը «աչքի մեջ, աչքում»:

Հնչուգ (հնճուգ) «մինչև», հնչուգ տսօր «մինչև այսօր», հնչուգ դուն «մինչև տուն», որ և ընչար. ինչ. ընչաք իրիգուն «մինչև երեկոյ»:

Մօդ «մօտ», իմ մօդ արի «ինձ մօտ արի», քու մօդ կօ՞մ թո «քեզ մօտ գամ». — արի մօդս. — յգ. մօդվին «մօդերը»:

Մօդիգ «մօտ, մօտիկ». ինձի մօդիգ տ, քէզի մօդիգ տ. մօդիգս արի:

Յէտկը «յետոյ», էրգու օմիս յէտկը «երկու ամիս հետո»
էտկը՝ն գուկօմ «հետո կուգամ»:

Աշէլօվ «նայելով, համեմատ, համեմատութեամբ». ընու
աշէլօվ իսա մէձ տ «նրա համեմատութեամբ սա մեծ է»:

Նիս Մ., նէս Ճ «ներս», նէսիտիս, նէսիտիդ, նէսիտին
«ներսի դիս...», նէսը՝ն տուս «ներսից դուրս», նիստնէս «ներսից
ներս»: Տես նաև վերը մէջ:

Նէրքիվր Մ, նէրքէվ Ճ «ցածը, վարը». նէրքէվ կնաց, նէր-
քէվը՝ն էգավ:

Չար «չափ», իմչաք, քուչաք, միյչաք, թաչաք «այսչափ»:

Հէօյստի, չէյստի «չուրջը, չորսդին», չէյստիս, չէյստիդ, չէյս-
տին, յգ. իմ չէյստիօնս «իմ չորս կողմերս», ընէց չէյստիօնը
«նրանց չորս կողմերը»:

Բէս «պէս, նման», Մալայուս ասվում է դէս «նույն նշ.»
օր. իմ բէս, քու բէս, ընու բէս, միւր բէս «մեկ պէս», ծիր բէս
«ձեզ պէս», ընէց բէս «նրանց պէս», մաշտու դէս «մարդու նը-
ման», գօվու բէս «կովի պէս» են:

Վէր Տ., վոր Մ. Ճ. «վար, ի վայր», թատի վոր «դրանից
ցած», թատիվոր «այստեղից ցած», ընդիվոր «այն տեղից ցած»,
իստեղը՝ն վոր «այդտեղից ցած», վոյնիվոր «դեպի ցած», վո-
րը՝ն էգավ «ցածից եկավ», վորիվիր «ցածրից դեպի վեր», իսկ
վորէրը «ստորինները»:

Վիր «վերև, վեր», վիր կնաց «վերև գնաց», վիրը՝ն «վերե-
վից», վիյնիվիր «դեպի վերև», վէրը՝նվոր «վերևից դեպի ցած»,
վէրիվոր «վերևից ներքև»:

Վրա «վրայ», վրոս, վրոդ, վրը՝ն «վրաս, վրադ, վրան»,
վրընիս, վրընիդ, վրընին «մեր վրա, ձեր վրա, նրանց վրա», միւր
վրընին, ծիր վրընին «մեր վրաները, ձեր վրաները», վրահոս
կամ վրայոս «իմ վրայից», վրահոդ կամ վրայոդ «քո վրայից»,
վրահըն կամ վրայըն «նրա վրայից»: Շատ սղված ձևով՝ վրն
«վրա», վահըն «վրայից». ինչ. ձառին վըն էլավ, ձառին վահըն
ինչավ:

Դազ «տակ», դազը «տակը», ծնին դազ «ձեան տակ»,
դազը՝ն «տակից», դազնինտուս «դեպի տակը», դազէրը «տա-
կերը»:

Դէդ «տեղ, փոխանակ». օր. շոքորի դէդ մէզըը, ախաօյս
դէզը մաշտ տ:

Բօվ «քով, մօտը», քօվս, քօվդ, քօվը, միւր քօվը, քօվէյս,

քօվէյդ, քօվէրը. քօվը՛ն օնցավ, պարէվ չդվավ «կողքից անցավ, բարև չտվեց»:

362. Կան նաև թուրքերենից փոխառյալ նախադրություններ. ինչ.

դայրի կամ դայիր «բացի». օր. ինձմո դայրի, քիզմո դայրի, հացը՛ն դայիր «բացի հացից», թատի դայիր «բացի դրանից», է քուցվընը՛ն դայրի «էգուցվանից բացի», հալվընուս դայրի «բացի մեր շորերից»:—Քիչ անգամ տեղ տեղ պատահում է զառ «բացի»:

յօնը «քովը», յօնին, յօնունքը, յօնէրը.

դղար կամ ավելի շատ՝ շրջամա՛ր՝ դղար «չափ». ինչպես օր. ցօյնի դղար «ցորենի չափ», լազդի դղար «լազուտի չափ». Կազմում է նաև մակբայ և այն ժամանակ ավելի գործածական է դղար շրջյալ ձևով. ինչ. թատըղար կամ թաղըղար, թոտըղար, ընդըղար, ընդըղար. օրինակ՝ թաղղար խօսեցա «այսչափ խոսեցա», նաև հյ. հոմախիշի հետ բարդված՝ թաղղալչափ «այսչափ», թոտղալչափ, ընդղալչափ «այդչափ, այնչափ»:

363. Նախադրությունները կարող են հորովվել և ստացական հոգ էլ ստանալ. ինչ. վրոս, վրոռ, վրը՛ն (սրանցից առաջին երկուսը ներկայացնում են վրայս, վրայդ, ուր այ>ո, երբորդը՝ <վրայն, ուր այ դարձել է ռնգականի մոտ ը § 54), վրընիս, վրընիդ, վրընին ևն ևն:

Հոգնակին կազմվում է 7 ձևով. բացի սովորական «էր» ձևից, կարող են նախադրությունները ստանալ նաև վի, նի, ունը, դունը, օնը և օն հոգնական ձևերը: Այս մասնիկները բոլորին հասունկ չեն, այլ միայն մի քանիսին. ինչ. մօղվին «մօտերը», դազվին «տակերը», նէսվին «ներսերը», քօվվին «քովերը», նէսնին «ներսերը», տուսնին «դրսերը», դազնին «տակերը», նիսունը, տուսունը, վրահունը «վրաները», դազունը «տակերը», արահունը, արըդունը (թրք.) «արանքները, մէջտեղերը», յօնունը «կողքերը» (թրք.), վրըդունը «վրաները», օրթըդունը «մէջերը» (թրք.), նիսունը «ներսերը», տուսունը «դրսերը», դազունը «տակերը», ևն:

Այս բոլորի մեջ ավելի հետաքրքիր է օն ձևը, որով ունինք նէսունը, նիսունը «ներսերը, մէջերը», դազունը «տակերը», վրունը «վարերը, ցածրերը», վիրօնը «վերևները, վերերը», տուսունը «դքսերը», օրթըդունը (թրք.) «մեջտեղերը»:—Հայտնի չե թե այս օն-ը, որ ներկայացնում է ան ձևը, ինչ ծագում ունի. արդյոք

ադրգապիս ձևացած է -անը մասնիկից՝ ք-ի հապավումով, թե նույն այն հոգնակերտ մասնիկն է, որով ունինք իշան, ծիան> Հմշ. իշօն, ծիօն, որ և կենդանի է նրեանի բարբառում և որ համարվում է փոխառյալ պրս. 31 an հոգնակերտ մասնիկից:

364. Նախդիրներից գործածական են երբեմն ի և գ. ինչ. ուրինքը զուրինքը գէրօն «իբար զիբար կերան», իրար զիրար ըսպօննէցին «իբար զիբար սպանեցին», վոյնիվոր «վերեից դէպի ցածը», խէօյն ի վոր չիտրն ի վայր», կէղնի վոր «դեպի ցած՝ գյուղը», կէղն ի վիր «վերև դէպի գյուղը», քոնն ի վիր «սարն ի վեր», սարն ի վիր «անտառն ի վեր», ծէօյն ի վոր «ձորն ի վայր», ծէօյն ի վիր «ձորի միջով դեպի վեր», տայն ի վոր «դարն ի վայր», տայն ի վիր «դարն ի վեր», ցօրէննէցն ի վիր «վերև դեպի ցօրենների արտերը», դէղնիդէղը «հենց նույն տեղը» են: Իսկ ներգոյականի ձևը որ ներկայանում է մեզ այժմ արականի նման, հենց գրաբարի ներգոյականն է զրկված ի նախդիրից. ինչ. խօնութին նստած է= ի խանութին նստած է:

13. Մակբայներ

365. Ղլ «այլ ևս», ու մի կալ, ու կալ մի, ու կաս է՛չ. Օմհօն «ամառը»:

Օմստ օմիս «ամսէ ամիս»:

Ղստին, տտտին, ընտին «այստեղ, այդտեղ, այնտեղ» (դադարում ցույց տալու համար). որ և էստին, էստին, էնտին Տբ., բց. էստիէն, էստիէն, էնտիէն:

Ղստուս, տտտուս, ընտուս, որ և իստուս, իտտուս, ինտուս «այստեղ, այդտեղ, այնտեղ (շարժում ցույց տալու համար)»:—Գիւլէսէրեան, Բիւր. 1899, 511 իստուտ մեկնում է գրբ. աստուստ ձևից.—Սրանց դեմ կան նաև՝

Ղստէղ, տտտէղ, ընդէղ «այստեղ, այդտեղ, այնտեղ», որոնք գործածական են թե դադարում ցույց տալու համար և թե շարժում: Այժմ ավելի շատ գործածական են տտտէղ, տտտէղ, ընդէղ ձևերը: Այսպեսով մենք ունինք մի կենդանի օրինակ գեղեցիկ կերպով ցույց տալու համար, թե ինչպիս լեզուներից վերանում է դադարման և շարժման տարբերությունը:—Ծիշտ այս ընդհանուր գործածությունն ունին նաև հօզ, հօղ, հուն կամ հօզա, հօղա, հունա կամ հօզտտտէղ, հօղտտտէղ, հունընդէղ «այստեղ, այդտեղ, այնտեղ»: Օր. հուն է. հուն կնաց. հունընդէղ գրադ լուսնի գու «այնտեղ կրակ է վառվում», հունընդէղ նէղվիմինի «այնտեղ պիտի ցատկեմ»: Սրանք կարող են հոլովվել.

ինչ. հունէն, հունը՛ն, հօղէն, հօղըն, հօղէն, հօղը՛ն, էստէղէց Մ,
աստէղը՛ն Ճ: Այս չորս շարքերից դուրս կան նաև հինգ ուրիշ
ձևեր, որոնք են՝

հօգաստու, հօգընտու, հօդտտու, հօդընտու, հունընտու:
Սրանց մեջ *տ*, *ը* ձայնավորները կարելի է վերածել նաև *ի*, որով
կունենանք հինգ նոր ձև. այսպէս՝

հօգիստու, հօգինտու, հօդիտու, հօդինտու, հունինտու:
Սրանք նշանակում են «դեպի այստեղ, դեպի այդտեղ, դեպի
այնտեղ» կամ նաև «այստեղով, այդտեղով, այնտեղով»:

Ծանոթ.— Հօգ ձևը համապատասխանում է ուրիշ բարբառ-
ների հոս ձևին, բայց *ս* վերջածայնը հարմարվելով մյուս եր-
կուսի դ, ն թրթռուն վերջածայներին, ինքն էլ վերածվել է գ:

Հօգ, հօդ, հուն մակբայները կարող են ստանալ նաև ստա-
ցական հոդ և ձևացնում են՝

հօգիսը	«իմ այստեղ ունեցածը»
հօգիդը	«քո այստեղ ունեցածը»
հօգինը	«նրա այստեղ ունեցածը»
հօգիսը	«իմ այդտեղ ունեցածը»
հօգիդը	«քո այդտեղ ունեցածը»
հօգինը	«նրա այդտեղ ունեցածը»
հունիսը	«իմ այնտեղ ունեցածը»
հունիդը	«քո այնտեղ ունեցածը»
հունինը	«նրա այնտեղ ունեցածը»
հօգինէքը	«իմ այստեղ ունեցածները»
հօգինէքս	
հօգիսէքը	
հօգինէքդ	«քո այստեղ ունեցածները»
հօգիդնէքը	
հօգիդէքը	
հօգինէքը	«նրա այստեղ ունեցածները»
հօգիննիս	
հօգիննիդ	
հօգիննիդ	«(մեր) այստեղ ունեցածը»
հօգիննիդ	
հօգիննիդ	
հօգիննին	«(ձեր) այստեղ ունեցածը»
հօգիննին	
հօգիննին	
հօգիննին	«(նրանց) այստեղ ունեցածը»
հօգիննին	
հօգիննին	
հօգիննյս	«իմ այստեղ ունեցածները»
հօգիննյս	
հօգիննյս	
հօգիննյդ	«քո »
հօգիննյդ	
հօգիննյդ	
հօգիննը	«նրա »
հօգիննը	
հօգիննը	
հօգինէքս	«իմ այդտեղ ունեցածները»
հօգինէքս	
հօգինէքս	

հօդինէքդ	}	«քո այդտեղ ունեցածները»	
հօդիդէքը			
հօդինէքը	«նրա	»	»
հունինէքս	}	«իմ այնտեղ	
հունիրսնէքը		»	»
հունինէքդ	}	«քո	
հունիդնէքը		»	»
հունինէքը	«նրա	»	»
հօդինէյս	}	«իմ այդտեղ ունեցածները»	
հօդիսնէքը			
հօդինէյդ	}	«քո	
հօդիդնէքը		»	»
հօդինէքը	«նրա	»	»
հունինէյս	}	«իմ այնտեղ ունեցածները»	
հունիրսնէքը			
հունինէյդ	}	«քո	
հունիդնէքը		»	»
հունինէքը	«նրա	»	»
հօդիննիս	«մեր այդտեղ ունեցածը,-ները»		
հօդիննիդ	«ձեր	»	»
հօդիննին	«նրանց	»	»
հունիննիս	«մեր այնտեղ	»	»
հունիննիդ	«ձեր	»	»
հունիննին	«նրանց	»	»

Ստացական հոդերի հետ կարող են միանալ նաև ցուցական հոդերը և այն ժամանակ կազմում են հետևյալ 12 նոր ձևերը.

հօդիսս	«իմ այնտեղ ունեցածը»	
հօդինս	»	»
հօդիսդ	«քո	» ունեցածը»
հօդիդդ	»	»
հօդինդ	»	»
հօդինս	«իմ այդտեղ ունեցածը»	
հօդիդդ	«քո	»
հօդինդ	«քո	»
հունիսս	«իմ այնտեղ ունեցածը»	
հունինս	«իմ	»
հունիդդ	«քո	»
հունինդ	«քո	»

Փոխանակ Վոս, հոգ, հոն» բառերի կարելի է կադմել «այս-
տեղ, այդտեղ, այնտեղ» բառերով և կատանանք հետևյալ ձևերը.

տատէղունս, տատէղունդ, տատէղունը
տատտէղունս, տատտէղունդ, տատտէղունը
ընդէղունս, ընդէղունդ, ընդէղունը
տատէղունէքս, տատէղունէքդ, տատէղունէքը
տատտէղունէքս, տատտէղունէքդ, տատտէղունէքը
ընդէղունէքս, ընդէղունէքդ, ընդէղունէքը

Ղսօր, տղօրը, ընօրը, տսօրէրը ևն.

Առաջ, առաջուց, առաջվընտ, առաջվօն, այչէվտ, առաջվը-
նէրը, առաջէն, առաջը՛ն, առաջմէն կամ առաջմըն «նախապէս».

Այլի օրը,

Այլէվ, այլէվը, այլէվըն, այլէվօվը:

Ղկուց, էքուց, էքունց Մ «վաղը»:

Ղկը՛ն «այդուն, առավոտը», տկվօն կամ էքվօն, տկվընտ
կամ տկվըմտ, էքվընէ «առտուն», տկվընօվ, տկվընցու «առավո-
տը», տկվընցվըմտ, տկվընցուէրը «առավոտները», տկվընօք
«առավոտը շուտ»:

Ղկընը «քիչ առաջ»:

Ղսմուն, տղմուն, ըմուն կամ իմուն «այսպէս...» (Տր. էսմօն,
էդմօն, էմօն).

Ղստի յետկը «սրանից հետո»:

Իսաղէղը, իդաղէղը, ինաղէղը, հօղախատէղ, հողախատէղ,
հունախնդէղ.

Ղստըղար, տտաղար, ընդըղար,

Ղսքան, տաքան, ընքան,

Ավէլի, ավէլի-բազաս:

Բուն. — արտասանվում է պուն և ի նախդիրով միանում է
նախորդ բառին, որ լինում է սովորաբար ժամանակ արտահայ-
տող բառ. ինչ. դարին ի պուն, կիշէրն ի պուն, օրն ի պուն,
տկընն ի պուն, ցօրէզն ի պուն «ամբողջ տարին, ամբողջ գի-
շերը...»:

Դիշիրը Մ, կիշէրօվ, կիշէրվօնցու «գիշերային»,

Տարիվտը, տարիվիր,

Տէմ՛, տիմաց, տէմ-տիմաց, տիմացտ տիմաց,

Տուս, տուսը՛ն, տուսունք «գրքերը»,

էղօյտ «նախորդ օրը» (Բիւր. 1899, 604).

էղէվ, ոստիվէղէվ, էգվօնց,
Յէփ, յիփ, յէփու կամ յէփօնէ, յէփօն, յէփօնու, հօփօթօր
«երբոր որ»,

էրէսօնց, էրէսկ «ոչ-խոր»,

էրէգ, էրէգվօն, էրէգ չո ալչի օրը, էրէգ չո մէգէլ օր Տր.

իրիզունը, իրիզվընէ, իրիզվօն,

էշտալօվ «հետզհետէ»,

իժիր Մ «միշտ».

ի՞նդօ, ի՞նցօ «ի՞նչպէս», բա՛ի՛նցօ «այո՛, իհարկէ, si!» . նաև
ի՛նչօ Մ. առաջանում է թրք. սօյ պեղ, կերպ» բառի բարդու-
թյամբ. և ցույց է տալիս որ Ախց. ինչիս բառն էլ ծագած է
ի՛նչցնդ ձևից:

ի՞նչ, ինչո՛ւ հօմար «ի՛նչ բանի համար», ի՛նչ հօմար «ի՛ն-
չո՛ւ», օրի՛նչ «ի՛նչո՛ւ» <որ ի՛նչ:

ինչի մը Մ «մի քիչ».

ի՞նչ դրդար, ի՛նչադդար «ի՛նչքան».

իսկի «բնաւ».

Ձորոճոր «ծայրից ծայր».

լօգօր, լօգէօր, լօգէր <լոկ որ «քիչ առաջ, հենց հիմա». օր.
լօգէօր էգալ.

Գօմաց, գօմաց գօմաց, գօմաց մը.

Գէսինտ «մի՛նչև կէսը».

Գէսվազէս «կես առ կես».

Գօմօն Մ, գօմօր Ճ. «քիչ էր մնում» (այս այն բառն է որ
Հայկունի, Արրտ. 1892, 432 գրում է «կոմոյ թէ» և թարգմանում
է «հազիւ հազ» . կոմոյ թէ դուն հասօնը. բայց նույնը էջ 433
կոմոյ թէ լէյի «քիչ էր մնում լայի»):

Հա «այո».

Հադ հադ, հադիւ հադիւ.

Հիդդար «միասին».—էշտօնք.

Հը՞հ (ի՛նչ է. չլսելու դէպքում).

Հէրիք «բավական».

Հէռու, հէսվօն, հէսուլը՛ն.

Հէրու, հէրվի, հէրվօն, հէրվընո, հէրվընու.

Հէղնունէղը «իսկույն և եթ, նոյնհետայն».

Հիմի, նմի, հմիզվօն, հմիզվօնու, հմիզվընուց.

Ծմոն «ձմառնը»

Մաշնազ «լափ». մաշնազ գաշտն «լաւ կարգա»:

Մէզըն «յանկարծ», մէզընմէզ
 Մէկնէկ «միասին»
 Մէգ՝տօր, միգ՝տօր «մէկալօր»
 Մէզ-մէզ «մի առ մի. 2. երբեմն երբեմն»
 Մէգտի, մէգտիօնը «մի կողմերը»
 Մէմոլ «մէկէլ, դարձյալ», միգտլ «մյուսը»
 Մէմոլ աշէս «հանկարծ»
 Մի՛ (արգելական). մի աշէլ, աշէլ մի, միք աշէլ, աշէլ միք
 «մի նայիր...»
 Մըմնագ, մէն-մէնագ, մըն-մըննագ
 Հնչուկ «մինչև», հնչուկ օր «հաղիվ»
 Մօր, մօղիգ, մօղիգօնց, մօղիգվօն
 Երու «յայակոյս», նոդ «յայդկոյս», նըն «յայնկոյս» [Տր.
 նէս, նէդ, նէն]
 Յիդ, յէդ (օր. յէդ տառցի)
 Յէտկ, յէտկը, էտկըն էտկըն,—էտէտիկն (որոշեալ ձև) «յետի
 դին, ետեր»
 Ենս, Ենսը, նէսը՛ն, նէսէրը, նիստնէս
 Եօրը՛ն «հենց նոր. 2. դարձյալ».
 Եօսըր քիչ անգամ, հազվագիւտ կերպով, rarement. օր.
 նօսըր դէսնունք դու իրար:
 Եադ, շադ մը, շադ մը քիչ մը, քիչ մը շադ մը, շադէօդ
 «շատկեկ, բավական շատ», շադվընտ «վաղուց», շադ
 շադ «առառապելին»
 Եադը «առապելապէս, մանավանդ». շադը քու հօմար էգա:
 Եադվընօր «վաղուց, շատ ժամանակ առաջ»
 Ըմըն սրըա «շարունակ, միշտ»
 Եդնագը, շդագը աստաձ «ճշմարիտն ասած»
 Եիդգո շիդագ «ճշտիվ»
 Օրի՞ «ինչձև», օրի՞ էգար
 Ուգէս չուգէս «կամայ ակամայ», որ և ուգէս—ուգէս էօչ,
 ուգո չուգո
 Ուշ. օր. ուշ մնաց. ուշ էգալ
 Մէօր «մէր». նէօ՞ր գէշտաս (շարժում)
 Վօ՞յդէիս, վօյդըիս «մէր» (դադարում). վո՞ւստի կամ վո՞ւյ-
 գէդէն Տր. վօ՞յդըիսըն «ո՞րտեղից».—հին ժամա-
 նակ գործածվում էր նաև նիւրը՛ն «ձրտեղից»:
 Մէօր կամ նիւր Մ «ո՞ւր, դեպի ո՞ւր». բառի ծագումը

պետք է բացատրել հետեյալ ձևով:—Ո՞ւր դարձել է էօր կամ իւր: շարժում ցույց տալու համար բարբառոս գործածում է ն նախդիրը: այսպէս ունինք նուս «յայակոյս, դէպի այս կողմ», նուդ «յայդկոյս, դէպի այդ կողմ», նըն «յայնկոյս, դէպի այն կողմ»: Ըստ այսմ էլ ավելանալով նույն նախդիրը էօր, իւր բառի վրա, ստացվում է նէօր կամ նիւր:—Համշնի բարբառը շատ լավ է տարբերում շարժում ցույց տալու գաղափարը դադարում ցույց տալու գաղափարից: Ուստի այս բառի հետ կա նաև վօ՞յդէխ, վօ՞յրըխ (դադարում ցույց տալու համար):—Բառիս հնագույն ձևը (նուր) դեռ գործածական է, բայց հազվագիւտ. միջին սերունդը ասում է նէօր, նիւր. նոր սերունդը նի՞ր, նէ՞ր.—որոշ բաղաձայնների մօտ (§ 208) դառնում են նիյ, նէյ, նույ, նէօյ, նիւյ:

Ունինք դարձյալ նէ՛րինտուս «դէպի ո՞ւր»․ օր. նէ՛րինտուս գէշտաս «դէպի ո՞ւր կերթաս»:—Ըստ այսմ պատահական է Թրք. nere «ո՞ւր» հոմանիշի նմանությունը:

Զէ, օշ, չո «ոչ»․ Զո քի յէս «ոչ թէ միայն ես», օշ էգաւփօշ կնաց:

Զըլի թո «չինի թէ, մի գուցէ»

Զէօյստին, չէօյստիօնս, չօյս մէգ Թարաֆը Մ.

Բիջիգիքը՝ն «մանկուց», բիջիգուց, բիջիգվընու

Խսուրէս, իգուրէս, ընուրէս, տսուրէս, տղուրէս, ինուրէս

Հսրքո թո «սեպէ թէ, համարեան»

Սըյդվօնց «սրտանց»

Պգէլը՝ն, Թռէլը՝ն «վաղելով»

Վոր «ի վայր», վորը՝ն, վորունքը, վորունքը՝ն, վորունքմը՝ն

Վիր, վիրը՝ն, վիրունքը, վիրունքը՝ն, վիրունքմը՝ն. սրանից՝ իսիվիր, իգիվիր, ինիվիր կամ ընիվիր «այստեղից դէպի վերև...»

Վրա, վրըն «վրան», վրահը՝ն «վրայից», վրայունք, վրահունք, վրայունքը՝ն, վրահունքը՝ն. օր. վրահը՝ն նէգփո «վրայից ցտկիր»:

Դազը, դազը՝ն, դագունքը, դագունքը՝ն, դագունքնուն «տակերից».

Դարվոդարի «տարուց տարի»

Դէդ, գէդնիգէդօք, գէդնուգէդը, գէդ գէդ, վէր մը գէդ «որոշ տեղեր»

Դօդիգ-դօդիգ «մանրաքայլ»

Յօրիգին «ցորեկին».—էգալ

Փօխնիփօխ «փոփոխակի»

Փշէրք մը «մի փշուր», փսէր մը «կտոր մը»

Քօնի՛. օր. քօնո՞ւ գուդօն «քանիսի՛ կտան»:

Քիչ, քիչ քիչ, քիչիգ, քիչիգ մը, քիչ մը, քիչ-շաղ, քիչ
մը-շաղ մը, շաղ մը-քիչ մը.

Քօվ, քօվորքօվ, քօվը՛ն, քօվունքը, քօվնիվոր «դէպի վար
նրա մօտ», քօվնիվիր «քօվնիվեր դէպի նրա քով»,
քօվնինտուս «դէպի նրա կողմը».

Օսկօ «ահավասիկ», օթկօ, օտկօ «ահավաղիկ», ընգօ «ահա-
վանիկ» ներկայացնում են պարարի երեք աստիճանները:
Բնականաբար կազմված են այս, այդ, այն ցուցականներից+
կօ, որ անգականից հետո դառնում է զօ: Չեմ գտած հօսկօ,
հօտկօ, հօնգօ ձևերը, բայց կա հրն, որ անհայտ իմաստով գոր-
ծածական է. ինչ. Աստին հը՛ն թէ միք էշտալ «ասացին թէ մի
գնաք». իրաց հէդ ուլմիշ կօնք հը՛ն ու «իրար հետ համաձայ-
նության գանք և...»: Այս անորոշ իմաստով հրն բառն է ահա,
որ միանալով ու շաղկապի հետ, ձևացրել է հնու «և» ձևը, ինչ-
պես և միանալով որ շաղկապի հետ՝ կազմել է հնօր, հնօյ «որպես-
զի»: Օր. դափնին գու, հնօր գընձնէրը ջիպ փշօրքին «տափանում
են, որպեսզի գուդձերը բոլորովին փշովին». հնօյ լազղը թէմիզ
ըլի «որպեսզի լազուտը մաքուր լինի»:

Օրոտ օր, օրէցօր, օր մը օրէց, մէգ օր մը. զօրը «ցերեկով»:

366. Թուրքերենից փոխառյալ մակբայներ

Ախրի «ի վերջոյ»

Անջա, անջար «հաղիվ. 2. դեռ նոր». անջա տատղար մը
ըղավ «հաղիվ այդքան եղավ»:

Աջար «արդդք».

Արտուկ «այլ ևս»

Աքըր արքէ՛թ «վերջապես, վերջ ի վերջոյ»

Բաշկա «բացի» (օր. գաթը՛ն բաշկա «բացի կաթից»). 2
առանձին, ջոկ. բաշկա նստած ո

Պարի «գոնէ»

Բէդիհավա «ձրի»

Բոլկի «թերևս»

Բիլոտ «մինչև անգամ»

Բիրդոն, բիրդոնբիրո, բիրլանբիր «հանկարծ»

Դօք, գէօք «բոլորովին». գէօք մէռօն «բոլորը մեռան»,
գէօք գօգրէցօն.

Դօյտ թո «իբր թէ»

Դահա «գեռ, տակավին»

Դայմա «միշտ»

Դէ՛ «մինչև». նույն բառն է էղէք Մ.=ըդակ Հ. «մինչև». օր.
էղէք ցօրէգ Մ.=ցօրէգ ըդակ «մինչև կէսօր». ձօֆն ըդակ «մինչև
ժողը». տսօր ըդակ «մինչև այսօր», գէսնըդակ «մինչև կէսը»,
սօղըդակ «ցվերջ». — բուն թրք. ձևն է dek, որ ստանում է տրա-
կան հոլով. օր. eve dek «մինչև տուն». Համշենի բարբառում
տրականի e վերջավորությունը բաժանելով՝ միացրած է dek
բառին, որով և դարձել է edek էղէք=ըդակ:

Դօղրու «ուղիղ դեպի». օր. միյ դօղրուն «ուղիղ դէպի մեզ»,
մաշտու դօղրու պոնէլ մի «մարդու դէմ մի բռնիր»:

Զատը «արդէն»

Զօրաքի զօրով «բռնի»

էպէյի, էպէյըտ, էպէյը մը «բավական»

Թէգ «շուտ»

Ի՛լլոքի «անպատճառ, հատկապես»

Իշտէ «ահա»

Խալվութ «ծածուկ». ինձմտ խալվութ էգած էս

Խէլ մը «մի խումբ, բավական»

Կալդի քի «սակայն»

Հաչան Տր. «երբոր, հենց որ»

Հալա «գեռ, տակավին»

Հոլըտտ, հոլըատ տո «ի հարկէ»

Հա՛ման, հա՛մանտոնտ «խսկոյն»

Հէշ «բնավ», հիշ

Հիշօլմասա «գոնէ»

Ղուար «չափ». տեն նախադրությանց մեջ.

Մոդոր «մինչդեռ»

Նաֆիլտ «ի զուր»

Նիջտ «քանի որ». նիջտ հօղ էր, բէտկը գարուէջքը.

Ոսուլի, ոսուլօվ «կամացուկ»

Չաղ «ժամանակ». ընչաղը «այն ժամանակ», ընչաղըդաք
«մինչև այն ժամանակ»

Չափուջախ «շուտ մը»

Հունկի, չունկիմ, չունկիտ «որովհետեւ»

Ջիպ, ջիփ «բոլորովին»։ ջիպ օր

Սալտ, սալտը «միայն»

Սադոտ «միայն»

Սակըն «չլինի թե»

Սանկի, սանկիմ «իբր թե, այսինքն»

Սոֆ «սխալ» հարաբ. sâhv. Սոֆ լսեցիր

Սէօզդոտ «իբր թէ, որպես թէ»

Սաֆի «միայն»

Սըխ սըխ «հաճախակի»

Սըրօվ «կարգով»

Սօղը «յետոյ», սօղըդակ «մինչև վերջը»

Վի'րա «շարունակ»

Փա'թդէյի, փա'ռթդէյի «հանկարծ»

Քոշկոտ «իցիվ թե»

Օռտըն «մեջտեղը»

Օնդան սօրա «այնուհետեւ»

367. Մակբայ կարելի է շինել նաև՝

1) Թրք. վարի մասնիկով, որ տես § 375.

2) Թրք. սօյըն «ձևով, կերպով»։ ինչ. ըրահաթ սօյըն «հանգիստ կերպով», թրմիզ սօյըն ավիլէց «մաքուր ավելաց»...

3) Կրկնավոր բնաձայն մակբայներ.

Վրզըր վրզըր գէշտա կուքա

Տըռ տըռ ցըյգըն տօղա գու

Ճուրը խըռըլ խըռըլ լիսա գու

Ապալ թապալ նէս մդավ

Հէօնգիւր հէօնգիւր վոյո գու

Խապըռ խուպուռ ձօմո գու

Ղըռոտ դըռոտ խմո գու

Փըկըր ֆըկըր ճուրը գըլգըլա գու

Շակըռ շուկուռ գօդըյգէց

Վըէգը շըռ շըռ լիսա գու

Ջըռ ջըռ կօռկօռա գու

Ջայիր ջայիր պօնի գու։

14. Շաղկապ

368. Ու, էլ հայլ «այլ ևս, էլ» (սուաջինը Մալայի և ծա-
նիկի ձևն է, վերջինը Տրապիզոնի)։

Աբա «ապա, հապա». տուն չէյդ, արա վէ՞վ էր «դու չէիր, հապա մվ էր». (Մալայում ստացել է օմըա ձևը):

Թո, տո «եթէ». Տո էգավ, գասիմ:

Թո յօր «եթէ որ»

Թո չո «եթէ ոչ, թէ ոչ». Թո չո կուքում ձէձիմ գու:

Հըն արա «էլի»

Հընու «և», որ և ու

Հընօր «որպեսզի»:

Օր «որ «որ, թէ». ասաց օր արի. որ և յէօր կամ յօր. ասո յօր կա «ասա որ դա». — յօր նա «եթէ». էգավ յօր նա «եթէ եկավ»:

Չո Թո «ոչ թէ». Չո Թո մըննագ յէս, ալայս ու ըմուն ինք:

Թուրքերենից փոխառյալ շաղկապներ.

Ամա «բայց»

Դէյ «որպեսզի». փշօրքին դէյ «որպեսզի փշրուին»

Դէյի «թէև». Աստավ դէյի...

Հըմ... հըմ... «թէ... թէ». Հըմ տա գասէս, հըմ ըն «թէ՛ այս ես ասում, թէ՛ այն»:

Յա... յա... «կամ... կամ». Յա յէս, յա տուն «կամ ես, կամ դու»:

Յախօդ, յախուդ «կամ թէ»

Թօրա «թէ չէ»

Հունքի, չունքիմ, չունքիտ (վերջինը կարծում եմ չունքի տո=թէ) «որովհետև». որ և չունկի...

Սայի (Թրք. sahîh ճշմարիտ) «թէև». Սայի մութն 'ու Թո յէ նա, աչվիս դէսնուն գու «թէև մութն էլ է, աչքերս ահա-նում են»:

15. Ձայնարկություն

369. Արոհիս «կեցցես, ապրիս»

Ա'իս, ա'հ նշան ցավի, զարմանքի, վրեժի

Ա'հան «ահավասիկ» (բացազանչության ձևով ասված)

Ամմէն (աղօթքների վերջում). նույնը նաև Թրք. ամին:

Պարէվ «ողջուն»

է՛ հերիք ո

Դէ՛... դէ նոհրոս «դեհ սկսիր»
 Է՛հ (անփուլթ վերաբերմունք)
 Է՛յ (մարդ կանչելու համար)
 Էրնէզ «երանի»
 Ընգօ «ահա»
 Զօ՛ (տղա կանչելու համար) Տր.
 Հա՛ «այո»
 Աքա՛ «հապա, ի հարկէ»
 Հայրա՛ «դէհ», որի յգ. հայդցէք, հայցցէք «հայդեցէք»
 (Թրք. հայդէյին ձևից Թրգմ).
 Հա՛յրի (հօրը կանչելու համար).
 Մա՛յրի (մօրը » »)
 Մէ՛խկ «ափսոս»
 Մէղա՛ (ափսոսանք)
 Յէ՛քա՛ (հօրը կանչելու համար). Ժագում է է՛յ բարա
 ձևից.
 Յէ՛մա՛ (մօրը կանչելու համար. Ժագում է է՛յ մամա
 ձևից.
 Օ՛ (հանկարծ մեկը տեսնելու ժամանակ, զարմանք հայտ-
 նելու նշան).
 Օ՛խ (հաճույք զգալու ժամանակ)
 Վո՛ւր տ քի «երանի թէ»
 Ո՛ւֆ (ցավի ժամանակ)
 Վա՛խ, վա՛յ (ափսոսանք)
 Դօ «աօ» (տղամարդ կանչելու)
 Բա՛ (աղջիկ կանչելու)
 Օ՛ֆ (ձանձրուլթի նշան).
 370. Թուրքերենից փոխառյալ.
 Աղա՛մ «սվ մարդ» (նշան անփուլթ վերաբերմունքի)
 Է յէթէր՝ ա՛ «բազմական է»
 Հա՛յդէ, հա՛յրի, յգ. հայդցէք «դեհ, օ՛ն»
 Բօ՛լաքի «երանի թէ»
 Իշտէ «ահա» (իբրև ավելորդ բառ)
 Յագուխ «ափսոս»
 Բյոշկո «երանի թէ»
 Հա՛յ գիդի հայ, է՛յ գիդի է՛յ (ափսոսանք). անցած լավ
 բանի հիշողության ժամանակ:

371. Համշենի բարբառը ինքնաբերաբար պահել է գրաբարի բարդ բառերի մի շատ փոքր մասը, որ ենթարկել է իր սովորական ձայնական օրենքներին: Հիշենք այս կարգի բառերից մի քանիսը. ցաւագար > ցավաքար, վարժապետ > վարջըքէդ, սկեսրայր > կէսրտր, հօրաքոյր > հօրքուր, մօրաքոյր > մօրքուր, հօրեղբայր > հօրպտր, խնչափառ > խըչըփար, խըչըպար, խըղձմըտանք > խըղձմըդօնք, կնքահայր > գընկէտր, կնքամայր > գընքամէր են:

Համշենի բարբառը ժառանգել է նաև բարդ բառերի մի ուրիշ խումբ, որ գրաբարը չգիտե, բայց գտնուում ենք զանազան բարբառների մեջ. ինչ. հաւկիթ > հավգիթ, որբկայր > օրփըվէրի, քարման > քարմօն, մատման > մաղմօն, կայծոռիկ > գոծօռիգ, ալլալաց > էկլալց են:

372. Սակայն Համշենի բարբառը ունի նաև բարդ բառերի մի երրորդ խումբ, որ իր գյուտն է միայն և որ ուրիշ բարբառների մեջ դժվար է գտնել:

Ծույց տալու համար թե որքան ընդունակ է Համշենի բարբառը բարդ բառեր կազմելու մեջ՝ տալիս ենք այստեղ հոտ, համ և աման բառերով կազմված բարդերի շարքը:

Հոտ.—մուսրէօդ «մսի հոտ», ծգնսրէօդ «ձկան հոտ», շնսրէօդ «շան հոտ», ձօվսրէօդ «ծովի հոտ», թուսրէօդ «թսի հոտ».—Նկատենք որ հոտ Համշենի բարբառում նշանակում է միայն «վատ հոտ», իսկ լավ հոտը ցույց տալու համար գործ են ածում համ > հօմ բառը, որ նաև նշանակում է «համ, ճաշակ»:

Համ.—ծրըհօմ «ջրահամ», գաթնըհօմ «կաթնահամ», մէղըրըհօմ «մեղրահամ», թօնըհօմ «մածնահամ», աքրըհօմ «ապուրի համ կամ հոտ», խնգաւհօմ «խնկաբույր, խնկի հոտ», խնձրըհօմ «խնձորի բուրմունք», շիրըհօմ «շիրայի հոտ», խօյսըհօմ «խորիսի հոտ» են:

Աման.—ձրօմօն «ջրաման», գաթնօմօն «կաթի աման, կաթնաման», թօնօմօն «մածնի աման», մէղըրօմօն «մեղրի աման», խավիճըրմօն «խավիժի աման»:

Համշենի բարբառին հատուկ նորակերտ բառերից տալիս ենք ահա մի փոքր ցանկ.

Մօմտր «հորեղբոր կին» (ծագումն ինձ անհայտ. բայց անշուշտ մայր բառից, որովհետև սեռականը լինում է մօմօր):

Օնթտագ «թևի տակը».

Թօննոր «մածնից քամված ջուրը».

Թօնքօմ «քամած մածուն».

Խաշտուռ «եկեղեցու դուռը կամ առաջը». արտասանվում է թե խաշտուռ և թե խաշտուռ.

Դընքազին «կնքահոր կինը, կնքամայր».

Վրահէգ, վրէգ «անձրև».

Օմքոէօդ «որոտում, ամպի որոտ».

Կումտուռ կամ կունտուռ «գոմի դուռը կամ գոմի առաջը»:

373. Ավելի հատկանշական են հետևյալ նոր բառերը.

Փուռնիլ «փուռի մեջ թխված եգիպտացորենի կամ ցորենի հաց» (փուռը նետված).

Հուստիր «խմորի տաշտ» (հայս+դիր).

Ջալտպուն «սարգի ոստայն».

Հափտուռ «հավանոց».

Միաթմուշ «կովը չորանալով՝ փոխանակ երկուսի՝ օրական միայն մի անգամ կթվելը»:

Շատ ավելի գեղեցիկ են այլ բառով կազմված բարդու-թյունները.

Դալար «տալար, տալոջը ամուսինը».

Հօրքուրար «հորաքրոջ ամուսինը».

Մօրքուրար «մորաքրոջ ամուսինը».

Միմիայն Հաժենի բարբառին հատուկ է մաշմուրք «շագանակ» շատ սիրուն բառը, որ բարդված է մաշկ և միրգ բառերից (իբր մաշկամիրգ) և որից էլ կազմված են մաշմրքի «շագանակի ծառ», մաշմրքուղ «շագանակենիների անտառ»:

17. Մառնիկներ

374. -ական>ագօն.—այս մասնիկով կազմվում են նախ բաշխականները, որոնց մասին տես § 301.—2) Մի խումբ դոյականներ և ածականներ. ինչ. օմ'սըգօն «ամսական», շափտըգօն, շապտըգօն «շաբաթական», դարէգօն «տարեկան», առաչագօն «գյուղի առաջավոր մարդ», հէդագօն «հետո անելու (բան)», էշտըգօն (երախա որ արդեն ոաքի ելի է, իբր *երթական), քյոլգօն «երախա որ նոր է սկսել քայլել, քայլական», վոյգօն «վայոդ, միշտ լացող», մուսցագօն «մնացական, երկար ապրելու (երախայ)», լալգօն «լալկան», օրէգօն «մեկ օրական» (այս բա-

աը ունի երկու ձև. նախ բարբառի բուն ձևը, որ է օրէգօն «մի օրվա». ինչ. թս հէշտը օրէգօ մըն տ «այս հորթը մի օրական է». երկրորդ՝ օրէգան «օրը շահած դրամը», որ անշուշտ գրական լեզվից է փոխառեալ. դրա համար էլ չի կրած ան>օն ձայնափոխությունը):

Վական մասնիկը ստացել է երկու ձև. ագօն և էգօն. այսպէս՝

օրէգօն «մի օրական (ըստ հասակի)»

դարէգօն «մի տարեկան » »

օմսրգօն «մի ամսական » »

շապտըգօն «մի շաբթվա » »

օրագան «օրավարձ»

դարէգան «տարեվարձ»

օմսագան «ամսավճար»

շապտական «շաբթավարձ»:

Վան> օն (նույն բանը միշտ անող). ինչ. հաչօն «միշտ հաչող», խմօն «միշտ խմող, խման», խսմօն «խածան, խածնող», ուղօն «շատ ուտող», ուգօն «միշտ ուզող», փախչօն «շատ վազող», դղրօն «միշտ փքացող», թստօն «միշտ թսող», պզգօն «վազան, շատ վազող», վզգօն «շատ վզզացող (ջուր, քամի)», ջզգօն «շատ ձգձգացող (երախայ)», դոռօն «մոռան (շուն)», մոռօն «մոլընկող (գոմէշ)», մզգօն «շատ բառաչող (եզ)», բզբզօն «շատ բզզացող (մեղու, պիծակ)», թոչօն «շատ վազող», նէղւօն «լավ ցատկող», օոնօն «միշտ կամ շատ ոռնացող (շուն, գայլ)», խըրխընջօն «շարունակ խրխնջացող (ծի)», թշշօն «թաց լինելուց լավ չվառվող և միշտ թշշացող (փայտ, ածուխ)», բաղըրոտօն «շորերը շարունակ պատառատող», ևն:

Բայերի կրավորական ձևից են կազմված զըթվօն «կթան կով, որ լավ կաթ է տալիս», ժաժվօն «շարժական (սին, տուն)», որոնք իրոք որ առանց վ-ի պիտի նշանակէին «միշտ կթող, միշտ շարժող»:

Վանակ> նագ—մ'աշնագ «լավ, մարդավարի»:

Վանց> օնց (կազմուած է սակբայ). ինչ. պօըգօնց «բոպիկ ոտքով», քոլօնց «քայլելով (երթալ)», սլօչնց «չորս ոտքի վրա քայլելով (երախան)», սրլօնց «սրտանց, սրտագին», պզգօնց «վազելով», էրէսօնց «երեսանց», կիշէրօնց «գիշերով, գիշեր ժամանակ», տըվօնց «առավոտուն», իրիգվօնց «երեկոյան», էրէգ-

«վօնց «երեկվան» (օր. տսօր տլ էրէգվօնց բէս տ), հէովօնց «հեռ-
վից», մօղիգօնց, մօղգօնց «մօտիկից», դարվօնց «տարեկան»
(ինչ. դարվօնց բաշարը հազրէց), մէգօնց «հանկարծ» (ինչ. մէ-
գօնց վրա թոծն) ևն:

-անը>-օնը (կաղմուս է բայից շինված գոյական)։ ինչ.
աղաջօնը, արոնը «ապրանք», էշթվօնը «երդում», ժողվօնը «հա-
վաքում» (ինչ. ֆուխարը՝ ժողվօնք գընտ), խրղջմըղօնը, կօվօնը
«մեռելի վրա գովք», զարգըղօնը «կարկատանք», հօմ'ընօնը «հա-
շիվ, համրանք», փշօնը, փոշօնը «փշրանք», չայլըրօնը «չար-
չարանք», նախաղօնը «նախատինք»:

-աւոր>-աւօր, աւվօր (այս ձևերը գրաբարից մնացած
բառերի մեջ միայն), -վէր, -վէր (բուն բարբառին հատուկ բա-
ռերի մեջ)։ ինչ. թակավօր, թակվէր, թակվէր «փեսա»,
ջքնավօր, վաշտէվօր «վարդավառ», ջօնչվէր «ծանոթ, ճանչվոր»,
միրվավէր «միրուսավոր», օննրվէր «ունևոր, հարուստ», չօն-
նրվէր «չունևոր, աղքատ» (որ և չօննօղ), ուզվէր «հարսանիքի
խնդրակ, աղջիկ ուզող», ուռուցվէր «ուռուցք ունեցող», պարտ-
կըվէր «պարտական», առնրվէր «որ պահանջ՝ առնելիք ունի»,
պլվվէր «տալիք ունեցող», շաղվէր «շատվոր, շատեր», քչվէր
«քչվոր, քիչ», պօնվէր «բանվոր, գործավոր», դնվէր «տնվոր,
տնեցի», հայսնրվէր «հարսնևոր, հարսանիքի հրավիրվածները»,
դէղավէր «հիմնավոր բնակություն ունեցող, հաստատաբնակ»,
քօչվէր «պոչավոր», քօչվէր «քոչվոր», փէշվէր «փեշավոր, քղան-
ցավոր (շոր)», մէչվէր «օվ որ ուժեղ մեջք ունի», ինչնրվէր
«սարից ցած իջնողները», էլլրվէր «սարից վերև բարձրացող-
ներ» ևն:

-ելի>ելի, իլի.—կա միայն ւծիլի «ածելի» և կօյծելի «գոր-
ծելի—ածուխ»:

-եղէն>էղէն (ցույց է տալիս մի նյութից շինված և կամ
նույն նյութից շինված զանազան բաների գումարը)։ ինչ. ոսկե-
ղէն>օսկէղէն, քարեղէն>քարէղէն, ամանեղէն>օմսէղէն, փայ-
տեղէն>փողէղէն, անուշեղէն>անուշէղէն, երկաթեղէն>էրգա-
թէղէն, պղնձեղէն>ըրղնձէղէն, հայսեղէն>հոսէղէն, որ և խմո-
րեղէն>խրմօրէղէն, խոտեղէն>խէօղէղէն, խօղէղէն, *դգմեղէն>
տընթմ'էղէն «զանազան տեսակ դդումներից պատրաստված»,
բրդեղէն>պըշտէղէն, բամբակեղէն>պօմբգէղէն, մսեղէն>մսէ-
ղէն, կանեփեղէն>գօնէփէղէն «կանեփից գործված բաներ»,
թղթեղէն>թըխտէղէն, ներկեղէն>նէրգէղէն «զանազան տեսակ

ներկեր», ինչպես նաև թուրքերէնից փոխառյալ բառերով՝ գէօղէ-
ղէն «կանաչեղեն», քաքըրէղէն «պղնձեղէն», մէյվէղէն «մրգեղէն»,
ալտունէղէն «ոսկեղեն» ևն:

«ենի» ընի (կազմում է բույսի անուններ). ինչ. պալընի
«բալենի», տէղծընի «դեղձենի», րնգզընի «ընկուղենի», թզընի
«թզենի», թթընի «թթենի», ժորնի «վայրի խաղողի (ժուռ)
թուփ», խաղընի (փխ. *խաղողընի) «խաղողի թուփ», խընծորնի
«խնձորենի», զըվընի «կուենի, ծամոնի ծառ», խընգընի «խնկե-
նի», մախընի կամ մարխընի «շոճի», մօրընի «մորենի», ուոր-
նի «ուռենի», դօնծընի «տանձենի», հայվընի «սերկելի ծառ»
(թրք. հայվա «սերկելի» բառից), խուրմընի «խուրմայի ծառ»,
զղըրնի «զկեռի ծառ», ևն: Հմմտ. նաև ցածը՝ ի մասնիկը:

«երէն» էրըն (կազմում է լեզվի անուն). ինչ. հոյէրըն,
դաջգէրըն, ուրուսէրըն, աբազէրըն, գիւղէրըն, չորկոզէ-
րըն, հօմէրըն, լազէրըն, տջըմէրըն, արաբէրըն, ևն:
Այս բառերը գրականի ազդեցությամբ այժմ դարձել են «երէն».
Ինչ. հայէրէն, դաջգէրէն ևն: Կան նաև կէղացէրըն, քաղաքէ-
րըն «գյուղացու լեզվով, քաղաքացու լեզվով» բառերը. ինչպես
նաև լիզվէրըն բառը, որով կարելի է ասել՝ հոյի լիզվէրըն, դաջ-
գի լիզվէրըն, ուրուսի լիզվէրըն ևն:

«է» տ (ցույց է տալիս ինչ նյութից շինված լինելը. գրա-
բարի «եւ») մասնիկն է, որ նույնացել է բացառականի «է մաս-
նիկի հետ). ինչ. փողոտ «փայտեայ», քարտ «քարեղէն», օսկրրտ
«ոսկորեն», էրզըթտ «երկաթեայ», բըղընծտ «պղնձեայ», պօնժրտ
«բանջարից՝ այն է բաց կաղամբից պատրաստված (կերակուր)»,
ջօմտ «ապակուց շինած» ևն: Այս բառերը Տրապիզոնի շրջանում
հնչվում են մաքուր «է» վերջավորությամբ:

ի>ի (կազմում է բույսի անուն, ինչպես «ենի»). օր. լորի>
լորի, գողալի>գողալի «հունի ծառ», դամոնի>տօմունի, ալո-
ճի>ալօջի, թեղի>թէղի, խնձորի>խնձօրի, կաղնի>գաղնի,
հաճաւի>աժրի, արժի, մանի>մօնի, մաշկամրդի>մաշմրջի,
տօսախի>դօսխի, *կուռնդի>զընծխըլի, նաև թուրքերեն բառե-
րով՝ չինարի «սոսի», չօմի «սոճի», գէյթընի «ձիթապտղի ծառ»,
քէօնտորի «կուենի», արդուլի «գիհի», չօրթուղի «վայրի տանձի»,
վրացերենից՝ ծըվաղի «ծուաղի», և անձանութ ծագումով՝ դա-
կումդէրէվի, որ ձայնաբանօրեն պիտի ներկայացնէր *տաքում-
տերելի: Սրա երկրորդ մասն է հյ. տերեւ, իսկ տաքում Համ-
շենի բարբառով նշանակում է «1. ծխամորճ, 2. փայտէ ջրաման,

որ էշերի վրա բարձելով ջուր են կրում, 3. օղի քաշելու ամբողջ սարքը՝ Վերջին բառը ինձ կարծել է տալիս, թե տաքում թրք. taqəθ «սառք, կազմած» բառն է:

-իկ>իզ (նվազական կամ փաղաքշական մասնիկ). ինչ. հայրիզ, մայրիզ (գրականից փոխառյալ), քուրիզ «քոյրիկ», մօրքուրիզ, հօրքուրիզ, ախպորիզ, մօմիզ «մամիկ», բարիզ «պապիկ», հօրպորիզ «հօրեղբայր», թաթիզ «թաթիկ», մաղիզ «մատիկ», քինթիզ «քթիկ, քիթ», ինչիզ «փոքր մի բան», սօնիզ «սանիկ», շմօմիզ «շամամիկ», մօղիզ «մօտ», պշտիզ «բշտիկ», գուրիզ «փոքր կուր, տաշտ», դափշօլիզ «հարթ, տափակ» (տափշոլ բառից), ձիձիզ «ծծիկ», դօղիզ «տոտիկ», փօրիզ «փորիկ» են:

Ուրիշ նվազական մասնիկներով կան՝ մըննազ «միայնակ», մըշնուկ «հացի միջուկ», մինչնազ «միջնակ (եղբայր կամ քույր)», չուխտազ «ջուխտակ», լուսնյազ «լուսին» են:

-ինի (կազմված է նի «եներս» բառից՝ ի նախդիրով. այժմ էլ բարբառում գործածական է նի «եներս» իմաստով. ինչ. նի միլավ «եներս մտավ», նի դարավ «եներս տարավ», նի կնաց «եներս գնաց» են). սրանից ունինք մակբայական գործածություն՝ նէսնինի «միջով» (օր. օղին նէսնինի օնցուց «օղակի միջով անցկացրեց», մաղնուն նէսնինի «մատանու միջով»), դազնինի «տակից, տակովը» (օր. գագուն սէզնին, յա գէջին դագնինի օնցավ «կատուն սեղանի կամ աթոռի տակից անցավ»), տուսնինի «դուրս, դէպի դուրս» (օր. թամարը փոնջորոծըն տուսնինի կօռաց «թամարը պատուհանից դեպի դուրս բղավեց»), վրահինի «վրայով, վրայից» (օր. ծին բադին վրահինի նէդվէժավ «ծին պատի վրայից ցատկեց», յէս ընգէրէջս վրահինի նէդվէժա «ես ընկերոջս վրայով ցատկեցի»): Այսպես նաև ասվում է ձօվնինի «ծովով, ծովի միջով», ճուրնինի «ջրի միջով», կէղնինի «գետի միջով», իսինի, իղինի, ինինի «սրա միջով, դրա միջով, նրա միջով», նաև թուրքերեն բառերով՝ կօնինի «լճի միջով», կարընինի «ցամաքի միջով», դըլինինի «եղեբքով» են: Օր. ծին ճուրնինի օնցավ, օչխըյնին կէդնինի օնցօն «ծին ջրի միջով անցավ, ոչխարները գետի միջով անցան»:

-իչ (գրաբարում կազմում է ներկա դերբայ, իսկ բարբառում՝ դանազան գոյականներ). ինչ. ծէձիչ «ձաղկիչ» (ինչ. պրինձձէձիչ, աղձէձիչ, պուշտձէձիչ, փոիչ «հատակին փռելու բաներ, ինչպես են գորգ, խտր, փալառ են», սրիիչ «սրբիչ», ջոջոիչ «ճռիկ, ծղրիդ, ճպուռ», խըլոիչ «խրտվիլակ որ դնում են

ծառի վրա՝ թռչուններին խրտնեցնելու համար», զարիչ «կապ-
կեմ», գլթիչ «մեջը կաթ կթելու աման», օյղիչ «շոգենամվի, շո-
գեկառքի և դործարանի սուլիչ (Էբր Վորոտիչ, որոտացող)»,
Փոթֆոթիչ «երախայի խաղալիք՝ անվավոր և թեթև-
նաձև», Ֆլորդիչ «երախայի խաղալիք, փայտի ծայրին անցկացը-
րած շնչան՝ թղթից կամ տախտակից», տվվիչ «ճպոտ», դակիչք
«կերակրի տակի թանձր մասը»:

-կոտ> գէօղ, գէղ (կազմում է ածական). ինչ. օմնչկէօղ
«ամաչկոտ», շոգէօղ «շոան երախա», ցոգէօղ «ցոան», վախկէօղ,
վախկէղ «վախկոտ», աոգէօղ, աոգէղ «ամաչկոտ» (կազմված
թրք. աո «ամօթ» բառից, հյ. ամաչկոտ բառի օրինակով),
վոյգէօղ, վոյգէղ «լալկան», կօնգէղ «գանկոտ»։—Իսկ մրսկոտ
լինում է մսուգ:

-ծու>ծու (կազմում է ածական). օր. շինծու, բոհծու «շի-
նածոյ, պահածոյ»:

-նոց>նէօց, նէց, ցույց է տալիս նախ «արժեք». ինչ. մէզ-
նէց, էրզումնէց, իրէքնէց ևն. ֆնացյալը տես թվականների
շարքում: 2. նույնը ածականների վրա. ինչ. վոյնէց «վարնոց,
ստորին», վիյնէց «բարձր, արժեքավոր», բահայլնէց «թրք. թան-
կանոց», ուլուզնէց «թրք. էծանանոց», կիննէօց, կըննէօց, կըննէց
«թանկագին». օնկիննէօց, օնկըննէօց, օնկըննէց «անգին, շատ
թանկագին». 3. տեղական մասնիկ է. ինչ. տարմօննէց «հարգա-
նոց, մարագ», շէօյնէց «շոր դնելու տեղ», կէրէզմօննէց «գե-
րեզմանոց», կումնէց «գոմանոց», զօվնէց «կովանոց», հօշտնէց
«հորթանոց», խէօզնէց խօզնէց «խոզանոց», էզնէց «եղանոց»,
մէղվըննէց «մեղուանոց», պազնէց «վայրի մեղուի բուն», հավ-
նէց «հաւանոց», ջօննէց «ցեխոտ տեղ», ցօրիննէց «ցորենի արտ»,
կարինէց «գարիի արտ», լսզդնէց «եգիպտացորենի արտ», խօղ-
նէց «խոտանոց, մարագ». 4. թաղի կամ գեղի համար. հոյրնէց
«հայերի թաղ կամ գյուղ», հօմըննէց «հունարնակ թաղ կամ
գյուղ», դաջզըննէց «առձկաբնակ տեղ», չորկոզնէց «չերքեզնե-
րի բնակած վայր», արազըննէց «աբաղաներով յի վայր» ևն.
5. ցույց է տալիս շոր կամ հագուստ. ինչ. կէօքնէց «գոգնոց»,
թէվնէց «թևնոց», վրայրնէց «վերարկու», կիշէյնէց «գիշերվա-
խալաթ», ծընզնէց «տրեխից մինչև երանքի կեսը հասնող քրդէ
շոր, որ հովիթները հագնում են թացությունից պաշտպանվելու
համար», ընթնէց «հորթի քթկալ, որպեսզի մօրը չծծէ»:

-ոտ>էօղ, էղ. նշանակում է այն բանից շատ ունեցող

այն նյութին քսված կամ նրանով ապականված»։ Ինչ. աղղէօղ, աղղէղ «աղտոտ», կեղտոտ», ալուրէօղ, ալուրէղ «ալրոտ», օնծօղ, օնծէօղ, օնծէղ «անխծոտ»։ (հաջորդները դնում ենք միայն -էղ ձևով) պօրէղ «բորոտ», գուղէղ «կուտ», հօմէղ «հոտավետ», հէօղէղ «վատ հոտ ունեցող», խօղէղ «հողոտ», ջօղէղ «ցեխոտ», մրէղ «մրոտ», քարէղ «քարոտ», փշէղ «փշոտ», խօղէղ «խոտավետ», մազնէղ «մաճնոտ», մացստէղ «փշփշոտ (փայտ)», գալթէղ «կաթնոտ», թօնթօմէղ «քամած մածուն քսված», նրէղ «ջրոտ», քարէղ «քաքոտ», շոէղ «շեռոտ», մօխրէղ «մոխրոտ», մօծրէղ «մոճրոտ», մախտէղ «մաղթոտ», ձյութոտ», ծուլթէղ «ձյութոտ», գիլթէղ «ծամոնոտ, խեժոտ», հոսէղ «հասոտ, խմորոտ», մէղրէղ «մեղրոտ», մսէղ «մսոտ», մրմէղ «մոմոտ», յէղէղ «եղոտ, իւղոտ», էղիմէղ «ջուր՝ որ լի է սառույցի կտորներով», տընթմէղ «ձեռքը դոժով կերակրի քսված», փըյցըքէղ «փաշնքոտ (ձի)», վրէգէղ «անձրևոտ», թօնէղ «թանոտ», թքէղ «թքոտ», թարախէղ «թարախոտ», արբէղ «ապրոտ», սօխէղ «սոխը առատ (ապուր)», արունէղ, այնէղ «արինոտ», Ժօնգէղ «Ժանգոտ», ծնէղ «ձիւնոտ», մազէղ «մազոտ», թանաքէղ «թանաքոտ», ջաշէղ «ճաշով կեղտոտած», խուսէղ «խյուսով կեղտոտված», օղվօնքէղ «օղվօնքով կեղտոտված», լըվընուսկէղ «լվացուկով կեղտոտած», շուաղէղ «պանրաջրով կեղտոտած», դղվէղ «որ շատ եբախաներ ունի», ձղէղ «ծրտոտ կամ քթի կեղտով ապականված», սխտէօրէղ «սխտորն առատ (թթու կամ խավուրմա, երշիկ)», թէփէղ «թեփոտ», խընլընքէղ «խլնքոտ», ևն. նաև թուրքերեն բառերով, ինչ. շորթօրէօղ «շաքարոտ», քիրթօղ «կրախառն», կազլէղէօղ «նավթոտ», թօզէօղ «փոշոտ» ևն։—2. կազմուած է որակական ածականների բաղդատական աստիճանը, որի մասին տես § 293։

-օվ (գործիականի մասնիկն է, որ կազմում է նաև ածական). ինչ. խէլթօվ «խելօք», սըյղօվ «քաջ», կլիսօվ «իմաստուն», խղջօվ «բարեխիղճ», դէսքօվ «գեղեցիկ», շէնքօվ շնօրքօվ «շնորհալի», հօմօվ «համեղ», ևն։

-ոց>էօց. ինչ. ծէփէօց, ծէփէց «խցան ամեն տեսակի», ծածգէօց, ծածգէց «ծածկոց», կըլխէօց, կըլխէց «շարքով ցանած բաների, ինչպէս ծխախոտի, բանջարեղենների վերևի մասը», փատտէօց, փատտէց «գլխի փաթաթոց, ոտքի սոնապան, հեակի», ֆըռլթկէօց, ֆըռլթկէց «հավի հանկարծական թռիչք», գաքօց «կապոց», ևն։

-ութիւն>ութին, ուտին (կազմում է վերացական բառեր՝ ամին տեսակ ածականից). ինչ. մէծութին, հաստութին, հաստուտին, կողութին, կողուտին, էշութին են:

-ուլ.—իւնչ. գունծուլ «թրիքի կույտ, ցիխի խոշոր կտոր», գունդուլ «ալյուրէ ճաշի մեջ լավ չհարված գնդիկներ»:

-ուկ.—իւնչ. բաղուգ «պաղուկ», խղջուգ «խղճուկ, զարմորուգ «կարմրուկ հիվանդութիւնը», ժաժվուգ «շարժուն, տեղից շուտ շարժվող», պզուգ «լավ վազող», էշտուգ «լավ գնացող (մարդ, շուն)», քյոլուգ «լաւ քայլող», սէյդրոուգ «որի սիրտը շուտ կվիրավորվի», մօնջուգ «փոքր երախտ», սէվուգ «սիրուն սև (կովի անուն է)», Վլարթուգ (աղջկա անուն), մսուգ «մրսկոտ», մզուգ, մզվզուգ «լալկան (մարդ), շատ բառաչող (կով, եղ)», խօզուգ «փոքրիկ խող», պօնուգ «աշխատասէր», փախշուգ «լավ վազան», խուգ «հնազանդ, խոսք լսող», գայնուգ «կարող, կարողացող», վատէցուգ «կծու», բառզուգ «շատ քնող», մաշուգ «հեշտ մաշվող», ավրուգ «հեշտ փչացող», գղրուգ «վճռական, լավ կրտրող, սուր», օնցուգը մօցուգ m «անցյալը մոռացվում է», դըվուգ «ձեռքը բաց, ոչ-ժլատ», ամուգ «միշտ ձու ածող (հավ)», տըվվուգ «կովի մեջ լավ հարվածող», պոնուգ «լավ բռնող, որսկան (կատու)» և հատկապես մ'ուգպոնուգ «լավ մուկ բռնող», լէրպոնուգ «լավ լորսմարդի բռնող», ասուգ «լավ ասող, լավ խոսող», խօուգ «շատ խոսող, շատախոս», ֆոուգ «լավ ֆռռացող (շունչան)», սլվլուգ «լավ սուլող», կօուգ «լավ գոռացող», զօնջուգ «լավ երգող (աքլոր)», մ'ոուգ «շատ մոլնգացող (լոմեշ)», օոնուգ «շատ ոռնացող (շուն)», զոուգ «շատ զուացող (էշ)»:

-իւն>ուն (զանազան ձայներ ցույց տվող). ինչ. խշշուն «ջրի հոսելու, ծառի տերևների ձայն», զջջուն «եղի հալվելու ձայն», սլվլուն «օձի սուլելու, քամու շնչելու ձայն», դժժուն «հատեղէնի սռուալու ձայնը, նաև կաղիների, ընկույզի են», խշխշուն «չոր տերևների, փայտի կտորների ոտի տակ հանած ձայնը», կօկօոուն «մարդու գոգոտոց», քջքուն «մածնի պճպճոց», ջոջուն «ճալուռի ձոճոց, նոր կոշիկի ձոխնչ», հաշուն «շան հաշոց», ջղուն «երախանների ճիչ», զօնջուն «աքլորի երգ», կըքկըքուն «ձու ածող հավի կարկաջուն», զլլուն «եռացող ջրի ձայն», թշշուն «հալվող եղի, վառվող թաց փայտի հանած ձայնը», գօյօխտկուն «թխամայր հավի կչկչալը», գրրխտկուն «ջրի մեջ խեղդվող մարդու ձայնը», վոյուն «լացի ձայն», ջլվլուն «ճընճողակների ձովող»:

-**ուն**>**ուն**. **ինչ**. հատուն «հասած», էփուն «լավ եփված», յուշուն «ուռեցք», բլբլուն «փայլուն», սիրուն, թթվուն «պետք եղած չափով թթված», գցուն «իրար կցելով կազմած, ոչ միակտուր (փայտ, թել, և այլն)».—**իբրե** գյ. **ունինք** միայն ջրխկուն «ճեղք»:

-**ուտ**>**ուդ** «այն բանից բազմությամբ պտնված տեղ» (պետք է տարբերել այս կարգի բառերը վերի -էօդ ձևով բառերից: Համշենի բարբառը *ո դարձնում է էօ կամ է, իսկ ու ֆնում է ու: Ըստ այսմ -ուտ վերջավորած ձևերը դառնում են էօդ, էդ, իսկ -ուտ վերջավորածները՝ -ուդ: Առաջինները ածական են, երկրորդները գոյական և ցույց են տալիս տեղ կամ վայր: Այսպես օր. փշէօդ, փշէդ «փշոտ, վրան փուշեր ունեցող (փայտ)», իսկ փշուդ «այն վայրը՝ ուր շատ փշենիներ կան»), ծառնուդ «ծառաստան», գաղնուդ «կաղնիների անտառ», փշուդ «փշավայր», խէօդուդ «խոտավայր», մաշմըրբուդ «շագանակենիների անտառ», խնծօրուդ, խընծրնուդ «խնձորենեաց անտառ», դօսխուդ «տոսախիների անտառ», ցախուդ «անտառ», աժրուդ «հաճարի ծառերի անտառ», լաշուդ «լաշի ծառերի անտառ», զրվնուդ «բեկեկի ծառերի անտառ», դանձուդ «տանձենիների անտառ», ընգզընուդ «ընկուզենյաց անտառ», պալընուդ «բալենյաց անտառ», ծվադուդ «ծուռղենիների անտառ» են:*

-**ուց**>**ուց**. (կազմում է մակբայ). **ինչ**. օնթուց «անօթուց», րնուց «հին ժամանակից», առաչուց «նախապես», բրզդրզուց, բրզդրզուց «փոքր ժամանակից», էրուց «վաղը»:

-**ուցք**>**ուսկ** (կազմում է գոյական). **ինչ**. ջերմզուսկ «ձվի սպիտակուց», գարմըրուսկ «ձվի դեղնուց», մադուսկ «մաղած բանը», լրվընուսկ «ամաններ լվացած ջուրը», վոյըրուսկ «գին ածելու բան», թափուսկ «ծառերից թափված անպետ պտուղները», թրթվուսկ «թթված կաթ», մորուսկ «բաժակը կամ ամանը ողողած ջուր» են:

-**վածկ** (ցույց է տալիս ձև, կերպ կամ եղանակ, երբեմն էլ կազմում է գոյական). **ինչ**. պացվածկ «բացված ճեղքը», նստածկ «նստելու ձևը», լվածկ «լվացք», խօրաթվածկ, խօսվածկ, աստըվածկ «խոսելու, ասելու ձև», գոյնածկ, գոյնըվածկ «կանգնելու ձև», բառգըվածկ «պառկելու ձև», քոլվածկ «քայլելու ձև», իսկ իբրե ածական՝ նէդվածկ «նեղ (տեղ)»:

-**վար** (ցույց է տալիս լեզու). **ինչ**. հոլիվար «հայերէն».

դաջգրվար «տաճկերէն», ուրուարվար «ռուսերէն», արագրվար «ափխագերեն» ևն:

-ցի (ցույց է տալիս տեղացի). ինչ. Համշէնցի, Օրդույէցի, Թէրմույէցի, Թրաքիզօնցի, Իննույէցի «Իւնիէցի», Մնասցի «Սինոպցի», Սումսունցի «Սամսոնցի», Մէճարացի «Մժարացի» Յէրէվանցի... կէղացի «գյուղացի», քաղաքացի, սարէցի, ծօրէցի, դնէցի, յալլէցի (թրք. յալլ «ծովափ» բառից) ևն:—2. Կազմում է ազգանուն՝ հատուկ անուններից. ինչ. Ագօփցիք «Յակորեանք», Դարարէղցիք «Կարապետեանք», Օվէսցիք «Յովհաննէսեանք», Փիլօսցիք «Փիլիպոսեանք» ևն:—3. Ցույց է տալիս գերդաստան, ինչ որ ուրիշ բարբառներում ազգանունների նման բացատրվում է -ներ մասնիկով (հօրքուրներ, հօրեղբօրներ ևն): Համշենի բարբառը ո՛չ միայն գերդաստանը բացատրում է -ցիք մասնիկով, այլ և ունի այն զարմանալի երևույթը, որ բառի մեջ է ներմուծում ստացական հոգը: Այսպէս՝ օր. հօրպոր «հօրեղբայր», մ'օմոր «հօրեղբօրկին» բառերից ստանում ենք՝

ա դէմք—հօրպոյցիք «իմ հօրեղբոր գերդաստանը»,
բ դէմք—հօրպոյղցիք «քո հօրեղբոր գերդաստանը»,
գ դէմք—հօրպոյցիք «նրա հօրեղբոր գերդաստանը»,
մ'օմոյցիք «իմ հօրեղբոր կնոջ գերդաստանը»,
մ'օմոյղցիք «քո հօրեղբոր կնոջ գերդաստանը»,
մ'օմ'ոյցիք «նրա հօրեղբոր կնոջ գերդաստանը»:

Առաջին երկու դեմքերը կարող են առանց իմ և քու ստացական ածականների գործածվել, որովհետև *ու* և *դ* ստացական հոգերը բավական են ինքնին: Իսկ երրորդ դեմքը, որովհետև ստացական հոգ չունի, անպատճառ պահանջում է ընու «նրա» ստացական ածականը: Այսպես՝

ընու հօրպոյցիք «նրա հօրեղբոր գերդաստանը»,
ընու մ'օմ'ոյցիք «նրա հօրեղբոր կնոջ գերդաստանը»:

Հոգնակիի համար ստացական հոգի գործածութիւնն չկա, ուստի պարտադիր կարգով դրվում են միւր, ծիր, ընէց «մեր», «ձեր, նրանց» ստացական ածականները:

Վերոհիշյալ երկու բառերից դուրս կան նաև հետևյալ ձևերը.

հօրքույցիք «հորաքրոջ գերդաստանը»,
մ'օրքույցիք «մորաքրոջ գերդաստանը»,

Նօրքուրայցիք «հորաքրոջ ամուսնու գերդաստանը»,
մօրքուրայցիք «մորաքրոջ ամուսնու գերդաստանը»,
դոքէյցիք «տագրոջ գերդաստանը»:

Մենք այստեղ նշանակեցինք միայն երրորդ դեմքով, բայց բոլորն էլ ստանում են մյուս երկու դեմքի ստացական հոգերը. ինչպես՝ Նօրքուրայցիք «իմ հորաքրոջ գերդաստանը», Նօրքուրայդցիք «քո հորաքրոջ ամուսնու գերդաստանը» են:

-ցու>-ցու, -ծու (հատկացում ցույց տվող). ինչ. մոյցու «մակարդ՝ մածուն շինելու համար» (պանրի մակարդը կոչվում է թրք. բառով մայա), զրդցու «հատեղէն որ պատրաստված է հավեղէնին իբր կուտ տալու համար», դիրացու «տիրացու», արըյցու «ապուր շինելու համար պատրաստված նյութեր», շաբգրցու «շապիկ շինելու հատուկ կտոր», վայրիքցու «վարտիք կարելու կտոր», մսացու «մորթելու համար պատրաստված անասուն, զենի», հայսընցու «հարսնացու», թսըվօյցու «չափահաս երիտասարդ որ կարող է ամուսնանալ», փէսացու «նա որ պատրաստվում է պսակվելու», հիւլըցու «շորի կտորտանք՝ որոնք հատկացված են շորէ կոճակ կարելու՝ կանանց շրջագլխոսի համար», ուղէլիքցու «կերակուր պատրաստելու նյութ», հաղգրցու «աղալու հատուկ ցորեն», սէրմըցու «սերմացու», օմբըցու «ամբար շինելու տախտակ», փէթըրցու «փեթակ շինելու տախտակ», և թուրքերէն բառերով՝ թուռըցու «թթու զնելու հատուկ նյութեղէն», մայացու «պանրի մակարդ պատրաստելու նյութ» են:

-ցուն>-ցուն, -ծուն.—կան միայն կըղցուն «գտնովի, մի տեղից գտնված» (օր. տս չախուն կըղցուն տ), ավէլցուն «ավելցուք»:

-ցուք>-ցուք, -ծուկ.—կա միայն-ավէլցուք «հաւելվածո»:

-ք>-ք, -կ (կազմում է գոյական). ինչ. կէօլք, կէօլկ «բոց», լընցք «լախք, լախություն», էրգընցք «երկայնք, յերկայնություն», հօմքարք «հաշիվ»:

-օք>-օք (կազմում է ածական կամ մակբայ). ինչ. խէլօք «խելոք», հօմքօք «հաշվով (ինչ. հօմքօք դվով հաշվելով հանձնեց)», աշնընօք «աշնան ժամանակից» (օր. տս ցօրիւն աշնընօք ցանված է), կայնօնօք «գարնան ժամանակից», ծմորնօք «ձմեռ ժամանակից», օմորնօք «ամառ ժամանակից»:

375. Թուրքերինից փոխառյալ կա նախ -վարի մասնիկը, որով կազմվում են հետևյալ մակբայները. մարտավարի «մար-

դու պես» (նոր փոխառությունն Կովկասյան բարբառներից), հոյրվարի «հայի ձևով», դաջգրվարի «տաճկի ձևով», յահուղիվարի «հրէի ձևով», հօումըվարի «հուլնի ձևով», խրիստիյանվարի «քրիստոնեաբար», մահմէդանվարի «մահմեդականի ձևով», արազավարի «ափխազի ձևով», չորկոգրվարի «չերքեզի պես», գիւղըվարի «վրացու նման» են:

Թրք. ٣٠٧٩ մասնիկը գտնուած եմ Տր. հիմիշար «այժմ, հիմա» բառի մեջ, որ ունի Հայկունի, Արրտ. 1892, 428, 444= Պլ. հիմաջուկ: Չի գործածվում Համշենի բարբառում:

Թրք. ٤٠٢٢ի «արհեստ ցուցնող», որից մեղօքջի «չհաս պսակ կատարող քահանա», և սրանից էլ մէղօքջիուծին «չհաս պսակ կատարելու արհեստը» (Բիւր. 1900, 30):

Կա նաև Թրք. ٤٠١١ մասնիկը «-ափոր» նշանակությամբ, որով կազմվում են զանազան ածականներ. ինչ. գարմիր էրէսլի, հաստ ունկըլի, ունքընլի, պարագ մէճլի, շատ մազլի, էրզան օղլի, փօրլի, լըն ջագդըլի, մէձ օնգօջլի:

376. Իբրև նախամասնիկ ունինք միայն ան բացասականը, որ Համշենի բարբառում վերածվում է օն: Սրանով կան նախ զանազան ածականներ. ինչ. օնհօմըօնք «անհամար», օնխէլք «անխելք», օնըազաս «անպակաս», օնթառօմ «անթառամ», օնհավաղ «անհավատ», օնհօմ «անհօմ», օնէղ «անհոտ» են:

2) Դերբայների հետ միացած. ինչ. օնջըխլէլ «առանց ձեղքելու», օնփօրէլ «առանց փորելու», օնգարէլ «առանց կարելու», օնէփէլ «առանց եփելու», օնձօմէլ «առանց ծածկելու» են:

Տ բացասականի արտասովոր ձևի մասին տես § 199:

Օտար բառեր

377. Օտար փոխառությունների մեջ առաջին տեղը բռնում են Թուրքերեն բառերը, որոնք ահագին թիվ են կազմում: Բազմաթիվ սովորական հայերեն բառեր, որոնք շատ բարբառներում ընդհանուր ընդունված և գործածական բառեր են, Համշենի բարբառում ջնջված և փոխանակված են Թուրքերեն հոմանիշով: Օր.

Ուլ, ուլիկ բառի տեղ գործ են ածում օղլաղ, որ Թրք. ٤٠٤٩ oğlağ բառն է:

Օղ «գլինդ կամ ականջի օղ» բառի փոխարեն գործ են ածում քիլիէ, որ է Թրք. ٤٠٥٠ küpe «գլինդ»: (Իսկ օղ բառը «օղակ» իմաստով միայն կա):

Դառն շատ սովորական բառը ջնջված է և նրա տեղ գործածվում է Թրք. ٤٠٥١ quzə, որ հայկական ձևով դարձրել են դուզիկ:

Ամօթ բառը վերացված է և նրա տեղ գործածվում է թրք. առ:

Թանկ բառը չի ջնջված, բայց նրա հետ կա նաև թրք. բահալի (<bahali).

Ոսկի բառի հետ էլ գործածական է թրք. التون altun (ալտուն), որ ոչ մի բարբառում գործածական չէ:

Այսպիսի դարձանալի և անսովոր փոխառություններ են թէև «մարմին», ղուրբոն «մատաղ», յազ «ամառ», մէզար «գերեզման», յէշիլ «կանաչ», մինչև անգամ مکتب mekteb «դպրոց». հայերեն այս ամենահասարակ բառը չի գործածվում (ասում են խունց):

Հայն բառը պահված է «լայն» սովորական իմաստով, իսկ նրա հոմանիշ թրք. geniş «լայն» բառը մտել է նույնպես բարբառի մեջ՝ գէյիշը ձևով՝ ստանալով «ընդարձակ» իմաստը:

Կանաչ բառը ջնջված է բարբառից և նրա տեղ դրված է, ինչպես տեսանք, թրք. յէշիլ հոմանիշը: Բայց սրա հետ կա նաև տարօրինակ մի ձև. այն է՝ գէղ «կանաչ», որից էլ կազմված են գէղէղէն «կանաչեղեն», գէղէղ կամ գէղէօղ «կանաչուտ տեղ», իսկ սովորական գործածությամբ ասում են գէղ կուն «կանաչ գուն»:

Հակառակ իր շատ հայկական արտաքինին, այս բառն էլ փոխառություն է թրք. (չաղաթայ կազերի) چۆк gök «կապույտ, կանաչ, կանաչեղեն, արուս» բառից (Бударов, II 157): Թուրքերենի թեթև k բաղաձայնը բառավերջում տալիս է Համշենի բարբառում հաճախ դ. ինչպես՝ թրք. emek>Հմշ. էմէղ «ջանք, աշխատանք», թրք. ilmek>Հմշ. իլմող «հանգույց», թրք. yeşillik>Հմշ. յէշիլլուղ «կանաչեղեն» են.—իսկ էօ=է փոխանակությունը սովորական է Համշենի բարբառում:

Ավելորդ է ասել թե Համշենի բարբառի թուրքերեն փոխառությունները Պոլսի գրական թուրքերենի հնչման համաձայն չեն, այլ տեղական (Տրապիզոնի) թուրքերեն բարբառի:

378. Բայց Համշենի բարբառը ունի նաև ուրիշ տարօրինակ մի հատկություն, որ ոչ թե ուրիշ որևէ հայերեն բարբառի, այլ և ուրիշ որևէ լեզվի մեջ էլ գոյություն չունի:

Ինչպես գիտենք, ամեն լեզու էլ օտար փոխառյալ բառեր ունենում է. բայց այս փոխառությունները մի այնպիսի ձևի տակ առնված են, որ փոխառու լեզվի մեջ իբր արմատ համարվելով՝ հպատակվում են նրա քերականական կանոններին: Փոխառությունները եթե գոյական կամ ածական են, ուղղական

պարզագույն հոլովածուով առնված են լինում. եթե բայ են, դերբայի կերպարանքով առնված են լինում. եթե ուրիշ որևէ անփոփոխելի մասն բանի են, նույնպես պարզագույն արմատական ձևով առնված են լինում. և այս բոլորը կարող են հոլովվել կամ խոնարհվել փոխառու լեզվի քերականությամբ: Այսպես օրինակ զուտ թուրք փոխառություններով կազմված հետևյալ նախադասությունը (Պոլսի բարբառով). Սա յենիչէրիին խալիսախին թէքմէ մը յէդէշդիրմիշ ընէմք ըի, խօսխօջաման խալիսախը յօխուշ աշաղի թէքէրմէքէր գա «Սա ենիչերիին գլխարկին (այնպիսի) մի քացի տեղավորեմ, որ անագին գլխարկը զառվայրն ի վայր գլտոր-գլտոր գա»: Այստեղ բառերը թուրքերեն են, բայց հոլովված կամ խոնարհված են հայերեն: Նույնպես Նոր-Նախիջևանի բարբառով՝ հետևյալ ամբողջապես ռուսերեն բառերով կազմված հատվածը.—

— Սուսաննա, դուքա, քաքբուծթօ նասթրայէնիթ ասօր վաժնի չէ:

— Յէջջօ՛րը, դուն ալ փաղօ՛քնրյ մ'օմէնթնէր փէրէժիվաթ անէյիր նը, նասթրայէնիթ վաժնի չէր ըլլար:

Համշենի բարբառում շատ է պատահում, որ փոխառյալ բայերը խոնարհված լինին թուրքերեն քերականությամբ և այնպես էլ ներմուծվեն հայերեն նախադասության մեջ: Օրինակ՝

— Էնիր Սաջօգին ըիշ մը յարալադիլէր «ներանք նաչոյին մի քիչ վերավորեցին»:

— Իրաց հէդ ույալում «իրար հետ հարմարվինք»:

— Էդատ մէզի հէտ կօշտի «առավ, մեզ հետ միացրեց»:

— Գնդ թէ գաս, իրաց հէդ դօղուշո՛ւրուք «եթե որ գյուղ գաս, իրար հետ կկռվինք»:

— Դոնք շա՞ղ փարա կազօնո՛ւրսունուզ «դուք շատ դրամ էք շահում»:

Այս խօսքերի մեջ զուտ թուրքերեն լեզվի քերականական կանոններով են խոնարհված՝ յարալադիլէր (կտր. յգ. գ դեմք), ույալում (հրամ. յգ. ա), կօշդի (կտր. եգ. գ), դօղուշո՛ւրուք (ներկ. յգ. ա), կազօնո՛ւրսունուզ (ներկ. յգ. բ), որոնք ուրիշ ամեն մի բարբառում պիտի լինէին՝ յարալամիշ ըրին, ույմիշ ըլլանք, դօղումիշ կըլլանք, կօշմիշ ըրավ, կազանմիշ կըլլաք (և կամ մի քիչ տարբեր ձևով):

Համշենցոց Կովկասյան գաղութում ես նման երևույթ չտեսա. բայց ասացին, որ այսպես խոսող մարդ կա:

379. Բարբառիս մեջ ուրիշ մի նշանավոր երևույթ է նաև շեշտը: Ինչպես Տրապիզոն քաղաքի, նույնպես և Համշենի բարբառի մեջ շեշտը ըստ օրինի վերջին վանկի վրա է. բայց արագ խոսակցութեան մեջ շատ անգամ պատահում է որ այս երկու բարբառներում էլ շեշտը անցնի բառի առաջին վանկի վրա: Այս բանը Պոնտոսի բնիկ ժողովուրդի՝ Լազերի լեզվի աղբյուրութեամբ է: Լազերենը շեշտում է առաջին վանկի վրա. թեև շատ տեղ Լազերը իրենց մայրենի լեզուն կորցրած են և թուրքերեն են խոսում, բայց թուրքերենը շեշտում են իրենց նախկին լեզվի շեշտով: Այսպեսով լազերենի շեշտը անցել է թուրքերենի և թուրքերենից էլ հայերենի անցնելու վրա էր:—Համշենցոց Կովկասյան գաղութում բարկացկոտ խոսակցութեան մեջ ես պատահեցի նման շեշտի:

380. Աշխատութեանս վերջում դնում ենք թուրքերենից փոխառյալ բառերի մի փոքր ցանկ, ուր ամփոփված են նմուշներ ի մեջ պատահած թուրքերեն բառերը:

Թուրքերենից հետո գալիս են հունարեն փոխառությունները, որոնց թիվը սակայն մեծ չէ:

Դնում ենք այստեղ հունարենից փոխառյալ բառերի մի փոքր ցանկ, որ անդրադույն քննութեամբ կարող է ավելի հարցնալ:

Ժուկալ «պտուկ» <հն. τζουκάλι «հողե աման, պտուկ»:

Կոխլիժ «խողունջ» <հն. κοχλίας «խխունջ», κοχλίδι «խեցեմորթ»:

Ժաղանա «խեցգետին» <հն. τσαγανός նույն նշ.

Խօն, խօնի «ձագար» <հն. χωνί նույն նշ.

Խօրաթու «խոսք», խօրաթուշ «խոսիլ» <հն. χωρατάς «խաղ, կատակաբանություն»:

Կալաթ «կողով» <հն. καλάβι նույն նշ.

Կալանդար «նոր տարի» <հն. καλάνδα «նոր տարի», καλανδάρ: «օրացույց»:

Լիքմէն «թիթեղե փոքր ճրագ» <հն. λυχνεῖον «աշտանակ կամ ճրագ»:

Դալով «եղեգ և ոստայնանկի մեծ մասուրա, որ շինում են եղեգից» <հն. κάλαμος «եղեգ»:

Այովա «ազգանուն» <հն. ?

381. Սակայն Համշենցոց բարբառի ամենահետաքրքրական բառերը նրանք են, որոնց ծագումը ոչ հայերեն է, ոչ թուրքե-

րեն, ոչ հունարեն, այլ մի անծանոթ լեզվով: Այս անծանոթ բառերը պետք է կարծել թե մնացորդ են հին պոնտական լեզվից, որ վաղուց է կորած: Այս կարգի բառերի մանրամասն քննությունը կարող է գեղեցիկ հայտնություններ բաց անել մեր առաջ:

Թե կան Համշենի բարբառում, ինչպես նաև տեղական հունարեն բարբառում պոնտական փոխառություններ, այդ մասին անհերքելի ապացույց են ներկայացնում այն հետաքրքրական տեղանունները, որոնք ոչ հունարեն են, ոչ հայերեն, ոչ թուրքերեն և ոչ լազերեն, այլ մի ինչ որ անծանոթ լեզվով: Հիշենք խոր հնություն այս վերջին մնացորդներից մի շարք...

Անիֆա	Կալաթկա	Ուղ
Ապիօն	Կատարուքսա	Սաթարիա
Արդավիա	Կիւշանա	Սամարուքսա
Ենմուրա	Կուխլա	Սամերա
Ջավորտիա	Կոռմիլա	Սարէս
Ջեֆանոս	Կրոպի	Սիֆթերէ
Ջիլաքսա	Ճո՛շարա	Սկնֆիա
Էլեմոնա	Մալա	Տրո՛նա
Թօց	Մախթելա	Քեան
Ժուժք	Նոխածանա	Օլասա
Ծինկիլա	Շանա	Օֆ
	Փօշ ևն ևն ևն	

Ո՛վ պիտի տա այսքան ախորժալուր այս բառերի հետաքրքրական բացատրությունը...:

1. Զեփանոս գլուխից

Էքուց կալանդար (կաղանդ) է. էս օր էմէն մաշիգ վեր-
վէր, նէսնէն գէշդօն գուքօն. էմէն մաշգ իսթուս ինթուս թոչի
գու: էմօն դադին գու օր՝ քըյդինքի մէշ գօյսըվին գու:

Էմէն մաշգ ժաժվի գու ասդի (ասացի)՝ օր օնցած դարվօնէ
ինչիգ մը բազաս թօղուն ուշ. յիս էլ բարար գօղնիւշիմ. նէդվիմ
գու նէս նէն, ինձիգի ինչ բօն օր ասդած ին՝ գէն ընիմ իդի,
օր էշդօմ մէր գընվօյնուն (տնվօրնեղին) հիդ կալանդար
ընիմ:

Կալանդարը բէդքը բօն է. ինցօ՝ սիյդըս ֆըռֆըռա գու թէ
յիփ հասնիմ իդի իրիգվօն. ինցօ՝ բէդ գընիմ (կսպասեմ) թէ
մէգ մը իրիգվօն հասնէի:

Կիդլիս ինչ բօնի հօմար գուզիմ կալանդարը. իրիգվօն չէ-
բէգ շադ ուղինք բիդի. կալանդարի ձառ գայթարինք բիդի.
խընձիւրի մէշ փարա դընինք բիդի. միւր բէդքը (լաւ) յիզը գու-
մէն գուս բէրինք աշինք բիդի սաղ թէ սօլ օդքը նիյս գընէ
բիդի. գօդօշվընուն ձէրը լուցած մէղրէմում գըրցընինք բիդի.
էրգու գօդօշնուն վրէն էլ սիմիթ օնցընինք բիդի:

Էքվօն կալանդար է ասդած ունիմ. հիմիջաք միւր բօնն է
կալանդար էնուշի հօմար էմէն ինչիգ հազը ընուշ. միւր բօնը
շադ չէթին էր, էնուր հօմար օր միւր գընվօյնին քիչվօր էին, ու
մէգիգի բօն շադ գէր (կար):

Միւր դօնը շադ մաշգ չի գէր. յիս ունէի ախրէր մը ու
մէյըս. հէյըս իմ չիւյս դարէգօն էղած վսխղըս մէռած էր. մէյս՝
հօյս մէռնուշէն էրգու դարի յիդ՝ գընաց վէրանա գարքըվէցավ.
մէգիգի Ագօփ հօթբէյըս բէհից, աշից ինչաք միձըցօնք:

Շադ բիջիլիգ էի. միդքըս գուքա օր հօթբէյըս գարքըվէ-
ցավ. հօդօիգինս Գուխլա գէղէն հայս բէրած ունէին. յիփ ձիէն
վէր առին՝ քօխքը գլխուն նըսդավ, ինձիգի գօքը նըսդէցուցին.
հօդօիգինս ինձիգի օնթից ու բաքնից:

Հօխրէյս մէղիգի շաղ սիրէր գու. գասէր թէ իմ ախբօր
գէղն ին. ամամ հօղօփգինս էմէն ղարըա մէղիգի քէօթգէր գու.
էմէն ղարըա միւր բօնը լացուշ էր: *)

Ս. Հայկունի
(Արարատ 1892, էջ 428)

2. Մայր գլուխից

— Գիրքէօր, արի, քիչ մը նսդիք, ինչի մը հալաշալուս:
— Ի՞նչ հալաշալուս, մէք ինչիդ չիդիք օր. մէղի հէդ
ի՞նչ հալաշալուս:

— Բագմէ աշիք, ի՞նչօ էդավ Դալաբօնի բօնը:

— Մոյխսին գիսուն էր՝ գնացաք էլաք Դալաբօնը. մեր
ռձէյն ու օշխրնին օնցընաքը բիդի. թուրքերը չիք թօ-
ղուլ ասդին. ընդէղէն դարձուցին յէդ. խել մը յէդ էգաք.
Քիւրդալօղլի գհղը էգաք. ընդէղը զարգին մէղիգի. մէք ու
գրուցաք, էնիւր ու գրուցին:

— Վճում շաղ քէօթգէցին:

— Կօքիս ու քէօթգէցին. կալլի քի էնիւր Քաչօգին քիչ մը
յարալադիւէր. մէք ու էնից քէօթգէցաք:

— Ընդէղէն նիւր օնցաք:

— Գիրքերը փախաք օնցաք սարը էլաք խալսէցաք:

— Թուրքերը ինչիդ գայցի՞ն թէ իմօնալ:

— Իսգի ինչիդ ու չիմացին:

— Էդեւ ի՞նչօ էրիք:

— Հիւքիւմէթին գօնդդաքը բիդի, թուրքերը մէղի դէսօն,
ասդին հըն թէ մէք էշդալ. դունք մէղի քէօթգէցիք, մէք ու
ճէղի քէօթգէցաք, էրաք խալափօթ (ռուս. խառնակութիւն)
մը. իրաց հէդ ուշալում հըն ու հիւքիւմէթը չըղնիք («չընկ-
նինք»): միյ գօղցած մալիյն ու յէդ առէք: էնից խօսածը օն-
գօջ դրաք էօջ. ինչաք Գիւմիւշխանա. հուն Մըզըրդիչ էֆընդի
մը գյոր. գնացաք գդաք գոն. հալիյս էնու հասգընցուցաք.
օնցավ ալի՛ք դիյս, էգառ մէղիգի ու իրաց հէդ գնացաք հիւ-
քիւմէթը. ընդեղ մաշնագ (լաւ) արգուհալ մը դվաք, արգուհալն

*) Այս հոգվածը թեև ստորագրված չէ, բայց ծանոթ բանահավաք
Ս. Հայկունուն է, որ նույն Ձեռագրի գլուխից էր: Էջմիածնում եղած ժա-
մանակ այս համվածը հեղինակի հետ միասին վերածել եմ գիտական ուղ-
ղագրութեան՝ որով և հրատարակում եմ (1898—1902 թ.):

ու Մըզըրդիչ էֆընդին գ'րեց. բէղքը (լաւ) մաշթ էր, քյէօլէ՝ լիմ (ծառայ լինիմ) էնու միրվացը, Փօլիս մը, էրգու. դաֆթիյա Մըզըրդիչ էֆընդին էղառ մէզի հէդ կօշդի, ինք տու հէդվընիս, ինչաք Քիւրդալուղուն գ'եղը. դասը հաղիգ մալ էնից գ'օղցած մալերուն յէդ էղառ, մէզի էրեդ, էր'եւ քախքի գ'լխէն, ջօմփա էդ'իր. օնցաք գ'նացաք էյլըն (թրք. արօտատեղի). շատ օյ դէս-նու ըօլա ըի: Ընդէդ դէդ Բ'ոնէցաք, դուն շինէցաք. ընչաք (կամ թրք. էղէք) հիմի հուն իք:

3. Կիւշանա գյուղից

— Բ'արիվըս քէ, Աթօմ, ուսդի (վճւյ դէզէն) գ'ուգ'աս:
 — Քախքըն:
 — Ի'նցօ իս, բէ՞ղք իս թէ:
 — Բէղք իմ, Խնչ ընիմ իդի:
 — Բ'օնթիյդ ինցօ ին:
 — Գ'էշ չին. դ'ոնէք ինցօ էք. աս դարի Խնցօ օնցու-ցիք:

— Ֆուխարէ մաշդը Խնչ գայնա ընիլ. գ'իդիս օր խէօղ չու-նիմ. մէզ գդէօր մը խէօղ ունէյի, էն էլ բօրջիս դէդ ձ'էռնէս առին. գ'նացի միր աղայէն մարաբալուղի հումար խաձ (քիչ, կտոր) մը խէօղ առի. էնու վրա էլ ընդդար էմէդ էրի օր, հիչ հասարի չի գ'ալ. փօրէցի, քօքը փէդէցի, իսդգէցի, թէմիդ մը զիւրէցի, մէզ փարչըն լազուդ ցօնէցի, վէօյն էլ լօրգյէ ցօնէցի, զըյնէգն էլ դ'նթում—մնթում սաղրէցի. դ'ընթմընին ու լօրգէ-նին էփէյի էղօն ամա, լազդ հիչ չէղալ. էղած իրադն էլ դարի քաղաքը, ձախէցի, անջաք ընիցմէրօվ բօրջիս պէսը դըվի. մէզէլ գէսն էլ Բ'աց մնաց:

— Դունըդ՝ քօ'նի հօքի յիք:
 — Վից հօքի յինք. յէս, դղօցը մէրը, չիւյս էլ դղաքը:
 — Դղաքըդ՝ մօ'նչ ին թէ ախիդ:
 — Էրգու մօնչ, էրգու ախիդ ին. ախիզընիս իրէք էինը ամա, վէզը մէռավ:

— Դղաքըդ՝ գաշդօն գու թէ:
 — Հա, հէլրէթ. մօնչիյն էլ գաշդօն գու, բուլղընին էլ (պուլիկ չաղջիկ). միձ մօնչըս դասվիրէք դարէգօն է, բզդիզը դասնըմէգ. առաչմէն բուլղընին գաշդում գվուշի չուզէցի (ուզէ-ցի էօչ գաշդում դալ). «բուլղօն գաշդուշը Խնչ բէղք է» դասէյը:

ամա քաղաքէն հգած վարջաբէղը (վարբէղը) շաղ ասաց, շաղ թէթիֆ հրավ, աքըր աքբէթ յէս էլ կանմիշ !էղա, դահա ինչիդ չանդի:

4. Ապիօն գյուղից

Յէս Արգօնցի իմ. մէք ունիք մէգ վարջադուն. խաչ (եկեղեցի) մ'էլ ունիք. բիթուն գ'էղը չիւյս մահալա է. վարջադունը բ'աց է. ունիք իրէք վարժաբեդ. միյ գ'էղի իրադն է լանդուգ, գանդին. խողիրը շաղ իրադսուդ ին. էդու հումար էղած լանդն էլ չի հէրքեր: Այդէրուն մէչ դահա գը'լի լօ'րգէ, բ'օնջար (կադամբ), ուրիշ յէ'շիլուդ: Հէն միձ իրադը գաղինն է: Զ'մոն բարաք մնացած վաքըթը գ'էղացոց բազին ցախուդիրը գ'օյձէլի գընէն, խողիյն էլ քէսադ (քիչ) ըլլուշին սէբաբի՝ օմոն գօվիրը էյլէն գօնին գու: էյլըն մինըն էրգու օր հէռու է. գօվիրը չաբուխ չին գարի էշգալ. էդու հումար էրգու գ'իշիր գ'ուսը մընօն գու, ուչինջի իրիգունը դեդ հասնին գու. իրէք օմիս գինուշըն (կենալէն, կենալուց) էղիվ՝ էլի վէր գուգ'օն: Միր գ'էղացիք գօվ շաղ բէհին գու. չունքի գիբիլը (աղը) շաղ բիդու է. սաղէ գաթէն բաշքա էլ մաշղը ուզէ չուզէ գիբիլին հումար բիդի դիրէ հօղիր (հորթեր) ու գաթ չընօղ գօվիր: Միր գ'էղացիք շաղ ֆուխարէ ին. էդու հումար շաղիրը կուրբէթ գէշղօն, փարա կադօնմիշ ըլլուշի հումար. շաղիյն էլ կուրբէթին մէչ գէրուր (թշուառ) ըլլուշէն մէ'ռնին գու՝ թօղէլօվ չօլուխ-չօջուխ էրիսի վրա: է'յ գիդէ հէ'յ, էղմօն քօնի՞ օջախ մէրած (մարած) է:

Մէմէլ օր (մէկ մ'էլ օր) միր գ'էղացիք շաղ ուղուդ (տգէտ) ին, ինչիդէ (մի բսնից) խաբար չունին. էրգուս մը (մէկ-երկու, մի քանի) դարի անջաք գա օր քիչ նէհրած ին առաչ էշգալ: Միր էխդիային ուղուդ ըլլուշին սէբաբի շաղ ժամասիր ին. քօռ հավու բէս գրօնալօյնուն ասդածին (ասածին) հավղօն գու. նօրվէ գ'ալիք (նորելուկ) խէլաց մօղիգ բ'օն մը ասիս նա, չին հավդալ: Օնդան սօրա էլ դահա բ'արիվդ էլ չին առնուլ դէ (թէ) էս դըղըն մաշթ չըլլի բիդի, յախօդ օնասդված է: էդ սէբէրին ըմըն սըրա հինի ու նօրի գոիվ գըլլի:

Ծանոթ.—Սույն 2—4 հոդվածները հավաքել եմ 1910 թ. Տրապիզոնում, բնիկներից: Հաջորդ 5—14 հատվածները Գագրիում 1944 թ. օգոստոս ամսին:

- Պարէլ էգաձ իս, Կիրկէր, վօ՞յդէխրն էգուշ Խ:
 - Պարի դէսաք, Գաբէտ, շոհորըն էգուշ Խ:
 - Ի՞նչօվ էգար, կատըրօ՞վ էգայ տո էշօվ:
 - Ծիյօվ էգա:
 - Քօ՞նի օր զընտ յօր էգաձ իս:
 - Չէյս-հինգ օր զընտ էգուշըս:
 - Էգաձ սըրըդիքըդ հօյս դէսմյ տո:
 - Դէսաձ ունիմ. դէսա:
 - Ինկուօ յէր:
 - Բէտկ էր:
 - Կընցիր քուրէչըս տլ դէսմյ տո:
 - Չո, չայցի էշտալ դէսնուշ:
 - Հիմի նէ՞ր էշտօղ իս:
 - Էշտօղ իմ Կոչի կէղը, կինի դօնօղ իմ ձախուշի, բէղ-մէղ առնօղ իմ, դղօցըս հալալ գարուշի հօմար:
 - Յէս տլ գուզիմ էշտուշ, ամա չիմ գարի էշտալ:
 - Օ՞րի, ի՞նչ ըղաձ Խ յօր:
 - Պօն ունիմ, Հայգանին բէղ զընիմ:
 - Հայգանը քու ի՞նչըդ Խ:
 - Մօրքուրաբէչըս քուրէչը ախճիգն Խ:
- Անուշ Կարաքէհեան
(Իւնիէցի)

1944 օգոստ. 7

Գազրի

Համշեցոց առաջին գաղթը և Մծաբայի եիմնաբկութիւնը

Յէս Համշէնծի յիմ. մէկ Գազրա շոհորին գինօնկ գու. պօ՞մը հէկիյիմինի, ամա ըղաձ պօն: Իմ բարըս աշտ տո ինչ հէկիյէր գու:

— Չատը Չարշաբա, Կուրշուսլի կէղին շադ նէղուտին քաշայկը գու. էնու հօմար տլ մըտկէրուս տրաձ ունայկը տի մը քօճուշ, յա ջիպ տողէղըն փախճուշ: Պտ վախըտը յէս դահա դուրիկօնլի էյ. սօնը-չէօյս դարէգօն էյ. ամա դահա գարկըվաձ չէյ. չուսկի միյնէս ըմուռն ադտա վժտը հըն օր գըղըյջտկը հընճակ էսսուռն-էսսուռնը հինգ դարէգօնը չէյնը գարկըվիլ: Դահա դղի դէղ տրվէյնը գու:

Ղդմուն իմ դարեցըս ըլլող իրէք-չէօյս մը ընգէր օր մը կընրծակ ձօվը. միյ ձօվուն ղըյին (ափը) ինճաճ դէղօնը քոհէրը ձօվուն ափուն էյնը. էտ քոհէրը սարէդ էյնը: Զիպ օր ձօվուն ղումը հասակ, հօնվէծակ, մդակ ճուրը, նոս լըղըծակ, նըն չըպըրտակածակ, էլակ ճըրըն, հալվընէյս հակակ, գըռնըգէյս տառծուծակ ձօվուն տին, ծէռվընէյս տրակ կըլխընուս վըրնին, հնու իրէկակօն քար կըլխընէրուս վրահըն հէդ ձօվը նէդէծակ: Սայի յէս տղմուն պօնի չիմ հավդալ, ամա ընգէյդտկըս տրին, յէս տլ տրի: Գասին տո կըլխու ցավ օննաս նա, գօսնի:

Ընճաղը լաֆ ընէլօվ նոհրէցաք ձօվուն ապըն հէռընուշ: Քահը էլլէլինիս նաճարէծակ. էնու հօմար տլ նստակ հօնկընուշի: Զօֆն ի վոր աշէծի, դէսա նա ձօվուն ապուն մէգ կայէդ մը մօդգընտր գու:

— Դօ՛ դղտկ, ձօֆն ի վոր աշէցէկ, աստի, հնու էլա քարի մը վրա: Բօղէօսն տլ էլավ իմ էլաճ քարին վըրն. միգ՛տլնէկը ցաճը՛ն սէյիըր գընէյինը: Քօնի սէյր տրակ նա, թարիֆ տրակ, հընօր տղ կայէդը միյ դօղըուն մօդէնա գու:

— Դօ՛ Խաչիգ, Բօղէօս, Գարաբէդ, էգէկ էշտօնկ տլի ձօվուն ապը, հնու աշինկ տո տգէր վէվ ին, վճւտի կուկօն,—աստավ ընգէյդասնուս էղիյըն:

Ինչակ քարին վրահըն, հնու կնածակ յէդ՝ տլի ձօվուն ապը: Մէկ ինճակ ձօվուն ապը, կայէդն տլ հասավ ղըյին: Նէսըն էլօն էրգու հօկի, խէօղը ք՛տլուչնուն բէս՝ միը վըրն չաշէլու (չը աշէլու), ձուռղընուշ (աղօթել) նոհրէծին: Զուռղըն ընէլինին՝ դէսակ օր խէօղը բակնէյնը գու: Ղտտի իմըծակ հնօր տգէր հոյի ին: Կնըծակ ջիպ մօդվին:

— Գարի օր ծէգի, ախպըյդտկ, աստակ մէկ ընէծ:

— Հազար պարին ծէգի, ախպըյդտկ, աստին ընէր մէգի:

— Կայէդը տս դտլիկօնլիսնուն տուս էլաճըն յէտկը, կնաց հէռըծակ:

— Օնունդ ի՛նճըն տ, հայծավ ինճի ընէծմէ մէգը:

— Օնունա Խաճիգ տ, աստի յէս:

— Խաճի՛գ, էրգընծընէլօվ աստավ ըն.—բէտկը օնուն տ. ք՛էօլտ ըլլիմ օնունիդ: Տուն վճւմ դղա՜յ էս:

— Էկսուղ Գարաբէդին, աստի յէս:

— Վօ՞յդըխ գինտկ գու:

— Կուռշուսլի կէղին:

Ընճաղը յէս նոհրէծի ընու հայծընուշ:

— Տո՛ւն վուստի յէս յա վո՛ւստի կուկաս:

Ըն ինձի հէկիյէծ:

— Իմ օնունն Աղօտ տ, այօմտս (ազգանունս) Քօճկան-
յան. իմ ընգէրէճըս օնունը Օվէս (Յովհաննէս) տ, այօմըն՝ Մի-
նասյան: Մէկ էգակ իսա Սէվ-ձօվուն ընտիյէն: Ընդէղին Ուրու-
սաստան գասին: Առաճըն ընդէղը Չորկոյնէծ էր. ամա Ուրուս-
նին տդ դէղօնը առազնուն յէտկը, Չորկոյնին մահմէդան ըլլուշ-
նուն հօմար հէտրվէծօն Դաջգաստան, Անադօր: Հնու ալայ ընէծ
դէղօնը բարաբ ին: Ղստէղ Հոյիկը (հայերը) շաղ չայճըրված
ըլլուշնուն հօմար՝ բօյ մը (մի խումբ) գայնօղ ձօվը օնծօն հնու
ընդէղ բարաբ դէղօնը շընլըմիշ տրին: Ընը տդ հոյի շընլըղ ըղած
դէղը Շապշուկա գաստըվի: Մէկ հիմի Շապշուկայու էգակ:

Ղդմուն աստին հնու «մետկ պարի» ասէլօվ՝ էրգուն տլ
հէնըծօն: Մէկ տլ (մենք էլ) ընէծ «հազար պարօվ էշտոկ» ասէ-
լօվ՝ հէնըծակ, Կնըծակ կէղը հնու հէկիյէծակ միբ հորօնդածը:
Հոյս իմ խօսկըս շաղ ընդըղար ինչիգի դէղ տրավ էշ: Հնու ինձի
աստավ:

— Էշտօղ ըլլի նա տուն տլ կնա:

Հօյս բինդ սօղի խօսկը ինձի սիղ դվավ, ամա յէս ինկըս
տլ բագաս սըյդվէյ չէյ: Քէֆըս էգավ: Կնացի Բօղէօսէծ դունը:

— Պարէվ ծէգի, աստի հնու Փիլօսա շիմըն նէս մդա:

— Պարէվ քէգի, հազար պարին քէգի, աստին, օնծի նիստ,
աստին, Խանիգ:

Դէսա իմ ընգէյս Բօղէօսը յօն ընդած ուր քէշկին (տախտ)
վըրն, մօղըծա, յօնին նստա: Ըն տլ աճվին պաց տրավ:

— Պար՝ էգած էս, Խանիգ, ինդսօ յէս:

— Բէտկ իմ: Տուն լինչ հօմար բարգած էս:

— Կիշէրը էյս բէգ զընայկը, չունկի այճը լազղը գուդո:
Այդին նէս, քօնի մը դէղ ալայ լազղը այճը ժօղված խուլգած
ունի. շաղ փիս ըղած ունի. աղու հօմար քնտիւնէծ իմ:

Ընճաղը յէս Բօղէօսին աստի.

— Զանլւմ, տդ էյսն տլ բէտկ տ, ամա տդ լազղը գայ
ընուշը կէյշ ըղած տ: Ամա ինձի աստ տո ըն միբ հէկիյած պօ-
նին հօմար քու հոյդ լինչ գաստ:

— «Ղդու հօմար մէմտլ չլիմ», ասած հոյս. ...չունկի
հիւկիմտը խալվուտ փախճօղին պնտ նա կօլտ գու, ասած:
Ահան, Սոֆտը Գիրտգէօսու դունը, զինկն տլ հէղը, Լինգսօ կօլէծ:

Զապաւիյայ, ո, աղայ, ո, իմածին էդէվ ուրինկը զուրինկը գէրօն:

Յէս տդ պօնը չիդէյ: Իմ սըյդիս շաղ ցավ դըվավ: Հնու Բօղէօսին հայծի:

— Էհ, ու ի՞նչ բիդի լսէյ. ինձի աստ տո հոյդ ի՞նչ բիդի ընտ:

Ընճաղը Բօղէօս ինձի թըմըտհ ընէլօվ հնօր ուրիշի չասիմ, ձաձուգ բոհիմ, հէկիյէծ:

